

# ԳԼՈՒԲԱԼԱՑՎՈՂ ԱՇԽԱՐՀ

Երկրորդ, լրացված հրատարակություն

Հրատարակիչ՝ *Հայաստանի Հանրապետական  
կուսակցություն*

ԵՐԵՎԱՆ - 2009

Ժողովածուն ներկայացնում է օտարազգի մի շարք քաղաքական գործիչների եւ վերլուծաբանների (օրինակ՝ Սամուել Յանտինգտոն, Յենրի Քիսինջեր, Պատրիկ Բյուքենեն, Ֆրենսիս Ֆուկույամա, Յուբեր Վեդրին, Ժակ Դելոր, Ալեքսանդր Դուգին, Սերգեյ Կարազանով եւն) հոդվածներն ու հարցազրույցները, որոնք ժամանակին հայերեն թարգմանվել եւ հրատարակվել են «Հանրապետական» ամսագրում:

Ամերիկացի, եվրոպացի եւ ռուսաստանցի հեղինակները վերլուծում ու գնահատում են արդի գլոբալացվող աշխարհում ստեղծված իրավիճակը, դրա պատճառներն ու հետեւանքները, փորձում կանխատեսել ապագա զարգացումները:

Սույն ժողովածուն «Հայրենիք» ակումբի կողմից 2008թ. լույս ընծայված համանուն հրատարակության լրացված տարբերակն է:

## ԱՐԵՎՍՈՒՏՔԸ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԸ

(հատված «Քաղաքակրթությունների բախում» գրքից)

### *Սամուել Չանտինգտոն*

Ձեռավորվող աշխարհում տարբեր քաղաքակրթությամբ երկրների ու խմբերի միջև հարաբերությունները ոչ թե լինելու են սերտ, այլ հաճախ կրելու են հակամարտական բնույթ: Բայց եւ այնպես, որոշ միջքաղաքակրթական հարաբերություններ ավելի շատ են հղի առճակատումներով, քան մյուսները: Միկրոհարթությունում բեկման առավել լարված գծերն անցնում են իսլամի եւ նրա ուղղափառ, հիմնդուխտ, աֆրիկյան եւ արեւմտաքրիստոնեական հարեւանների միջեւ: Մակրոհարթությունում գլխավոր տարանջատումն *«Արեւմուտքը եւ մյուսները»* բաժանումն է, ուր առավել անողոք պայքար է գնում մի կողմից՝ մահմեդական աշխարհի ու ասիական երկրների եւ մյուս կողմից՝ Արեւմուտքի միջեւ: Ամենավտանգավոր բախումներն ապագայում, ամենից հավանական է, կլինեն Արեւմուտքի ամբարտավանության, իսլամի անհանդուրժողականության եւ չինական ինքնավստահության պատճառով:

Արեւմուտքը քաղաքակրթություններից միակն է, որ մնացած բոլոր քաղաքակրթությունների վրա ունեցել է ահռելի, իսկ ժամանակ առ ժամանակ՝ կործանարար ազդեցություն: Չետեւաբար, Արեւմուտքի իշխանությունների ու մշակույթի եւ մյուս քաղաքակրթությունների իշխանությունների ու մշակույթների միջեւ փոխհարաբերություններն առավել համակողմանի են բնութագրում քաղաքակրթությունների աշխարհը: Որքան ավելի է մեծանում մյուս քաղաքակրթությունների հարաբերական ազդեցությունը, այնքան կորչում է արեւմտյան մշակույթի հրապույրը, եւ ոչ արեւմտյան ժողովուրդները սկսում են ավելի շատ վստահել ու առավել նվիրվել իրենց բուն մշակույթին: Արդյունքում՝ Արեւմուտքի (հատկապես ԱՄՆ-ի)՝ սեփական բազմաբնույթ մշակույթն արմատավորելու ձգտման եւ այն իրականացնելու անընդհատ նվազող կարողության միջեւ անհամապատասխանությունը դարձել է Արեւմուտքի եւ մյուսների փոխհարաբերությունների հիմնական խնդիրը:

Կոմունիզմի կործանումը խորացրեց այդ անհամապատասխանությունը՝ Արեւմուտքում ամրապնդելով այն միտքը, թե դեմոկրատական լիբերալիզմի գաղափարախոսությունը հանդիսությամբ հաղթանակեց ողջ աշխարհում, եւ այդ պատճառով այն համընդհանուր ընդունելի է: Արեւմուտքն իր միսիոներական ավանդույթներով, եւ գլխավորապէս ԱՄՆ-ը, համարում են, որ ոչ արեւմտյան ժողովուրդները պարտավոր են ընդունել արեւմտյան ժողովրդավարության արժեքները՝ ազատ շուկան, վերահսկվող կառավարության ձեւը, մարդու իրավունքները, օրենքի գերակայությունը եւ այլն, ու հետո դրանք կյանքի կոչել իրենց պետական հաստատություններում: Մյուս քաղաքակրթություններից քչերն են ուրախությամբ ընդունում եւ պաշտպանում այդ արժեքները, իսկ հիմնականում ոչ արեւմտյան մշակույթներում դրանց հանդէպ գերակշռում է այլ վերաբերմունք՝ լայնորեն տարածված թերահավատությունից մինչեւ կոշտ հակազդեցություն: *Այն, ինչը Արեւմուտքի համար ունի վերսալիզմ է, մյուսների համար իմպերիալիզմ է:*

Արեւմուտքը փորձում է եւ կշարունակի փորձել պահպանել իր բարձր դիրքը, պաշտպանել սեփական շահերը՝ անվանելով դրանք «միջազգային հանրության շահեր»: Այս որակումը դարձավ «ազատ աշխարհ» արտահայտության էվֆեմիզմ<sup>1</sup>, որը կոչված է աշխարհի աչքում ԱՄՆ եւ մյուս արեւմտյան տերությունների շահերն արտացոլող գործողություններին իրավագործության պատրանք տալ: Այսպէս, օրինակ, Արեւմուտքը փորձում է ոչ արեւմտյան երկրներին ինտեգրել իր կողմից կառավարվող գլոբալ տնտեսական համակարգում: Արեւմուտքը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՅ) եւ այլ միջազգային ֆինանսական հաստատությունների օգնությամբ պաշտպանում է իր տնտեսական շահերը եւ ստիպում մյուս երկրներին վարել այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը համարում է ընդունելի: Ոչ արեւմտյան երկրներում, հասարակական կարծիքի ցանկացած հարցախույզի դեպքում, ԱՄՆ-ն, անկասկած, կստանա ֆինանսական նախարարների եւ նաեւ մարդկանց փոքր խմբի աջակցությունը, բայց գերակշռող մեծամասնությունը նրա հանդէպ բացասաբար կարտահայտվի: Մարդիկ կհամաձայնեն Գեորգի Արբատովի հետ,

---

<sup>1</sup> Կոշտի փոխարեն առավել մեղմ արտահայտություն.- խմբ.:

որն ԱՄՅ պաշտոնյաներին բնութագրել է որպես «նեոբուլճեիկներ», որոնք պաշտում են ուրիշների փողերի սեփականագրկման ու յուրացման գործընթացը, արմատավորում տնտեսական ու քաղաքական գործելակերպին խորթ, ոչ ժողովրդավարական կանոններ:

Ոչ արեւմտյան ժողովուրդները Արեւմուտքի սկզբունքների եւ գործողությունների միջեւ առկա հակասությունները մատնանշելու առիթը բաց չեն թողնում: Երեսպաշտություն, երկակի ստանդարտներ, «այո, բայց...» սիրված շրջանառու խոսք. ահա ունիվերսալիզմին առարկությունների գինը: Այո, մենք պաշտպանում ենք ժողովրդավարությունը, միայն թե այն իշխանության չբերի իսլամական արմատականությանը: Այո, չժավալվելու սկզբունքը պետք է վերաբերի Իրանին եւ Իրաքին, բայց ոչ Իսրայելին: Այո, ազատ առեւտուրը տնտեսական աճի էլիքսիրն է, բայց ոչ գյուղատնտեսությունում: Այո, մարդու իրավունքների խնդիրն առկա է Չինաստանում, բայց ոչ Սաուդյան Արաբիայում: Այո, պետք է շտապ հակահարված տալ նավթ ունեցող Քուվեյթի դեմ ոտնձգությանը, բայց ոչ նավթից զուրկ բոսնիացիների հարձակմանը: Երկակի ստանդարտներ գործնականում. դա է ունիվերսալ ստանդարտ սկզբունքների անխուսափելի գինը:

Հասնելով քաղաքական անկախության՝ ոչ արեւմտյան հասարակությունները ցանկանում են ազատվել Արեւմուտքի տնտեսական, ռազմական եւ մշակութային գերիշխանությունից: Արեւելյան Ասիայի երկրներն արագ ընթացքով գնում են նրան, որ հավասարվեն Արեւմուտքին: Ասիական եւ իսլամական երկրները ռազմական բնագավառում Արեւմուտքին արագ հասնելու ուղիներ են փնտրում: Արեւմտյան քաղաքակրթության գլոբալ հավակնությունները, Արեւմուտքի հարաբերական իշխանության անկումը, ինչպես նաեւ այլ քաղաքակրթությունների աճող մշակութային ինքնավստահությունը բավական բարդացնում են Արեւմուտքի եւ մյուսների հարաբերությունները: Սակայն դրանց բնույթը եւ հակամարտության աստիճանը չափազանց տարբեր են ու բաժանվում են երեք կատեգորիայի:

Առաջինը մարտահրավեր նետող քաղաքակրթությունների՝ իսլամականի ու չինականի հետ Արեւմուտքի փոխհարաբերություններն են. այս դեպքում Արեւմուտքն ընդհանուր առմամբ

կունենա լարված, հաճախ՝ հակամարտական հարաբերություններ: Երկրորդը վերաբերում է քաղաքակրթապես առավել թույլ եւ Արեւմուտքից զգալի կախվածության աստիճան ունեցող Լատինական Ամերիկայի ու Աֆրիկայի հետ հարաբերություններին, որոնք կլինեն նվազ բախումային (հատկապես Լատինական Ամերիկայի դեպքում): Երրորդը Ռուսաստանի, Ճապոնիայի ու Չնդկաստանի հետ Արեւմուտքի փոխհարաբերություններն են, որոնք հավանորեն կլինեն վերոհիշյալ երկու կատեգորիաների միջինը. այստեղ կլինեն եւ համագործակցություն, եւ առճակատում, քանզի այդ առանցքային երեք տերությունները մերօրե հարում են մարտահրավեր նետող քաղաքակրթություններին, մերօրե Արեւմուտքին: Սա Արեւմուտքի եւ իսլամական ու չինական քաղաքակրթությունների միջեւ տատանվող քաղաքակրթություն է:

Միջազգային հարաբերությունների իրապաշտական տեսությունը թելադրում է, որ ոչ արեւմտյան քաղաքակրթությունների առանցքային տերությունները պետք է կոալիցիա կազմեն, որպեսզի հավասարակշռեն Արեւմուտքի գերիշխող ազդեցությունը: Որոշ ուղորտներում դա արդեն իրականացվել է: Բայց մոտ ժամանակներում համընդհանուր հակաարեւմտյան կոալիցիայի առաջացումը քիչ հավանական է: Իսլամական եւ չինական քաղաքակրթությունները կրոնով, մշակույթով, քաղաքականությամբ, սոցիալական կառույցներով, ավանդույթներով, կենսակերպի հիմնական նախադրյալներով իրարից արմատապես տարբերվում են: Ըստ էության, նրանք միմյանց հետ ավելի քիչ ընդհանրություններ ունեն, քան արեւմտյան քաղաքակրթության: Բայց եւ այնպես, քաղաքականությունում ընդհանուր թշնամին ծնում է ընդհանուր շահեր: Այսպիսով, իսլամական եւ սինական<sup>1</sup> երկրները, որոնք Արեւմուտքին համարում են իրենց հակառակորդը, միմյանց հետ նրա դեմ համագործակցելու առիթ ունեն: Այդ համագործակցությունը նկատելի է շատ բնագավառներում (ներառյալ մարդու իրավունքների, տնտեսության ուղորտները) եւ, որն ավելի ակնառու է, ռազմական ներուժը մեծացնելու (հատկապես զանգվածային ոչնչացման զենքերի եւ նրանց փոխադրման միջոցների, այսինքն՝

---

<sup>1</sup> Չինական կամ կոնֆուցիական քաղաքակրթության գոտում գտնվող.- խմբ.:

հրթիռների ասպարեզում) փորձերում, որոնք սովորական սպառազինությունների գծով Արեւմուտքի գերակշռությունը չեզոքացնելուն են միտված: Որպեսզի այդ ասպարեզում դիմակայեն Արեւմուտքին, 90-ականների սկզբին «կոնֆուցիական-իսլամական» կապեր եղան մի կողմից՝ Չինաստանի ու Յյուսիսային Կորեայի, մյուս կողմից՝ Պակիստանի, Իրանի, Իրաքի, Սիրիայի, Լիբիայի եւ Ալժիրի միջեւ:

Արեւմուտքը եւ մյուս հասարակությունները բաժանող խնդիրներն այսօր միջազգային հարաբերությունների օրակարգում առավել սուր են դրված: Արեւմուտքի պլաններում ներառված են երեք նմանատիպ խնդիրներ.

1. Պահպանել ռազմական գերակայությունը միջուկային, կենսաբանական եւ քիմիական սպառազինությունների, ինչպես նաեւ նրանց փոխադրման միջոցների վրա չտարածման եւ հակատարածման քաղաքականության կիրառման օգնությամբ:

2. Տարածել արեւմտյան արժեքները, ծավալել արեւմտյան հաստատությունները՝ ստիպելով մյուս հասարակություններին Արեւմուտքի ընթացմամբ հարգել մարդու իրավունքները եւ ընդունել ժողովրդավարության արեւմտյան մոդելը:

3. Պաշտպանել արեւմտյան տերությունների մշակութային, հասարակական եւ էթնիկ ամբողջությունը՝ սահմանափակելով ոչ արեւմտյան երկրներից փախստականների ու տարագիրների մուտքն այնտեղ:

Բոլոր այս երեք ոլորտներում Արեւմուտքը բախվում է եւ, հավանական է, կշարունակի բախվել ոչ արեւմտյան հասարակությունների հանդեպ սեփական շահերը պաշտպանելու խնդրին:

«Հանրապետական», 2003, ք. 4

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔ**  
**(հատված «Հարկավոր է, արդյոք, Ամերիկային**  
**արտաքին քաղաքականություն» գրքից)**  
*Պենրի Քիսինջեր*

Երբ հասարակությունը բախվում է այնպիսի բարդության խնդիրների, ինչպիսիք կանգնած են այսօր ԱՄՆ-ի առաջ, հաճախ են խոսում «բեկումնային կետի» մասին: Բայց եզակի են ոչ միայն խնդիրները, այլև սահմանված չէ հենց «բեկումնային կետ» հասկացությունը: Ոչ այնքան կարիք ունենալով ընթացիկ քաղաքականության որոշման, որքան երկարաժամկետ հայեցակարգի մշակման՝ ԱՄՆ-ը առաջին անգամ է բախվում անորոշ երկար ժամանակահատվածի համար նախանշված գլոբալ ռազմավարության ձևակերպման անհրաժեշտությանը:

Այս աշխարհում Ամերիկայի նվաճումների չափը որոշվելու է այնքանով, որքանով կհաջողվի նրան քայլ առ քայլ լուծել բազմազան քաղաքական, տնտեսական, ռազմավարական ու սոցիալական խնդիրներ: Այդպիսի շատ խնդիրների լուծման գործում ԱՄՆ-ը սպառելու է իր նյութական ու հոգեբանական պաշարները, եթե չսովորի տարբերել այն, ինչը պարտավոր է անել՝ նրանից, ինչը որ ցանկանում է անել, եւ այդ երկուսը նրանից, ինչն անելը վեր է իր հնարավորություններից: Ամերիկան այս հարցում ստիպված է կողմնորոշվել, քանզի ոչ միայն արտաքին քաղաքականության վրա ազդող իրական հանգամանքները, այլև գիտելիքների ձեռքբերման եւ համապատասխան պատկերացումների ձևավորման եղանակներն են շարունակ փոփոխվում:

Սովորական են դարձել տեղեկատվական դարաշրջանի՝ որպես պատմության մեծ, նույնիսկ մեծագույն մտավոր հեղափոխության մասին խոսակցությունները եւ նրա սոցիալական, տնտեսական ու քաղաքական կողմերի վրա սեւեռվելը: Բայց հազվադեպ է քննարկվում նրա ազդեցությունը միջազգային հարաբերությունների վրա, բացառությամբ, թերեւս, ժամանակակից հաղորդակցության ուղիների գլոբալ հնարավորությունների մասին փաս-



տարկումների. ընդ որում, նշվում են լոկ մաքուր թվեր եւ տեղեկատվության փոխանցման արագությունը: Բայց միջազգային հարաբերությունները, հետեւաբար՝ նաեւ պատմության ընթացքը, կախված են ոչ միայն տեղեկատվություն ունեցող մարդկանց քանակից. առավել կարեւոր են նրա յուրացման եղանակները: Եվ քանի որ մատչելի տեղեկատվության ծավալը սովորաբար գերազանցում է նրա մշակման հնարավորությունները, բնականաբար, խորանում է տեղեկատվության ու գիտելիքի, առավել եւս՝ գիտելիքի եւ իմաստության միջեւ խզումը:

Այս կապակցությամբ հարց է ծագում՝ տեղեկատվության մշակման մեթոդները չէ՞ն ազդելու արդյոք միջազգային հարաբերությունների փորձից դասեր քաղելու մեր ունակության վրա: Քանզի այն դեպքում, երբ տեխնոլոգիական հեղափոխությունն առաջարկում է տեղեկատվության կորզման տպավորիչ միջոցներ, հաջող արտաքին քաղաքական գործունեությունն ամենից առաջ պահանջում է ապագան ինտուիտիվ կերպով կանխազգալու ունակություն: Առաջնորդությունը (լիդերություն), մասնավորապես փորձի եւ պատկերացման վիհի միջեւ, կամուրջ անցկացնելու արվեստ է:

Ահա թե ինչու պետական գործիչների մեծ մասը ճանաչում է գտել ոչ այնքան իր գիտելիքների մանրամասն իմացությամբ (թեպետ դրա որոշակի նվազագույնն, անշուշտ, անհրաժեշտ է), որքան պատմական իրավիճակի էությունը բնագոյաբար ընկալելու ընդունակությամբ, ուղեղում տպավորված ազդեցությունների բազմությունից ապագան կանխորոշող առավել հավանական միտումների առանձնացման հմտությամբ: Դա ստիպեց նույնիսկ այնպիսի ծայրահեղ «իրապաշտի», ինչպիսին Օտտո ֆոն Բիսմարկն էր, պետական գործչի մասին իր պատկերացումներն ամփոփել հետեւյալ բարեպաշտ խոսքում. *«Լավագույնը, որ կարող է անել քաղաքական գործիչը, դա Աստծո ոտնաձայնը լսելն է, Նրա հագուստի փեշին հպվելը եւ թեկուզ մի քանի քայլ Նրա հետ անցնելը»:*

Ժամանակակից գաղափարապաշտներից նույնիսկ քչերը չէին ձեւակերպի իրենց նպատակներն այսպիսի պարզությամբ, իսկ «իրապաշտներն» ընդհանրապես կիրաժարվեին աստվածայինին դիմելուց: Պետական գործչի հմտության կատարելագործման

համար կենսականորեն անհրաժեշտ պատմության, փիլիսոփայության, գիտության այլ ճյուղերի ուսումնասիրումն ամենուրեք այնքան է արհամարիվում կամ մեկնաբանվում «պրագմատիկորեն», որ ունեցած գիտելիքները լոկ հաստատում են այն, ինչը չի հակասում առողջ բանականությանը: Այսօրվա առաջնորդները վաղանցիկ տրամադրությունների հմուտ մանիպուլացմամբ են ճանաչում ձեռք բերում: Նրանք ապագան դիտում են որպես արդեն հայտնիի (ներկայի) տարածում (էքստրապոլյացիա):

Համակարգիչը լուծել է գիտելիքների պահպանման խնդիրը եւ մատչելի դարձրել հսկայական քանակի տեղեկություն: Բայց դրա համար մենք ռազմավարությունը զոհաբերել ենք մարտավարությանը, հատկապես երբ խոսքն արտաքին քաղաքականության մասին է: Ռազմավարություն մշակողները ենթարկվում են իրադարձությունների զարգացումը դանդաղեցնելու, հետաձգելու գայթակղությանը. նրանք ցանկանում են տեսնել, թե այս կամ այն իրողությունն ինչ արձագանք է գտնում զանգվածային լրատվամիջոցներում: Եվ իսկապես, նրանք այլ չափանիշներ քիչ ունեն, որոնցով կարողանան դատել սեփական գործողությունների արդյունքների մասին: Արդյունքում՝ ապագայի պատկերը չափազանց հաճախ սեւացվում է մարտավարական խնդիրներով: Բանը ոչ թե առանձին ղեկավարների ընդունակությունների պակասության, այլ նրանց կրթական պատրաստվածության խնդրի մեջ է: Այս համակարգչային դարում Միացյալ Նահանգների կրթության գլխավոր խնդիրը պետք է լինի աստիճանական անցումը տեղեկատվության մշակումից՝ հասարակության ապագան կանխատեսելուն:

Քաղաքական գործչի համար հիմնական երկընտրանքն արժեքների ու շահերի, իսկ ժամանակ առ ժամանակ՝ խաղաղության եւ արդարության միջեւ հաշվեկշիռ գտնելն է: Բարոյականությունը՝ շահերին կամ գաղափարապաշտությունն՝ իրապաշտությանը երբեմնի կանխադրյալ հակադրումն արտաքին քաղաքականության շուրջ անվերջանալի վեճերի ստանդարտ դրսևորումներից է: Այստեղ ընտրության խնդիր չկա: Չափից ավելի իրապաշտությունը հանգեցնում է լճացման, իսկ չափից ավելի գաղափարա-

պաշտությունը ծնուն է հիասթափությանը ավարտվող խաչակրաց արշավանքներ:

Դա տեղի է ունենում այն պատճառով, որ միջազգային հարաբերությունների բարոյական հիմքերը կառուցված են այլ համատեքստում, քան ներքին քաղաքականությունում: Հաջող արտաքին քաղաքականությունը պահանջում է անընդհատ զարգացող գործընթացների նրբությունները զգալու հմտություն, իսկ ներքին քաղաքականությունը ենթադրում է ընդհանուր իրավական համակարգի միջոցով գործածության մեջ դրվող օրենքների ընդունում եւ շահերի՝ ըստ կարելիության դասակարգում:

Վերջին հաշվով ամեն ինչ հանգում է նրան, թե ԱՄՆ-ը իրեն որպես ինչ է ներկայացնում: Չնայած ԱՄՆ-ը մերժում է կայսերական նկրտումները եւ կառուցված է ոչ կայսրության մոդելով, բայց, իր բարի կամքի վերաբերյալ բոլոր հանդիսավոր հայտարարություններով հանդերձ, աշխարհում ընդունվում է որպես կայսերական տերություն: ԱՄՆ պատվամոլությունը պատասխան հակազդեցություններ է առաջացնում ողջ աշխարհում, որոնք ուղղված են այն բանին, որպեսզի մյուս երկրներին վերադարձվի ԱՄՆ-ից անկախ գործելու ազատություն կամ գոնե սահմանափակվեն նրա կամայականությունները:

Այդպիսի հակազդումները, որոշակի չափով, ԱՄՆ՝ որպես միակ գերտերության բացառիկ դիրքի անխուսափելի արդյունքն են, եւ այդ դիրքը կպահպանվի, ինչպիսին էլ որ լինի ամերիկյան դիվանագիտությունը: Գերիշխող տերության կարգավիճակն, ըստ էության, ինքնաբերաբար հարուցում է այլ տերությունների՝ սեփական որոշումներն ընդունելիս մեծ իրավունքներ ձեռք բերելու եւ ուժեղի դիրքերը թուլացնելու ձգտում: Բայց եթե նույնիսկ այդ երկրները դիտենք որպես ստեղծվող նոր միջազգային կարգի անկյունաքարեր, ապա զալիք աշխարհի պատկերը կախված կլինի նրանից, թե կկարողանան արդյոք նրանք ԱՄՆ-ի հետ համագործակցության հիմքի վրա կառուցել սեփական նույնությունը, թե դրա համար կպահանջվի հակադրվել ԱՄՆ-ին:

Որոշ ամերիկացիներ, հիացած իրենց հայրենիքի հզորությամբ, պնդում են բարյացակամ ամերիկյան գերիշխանության հստակ

արտահայտման վրա: Բայց նման նկրտումները կարող են ԱՄՆ-ի վրա ծանր բեռ դնել, որի տակ դեռ ոչ մի հասարակություն անորոշ երկար ժամանակ չի դիմացել: Անկախ նրանից, թե Ամերիկան որքանով է անշահախնդիր համարում իր վերջնական նպատակները, գերիշխելու նրա ակնհայտորեն դրսևորվող մտադրություններն աշխարհին աստիճանաբար կմիավորեն իր դեմ եւ կստիպեն իրեն սահմանափակել սեփական պահանջները, որի արդյունքում ԱՄՆ-ը կմեկուսացվի եւ կուժազրկվի:

Կայսերական կարգավիճակի ուղին երկիրը կտանի նեխման, որովհետեւ ամենազորության հավակնությունները ժամանակի ընթացքում խորտակում են ներքին արգելքները: Ոչ մի կայսրություն դեռ չի խուսափել ռազմական դիկտատուրայից, կեսարականությունից, եթե միայն, ինչպես Բրիտանական կայսրության դեպքում, ավելի շուտ չիրաժարվի աշխարհին իշխելուց, քան այդ գործընթացը կհասցնի զարգանալ: Երկար պատմություն ունեցող կայսրություններում ցանկացած պորբլեմ վերածվում է ներքին խնդրի, որովհետեւ արտաքին աշխարհն արդեն նրա համար հակակշիռ չի հանդիսանում: Եվ որքան որ մարտահրավերները, որոնց հետ բախվում է կայսրությունը, դառնում են էլ ավելի բազմաթիվ եւ ծագում ներքին խնդիրների հետ պատմականորեն չկապված, պայքարը երկրի ներսում ընդունում է առավել անողոք, ժամանակի ընթացքում՝ ագրեսիվ բնույթ: Ամերիկայի գերիշխանության ձգտումը՝ նրան մեծ դարձրած արժեքների կործանման առավել անխուսափելի ուղին է:

Ամերիկյան գերակայությունը մոտ հեռանկարում՝ ակնհայտ, իսկ միջնաժամկետ հեռանկարում՝ անվիճելի փաստ է: Թե ինչպես Միացյալ Նահանգներն այն կօգտագործի, դրանով կորոշվի երկարաժամկետ հեռանկարը: Ավստրալացի սոցիոլոգ Ք. Բելը հիանալի ձեւով է արտահայտել Ամերիկայի դեմ հառնած խնդիրը. *«Նրան հարկավոր է ընդունել սեփական գերակայությունը, բայց վարել քաղաքականությունն այնպես, ասես աշխարհում գոյություն ունեն ուժի շատ այլ կենտրոններ»*: Այդպիսի աշխարհում ԱՄՆ-ը կգտնի գործընկերներ, որոնց հետ ոչ միայն կկարողանա կիսել առաջնոր-

դության հոգեբանական բեռը, այլև ձեւավորել համաշխարհային կարգը՝ հիմնված ազատության ու ժողովրդավարության վրա:

Այն ժամանակ, երբ ավանդական մոդելները փոխակերպվում են, իսկ կենսափորձի եւ գիտելիքի հիմունքները՝ փոփոխվում սրընթաց, Ամերիկայի գլխավոր խնդիրն է դառնում՝ իր հզորությունը բարոյական համաձայնության (կոնսենսուս) վերածելը, սեփական արժեքները ներդնելը, այլ ոչ պարտադրելը, ինչպես նաեւ այնպիսի պայմաններ ստեղծելը, որոնց դեպքում այդ արժեքները կընդունի ողջ ժամանակակից աշխարհը՝ առաջին հայացքից դրանց դիմադրող, բայց իրականում լուսավորյալ ղեկավարության խիստ կարիք ունեցող:

«Յանրապետական», 2003, թ. 5

## ԳԼՈՐԱԼԱՑՈՒՄԸ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

### *Անդրեյ Վոզմիտել*

*Քաղաքագիտության դոկտոր Անդրեյ Վոզմիտելը ՌԴ ԳԱ Սոցիոլոգիայի ինստիտուտի ծանաչված աշխատակիցներից է: Կրճատումներով «Власть» ամսագրից ներկայացնում ենք նրա հոդվածը:*

Խոսելով գլոբալացման մասին՝ նախեւառաջ նկատի են ունենում տնտեսական ինտեգրումը, ապրանքի, կապիտալի, մարդկանց եւ տեղեկատվության միջազգայնացումը՝ նյութական բարիքների արտադրության աճի բարձր տեմպերի ապահովման, միասնական աշխարհատնտեսական ու տեղեկատվական տարածության ստեղծման, մշակութային արժեքների փոխանակման, ճգնաժամային զարգացումների կառավարման նպատակով: Աշխարհի հարկադրական միավորման հզոր գործոն է հանդիսանում բնապահպանությունը, որը ստիպում է վերանայել արդյունաբերական արտադրության զարգացման ավանդական ձեւերի (տեխնոլոգիաների) նկատմամբ վերաբերմունքը:

Այս բոլոր գործոնները միասին վերցրած պետք է, սկզբունքորեն, բոլոր երկրներին եւ աշխարհամասերին ապահովեն անվտանգ կյանք, տնտեսական, սոցիալական, մշակութային կայուն զարգացում: Բայց համընդհանուր ներդաշնակություն, ավաղ, չի երեւում: Ըստ երեւոյթին, այդ պատճառով է, որ նույնիսկ բարեկեցիկ Արեւմուտքում միլիոնավոր մարդիկ կարծում են, թե գլոբալացումն ավելի շատ վնաս կբերի, քան օգուտ, իսկ 100 հազարավորներն ակտիվորեն բողոքում են աշխարհին պարտադրված «լավ» կյանքի դեմ:

Բանն այն է, որ գլոբալացումը նախածեռնել, ուղղորդում եւ կենսագործում են Յւ. Ամերիկայի, Եվրոպայի ու ճապոնիայի միանգամայն որոշակի վերազգային շրջանակները՝ իրականացնելով սեփական տնտեսական եւ աշխարհաքաղաքական շահերը, որոնք ամենեւին էլ չեն համընկնում մյուս երկրների ու տարածաշրջանների շահերին: Գլոբալացման գործընթացին առավել խստությամբ եւ հետեւողականությամբ է մասնակցում ԱՄՆ-ը՝

եռանդուն կերպով օգտագործելով մարդկանց, տեղեկատվութ-  
յունը, կապիտալը եւ սեփական ողջ ռազմական ներուժը՝ անհնա-  
զանդ երկրների ազգային անվտանգությունը խարխուլելու համար,  
նրանց բնակչության շրջանում անցկացնելով զանգվածային հո-  
գեքանական մշակումներ, կազմակերպելով տնտեսական շրջա-  
փակումներ, ստեղծելով ու ֆինանսավորելով «հինգերորդ շարա-  
սյուններ» եւ այլն: Իսկ եթե այդ միջոցները չեն օգնում, դիմում են  
անմիջական ռազմական ներխուժման: Եվ այս բոլորը, հասկա-  
նալի է, «հանուն ազատության, շուկայական տնտեսության եւ  
ժողովրդավարության»: Այսպիսով, ներկա աշխարհում գլոբալա-  
ցունը մի գործընթաց է, որն ապահովում է հզորների բարեկե-  
ցությունն ի հաշիվ թուլների: Հզորներն օգտագործում են այս  
գործընթացի բոլոր դրական կողմերը՝ ինտեգրելով իրենց տնտե-  
սությունները, իսկ թուլներին բաժին է ընկել հումքի մատակարարի  
եւ աշխատուժի էժան շուկայի աննախանձելի դերը:

\* \* \*

Ի՞նչ է տվել եւ ի՞նչ է տալու Ռուսաստանին գլոբալացունը:  
Մեր երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային էքսպան-  
սիան բավական համապարփակ է՝ ընդունակ քանդելու ցանկա-  
ցած ինքնուրույն պետության (առավել եւս այնպիսինի, ինչպիսին  
Ռուսաստանն է, որը միշտ էլ ունեցել է իր առանձնակի դերն  
աշխարհում) գոյության ու զարգացման հիմքերը: Երեւում է, որ  
գլոբալացման տեսաբաններն ու գործադրողներն, այնուհանդերձ,  
մշակել ու կյանքի են կոչել Ռուսաստանի՝ որպես գերտերության,  
թուլացման եւ ինքնադժգոյացման մեխանիզմը:

Դա կախյալ, առեւտրասպեկուլյատիվ ուղղվածությամբ տնտե-  
սություն է, որում բացակայում են աճի ապահովման մեխանիզմ-  
ները: Այն տրամաբանությունից դուրս է ու քրեականացված,  
որտեղ լիովին տնօրինում է միայն անձնական բարօրության  
համար «արդյունավետ» աշխատող սեփականատերը: Այդ իսկ  
պատճառով այն անկարող է ապահովել (նույնիսկ աշխարհի  
ամենահարուստ բնական պաշարների ու նրանցից ստացվող  
գերշահույթների առկայության դեպքում) անհրաժեշտ ներդրում-  
ներ արտադրության, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման,  
մշակույթի, գիտության եւ կրթության զարգացման համար:

Դա հասարակություն է, որի համար օգտագործելի չէ «քաղաքացիական» եզրը, քանզի հասարակ քաղաքացին այնտեղ իրավունքներ չունի, անպաշտպան է եւ չի կարող հենվել ոչ օրենքի նորմերին, որոնք նրա օգտին չեն աշխատում, ոչ էլ բարոյականության ընդհանուր կանոններին, որոնք գործնականում բացակայում են:

Դա ձեւական ժողովրդավարական պետությունն է, որն անտեսում է բնակչության հիմնական զանգվածների կենսականորեն անհրաժեշտ շահերը եւ անկարող է ապահովել անձն ու ազգային սեփականությունը շահադիտական նպատակներով օգտագործելուց պաշտպանող օրենքների ընդունումը եւ կատարումը:

Համայնավարական գաղափարախոսության եւ նրա կողմից արմատավորված միակարծության համակարգի հիմքերի խորտակումը, որով շատ են հպարտանում ազատականները, իրավական, սոցիալական եւ բարոյական կարգավորման կառույցների քայքայման պայմաններում հանգեցրեց ոչ թե հոգեւոր ազատության, այլ օտար գաղափարներով ու արժեքներով (որոնց հիմքում ագրեսիվ անհոգիությունն է, շահամոլությունը, ատելությունը եւ բռնությունը) զանգվածների նոր ստրկացմանը:

Նշված այս բոլոր քանդման մեխանիզմների գործելու հետեւանքով Ռուսաստանում ստեղծվել է «երաշխավորված վտանգի իրադրություն», որտեղ որոշված չեն, հետեւաբար՝ ոչ օրենսդրությունում, ոչ էլ բարոյականությունում ամրագրված չեն սահմանները, որոնցից այն կողմ այս կամ այլ երեւոյթները վնասում եւ ապագայում էլ կարող են վնասել անհատի, հասարակության ու պետության կենսականորեն անհրաժեշտ շահերը:

Ներկայումս դժվար թե որեւէ մեկն ազգային անվտանգությունը պաշտպանված համարի ներքին եւ արտաքին սպառնալիքներից: Թեկուզ այն պարզ պատճառով, որ դրանց առանձին սուբյեկտների հետաքրքրություններն իրական վիճակներում հաճախ հակադիր են:

Այս ծայրահեղ անառողջ վիճակին համապատասխան՝ միջազգային ասպարեզում կտրուկ թուլանում են Ռուսաստանի դիրքերը եւ, փաստորեն, ձեւավորվում է միաբեւեռ (մենաշնորհային) աշխարհ, որտեղ գերիշխում են ԱՄՆ-ը եւ ամերիկյան կենսաձեւը, որի պաշտպանությունը, ժողովրդի եւ տարածքի պաշտպանության



հետ մեկտեղ, ավանդապես հանդիսանում են ազգային անվտանգությանն ապահովման գործում այդ երկրի նախագահի վարչակազմի գլխավոր խնդիրն ու սահմանադրական պարտականությունը:

Ցավոք, աշխարհն ավելի անվտանգ չի դարձել: Ինչպես նաև՝ Արևմուտքի ազդեցիկ ուժերը չեն դադարել մշակել ու իրականացնել Ռուսաստանի թուլացման եւ նույնիսկ առանձին անկախ պետական կազմավորումների տրոհման սցենարը:

Իհարկե, չի կարելի ամեն ինչ վերագրել «թշնամու մեքենայություններին»: Սառը պատերազմում պարտվելուց եւ Խորհրդային Միության փլուզումից հետո մենք ինքներս չկարողացանք ռազմականից զատ՝ այլ պաշտպանություն բռնել: Մենք՝ ինքներս, իհարկե, ոչ առանց նորելուկ «դաշնակիցների» գործում օգնության, գերագույն իշխանությանը մոտ թողեցինք մարդկանց, որոնք փորձում են ուրիշի անցյալը դարձնել մեր ներկան ու ապագան:

Մենք ինքներս չկարողացանք տնտեսական եւ քաղաքական վերնախավ «մտցնել» մարդկանց, որոնք չեն արատավորվել կլանների (նրանք եսամոլաբար հափշտակում են իրենց կազմի մեջ չմտնող կամ «ճշմարտությամբ ու հավատով» իրենց ջառայող անձանց հասարակական բարիքները) հետ համագործակցությամբ: Արդյունքում՝ հասարակությունը մնաց առանց իսկական՝ ապագան տեսնող, համարձակ եւ անձնվեր վերնախավի: Ըստ էության, նա մնաց առանց հիմնավորված տնտեսական եւ սոցիալական կողմնորոշիչների:

Կյանքում ինքնուրույն հաստատվելու մեր ընդունակության բազմադարյան բթացումը՝ հատուկ ինչպես «ներքեւներին», այնպես էլ «վերեւներին», բարեփոխումների գործընթացի ազատականացման փոխարեն մեզ տարավ այդ գործընթացի պարզունակացման, օտար հասարակական միջավայրում վերարտադրված ուրիշի մշակութային փորձի անքննադատաբար փոխառման, որն էլ հանգեցնում է կազմալուծման եւ այլ կործանարար հետեւանքների: Տեղի է ունենում ցավոտ, աստիճանաբար անլուծելի դարձող խնդիրների (որոնց հարմարվում եւ ընտելանում են, բայց չեն լուծում) թնջուկի երբեմն ոչ այնքան բացահայտ, բայց անշեղ աճ: Հասարակության հետ հաղորդակցական լիակատար խզման մեջ

գտնվող ղեկավար դասակարգի՝ այդ խնդիրները լուծելու անընդունակությունն այստեղ ակնհայտ է:

Քայքայվել է նաեւ բարոյական կարգավորման համակարգը. փաստորեն բացակայում է բարու եւ չարի, բարոյականության ու անբարոյականության, նորմայի եւ դրանից շեղման մասին ընդհանուր կամ թեկուզ լայն տարածված պատկերացումների համակարգը:

Այնինչ, բարոյականությունը՝ դա աստվածայինն է մարդու մեջ, որ տրված է միայն իրեն, որ առանձնացնում է նրան Աստծո ստեղծած մյուս էակներից: Այստեղից է մարդու մեջ մարդկայինը պահպանելու, հասարակության ու պետության բնականոն աշխատանքն ապահովելու գործում նրա ունեցած առաջնային նշանակությունը: Այստեղից են նաեւ հզոր գրոհներն ազգի լավագույն արժեքների եւ ուժերի դեմ, որոնց հոգում միշտ բարձր են հնչել խղճի, ճշմարտության, արդարության ձայները: Գործնականում, այսօր այդ հասկացությունները հանված են բառապաշարից, իսկ եթե նույնիսկ օգտագործվում են ՁԼՄ-ի կողմից, ապա, որպես կանոն, հեզնական իմաստով:

20-րդ դարի վերջի ռուսական «բարենորոգումների» տասնամյակն ակնառու կերպով ցույց է տալիս, որ առանց բազային բարոյական սկզբունքների փոփոխման եւ յուրօրինակ բարոյական ռեֆորմացիայի (որի հետ պետք է հարաբերակցվեն տնտեսական, քաղաքական, սոցիալական բոլոր գաղափարները), անցումն ավտորիտար-տոտալիտար համակարգից ժողովրդավարական համակարգի անհնար է:

Առանց բարոյականության գոյություն չունի ոչ մշակույթ, ոչ էլ քաղաքակրթություն: Եվ միայն հենվելով կայուն բարոյական հիմքին՝ հնարավոր է կազմակերպել մեր կյանքը Ռուսաստանին գեներտիկորեն հատուկ հավաքականության, հոգեւորության, բնության հետ ներդաշնակության, անձնական ազատության եւ Աստծո ու մարդկանց առջեւ պատասխանատվության հիմունքներով:

«Յանրապետական», 2003, ք. 6

## ԱՐԵՎՍՈՒՏՔԻ ՎԱԽՃԱՆԸ

### Պատրիկ Բյուքենեն

*ԱՄՆ նախագահներ Նիքսոնի եւ Ռեյգանի խորհրդական, 1992 եւ 1996 թվերին Հանրապետական կուսակցությունից ԱՄՆ նախագահի թեկնածու Պատրիկ Բյուքենենի 2002թ. տպված «Արեւմուտքի վախճանը» գիրքը մեծ հետաքրքրություն է առաջացրել գիտաքաղաքական շրջանակներում: Ստորեւ տպագրում ենք հատված այդ գրքից:*

ԱՄՆ քաղաքացիների մեծ մասը դեռեւս իրեն համարում է քրիստոնյա: Բայց ներկայիս գերիշխող մշակույթը ճիշտ կլինի կոչել հետքրիստոնեական կամ նույնիսկ հակաքրիստոնեական, քանզի նրա փառաբանած արժեքներն էությանմբ հակադիր են քրիստոնեական ուսմունքին: Սեքս, փառք, փող, իշխանություն. ահա նոր աստվածները նոր Ամերիկայի...

Բայց ինչպիսի՞ն են Արեւմուտքի վերածննդի հեռանկարները:

Ազնվորեն ասենք՝ կանխագուշակումներն այնքան էլ լավատեսական չեն: Միանգամայն հավանական է, որ մարդկությունն ապրում է հինգ դար առաջ սկսված ողբերգության վերջին արարը: Այն ժամանակ քրիստոնեությունը, որ բաժանվել էր ուղղափառության եւ կաթոլիկության, Ռեֆորմացիայից ցնցված՝ դուրս «ժայթքեց» Եվրոպայի սահմաններից ու նետվեց նվաճելու աշխարհը: 18-րդ դարից սկսած նոր՝ էլ ավելի լուրջ մարտահրավեր նետվեց քրիստոնեությանը եւ նրա ստեղծած մշակութային ու քաղաքական կարգերին: Վոլտերն իր նամակներն ավարտեց հետեւյալ արտահայտությամբ. «Ոչնչացրեք այդ նողկանքը»՝ նկատի ունենալով եկեղեցին: Դիդրոն հայտարարեց. «Մարդկությունը չի ազատագրվի, քանի դեռ վերջին թագավորը խեղդամահ չի արվել վերջին պապի աղիքներով»: Ռուսոն ավելացրեց. «Մարդն ազատ է ծնվել, բայց այսօր նա շղթայված է»: Ֆրանսիան ականջալուր եղավ «թուղթ մրոտողների» կոչին: Միապետությունը տապալվեց: Եկեղեցին ունեզրկեցին ու թալանեցին: Բանականությունը հաղթանակեց հավատքին եւ հանգեցրեց կոտորածների, ահաբեկչության ու

դիկտատուրայի, ինչպես նաև քառորդ դար տևած համաեվրոպական պատերազմին, որից Ֆրանսիան դուրս եկավ ուժազրկված եւ մասնատված:

Հետո ի հայտ եկավ Դարվինը՝ հայտարարելով, թե մարդը էվոլյուցիայի, այլ ոչ թե աստվածային արարման արդյունք է: Մարքսը կրոնն անվանեց «ափիոն ժողովրդի համար», իսկ Նիցշեն հանդգնություն ունեցավ այս շղթան հասցնելու իր տրամաբանական ավարտին. «Աստված մեռած է... եւ մենք ենք նրան սպանել»: «Եթե Աստված մեռած է, ուրեմն ամեն ինչ թույլատրելի է», - ասում է Ալյոշան «Կարամազով եղբայրներ»-ում: Եթե Աստված մեռած է, ապա տրամաբանությունը մեզ հանգեցնում է հետեւյալ եզրակացությանը. քրիստոնեությունը կեղծիք է, պորտաբույծ դասակարգի հնարանք եւ դարեր շարունակ խաբեության, մարդկային արժանապատվության ու առաջընթացի դեմ ոճիր գործելու համար արժանի է անհապաղ վերացման: Արմատախիլ անելով քրիստոնեությունը՝ մենք կգնանք բանականության ու գիտության հետեւից եւ երկրի վրա կստեղծենք բոլոր հնարավոր հասարակարգերից լավագույնը, կբարենորոգենք ու կկատարելագործենք այս միակ աշխարհը, ուր մեզ բախտ է վիճակվել ապրել:

Բայց եթե քրիստոնեությունն է ծնել արեւմտյան քաղաքակրթությունը եւ ընկած է նրա քաղաքական ու բարոյական կարգերի հիմքում, կարո՞ղ է, արդյոք, Արեւմուտքը տանել քրիստոնեության կորուստը: Եթե այդ կրոնը մեռնի, ապա ինչպիսի՞ հավատամք, ինչպիսի՞ միավորիչ սկզբունքներ, ինչպիսի՞ բարոյական հեղինակություններ կկարողանան փրկել Արեւմուտքը: Ի՞նչն է առհասարակ Արեւմուտքին բացառիկ դարձնում: Այդ ի՞նչ կապեր են միավորում նրա ազգերին ու ժողովուրդներին: Մեկը կարող է ասել՝ ռասայական համերաշխությունը: Բայց անցած հինգ հարյուր տարիները լի են եվրոպացիների միջև արյունալի կռիվներով, իսկ Առաջին ու Երկրորդ աշխարհամարտերը հանրագումարի բերեցին այս խելահեղությունները: Բացի դրանից, Ամերիկյան արդեն այսօր բազմազգ պետություն է, իսկ Եվրոպայի երկրներն այդպիսին կդառնան վաղը:

Աբրահամ Լինքոլնն ասում էր, որ ժողովրդին միավորում են «հիշողության միատիկական ակորդները»: Բայց հարցրեք անգլիացուն, ֆրանսիացուն կամ լեհին՝ միավորո՞ւմ են նրանց այդ

«միստիկական ակորդները» գերմանացիների կամ ռուսների հետ: Երբ ամերիկացիները վերհիշում են իրենց պատմությունը, մի մասը հիանում է նրա վեհությամբ, իսկ մի մասն էլ պնդում է, թե այն լի է չարագործություններով եւ ամոթալի գործերով: Իսկ այն պահից, ինչ Ամերիկան ու Եվրոպան բացել են սահմանները ժամանակին իրենց կողմից գաղութացված եւ կեղեքված երկրների միլիոնավոր բնակիչների համար, «հիշողության միստիկական ակորդներն» ավելի շուտ բաժանում, քան միավորում են մարդկանց: Մնում է եւս մեկ խոշոր միավորիչ ուժ՝ ժողովրդավարությունը: Բայց այն մեզ տվյալ դեպքում չի բավարարում: Ամերիկացիների մեծ մասը թքած ունի, թե ով եւ ինչպես է կառավարում մյուս ժողովուրդներին: Համընդհանուր հավատը ժողովրդավարության հանդեպ չափազանց թույլ է, որպեսզի ապահովի Արեւմուտքի համար երկրագնդի մյուս շրջանների աջակցությունը: Ժողովրդավարությունը մնացյալ ազգերի մեծ մասի համար ընդհանուր հասկացություն է՝ ուղղված մտքին, այլ ոչ թե սրտին: Մարդիկ պատրաստ են կռվել եւ մեռնել ընտանիքի, ընկերների, հավատի, երկրի, ազատության, բայց ոչ ժողովրդավարության համար:

Ժողովրդավարությունը բավական չէ: Գշմարտացի էր Յեյթսը, երբ ասում էր, որ հավատի մեռնելու հետ «ամեն ինչ խորտակվում է, եւ կենտրոնն անհնար է պահել»: Հավանաբար, ինչպես պատահում է ցանկացած քաղաքակրթության հետ, Արեւմուտքի ժամանակն իրոք սպառվելու վրա է. նրա վախճանը կանխորոշված է իրողություններով, եւ արդեն ոչ մի իմաստ չունի «հիվանդին» նոր դեղամիջոցներ կամ ցավոտ պրոցեդուրաներ նշանակել: Խնամառուն մահանում է. այստեղ արդեն ոչինչ անել չես կարող: Նրան կարող են փրկել միայն հավատի վերածնունդն ու «համընդհանուր զարթոնքը»: Արեւմուտքի մարդը չի անհետանա, բայց վաղ թե ուշ երկրագնդի վրա նրա ներկայությունը կդադարեն նկատել:

\* \* \*

Մենք մեծացել ենք՝ համոզված լինելով, որ «սառը» պատերազմում հաղթելու ենք: Մեզանից քչերը պատկերացում ունեին, թե որքանով է թույլ կամ ուժեղ հակառակորդը եւ միայն առանձին անհատներ կանխատեսեցին 1989թ. անսպասելի եւ սրընթաց

«գահավիժումը»: Բայց մենք հավատում էինք մեր հաղթանակին, հավատում էինք, որ կհաղթահարենք թշնամուն, եթե ունենանք բավարար կամք, ինքնավստահություն եւ եթե գտնվի արժանի առաջնորդ: Մշակութային հեղափոխությունն այնտեղ առաջընթաց ապրեց, ուր համայնավարների մոտ չէր ստացվում: Վերջիններս իրենց անկումից արդեն երկու սերունդ առաջ դադարել էին Արեւմուտքում համակիրների համալրում ստանալ: Իսկ մշակութային հեղափոխությունը մինչ այսօր էլ նոր կողմնակիցներ է հավաքագրում: Ժողովրդավարությունը միայնակ անկարող է հաղթահարել այն, քանզի անպաշտպան է մի գաղափարախոսության հանդեպ, որը կողմնորոշված է նոր վերնախավի, նոր հավատի եւ նոր աշխարհակարգի միջոցով՝ ժողովրդավարության կերպափոխմանը:

Երբ գաղափարախոսությունն է իշխում հասարակությունում, նրան կարող է արմատախիլ անել միայն գերազանցող ուժը կամ էլ գերազանցող գաղափարախոսությունը: Հավատին կարելի է հաղթել միայն հավատով: Իսկ Արեւմուտքի համար ինչպիսի՞ այլընտրանք կարող է լինել քրիստոնեությանը: Էլիոտն ասում էր. «Քաղաքական իմաստասիրությունը շատ բան է ընդօրինակել բարոյագիտությունից, իսկ բարոյագիտությունը՝ կրոնական ճշմարտություններից, ուստի միայն այդ ճշմարտությունների ակունքներին վերադառնալու միջոցով կարող ենք հույս ունենալ, թե աշխարհ կգա մի հասարակական կառույց, որը նույնիսկ փլուզման եզրին գտնվելու դեպքում չի արհամարհի իրականության անխախտ օրենքները»:

Բայց եթե քրիստոնեությունը կորցրել է իր գրավչությունը, եթե նա «այն ընտրությունը չէ», ապա հեղափոխությունը կարագացնի իր ընթացքն այնքան ժամանակ, քանի դեռ մենք չենք բախվել իրականության «պատին»: Գուցե ճիշտ էր Սիրիլ Քոնոլիին, երբ կես դար առաջ գրում էր. «Նաեւ արեւմտյան այգիներում են արդեն հանգչում լապտերները...»:

«Հանրապետական», 2003, թ. 7

## ՄԵԾ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ Ֆրենսիս Ֆուկույամա

*Ամերիկացի քաղաքագետ Ֆրենսիս Ֆուկույաման երկար տարիներ աշխատել է ՌԷՆԴ կորպորացիայում, զբաղվել ազգային անվտանգության եւ քաղաքական պլանավորման խնդիրներով: Այժմ Հոպկինսի համալսարանի միջազգային քաղաքատնտեսության ֆակուլտետի դեկանն է: Նա լայն ճանաչում գտավ 1989թ. հրատարակած «Պատմության ավարտը» գրքով: 1999թ. լույս տեսավ նրա «Մեծ խզում» գիրքը, որից ներկայացնում ենք մի հատված:*

### **Մսխո՞ւմ է, արդյոք, կապիտալիզմը սոցիալական կապիտալը**

Շատ մարդիկ համարում են, որ կապիտալիզմը վատ ազդեցություն է թողնում բարոյականության վրա: Շուկաներն ամեն ինչ վերածում են ապրանքի եւ մարդկային հարաբերությունները փոխարինում զուտ շահերով: Այս տեսանկյունից ժամանակակից կապիտալիստական հասարակությունն ավելի շատ սպառում է, քան ստեղծում սոցիալական կապիտալ: Այնպիսի ֆենոմեններ, ինչպիսիք են Հյուս. Ամերիկայում ու Եվրոպայում հասարակական ինստիտուտների նկատմամբ վստահության նվազումը եւ, ընդհանուր առմամբ, վստահության շառավղի փոքրացումը, հանցագործության բարձր մակարդակն ու ազգակցական կապերի խզումը, տազնապալի միտում ունեն. այս զարգացած հանրությունները վատնում են իրենց սոցիալական կապիտալը՝ չունենալով դրա վերարտադրման հնարավորությունը: Դատապարտված է, արդյոք, կապիտալիստական հասարակությունը ժամանակի ընթացքում դառնալու նյութապես հարուստ, սակայն բարոյապես աղքատ: Քանդո՞ւմ են, արդյոք, շուկայի ծայրահեղ անգթությունն ու անդեմությունը սոցիալական կապերը եւ սովորեցնում, որ միայն փողը, այլ ոչ թե հանրային արժեքներն են ինչ-որ բան նշանակում: Գնո՞ւմ է, արդյոք, ժամանակակից կապիտալիզմը դեպի սեփական բարոյականության հիմքերի խորտակում, այդպիսով՝ դեպի կոլապս:

Իրականում ժամանակակից տեխնոլոգիական հասարակությունները շարունակում են ունենալ սոցիալական կապիտալի կարիքը, վատնել այն, իսկ հետո լրացնել՝ ինչպես նախկինում: Հիմք չկա պնդելու, թե բարոյականության ոչ ձեւական նորմերի անհրաժեշտությունը կվերանա կամ մարդիկ կդադարեն իրենց համար հաստատել բարոյական ստանդարտներ եւ փորձել հետեւել դրանց: Մարդիկ իրենց համար կստեղծեն բարոյականության կանոններ մասնավորապես այն պատճառով, որ բնությամբ այդպես են ստեղծված, ինչպես նաեւ անձնական շահ հետապնդելու նպատակով: Նախկինում սոցիալական կապիտալը կարող էր առաջանալ այնպիսի աղբյուրներից, ինչպիսիք են նվիրատվությունը կամ դարավոր ավանդույթը, որոնք ժամանակակից աշխարհում կարծես համեմատաբար թույլ են, սակայն գոյություն ունեն նաեւ այլ աղբյուրներ:

Հանրության միջոցով սոցիալական կապիտալի վերականգնումը համալիր եւ դժվարին գործընթաց է: Շատ դեպքերում այն վերաբերվում է տարբեր սերունդների ներկայացուցիչներին եւ իր հետեւից բազմաթիվ զոհեր է թողնում, քանզի համագործակցության հին նորմերը վերացել են, իսկ նորերը դեռ նրանց չեն փոխարինել: **Մեծ խզումը** չի կարող ինքն իրեն մեքենայորեն շտկել: Մարդիկ պետք է գիտակցեն, որ իրենց հասարակական կյանքը վատթարացել է, որ իրենց պահվածքն ինքնակործանարար է եւ որ իրենց անհրաժեշտ է սեփական հանրության նորմերի վերաստեղծման վրա (բանավեճերի, ապացույցների, մշակութային փաստարկների ու նույնիսկ մշակութային պատերազմների միջոցով) ջանադրաբար աշխատել: Ապացույցներ կան, որ դա վերջին ժամանակներում արդեն տեղի է ունենում, իսկ մարդկության պատմության նախորդ ժամանակաշրջանները մեզ որոշակի վստահություն են տալիս, որ նորմերի ու բարոյականության վերականգնումը հնարավոր է:

## **Սոցիալական կապիտալը եւ պատմությունը**

Գոյություն ունի վստահության շրջանակի ընդլայնման երկու հիմնական աղբյուր՝ կրոնը եւ քաղաքականությունը: Արեւմուտքում քրիստոնեությունն առաջինը սահմանեց մարդկային արժա-



նապատվության համակողմանիության սկզբունքը, ինչը երկնքից իջեցվեց երկիր ու Լուսավորության դարաշրջանում վերածվեց համապարփակ մարդկային հավասարության աշխարհիկ ուսմունքի: Այսօր մենք պահանջում ենք քաղաքականությունից, որ այն կրի այդ նախածեռնության համարյա ողջ ծանրությունը, եւ նա զարմանալի հաջողությամբ դա իրականացնում է: Մարդկային միությունները հիմնված էին բազմազան սկզբունքների վրա, որոնց հետեւանքը եղավ վստահության նեղ շրջանակը՝ իր մեջ ներառելով ընտանիքը, ազգականներին, տոհմը, աղանդը, կրոնը, ռասան, էթնիկությունն ու ազգային նույնությունը: Լուսավորությունն ըմբռնեց, որ այդ բոլոր ընդհանրությունների աղբյուրները վերջին հաշվով իռացիոնալ են: Ներքին քաղաքականությունում նրանք ստեղծեցին սոցիալական առճակատումներ, որովհետեւ ոչ մի հասարակություն ցանկացած այս հատկանիշներով փաստորեն երբեք էլ գերիշխան չի եղել: Արտաքին քաղաքականությունում դրանք հանգեցրին պատերազմների, քանզի տարբեր սկզբունքներին հենված հասարակությունները միջազգային ասպարեզում միմյանց հետ մշտապես ընդհարումների մեջ են: Միայն մարդկային արժանապատվության համակողմանի ճանաչման վրա հիմնված քաղաքական կարգը՝ բարոյական ընտրության ընդունակությունից բխող բոլոր մարդկանց էական հավասարությունը կարող է վերացնել այդ իռացիոնալությունները եւ ստեղծել ներքին ու միջազգային խաղաղ կարգեր: Կանտի հանրապետական կառավարման կարգը, ամերիկյան Անկախության հռչակագիրն ու Բիլի «իրավունքները», հեգելյան ունիվերսալ եւ հոմոգեն պետությունը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն ու ժամանակակից ազատական ժողովրդավարությունների հիմնական օրենքներում հիշատակված իրավունքներն այսօր հետեւում են համակողմանիության ճանաչման սկզբունքին:

Համակողմանի ազատական այս սկզբունքների վրա կառուցված ազգերը, չնայած հաճախակի անկումներին եւ անհաջողություններին, վերջին երկու դարերի ընթացքում անսովոր կայուն դուրս եկան: Հասարակության տնտեսական զարգացմանը զուգընթաց՝ ազատական ու ժողովրդավարական քաղաքական կարգի տրամաբանությունը դառնում է առավել հրատապ, քանզի նրանում գոյություն ունեցող զանազան շահերի համաձայնեցումը

միաժամանակ պահանջում է ե՛լ մասնակցություն, ե՛լ հավասարություն: Ժամանակակից բնագիտության զարգացումն առաջ է մղում տնտեսությունը, որն էլ, անկուններով ու սխալներով հանդերձ, քաղաքական զարգացման գործընթացներն իր հետեւից տանում է դեպի ազատական ժողովրդավարություն:

Գլխավոր խնդիրն այն է, որ սոցիալական ու բարոյական կարգն անպայմանորեն չի հետեւում քաղաքական կարգին եւ տնտեսական զարգացմանը: Գոյություն ունի երկու պատճառ, որոնց շնորհիվ քաղաքական կարգի մշակութային նախադրյալները չեն կարող ընդունվել որպես տվյալություն: Առաջինն այն է, որ ազատական հասարակությունները քաղաքական կարգ ձեռք են բերում բարոյական համաձայնության գնով: Միակ բարոյական դիրեկտիվը, որ հնարավոր է ազատական հանրությունում, հանդուրժողականության ու փոխադարձ հարգանքի համակողմանի պարտավորություններն են: Սկզբում այն խնդիր չէր հանդիսանում, որովհետեւ շատ ազատական հասարակություններ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, մշակութային առումով սկսել են զարգանալ որպես համեմատաբար հոմոգեն. նրանցում իշխում էր մեկ մշակութային խավ եւ մեկ կրոն: Բայց ժամանակի ընթացքում դրանք դարձան մշակութորեն անհամեմատ բազմազան: Բնակչության նվազումը, արտագաղթի խրախուսումը եւ ազգային սահմանները, որոնք էժան տրանսպորտի ու զարգացած հաղորդակցության ուղիների շնորհիվ դարձել են թափանցիկ, ցույց են տալիս, որ շարժումը դեպի ավելի բազմազանություն ամենուրեք պահպանվում է: Նույնիսկ այնպիսի երկրներ, ինչպիսիք են, օրինակ, ճապոնիան է, որոնց մինչ օրս հաջողվել է պահպանել մշակութային ու էթնիկական հոմոգենության բավարար մակարդակ, ապագայում եւս բախվելու են նմանատիպ խնդիրների:

ԱՄՆ-ում եւ մյուս անգլիախոս ժողովրդավարություններում, ինչպես եւ Ֆրանսիայում, այդ կենտրոնախույս մշակութային ուժերն ավանդաբար փոխհատուցվում են նոր քաղաքացիական նույնության ստեղծմամբ, ինչը կապված չէ էթնիկական պատկանելության ու կրոնի հետ: «Ամերիկանացումը», որ ծագել է հավասարապես ե՛լ ժողովրդավարության քաղաքական ձգտումներից, ե՛լ անգլոսաքսոնական մշակութային ավանդույթներից, հասանելի է ԱՄՆ արտագաղթածների բոլոր երեխաներին: Դասական հանրա-

պետականության ու սեփական գրական մշակույթի վրա հիմնված ֆրանսիական քաղաքացիությունը նույնչափ հասանելի է (ծայրահեղ դեպքում՝ տեսականորեն) սենեզավցի սեւամորթին եւ թունիսցի արաբին, չնայած ներգաղթը Ֆրանսիայում հարուցում է անհամեմատ ավելի լուրջ բացասական հակազդեցություն:

Ապագայի հիմնական հարցն այն է, թե կոոյատեւեն, արդյոք, մշակութային նույնության այս համապարփակ ձեւերը բազմամշակութականության (մուլտիկուլտուրալիզմ) սկզբունքային դավանանքի գրոհների տակ, որն անցնում է մշակութային բազմազանության սահմաններն ու պահանջում մշակութային տարբերությունների եւ առանձնահատկությունների խրախուսում: Բարոյական մանրացումը հենց մասամբ տեղի ունեցավ այն պատճառով, որ հանրությունը դարձավ ավելի տարասեռ: Այս գործընթացի առավել կարեւոր պատճառը հարաբերապաշտության (ռեյաստիվիզմ) սկզբունքային դավանանքի տարածումն է. մի գաղափար, համաձայն որի՝ արժեքների կամ նորմերի ոչ մի առանձին խումբ չի կարող կամ չպետք է գերիշխող լինի: Երբ այդպիսի հարաբերապաշտությունը տարածվում է քաղաքական արժեքների վրա, որոնք վարչակարգերի հիմքն են, ազատականությունը սկսում է ինքնառչնչանալ:

Երկրորդ խնդիրը, որի հետ բախվում են ազատական հասարակությունները՝ պաշտպանելով սեփական մշակութային հիմքերը, տեխնոլոգիական փոփոխությունների հարուցած վտանգն է: Սոցիալական կապիտալը ինչ-որ հազվագյուտ ու թանկարժեք իր չէ, որ մի անգամ ստեղծվել է կրոնի դարաշրջանում եւ հին ավանդույթի շնորհիվ ժառանգաբար փոխանցվել: Այն չունի նաեւ մշտական աղբյուր, որն այսօր մեր՝ ժամանակակից աշխարհիկ մարդկանց կողմից անողոքաբար ոչնչացվում է: Եվ չնայած սոցիալական կապիտալի պաշարը մշտապես լրացվում է, բայց այդ գործընթացն ինքնաբերաբար, հեշտությամբ ու առանց ծախսերի չի ընթանում: Հենց նույն գյուտը, որ բարձրացնում է արտադրողականությունը կամ ստեղծում արդյունաբերության նոր ծյուղ, քայքայում է գոյություն ունեցող համակեցությունը կամ ողջ ապրելակերպը դարձնում հնացած: Հասարակությունները, որ կանգնել են տեխնոլոգիական առաջընթացի շարժասանդուղքին, ստիպված են հասնողի դերում լինել, քանզի սոցիալական կանոնները

կատարելագործվում են, որպեսզի համապատասխանեն փոփոխվող տնտեսական պայմաններին: Մարդիկ ժամանակի ընթացքում կարող են ընտելանալ փոփոխվող պայմաններին, սակայն տեխնոլոգիական փոփոխությունների արագությունը հաճախ կարող է գերազանցել սոցիալական համակերպման արագությանը: Երբ սոցիալական կապիտալի արտադրությունն անկարող է բավարարել պահանջարկը, հասարակություններին հարկ է լինում դրա համար թանկ գին վճարել:

Հասարակությունում տեղի է ունենում զուգահեռ զարգացող երկու գործընթաց: Քաղաքական ու տնտեսական ոլորտում պատմությունը հանդիսանում է առաջադեմ եւ սահմանային, որի զագաթնակետը 20-րդ դարի վերջին եղավ ազատական ժողովրդավարությունը՝ որպես տեխնոլոգիապես զարգացած հասարակությունների համար միակ կենսունակ ընտրություն: Բայց սոցիալական ու բարոյական ոլորտում պատմությունը կարծես թե ցիկլային է, եւ սոցիալական կապիտալը բազում սերունդների ընթացքում նվազում ու աճում է: Չկա ոչինչ, որ երաշխավորի ցիկլում սոցիալական կապիտալի աճը: Հույսի միակ գրավականը կարող է լինել սոցիալական կարգի վերաստեղծմանն ուղղված՝ շատ հզոր մարդկային ներքին կարողությունը: Վերաստեղծման այս գործընթացի հաջողությունից է կախված, թե Պատմության սլաքը ուղղված կլինի՞ վեր:

«Հանրապետական», 2003, թ. 8

## ԱՌՈՂՋ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### *Սամուել Դանտինգտոն*

Հաշվի առնելով Ամերիկայում պահպանողականության եւ ազատականության միջեւ տարբերություններն ու ընթացող բանավեճերը՝ հատուկ ուշադրության են արժանի պահպանողական մտածողության 3 բնորոշիչ գծերը՝ հավատն առ Աստված, մարդկային բնության հայեցակարգը եւ ծառայումն ազգին:

Ի տարբերություն ազատականության՝ պահպանողականությունն արմատավորված է կրոնով: Իհարկե, որոշ ազատականներ կրոնական մարդիկ են, բայց մնացյալ մեծամասնությունը հակված է աշխարհիկ կյանքի, հանդիսանում է աթեիստ կամ ազնոստիկ: Եվ թեպետ պահպանողականները կարող են գործուն մասնակցություն ունենալ կամ չունենալ եկեղեցու գործերին, բայց հազիվ թե հնարավոր լինի լինել պահպանողական՝ չլինելով հավատացյալ: Քանզի պահպանողականները հավատում են Աստծուն, իսկ ամերիկացիները՝ ոչ մեծ, բայց կարելուր հրեա փոքրամասնությամբ հանդերձ, ճնշող մեծամասնությամբ քրիստոնյա են, ապա ամերիկյան պահպանողականության համար Աստված Հին ու Նոր Կտակարանների աստվածն է: Արդի ԱՄՆ-ում կրոնական շարժումն ու պահպանողականությունը ուս ուսի տված, համատեղ հանդես են գալիս սեկուլյարիզմի (ապակրոնացման), ռեյատիվիզմի (հարաբերապաշտության) եւ ազատականության դեմ: Պահպանողականության համար մարդը բնավ էլ ամեն ինչի չափանիշը չէ: Գոյություն ունեն Աստված եւ Գերագույն օրենք՝ բնական կամ աստվածային, որ ենթակա չէ մարդուն: Ժխտելով Աստծո եւ մարդկային կամքի հնարավորությունները գերազանցող Գերագույն օրենքի գոյությունը՝ մարդը սկսում է գահավիժել ներքեւ՝ դեպի բարոյական անարխիա: Այլընտրանքային սեկուլյար մոտեցումը հիմնված է նրա վրա, որ մարդը հանդիսանում է ամեն ինչի եւ չափանիշը, եւ արարիչը, որ անհատներն ու հասարակությունները իրենք են որոշում, թե իրենց համար որն է լավ եւ որը վատ, եւ այդ

որոշիչներն ուժի մեջ են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պահպանում են իրենց նշանակությունը:

Կրոնը հանդիսանում է մարդկային խառնվածքի ու փոխհարաբերությունների պահպանողական հայեցակարգի աղբյուր: Պահպանողական ընկալմամբ, մարդ արարածն ընդունակ է սիրո, վեհանձնության, հերոսության եւ անձնագոհության, բայց նաեւ՝ ատելության, ընչաքաղցության, փոքրոգության, բռնության, նախանձի, ամբարտավանության եւ իշխանատենչության: «Սկզբնական մեղքն» իրականություն է. չարությունը հատուկ է մարդկային խառնվածքին: Եվ քանի որ Մադիսոնի խոսքերով մարդիկ հրեշտակներ չեն, ապա կառավարություններն (այլ սոցիալական մեխանիզմների հետ մեկտեղ) անհրաժեշտ են, որպեսզի վերահսկեն նրանց եւ, իրենց հերթին, նույնպես պետք է գտնվեն հսկողության տակ: Պահպանողական հեռանկարում չարիքը կարելի է մեղմացնել ու կասեցնել, բայց ոչ կործանել: Հակադիր հայացքները հիմնվում են նրա վրա, որ մարդկանց ի սկզբանե հատուկ է բարությունը, իսկ չարիքը սխալ ինստիտուտների եւ քաղաքականության արդյունք է: Եթե մարդիկ կարողանան գտնել ճիշտ ինստիտուտներ ու քաղաքականություն, ապա կխուսափեն պատերազմից, հանցագործությունից, աղքատությունից, անհավասարությունից եւ այլ արատներից:

Այսպիսով, պահպանողականությունն ընդհարումները եւ նույնիսկ բռնի ընդհարումները համարում է մարդկային խառնվածքի անխուսափելի դրսեւորում: Խմբերում ու հասարակություններում գոյություն ունեն շահերի իրական բախումներ: Դրանք թյուրիմացության, անհավաստի տեղեկատվության կամ անհեռատեսության արդյունք չեն, այլ արմատավորված են մարդկային բնության, եսամոլության, ինչպես եւ՝ հարստության, անվտանգության ու իշխանության համար պայքարի մեջ: Չնայած փոխադարձ շահը հնարավոր է, բայց համարյա բոլոր իրադրություններում առկա են հաղթողներ ու պարտվողներ կամ ծայրահեղ դեպքում անձինք, որոնք շահել կամ կորցրել են ավելի շատ, եւ անձինք, որոնք շահել կամ կորցրել են ավելի քիչ: Հակադիր դիրքորոշումն այն է, որ անհատների ու խմբերի միջեւ գոյություն ունի բնական ներ-

դաշնակություն, եւ որ առճակատումները, հատկապէս պետութ-  
յունների միջեւ, թյուրիմացությունների ու նրանց «իսկական» շա-  
հերի չըմբռնման արդյունք են: Ազատականները հակված են  
համարել, թէ առճակատման երկու կողմերն էլ շահագրգիռ են  
փոխադարձ համաձայնության եւ ձգտում են հասնել դրան:  
Պահպանողականները գտնում են, որ երկու կողմերն էլ հավասա-  
րապէս շահագրգիռ են հաղթանակում եւ ջանում են կորզել այն:  
Ազատականները կարծում են, թէ մարդկանց միջեւ համագործակ-  
ցության խորացումը հեշտացնում է շահերի փոխադարձ ընկա-  
լումը, մոտեցումն ու համաձայնեցումը: Պահպանողականներն  
այդ առիթով լուրջ կասկածներ ունեն: Ազատականները հակված  
են հավատալ, թէ ընթացիկ հիմնական առճակատման ավարտը,  
ինչպիսին էլ որ այն լինի, նշանակում է բոլոր առճակատումների  
ավարտ: Պահպանողականները գիտեն, որ մի ընդհարման վերջը  
հող է ստեղծում մյուսի համար: Նրանք համաձայն են Ռոբին  
Ֆոքսի հետ, թէ *«պատերազմները հիվանդություն չեն, որ կարելի է  
բուժել, այլ նարդկային բնականոն հարաբերությունների մի մաս:  
Դրանք առաջանում են նրանից, որ մենք կանք, այլ ոչ այն  
անակնկալներից, որոնք մեզ հետ ժամանակ առ ժամանակ պա-  
տահում են: Դրանք, ինչպէս կրոնն ու պրոմկությունը, հանդի-  
սանում են նարդկային հիմնական մտավախությունների եւ սպա-  
տումների առաջնային պատասխանները»*: Ազատականները  
համարում են, որ պատերազմը շեղում է, որ կարելի է վերացնել՝  
ժողովուրդների միջեւ երկխոսության, միջազգային առեւտրի ընդ-  
լայնման, սպառազինությունների վերահսկման պայմանագրերի  
կատարման, ռազմական ծախսերի կրճատման եւ ՄԱԿ-ի հզորաց-  
ման միջոցով:

Հաշվի առնելով այս աշխարհի էությունը՝ պահպանողական-  
ները երկրին նվիրվածությունը Աստծոն նվիրվածության հետ դա-  
սում են մի շարքում: Հայրենասիրությունը երեւի գլխավոր պահ-  
պանողական առաքինությունն է: Պահպանողականներն անչափ  
հավատարիմ են իրենց երկրին, նրա արժեքներին, նշակույթին եւ  
հաստատություններին: Ի տարբերություն ազատականների մեծա-  
մասնության, նրանք միջազգային կազմակերպությունները դի-

տուն են ոչ որպես ինքնին բարօրություն, այլ՝ որքանով դրանք օժանդակում են ամերիկյան ազգի բարեկեցությանը: Ազատականներն առավել հակված են, ինչպես Մարթա Նասբաունը, «ազգային հպարտությունը» դիտել որպես «բարոյական վտանգ» եւ նախապատվությունը (հայրենասիրությունից առաջ) տալ աշխարհաքաղաքացիությանը: Պահպանողականները համաձայն են Քոուլրիջի հետ նրանում, որ աշխարհաքաղաքացիությունը, որ հիմնված է ազգային վրա, «կեղծ ու փչացած պտուղ» է, եւ որ իսկական հայրենասերը քամահրանքով է վերաբերվում *«կեղծ գաղափարախոսությանը կամ թյուր կրոնին, որոնք պիտի համոզեն իրեն, թե աշխարհաքաղաքացիությունն ավելի վեհ է, քան հայրենասիրությունը, իսկ մարդը՝ սիրո ավելի արժանի, քան ժողովուրդը»:*

Ի տարբերություն պահպանողականների, ազատականները հակված են կասկածի տակ առնել **ազգ-պետության** լեգիտիմությունը: Ազատականության տեսանկյունից, հատուկ ինքնությունները վտանգավոր են, քանզի «մենք»-ի եւ «նրանք»-ի միջեւ ստեղծում են արգելքներ ու սահմանազատիչ գծեր: Ազատականները նախընտրում են նայել առաջ՝ այն ժամանակները, երբ Սթրուբլ Թելբոթի արտահայտությամբ՝ *«ազգային կարգավիճակը, ինչպիսին որ մենք այն գիտենք, կկորցնի իր նշանակությունը, եւ բոլոր պետությունները կընդունեն միասնական գլոբալ իշխանությունը»:* Նույն ոգով է Ռիչարդ Սենեթը բացահայտում «ազգային ինքնության չարիքը», իսկ Էմի Յաթմանը «նողկալի» է համարում այն, որ ամերիկյան ուսանողներին սովորեցնում են, թե իրենք առաջին հերթին ԱՄՆ քաղաքացիներ են:

\* \* \*

Տնտեսական գլոբալացումը ողջ աշխարհում առաջացնում է խզում ապազգայնացած վերնախավի ու ազգայնական զանգվածների միջեւ: Հզորանում է գործարարների, պաշտոնական անձանց, գիտնականների ու լրագրողների միջազգային դասը, որի ներկայացուցիչները մշտապես ճանապարհորդում են, համագործակցում միմյանց հետ եւ պաշտպանում առեւտրի զարգացման ու



ներդրումների, ազատական ժողովրդավարության եւ շուկայական տնտեսության տարածման քաղաքականությունը: Բայց հաճախ այս նպատակները հակասության մեջ են մտնում տարբեր հասարակությունների լայն զանգվածների տնտեսական հետաքրքրությունների ու մշակութային դրույթների հետ, որի հետեւանքն է ազգայնական, հակաազատական եւ ամբոխավարական հակազդումը գլոբալացմանը: Միացյալ Նահանգներն ամենեւին էլ պաշտպանված չէ այս միտումներից:

Ամերիկյան ուժն ու հարստությունը հասել են իրենց գագաթնակետին, ի տարբերություն ազգային միասնության, տնտեսական արդարության եւ մշակութային արժեքների: Լայն իմաստով ամերիկյան ազգային ինքնությունը կանգնել է իրեն ներքեւից քայքայող մոլորակուլտուրալիզմի եւ վերեւից սրբող-տանող աշխարհաքաղաքացիության մարտահրավերների դեմ: Հայրենասիրությունն ԱՄՆ վերնախավի մեծ մասի մոտ հարգի չէ: Հնարավոր է, որ ապագայում ԱՄՆ-ի համար լուրջ վտանգ ներկայացնեն Չինաստանը, Ռուսաստանը, իսլամական աշխարհը կամ էլ թշնամական երկրների որեւէ խմբավորում: Բայց այսօր ամերիկյան միասնությանը, մշակութային եւ հզորությանը սպառնացող վտանգներն առավել մոտ են: Դասական պահպանողականության եւ նեոպահպանողականության անհրաժեշտ պատասխանը` **առողջ ազգայնականության** միասնական սատարումն է, ինչը պետք է ամրագրի որոշ կարեւոր ճշմարտություններ. *ԱՄՆ-ը կրոնական երկիր է: Հայրենասիրությունը արժանապատվություն է: Ունիվերսալիզմն ամերիկյանիզմ չէ: Ազգայնականությունը մեկուսացվածություն (իզոլյացիոնիզմ) չէ:*

Այդ ճշմարտություններն արձագանք են գտնում ամերիկյան ժողովրդի մոտ: Պահպանողականներն Աստծո ու երկրի առջեւ իրենց պարտավորություններով առանձնանում են ազատական շատ վերնախավերից, բայց միասնաբար են հանդես գալիս ամերիկյան ժողովրդի հետ: Ամերիկյան, զգալի չափով, ստեղծվել է կրոնական շարժառիթներով, եւ ամերիկյան ողջ պատմության ընթացքում օտար դիտորդները, որպես ամերիկյան ժողովրդի բնութագրային տարբերակիչներ, նշել են նրա կրոնական ակտի-

վությունն ու թունդ նվիրվածությունը հավատին: Ամերիկան, բոլոր թույլատրելի գնահատումներով, իր կրոնասիրությամբ առանձնանում է մյուս հարուստ երկրներից: Տարբեր հարցախույզներում ամերիկացիները համարյա միշտ առավել հայրենասեր են դուրս գալիս եւ ավելի շատ հպարտանում իրենց երկրով, քան մյուս ազգերի ներկայացուցիչները: Հայրենասիրությունն ու կրոնը ամերիկյան ինքնության առանցքային տարրերն են:

Առողջ ազգայնականությունը կարող է խիստ հրապուրիչ լինել հասարակության համար եւ որպես այլընտրանք ծառայել առավել նեղ մոտեցումներին, որոնք նույնպես կարող են հասարակական աջակցության արժանանալ: Առողջ ազգայնականությունն այլընտրանք է ե՛ւ պառակտող մուլտիկուլտուրալիզմին, ե՛ւ այլամերժ մեկուսացվածությանը, ե՛ւ ունիվերսալիզմին: Դա հիմք է, որի շուրջ, հանուն աշխարհում ամերիկյան շահերի առաջնդման եւ Ամերիկայում ազգային միասնության հաստատման, կարող են միավորվել պահպանողականները:

«Հանրապետական», 2004, թ. 2

## ԴՐՈՒՅԹՆԵՐ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ *Ալեքսանդր Դուզին*

«Գլոբալացում» եզրի տակ առկա են երկու տարբեր հասկացություններ, որոնք հաճախ շփոթում են:

### **Իրական գլոբալացում**

Իրական գլոբալացումը աշխարհի բոլոր երկրներին ու պետություններին արեւմտյան տնտեսական, քաղաքական, մշակութային, տեխնոլոգիական եւ տեղեկատվական կողի պարտադրման՝ այժմ կենսագործվող գործընթացն է: Այդպիսի գլոբալացումն անցկացվում է «հարուստ Յյուսիսի», «ոսկե միլիարդի» կողմից եւ միտված է աշխարհում նրանց գերիշխանության ամրապնդմանը: Սա «նոր գաղութացման» ձեւ է: «Հարուստներն» իշխում են «աղքատների», «զարգացածները»՝ «հետամնացների» վրա: Ընդ որում, ժողովուրդներն ու երկրները կորցնում են «անկախության» մնացորդները եւ կամ մտնում են գլոբալացման համակարգի մեջ, կամ էլ դառնում են «մերժյալ», իրավազուրկ երկրներ, «չարիքի առանցք»:

Տնտեսապես այսպիսի գլոբալացումը հաստատում է տնտեսության ազատական մոդելի, արմատական մոնետարիզմի, «Ֆինանսիզմի» (ֆոնդային շուկաների, վենչուրային ձեռնարկությունների զարգացում եւ այլն) արմատավորում ամենուրեք:

Քաղաքականապես այն հիմնավորում է ազատական-ժողովրդավարական աշխարհիկ կառուցվածքի ամենուրեք հաստատման անհրաժեշտությունը, «մարդու իրավունքների» գաղափարախոսության, «բաց» եւ «քաղաքացիական» հասարակությունների գերակայությունը: Ըստ այդմ՝ պետականությունն աստիճանաբար վերացվում է, տերությունների վարչարարական համակարգերը լուծարվում են:

Ռազմավարական տեսանկյունից այդպիսի գլոբալացումը նշանակում է ԱՄՆ եւ գլոբալացման գծով նրա գործընկերների (արբանյակների) զինված ուժերի կողմից երկրագնդի ողջ տարածքի վրա անմիջական հսկողության սահմանում: Այն կարելի է կոչել «գլոբալ գլոբալացում» (քանզի ենթադրում է անցում

ինքնիշխան երկրների համակարգից ընդհանուր համաշխարհային պետության՝ համաշխարհային կառավարության գլխավորությամբ) եւ «միաբեւեռ գլոբալացում» (որովհետեւ գլխավոր ատյանը մնալու է ժամանակակից Արեւմուտքը՝ նախկին երկբեւեռ համակարգի այն բեւեռը, որը հաղթեց «սառը պատերազմում» ու պահպանեց իր հզորությունը):

Այսպիսի գլոբալացման ընթացքում ենթադրվում է աստիճանական հրաժարում միջազգային իրավունքի նախկին կաղապարներից. վերացման են ենթակա այնպիսի կառույցներ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՆԱՏՕ-ն եւ այլն: Նրանց փոխարեն ձեւավորվելու են այլ կառույցներ, որոնք նախատեսելու են իշխանության (տնտեսական, քաղաքական եւ զինվորական) առավելագույն կենտրոնացում «գլոբալ վերնախավի» (հետագայում՝ համաշխարհային կառավարության) ձեռքում: Ի տարբերություն այսօր գոյություն ունեցող միջազգային կառույցների, որոնք հիմնված են բազմաթիվ երկրների ուժային կարողությունների հաշվառման վրա, գլոբալ իշխանության կառույցները ենթադրում են առավել հստակ արտահայտված միանձնյա ղեկավարություն: ԱՄՆ ռազմավարներն այդպիսի աշխարհակառուցվածքը դիտում են որպես ամերիկյան քաղաքական-տնտեսական եւ մշակութային մոդելների փոխադրում երկրագնդի ողջ տարածք: Այս գաղափարը դրված է «Աշխարհի Միացյալ Նահանգների» հայեցակարգում:

### **Հավանական գլոբալացում**

Հավանական գլոբալացումը զուտ տեսական նախագիծ է՝ տարածված զարգացած երկրների հումանիտար, առավել հաճախ՝ «ձախակողմյան», բնապահպանական, սցիենտիստական<sup>1</sup> շրջանակներում: Հումանիտար գլոբալացումը պատկերացվում է որպես երկբեւեռ աշխարհի դիմակայության ավարտից հետո մշակույթների ու քաղաքակրթությունների երկխոսության զարգացում: Այս դեպքում «գլոբալացման» տակ հասկացվում է ոչ թե

---

<sup>1</sup> Սցիենտիզմ (լատ.՝ գիտություն, գիտելիք) - աշխարհայացք, որ դիտում է գիտությունն իբրեւ պատմական առաջընթացի եւ սոցիալական խնդիրների լուծման գլխավոր գործոն. - խմբ.:

Արեւմուտքի կողմից մնացած բոլորին տնտեսական, մշակութային, քաղաքական, տեղեկատվական, արժեքային միասնական կաղապարների պարտադրում, այլ՝ «փորձի գլոբալ փոխանակում», տարբեր սուբյեկտների միջև ինտենսիվ երկխոսություն: Այսպիսի գլոբալացումը ենթադրում է «գաղութային» մոտեցման վերացում եւ ձգտում է ժողովուրդներին տալ պատմական ու մշակութային զարգացման ճանապարհի ընտրության լրիվ ազատություն:

Այս հումանիտար գլոբալացումը հնարավոր է համարում սոցիալ-քաղաքական եւ տնտեսական համակարգերի բազմազանությունը, ունի պացիֆիստական բնույթ, բոլոր երկրներին (ներառյալ՝ ԱՄՆ-ին) տանում է միջուկային զինաթափման կամ, որպես միջանկյալ փուլ, միմյանց փոխսահմանափակող մի քանի միջուկային բեւեռների ստեղծման: Այդպիսի գլոբալացումը, ի տարբերություն նախկին միաբեւեռի, կարող է կոչվել բազմաբեւեռ: Սրա տարատեսակ կարելի է համարել «մասնակի», «տեղային» կամ «մեծ տարածքների» գլոբալացումը: Այն ենթադրում է միասնական քաղաքակրթական կող ունեցող երկրների տնտեսական, քաղաքական եւ սոցիալական ինտենսիվ մերձեցում: Այս գլոբալացումը ոչ թե ողջ հողագնդի, այլ մեկ քաղաքակրթության շրջանակներում է: Այդպիսի «տարածաշրջանային գլոբալացման» օրինակ կարելի է համարել ներկայիս Եվրամիությունը կամ Եվրասիական տնտեսական խորհուրդը:

Հարկ է նշել, որ «բազմաբեւեռ գլոբալացումը» հումանիտար մտավորականության նախագիծ է, ինչպես նաեւ մյուս՝ «միաբեւեռ», «գլոբալ» եւ «ամերիկակենտրոն» գլոբալացման հաջող իրականացման դեպքում աննպաստ վիճակում հայտնված երկրների կամ նրանց դաշինքների շահերին համապատասխանող զուտ տեսական մոդել:

Հավանական գլոբալացումը (այսինքն՝ այնպիսին, որը գոյություն չունի, բայց կարող էր լինել) հանդիսանում է այլընտրանք իրական գլոբալացմանը (այսինքն՝ այնպիսինին, որն այժմ առկա է, բայց կարող էր չլինել): «Գլոբալացում» հասկացության այս երկու իմաստներն իրենց հիմնական բնութագրիչներով ոչ միայն տարբեր են, այլեւ էական սկզբունքներում՝ հակաբեւեռ:

## Հակազլորբալացում

Հակազլորբալացումը գլորբալացման գործընթացների անաչառությունը, անխուսափելիությունը եւ դրական էությունը ժխտող հայացքների համակարգ է:

Հակազլորբալացումն առաջին հերթին ուղղված է «իրական», «միաբեւեռ», «ամերիկակենտրոն» գլորբալացման դեմ:

Հակազլորբալացումը մերժում է՝

1. ազատական տնտեսության գերիշխանությունը,
2. Արեւմուտքի (ԱՄՆ) նեոգաղութային քաղաքականությունն «աղքատ Հարավի» նկատմամբ,
3. ազատական ժողովրդավարության տիրապետությունը՝ համարելով, որ մյուս քաղաքական համակարգերը, օրինակ՝ սոցիալ-ժողովրդավարական կամ պահպանողական (հանրապետական), գոյության լիակատար իրավունք ունեն,
4. մյուս բոլորի նկատմամբ արեւմտյան (ամերիկյան) արժեքային համակարգի գերակայության մասին դրույթները,
5. տեխնիկան՝ բարոյականությունից, անհատին՝ հասարակությունից, «հարստությունն»՝ «աղքատությունից» վեր դասելը, տեխնոլոգիական առաջընթացի կողմից շրջակա միջավայրի նկատմամբ անտարբեր վերաբերմունքը:

Այսպիսով, հակազլորբալացումն ամբողջությամբ հակադիր է առաջին՝ իրական գլորբալացմանը, բայց լիովին համատեղելի է երկրորդ՝ «հավանական», «հումանիտար» կամ «բազմաբեւեռ» գլորբալացման հետ:

«Հանրապետական», 2004, ք. 3

## ԱՄԵՐԻԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ

(Հատված «Ռ՞վ ենք մենք» աշխատությունից)

### *Սամուել Չանտինգտոն*

Ինչ ձեռով ամերիկացիները բնորոշում են իրենց, դրանով էլ որոշվում է աշխարհում ԱՄՆ դերի մասին նրանց պատկերացումը. աշխարհի կողմից այդ դերի ընկալումը նույնպես ձեւավորում է ամերիկյան ինքնությունը: Նոր հազարամյակում եւ նոր պայմաններում ԱՄՆ-ն ունի համաշխարհային ասպարեզում իրեն դրսեւորելու երեք հնարավորություն.

1. ամերիկացիները կարող են «բացվել աշխարհի առջեւ», այսինքն՝ բացել իրենց երկիրը այլ ժողովուրդների ու մշակույթների համար,

2. կարող են փորձել այդ ժողովուրդներին եւ մշակույթները վերածել «ամերիկյան արժեքներին» համապատասխան,

3. վերջապես, նրանք կարող են պահպանել սեփական ինքնությունը եւ հակադրել իրենց մշակույթը մյուսներին:

Աշխարհաքաղաքացիական իդեալ. դա «թափանցիկ» սահմաններով, էթնիկական, ռասայական եւ մշակութային ինքնությունը, երկքաղաքացիությունը եւ սփյուռքերը խրախուսող, իրենց առավելապես գլոբալ, համաշխարհային հաստատությունների, նորմաների եւ կանոնների հետ նույնացնող ընտրախավերի կողմից ղեկավարվող բաց հասարակությունն է: Այդպիսի Ամերիկան կլինի բազմազգ, բազմառասա եւ բազմամշակույթ: Բազմազանությունը կդառնա առաջնային: Որքան շատ մարդիկ իրենց լեզուն, կրոնը եւ մշակույթը բերեն Ամերիկա, այնքան ավելի «ամերիկյան» կդառնա Ամերիկան: Միջին խավի ներկայացուցիչներն ավելի հաճույքով կկողմնորոշվեն դեպի տրանսնացիոնալ կորպորացիաները, որոնց համար աշխատում են, քան դեպի այն ընկերակցությունները, որոնցում ապրում են, եւ այն մարդիկ, որոնց «տեխնոլոգիական արհեստավարժության» պակասը գործի բերումով կապում է այդ ընկերակցություններին: Հասարակության կյանքն ավելի մեծ չափով կձեւավորվի ոչ այնքան դաշնային եւ տեղական օրենքներով,

որքան միջազգային հաստատությունների կողմից սահմանված կանոններով, ինչպես նաև սովորական միջազգային իրավունքով եւ ամեն տեսակ միջազգային պայմանագրերով: Ազգային ինքնուրույնն այլ ինքնուրույնների համեմատ կկորցնի իր նշանակությունը: Աշխարհաքաղաքացիական այլընտրանքը բացում է Ամերիկան աշխարհի առաջ, եւ աշխարհը վերաստեղծում է Ամերիկան:

Կայսերական այլընտրանքի դեպքում արդեն Ամերիկան է վերաստեղծում աշխարհը: «Սառը պատերազմն» ավարտվեց կոմունիզմի՝ որպես միջազգային ասպարեզում Ամերիկայի դերը սահմանող գլոբալ գործոնի ջախջախմամբ: Դրանով ազատականները հնարավորություն ստացան վարել արտաքին քաղաքականություն՝ չերկյուղելով այն մեղադրանքներից, թե այդ քաղաքականությունը խարխլում է ազգային անվտանգությունը. նոր քաղաքականության նպատակները դարձան ամերիկյան ազգի ամրապնդումը, հումանիտար ներխուժումները եւ «արտաքին քաղաքական գործունեությունը՝ որպես սոցիալական խնդիր»: ԱՄՆ-ի կողմից աշխարհի միակ գերտերության կարգավիճակի ձեռքբերումը բարերար ներգործություն ունեցավ նաև ամերիկյան պահպանողականների վրա: Սառը պատերազմի ընթացքում Ամերիկայի թշնամիները հանդիմանում էին նրան իմպերիալիստական պահվածքի համար: Նոր հազարամյակի սկզբին ամերիկյան պահպանողականներն ընդունեցին Ամերիկայի կայսրություն լինելու գաղափարը եւ համաձայնեցին այն բանի հետ, որ ԱՄՆ առաքելությունն է՝ վերակառուցել աշխարհը ամերիկյան արժեքներին համապատասխան:

«Կայսերական ազդակը» խթանվում է ԱՄՆ գերազանցության եւ ամերիկյան արժեքների ունիվերսալության մեջ հանդգնվածությամբ: Հաստատվում է, որ ամերիկյան հզորությունը անհամեմատ շատ է գերազանցում ցանկացած այլ ազգի ու նույնիսկ ազգերի խմբերի հզորությանը, ուստի ԱՄՆ-ն ունի լիակատար իրավունք՝ հաստատել սեփական աշխարհակարգը եւ հալածել չարիքը հողագնդի ցանկացած կետում: Ըստ ունիվերսալիստների՝ մյուս հասարակություններն էլ նվիրված են նույն արժեքներին, ինչ որ ամերիկացիները, իսկ եթե ոչ, ապա ցանկանում են լինել դրանց նվիրված, իսկ եթե չեն



ցանկանում, ուրեմն համառուն են մոլորության մեջ: Ամերիկացիները բացարձակ իրավունք ունեն վերահամոզել եւ նույնիսկ ստիպել նրանց ընդունելու այն ունիվերսալ արժեքները, որոնք որոշում են ամերիկյան կենսակերպը: Նման աշխարհում Ամերիկան կորցնում է իր ազգային ինքնությունը եւ դառնում համաշխարհային կայսրության մայր երկիր (մետրոպոլիս):

Բայց վերոհիշյալ տեսակետները չեն համապատասխանում նոր հազարամյակի իրողություններին: Այո, Ամերիկան միակ գերտերությունն է, բայց աշխարհի քարտեզի վրա կան նաեւ այլ խոշոր «խաղացողներ». գլոբալ մակարդակում դրանք Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Չինաստանը, Հնդկաստանն ու ճապոնիան են, իսկ տարածաշրջանային մակարդակում՝ Բրազիլիան, Եգիպտոսը, Իրանը, Հարավային Աֆրիկան եւ Ինդոնեզիան: Ամերիկան չի կարող հասնել որոշակի լուրջ նպատակների առանց գոնե մի քանի համաշխարհային «խաղացողների» աջակցության: Այլ հասարակությունների մշակույթը, արժեքները, ավանդույթներն ու հաստատությունները հաճախ անհամատեղելի են ամերիկյան արժեքների հետ եւ, այդ երկրների ժողովուրդների կարծիքով, ենթակա չեն վերիմաստավորման: Որպես կանոն, այդ ժողովուրդները խորապես կապված են սեփական մշակույթին, ավանդույթներին, հաստատություններին ու կտրականապես դեմ են իրենց «արտաքին» արժեքներ եւ իդեալներ պարտադրելուն:

Ավելացնենք. ինչպիսին էլ որ լինեն վերնախավի նպատակները, ամերիկյան հասարակությունը ժողովրդավարության տարածմանը վերաբերվում է որպես ամերիկյան արտաքին քաղաքականության «ոչ առաջնային» խնդրի: «Ժողովրդավարության պարադոքսին» լրիվ համապատասխան, այլ երկրներում ժողովրդավարական կառավարման հաստատումը հաճախ հանգեցնում է այդ հասարակություններում հակամերիկյան տրամադրությունների ուժեղացմանը եւ իշխանությունը փոխանցում ազգայնական շարժումներին (ինչպես Լատինական Ամերիկայում) կամ արմատական խմբավորումներին (ինչպես մահմեդական երկրներում): Աշխարհաքաղաքացիական ու կայսերական

մոտեցումներն ուղղված են Ամերիկայի եւ մյուս հասարակութունների միջեւ սոցիալական, քաղաքական ու մշակութային տարբերությունների վերացմանը: Ազգային մոտեցումն ընդունում է Ամերիկայի առանձնացումը այլ երկրներից: Ամերիկան չի կարող վերածվել համաշխարհային տերության եւ մնալ ինքն իրենով: Մյուս հասարակությունների ներկայացուցիչները չեն կարող դառնալ ամերիկացի՝ մնալով նախկինը:

Ամերիկան տարբերվում է մյուսներից, այն բացառիկ է, եւ այդ բացառիկությունը զգալի չափով որոշվում է նրա կրոնասիրությամբ ու անգլո-բողոքական մշակույթով: Աշխարհաքաղաքացիության եւ իմպերիալիզմի այլընտրանքն ազգայնականությունն է, որը կոչված է պահպանելու եւ բազմապատկելու Ամերիկայի նվաճումները, այսինքն՝ այն որակներն ու հատկանիշները, որոնք մոտ չորս հարյուրամյակ առանձնացրել են ամերիկացիներին մնացյալ ազգերից:

Ամերիկայի կրոնասիրությունը զատում է նրան արեւմտյան հասարակությունների խմբից: Բացի դրանից, ամերիկացիները առավելապես քրիստոնյա են եւ դրանով տարբերվում են ոչ արեւմտյան ազգերի մեծ մասից: ԱՄՆ կրոնասիրությունը ստիպում է ամերիկացիներին աշխարհը դիտել որպես բարու եւ չարի պայքարի ասպարեզ: Մյուս հասարակությունների ներկայացուցիչները հաճախ այդ կրոնասիրությունը համարում են ոչ միայն արտասովոր, այլեւ զայրացնող, քանզի այն անդրադարձնում է կրոնական բարոյականությունը ԱՄՆ քաղաքական, տնտեսական եւ սոցիալական գործունեության վրա: Այսօր էլ ազգայնականությունն ամենեւին չի կորցրել իր կապը կրոնի հետ: Առավել կրոնական երկրները, որպես կանոն, առավել ազգայնական են լինում:

Ամերիկյան ազգային ինքնության համար «այլախոհ» բողոքականությունը առանցքային տարր է: Ամերիկացիները նվիրված են Աստծուն եւ իրենց երկրին, նրանց համար Աստված եւ երկիրը անբաժանելի են: Աշխարհում շատ բան պայմանավորվում է կրոնով, եւ զարմանալի չէ, որ ամերիկացիները ազգային ինքնության եւ ազգային միասնության որոնումներում նորից դիմել են կրոնին:

Ամերիկյան ընտրանու մի մասը բավական բարյացակամությամբ է վերաբերվում Ամերիկայի վերածնանը աշխարհաքաղաքացիական հասարակության, մյուս մասը հանդես է գալիս Ամերիկայի՝ կայսրության կարգավիճակի ձեռքբերման օգտին: Ամերիկյան ժողովրդի ճնշող մեծամասնությունը ազգային-հայրենասիրական այլընտրանքի եւ հարյուրամյակներով գոյություն ունեցող ամերիկյան ինքնության պահպանման ու ամրապնդման կողմնակից է:

Ամերիկան դառնում է աշխարհ: Աշխարհը դառնում է Ամերիկա: Ամերիկան մնում է Ամերիկա. աշխարհաքաղաքացիական, կայսերական, ազգայնական: Ամերիկացիներին հարկ է լինելու կատարել ընտրություն, որը կորոշի ե՛լ ազգի, ե՛լ ողջ աշխարհի ճակատագիրը:

«Յանրապետական», 2004, ք. 8

## ԳԱՂՏՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Գաղտնի միությունները գոյություն ունեն եթե ոչ աշխարհի արարման սկզբից, ապա միջնադարից՝ հաստատ: Տաճարականներ (թամփլիերներ), ռոզենկրեյցականներ, իյուլմինատներ, մատոններ. արտասովոր անվանումներով ուխտերի, միաբանությունների եւ օթյակների այս ցանկը կարելի է անվերջորեն շարունակել: Դրանցից մի քանիսն այսօր էլ կան, սակայն հարկ չկա չափազանցել նրանց (թեկուզ նույն մատոնների) ազդեցությունը նորագույն պատմության ընթացքի վրա: Այլ են նոր կազմակերպությունները: Ֆինանսիստների, օլիգարխների ու քաղաքական գործիչների՝ ռոմանտիկ քողից եւ միստիկականությունից զուրկ այս ակումբներն իրենց նախորդներից փոխ են առել ամենագլխավորը՝ գաղտնիությունը:

Այն զգացումը, թե աշխարհում ամեն ինչ վերահսկվում է միասնական ուժի կողմից, ամենատարբեր մարդկանց մոտ՝ անկախ նրանց աստիճանից ու քաղաքական հակումներից, վաղուց է առաջացել: Համաշխարհային կառավարության կոչմանը հավանում են իշխանության ոչ պաշտոնական կենտրոններ, գաղտնի կազմակերպություններ:

Համաշխարհային կառավարության գաղափարը վաղուց է դուրս եկել ֆանտաստիկ վեպերի թեմաների շրջանակներից, եւ այնպիսի պաշտոնական միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Փարիզյան եւ Հռոմյան ակումբները, ինչպես նաեւ նույն Դավոսյան ֆորումը, որոշ չափով կարելի է դասել Համաշխարհային կառավարության շարքը:

Դեռ միջին դարերում առաջացավ մի կազմակերպություն՝ մատոնությունը, որի մասին լսել էին բոլորը, բայց որի մասին ոչ ոք ոչինչ չգիտեր: Մատոնության գաղափարախոսներից Ալբերտ Փայքն ասել է. «Մատոնների նպատակն է՝ դառնալ աշխարհի տերերի տիրակալներ: Գաղտնի իշխանություն՝ իշխանության ետեւում»: Իր հերթին, գաղտնի կազմակերպությունների թունդ քննադատ, բրիտանական հետախուզության կադրային սպա Ջոն Քոլենմանը փորձում էր ապացուցել, որ հենց «այդ ուժն իրականացրեց բոլշևիկյան հեղափոխությունը Ռուսաստանում, սանձազերծեց

Առաջին ու Երկրորդ աշխարհամարտերը, Կորեայի եւ Վիետնամի պատերազմները, կազմակերպեց Ռոդեզիայի, Հարավային Աֆրիկայի, Նիկարագուայի ու Ֆիլիպինների ճգնաժամերը»: Նրա կարծիքով, այդ կազմակերպությունն իր ձեռքն է վերցրել աֆրիկյան մայրցամաքի հանածո պաշարներն ու թմրանյութերի ողջ առևտուրը:

Առանձին էնտոկրիաստ հետազոտողներ, կրկնելով Քոլենանին, գտնում են, որ «համաշխարհային կառավարմանը» մասնակից են «գաղտնի» կառավարություններից ամենաճանաչվածները՝ «Միջազգային հարաբերությունների խորհուրդը», «Բիլդերբերգյան ակումբը» եւ «Եռակողմ հանձնաժողովը»:

ԱՄՆ նախկին կոմունիստական լիդերներից Մորիս Մելքինի խոսքերով՝ խորհրդային մի գործակալ իրեն ժամանակին ցուցում է տվել. «...փորձել սողոսկել այդ կազմակերպությունների մեջ, անհրաժեշտության դեպքում նրանց կարողությունները վերցնել իրենց ձեռքը, որպեսզի ի վիճակի լինեն ֆինանսավորել կոմունիստական կուսակցության քարոզչությունը Միացյալ Նահանգներում...»:

\* \* \*

1921թ. Նյու Յորքում հիմնված **«Միջազգային հարաբերությունների խորհրդին»** (ՄՀԽ) հաճախ մեղադրում են ներպետական դավերի, վարչակազմերի փոփոխության մեջ: Որոշ տվյալներով, ՄՀԽ-ն կազմված է հասարակության ընտրախավը ներկայացնող ավելի քան 2000 անդամներից: ՄՀԽ հիմնադիրներից են Ջոն Ֆոսթեր Դալեսը, որը նախագահ էյզենհաուերի օրոք դարձավ պետքարտուղար, նրա հաջորդ Քրիստիան Հերթերը եւ Ալեն Դալեսը (հետագայում՝ ԿՀՎ տնօրեն): Չնայած այս «աղմուկ հանած» անուններին, ամերիկացիները ՄՀԽ-ի մասին քիչ բան գիտեն: Խիստ կանոնադրական օրենքներով՝ կազմակերպության հանդիպման վայրը եւ դրա բովանդակությունը հրապարակող անդամն անմիջապես հեռացվում է ՄՀԽ-ից: «Միջազգային հարաբերություններ» (Foreign Affairs) հանդեսի միջոցով ՄՀԽ-ն հաճախ է փորձել ամերիկացիների շրջանում տարածել համաշխարհային կառավարության գաղափարը, որն իր վրա կվերցնի համաշխարհային կարգուկանոնի եւ բոլոր խնդիրների լուծման պատասխան

նատվությունը: Համաշխարհային կառավարության հսկողության տակ պիտի լինեն համաշխարհային բանկային մենաշնորհը եւ, համապատասխանաբար, հարկային համակարգը:

Շատ տարիների ընթացքում ՄՀԽ-ն երկրի ղեկավար կադրերի համալրման մշտական աղբյուր էր: ԱՄՆ որոշ թերթերի տվյալներով, ԿՀՎ 11 տնօրեններից 7-ը, 16 պետքարտուղարներից 12-ը, ֆինանսների 18 նախարարներից 12-ը, պաշտպանության 15 նախարարներից 9-ը, նախագահի մի շարք խորհրդականներ ու Եվրոպայում ՆԱՏՕ զորքերի գլխավոր հրամանատարներ հանդիսացել են ՄՀԽ անդամներ: ՄՀԽ ներկայացուցիչներ կան ինչպես դեմոկրատների, այնպես էլ հանրապետականների շրջանում: Որպեսզի «ծեռքում պահի» հասարակական կարծիքը, ՄՀԽ-ն հսկողություն է սահմանել ազգային առաջատար հեռուստաալիքների եւ տպագիր լրատվամիջոցների վրա:

\* \* \*

**«Բիլդերբերգյան ակումբի»** հիմնադիրը Յոզեֆ Ռետինգերն է: Ակումբի հիմնադրման տարեթիվը հայտնի չէ, սակայն նրա մասին առաջին անգամ խոսեցին 1954թ., երբ ճարպիկ լրագրողները հոլանդական Օսթերբեք քաղաքի Բիլդերբերգ հյուրանոցում «հայտնաբերեցին» աշխարհի ամենաազդեցիկների եւ ամենահարուստների հավաքույթը: Հյուրանոցից էլ առաջացավ կազմակերպության անվանումը: Ակումբի առաջին նախագահը եղել է Օրանյան հարստության ներկայացուցիչ, թագաժառանգ Բեռնհարդը՝ Նիդեռլանդների նախկին թագուհի Յուլյանայի ամուսինը, որի կարողությունը գնահատվում է 2 մլրդ դոլար:

Ինչպես մյուս գաղտնի կազմակերպությունները, այն նույնպես շատ փակ է: Ակումբի անդամները տարին մեկ-երկու անգամ հանդիպում են որեւէ աչքի չընկնող, բայց բարձրակարգ առողջարանում: Հանդիպումների վայրը, ժամանակը եւ բովանդակությունը գաղտնի են պահվում: Այդպիսի հանդիպումներում ընդունված որոշումները պաշտոնական չեն, սակայն պարտադիր են կատարման համար: Հաճախ այդ «ֆորումներին» հրավիրվում են տարբեր երկրների ղեկավարներ: Այստեղ հասցրել են երեւալ նաեւ ռուսները: Օրինակ, bilderberg.org ինտերնետային կայքի տվյալներով, 1998թ. բիլդերբերգականների նիստին մասնակցել է այդ օրերի

Ռուսաստանի առաջին փոխվարչապետ Անատոլի Չուբայսը: Ըստ լուրերի, նիստերից մեկում շրջանառվել է մի համաձայնագրի տեքստ, որտեղ Ռուսաստանը բաժանվում էր հսկողության մի քանի գոտիների. Կենտրոնն ու Սիբիրը անցնում էին ԱՄՆ-ին եւ Անգլիային, Հարավն ու Պոլվոլժիեն՝ Թուրքիային, Հեռավոր Արեւելքը՝ ճապոնիային, իսկ Հյուսիս-արեւմուտքը՝ Գերմանիային:

Ակումբի նիստերի մասնակիցներ են եղել Հենրի Քիսինջերը, Ջերալդ Ֆորդը, Հելմուտ Շմիդտը, Դեւիդ Ռոքֆելերը, բարոն Ռոտշիլդը, Մարգարետ Թետչերը եւ Ամերիկայի ու Եվրոպայի շատ ուրիշ ազդեցիկ եւ հարուստ գործիչներ: Լրագրողները պարզել են, որ նրա ֆինանսական սնման թելերը տանում են դեպի այն ֆոնդերը, որոնք ազատված են հարկային մուծումներից:

\* \* \*

1973թ. դեկտեմբերի 13-ին ամերիկյան մի հեռուստաալիքով հանդես եկավ հարավային փոքրիկ նահանգի սակավաճանաչ նահանգապետը, որի մասին ոչ ոք համարյա ոչինչ չէր լսել: Անցավ 3 տարուց էլ պակաս ժամանակ, եւ այդ մարդը ողջ աշխարհին հայտնի դարձավ որպես ԱՄՆ նախագահ: Դա Ջիմի Քարթերն էր: Իր նախընտրական խոստումներում Քարթերը ժողովրդին խոստացավ իշխանությունից հեռացնել «Սիջազգային հարաբերությունների խորհրդին» եւ «Բիլդերբերգյան ակումբին»: Նա իր խոստումը պահեց. Սպիտակ տան աշխատասենյակները զբաղեցրին նոր, բոլորին անհայտ ինչ-որ **«Եռակողմ հանձնաժողովի»** (ԵՀ) անդամները, որը կոչվում էր նաեւ Թրիլաթերալ: Սակայն, ինչպես հետագայում պարզվեց, Թրիլաթերալի հիմնադիրներից շատերը ՄՀԽ եւ Բիլդերբերգյան ակումբի անդամներ էին:

ԵՀ առաջին համաժողովը կայացել է 1972թ., ՄՀԽ նախագահ Դեւիդ Ռոքֆելերի ամառանոցում: Թրիլաթերալի կազմում մտնում էին ԱՄՆ, ճապոնիայի եւ Արեւմտյան Եվրոպայի (այդ իսկ պատճառով էլ՝ եռակողմ) ներկայացուցիչները: Թրիլաթերալի նպատակը առավել ճիշտ է արտահայտել սենատոր Բարի Հոլդուոթերն իր «Առանց որեւէ զոջման» գրքում. «Այն համաշխարհային տնտեսական իշխանության ստեղծածն է՝ վեր կանգնած մասնակից երկրների քաղաքական կառավարություններից, եւ այն պիտի ղեկավարի աշխարհը»:

Ռոքֆելերի հետ հանդիպումից 3 տարի անց Քարթերին ընտրեցին նախագահ: Կարելի է կասկածել ոմն մեկին նախագահ «դարձնելու» Ռոքֆելերի հնարավորությանը, բայց այն, որ միայն 1973թ. նա, երկրում չզբաղեցնելով որևէ ղեկավար դիրք, հանդիպել է 27 պետությունների, այդ թվում՝ ԽՍՀՄ եւ Չինաստանի ղեկավարների հետ, պարզորոշ խոսում է նրա վիթխարի ազդեցության մասին:

Թրիլաթերալի գործադիր տնօրեն Զբիգնեւ Բժեզիսկին Քարթերի օրոք ազգային անվտանգության ղեկավարն էր: Իր «Երկու դարերի արանքում» գրքում Բժեզիսկին միտք է հայտնում, թե ավելի լավ է աշխարհում միասնական հասարակություն ստեղծել ոչ թե տարբեր պետությունների «միաձուլմամբ», այլ «անուղղակի», այսինքն՝ ոչ պաշտոնական կապերի օգնությամբ: Խոսելով սոցիալական կարգավորման մասին՝ «գլոբալ ռազմավարը» նախատեսում է նույնիսկ բնակչության, երեխաների սեռի, եղանակի ու քաղաքացիների ժամանցի կանոնավորման միջոցները:

ԵՅ հիմնական ֆինանսական օժանդակությունը ստացվում է Ֆորդի հիմնադրամից՝ նվիրատվությունների տեսքով: Թրիլաթերալի «նվաճումներից» են համարվում այնպիսի «ծառայություններ», ինչպիսիք են աֆրիկյան մի շարք պետությունների կառավարությունների տապալումը, 1980թ. Նիկարագուայում պետական հեղաշրջումը եւ այլն:

«Յանրապետական», 2004, թ. 10



## ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՂԱՊԱՐԸ

### *Ի են Թրեյնոր*

Անկախ նրանից, թե ինչ վախճան կունենա վտանգավոր դիմակայությունը Կիեւում, ուկրաինական «Որոս» («ժամն է») երիտասարդական շարժման ժողովրդավար պարտիզաններն արդեն հասել են կարեւոր հաղթանակի: Երիտասարդ ժողովրդավարակտիվիստները մոբիլիզացրել են սովորաբար քաղաքականապես պասիվ Ուկրաինացիներ, եւ նա այլեւս նախկինը չի լինելու:

Թեպետ Ուկրաինացիներն է ստանալու «նարնջագույն հեղափոխության» նվաճումները, սակայն այս կամպանիան ամերիկացիների ստեղծագործությունն է՝ արեւմտյան բրեւեղի առաջխաղացման նրբորեն իրականացված մի ծրագիր, որը 4 տարվա ընթացքում կիրառվել է 4 երկրներում՝ անհրապույր վարչակարգերը տապալելու համար:

Ամերիկյան կառավարության կազմակերպած ու հովանավորած նմանատիպ կամպանիան՝ ամերիկացի խորհրդատուների, սոցիոլոգների, դիվանագետների, ամերիկյան առաջատար կուսակցությունների եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներգրավմամբ, առաջին անգամ կիրառվեց 2000թ. Բելգրադում՝ Սլոբոդան Միլոշեւիչի պարտությունն ընտրություններում ապահովելու համար: Այդ ժամանակ առանցքային դերը բաժին ընկավ Բելգրադում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մայլզին: Նախորդ տարի, լինելով դեսպան Թբիլիսիում, նա Վրաստանում կրկնեց նույն հնարքը՝ սովորեցնելով Միխայիլ Սահակաշվիլուն՝ ինչպես տապալել Էդուարդ Շեւարդնաձեին: Բելգրադում հաջողության հասնելուց 10 ամիս անց Մինսկում ԱՄՆ դեսպան, Կենտրոնական Ամերիկայում (հատկապես՝ Նիկարագուայում) նման գործողությունների վետերան Մայքլ Կոզակը կազմակերպեց գրեթե նույնատիպ արշավանք՝ բելառուսական դիկտատոր Ալեքսանդր Լուկաշենկոյին ջախջախելու համար: Այդ փորձը ձախողվեց: «Բելառուսում Կոչտունիցա չի լինելու», - հայտարարեց այդ երկրի նախագահը՝ ակնարկելով Բելգրադի դեպքերը:

Սերբիայում, Վրաստանում ու Բելառուսում կուտակված փորձն անգնահատելի եղավ Կիեւում՝ Լեոնիդ Կուչմային տապալելու ծրագիրը կազմելու համար: Ընտրությունների եւ քաղաքացիական անհնազանդության միջոցով ժողովրդավարություն հաստատելու մեթոդներն այժմ այնքան են հղկված, որ վերածվել են ուրիշի ընտրություններում հաղթելու ուղեցույցի:

Բելգրադի կենտրոնի մի հասարակ շենքում գտնվում է «Ոչ բռնի դիմադրության կենտրոն» անվամբ կազմակերպության գրասենյակը, որտեղ աշխատում են համակարգչին գերազանց տիրապետող երիտասարդներ: Ցանկանո՞ւմ եք իմանալ, թե ինչպես հաղթել լրատվամիջոցները, դատարանները, անվտանգության մարմիններն ու ընտրական տեղամասերը վերահսկող վարչակարգին. վարձեք բելգրադցի այս երիտասարդ ակտիվիստներին: Կազմակերպությունն առաջացել է «ՕՏՈՐ» («Յակահարված») ուսանողական շարժման հիմքի վրա՝ ուղղված Միլոշեվիչի վարչակարգի դեմ: Այդպիսի շարժման բրենդինգի համար նման սուր, կարճ անվանումն անչափ կարելու է: Վրաստանում, անցյալ տարվա հեղափոխության ժամանակ, նույնատիպ ուսանողական շարժումը կոչվում էր «Կմարա» («Բավ է»), Բելառուսում՝ «Зыбр», Ուկրաինայում՝ «Пора»: Բացի այդ, «ՕՏՈՐ»-ը հորինել էր պարզ եւ հզոր կարգախոս, որին 2000թ. Սերբիայում ամենուրեք կարելի էր հանդիպել: Այն կազմված էր երկու բառից՝ «gotov je» («վերջ նրան»): Խոսքն, անշուշտ, Միլոշեվիչի մասին էր:

Վարպետորեն մտածված մարքեթինգային ատրիբուտիկան զուգորդվում էր սեղմված բռունցքի պատկերմամբ սեւ-սպիտակ լոգոտիպով: Ուկրաինայում կա այս «ցուցադրական քարոզչության» սեփական համարժեքը՝ ժամացույց, որը խորհրդանշում է Կուչմայի վարչակարգի օրերի հաշված լինելը:

Մահակներ, ներկով սրվակներ եւ ինտերնետ-կայքեր՝ ահա երիտասարդ ակտիվիստների զենքը: Ծաղրն ու փողոցային երգիծական ներկայացումները նույնպես դրսևորել են իրենց՝ որպես մարդկանց մեջ վախը հաղթահարելու եւ իշխանությունների զայրույթը հարուցելու խիստ հաջողակ միջոց:

Նախորդ տարի նախքան Վրաստանի նախագահ դառնալը Սահակաշվիլին, ով, ի դեպ, կրթություն է ստացել ԱՄՆ-ում, զանգվածային անհնազանդության կազմակերպման տեխնոլոգիաների դասընթացներ անցնելու նպատակով՝ Թբիլիսիից մեկնեց Բելգրադ: Բելառուսի ամերիկյան դեսպանությունը կազմակերպեց տեղի երիտասարդական ընդդիմության առաջնորդների այցը Մերձբալթիկա, որտեղ նրանք հանդիպեցին Բելգրադից ժամանած սերբերի հետ: Ինչ վերաբերում է բուն Սերբիային, ապա, հաշվի առնելով Բելգրադում առկա թշնամական մթնոլորտը, ամերիկացիները վարչակարգի տապալումը կազմակերպեցին հարեւան Յունգարիայի տարածքից՝ Բուդապեշտից ու Սեգեդից: Ընտրությունների նախօրեին Ուկրաինա այցելեցին մի քանի սերբ ակտիվիստներ, սակայն բելգրադյան «առաջամարտիկ» Ալեքսանդր Մարիչին նույնիսկ սահմանից են հետ դարձրել:

Ձանգվածային այս արշավների կազմակերպմանը մասնակցող հիմնական ամերիկյան հաստատություններն են՝ Ժողովրդավարական կուսակցությանն առընթեր Ազգային Ժողովրդավարական ինստիտուտը, Հանրապետական կուսակցությանն առընթեր Միջազգային հանրապետական ինստիտուտը, Պետդեպարտամենտը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID), ինչպես նաև՝ «Freedom House» ոչ կառավարական կազմակերպությունը եւ միլիարդատեր Ջորջ Սորոսի Բաց հասարակության ինստիտուտը:

Ռազմավարության մշակման ընթացքում ֆոկուս-խմբերի կազմակերպման ու հասարակական կարծիքի հարցախույզերի տվյալների օգտագործման համար վարձվում են ամերիկյան սոցիոլոգիական գործակալություններ եւ արհեստավարժ խորհրդատուներ: Իշխող վարչակարգի տապալման համար անհրաժեշտ է, որպես կանոն, անջատ ընդդիմությանը միավորել միասնական թեկնածուի շուրջ: Այդպիսի առաջնորդ ընտրում են՝ ելնելով գործնական եւ անաչառ նկատառումներից, թեկուզ նա հակամերիկյան կողմնորոշում ունենա:

Սերբիայում ամերիկյան «Penn, Schoen and Berland Associates» սոցիոլոգիական գործակալությունը պարզեց, որ

ընդդիմության արեւմտամետ առաջնորդ Ջորան Ջինջիչը (հետագայում նա սպանվեց) երկրում համբավ չի վայելում եւ արդար ընտրություններում Սիլոշեւիչին հաղթելու հնարավորություն չունի: Նրան համոզեցին զիջել առաջատարի դերը Արեւմուտքի հակառակորդ Վոյսլավ Կոշտունիցային:

Բելառուսում ԱՄՆ պաշտոնական ներկայացուցիչներն ընդդիմադիր կուսակցություններին հրահանգեցին պաշտպանել արհմիութենական մռայլադեմ առաջնորդ Վլադիմիր Գոնչարիկին, քանզի նա Լուկաշենկոյի կողմնակիցներից շատերի մոտ ճանաչում ուներ:

Ուսանողական շարժումից ու միասնական ընդդիմությունից բացի՝ ժողովրդավարացման ամերիկյան կադապարի մյուս առանցքային տարրն է, այսպես կոչված, «ձայների զուգահեռ հաշվումը»՝ որպես հակակշիռ ընտրական նեոգափոխումներին, որոնց շատ են սիրում դիմել ժողովրդականություն չվայելող վարչակարգերը: Ուկրաինայի ընտրություններին ներկա էին նաեւ արտերկրյա արհեստավարժ դիտորդներ այնպիսի կազմակերպություններից, ինչպիսին է Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), բայց ինչպես նախորդ նմանատիպ ընտրություններում, ուկրաինական ընտրարշավի ժամանակ նույնպես հստակ երեւում էր, որ ողջ երկրով մեկ գործում են հազարավոր տեղական դիտորդներ, որոնց ուսուցանել եւ ծախսերը հոգացել էին արեւմտյան կազմակերպությունները:

Ընտրություններին հետեւելու նպատակով «տարածաշրջանային խոշորագույն քաղաքացիական արշավի» կազմակերպմանն ու ֆինանսավորմանը, որտեղ աշխատում էին հազարից ավելի ուսուցում անցած դիտորդներ, մասնակցել են ԱՄՆ «Freedom House» հիմնադրամը եւ ժողովրդավարական կուսակցությանն առընթեր Ազգային ժողովրդավարական ինստիտուտը: Նրանք ընտրատեղամասերի ելքերի մոտ կազմակերպում էին նաեւ մարդկանց հարցումներ, համաձայն որոնց՝ արդեն կիրակի երեկոյան պարզվեց, որ Յուլչենկոն իր մրցակցից առաջ է անցել 11%-ով: Եվ հատկապես դրանց ֆոնի վրա տեղի ունեցավ հետագա իրադարձությունների մեծ մասը:

Ընտրատեղամասերի ելքերի մոտ հարցումները համակարգի ամենակարելուր տարրերն են: Նրանք քարոզչական կռվում խլում են նախաձեռնությունը իշխող վարչակարգից (քանզի դրանց արդյունքներն ավելի շուտ են հայտնի դառնում, քան պաշտոնական տվյալները), վայելում են մամուլի հատուկ ուշադրությունը, եւ իշխանությունները հայտնվում են ոչ թե հաստատողի, այլ պատասխանողի վիճակում:

Ժողովրդավարացման ամերիկյան կադապարի վերջին փուլը կենտրոնացված է այն միջոցների վրա, որոնք հարկավոր է ձեռնարկել, երբ գործող իշխանությունը փորձում է ժողովրդից խլել ընտրություններում տարած հաղթանակը:

Բելառուսում նախագահ Լուկաշենկոն իրոք հաղթեց. այնպես որ՝ հակազդումն էլ այնտեղ նվազագույն չափի էր: Բելգրադում, Թբիլիսիում (եւ այժմ՝ Կիեւում), որտեղ իշխանությունները սկզբում փորձում էին կառչել իրենց աթոռներից, հիմնական հանձնարարականն էր. համբերությունը չկորցնել, բայց վճռականորեն տրամադրվել, կազմակերպել քաղաքացիական անհնազանդության զանգվածային գործողություններ, որոնք, մնալով խաղաղ եւ օրինական, կկարողանան դրդել իշխանությանը՝ դիմել ուժային ճնշումների:

Եթե Կիեւի իրադարձությունները հաստատեն, որ ԱՄՆ-ը սեփական ռազմավարության օգնությամբ իրոք կարող է աջակցել այլ երկրների ժողովուրդներին՝ շահել ընտրություններն ու վերցնել իշխանությունը, ապա ԱՄՆ-ը, անշուշտ, կփորձի այն օգտագործել նաեւ հետխորհրդային տարածքի այլ երկրներում: Յետեւեք Մոլդովային եւ Կենտրոնական Ասիայի ավտորիտար պետություններին:

**The Guardian**, Մեծ Բրիտանիա  
«Չանրապետական», 2004, թ. 11

## ՀԻՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՆ

### Ալեն Մենկ

*Ալեն Մենկը ֆրանսիացի ճանաչված տնտեսագետ է: Ներկայումս «AM Conseil» խորհրդատվական ընկերության եւ «Le Monde» թերթի դիտորդական խորհրդի նախագահն է:*

Այսօր տրանսատլանտյան հարաբերությունները ծանր ժամանակաշրջան են ապրում, եւ հարցն այստեղ ոչ միայն եւ ոչ այնքան Իրաքն է:

Մենք՝ Հին աշխարհի բնակիչներս, Միացյալ Նահանգներին նայում ենք մաշված ակնոցներով՝ առաջվա պես տեսնելով մեզ հարազատ երկրի: Սակայն ԱՄՆ-ը կտրուկ կերպարանափոխվում է, քանզի գործի է անցել նոր էթնիկական «ձուլման կաթսան»:

Երեկ ԱՄՆ-ը Արեւմուտքի երկիր էր: Այսօր այն վերածվում է «տիեզերական երկրի»: Մեր օրերի ԱՄՆ-ը ոչ միայն հին արեւմտյան քաղաքակրթության, այլեւ աշխարհի բոլոր ծագերի քաղաքակրթությունների «ծեփվածք» է:

Ինչպիսի տեսք կունենար ԱՄՆ-ը, եթե հնդիկները կամ, ասենք, չինացիները լինեին նույնպիսի ազդեցիկ ուժ, ինչպիսին հրեաները կամ անգլոսաքսոնյան սպիտակամորթ բողոքականներն են, իսկ լատինաամերիկացիներն ունենային նույն քաղաքական կշիռը, ինչ իռլանդացի կաթոլիկները: Այս հարցը չափազանց արդիական է. ԱՄՆ-ում ընտրախավի փոփոխությունն անխուսափելի է: Բավական է հայացք գցել ամերիկյան համալսարանների այսօրվա ուսանողներին, որպեսզի պարզ հասկացվի, թե ում է վիճակվելու ղեկավարել երկիրը հինգ, տասը կամ քսան տարի հետո: Այս կապակցությամբ չի՞ փոխվի, արդյոք, Ամերիկայի պատկերը, եւ կպահպանվե՞ն, արդյոք, Եվրոպայի հետ նրա նախկին կապերը:

\* \* \*

Մինչեւ վերջին ժամանակները տրանսատլանտյան հարաբերությունները կառուցվում էին ընդհանուր պատմության, ավանդույթների ու արժեքների հիման վրա: Մեզ, իհարկե, այսուհետ էլ

կմիավորեն շուկան եւ ժողովրդավարությունը, սակայն դրանք ավելի ու ավելի են դառնում ոչ միայն Արեւմուտքի, այլեւ ողջ աշխարհի սեփականությունը: Բայց կարո՞ղ են, արդո՞ք, երկարաժամկետ հեռանկարում համընկնել Աստծո, հասարակության մեջ կրոնի դերի, մարդու իրավունքների (ներառյալ արհեստական վիժումներն ու մահապատիժը), ազատության, վերջապես՝ ուժերի հաշվեկշռի մասին մեր պատկերացումները: Եվրոպան արեւմտյան հին արժեքների համար մնալու է որպես «սառցախցիկ», իսկ ԱՄՆ-ը վերջնականապես վերածվելու է համաաշխարհային նոր արժեքների ձեւավորման լաբորատորիայի:

Լինելով «տիեզերական երկիր»՝ Միացյալ Նահանգներն իր վրա է վերցնում համաաշխարհային խնդիրներ... Եվրոպան ամերիկացիներն իրենց համար խնդիր չեն համարում: Նրանց համար դա վայր է, որտեղ կարելի է անցկացնել արձակուրդը, այլ ոչ թե տարածաշրջան, որն ունի ռազմավարական գեթ ինչ-որ նշանակություն:

Իսկ ո՞ր խնդիրներն են լինելու զուտ եվրոպական: Մենք՝ եվրոպացիներս, ունենք երեք հիմնական մտահոգություն: Առաջինը ներգաղթն է. երեւոյթ՝ հատկապես էական այնպիսի երկրների համար, ինչպիսիք են Իտալիան, Իսպանիան եւ Պորտուգալիան (անցյալի արտագաղթի այս երկրներն այժմ պետք է համակերպվեն ներգաղթի երկիր լինելու հետ):

Երկրորդ մտահոգությունը կապված է առաջինի հետ. դա մեր ժողովրդագրական վիճակն է, նախեւառաջ՝ նրա ազդեցությունը կենսաթոշակային ապահովման վրա: Երրորդը, որ մեզ մտահոգում է, սահմանների անորոշությունն է: Մենք չգիտենք, թե որտեղով են անցնում մեր արեւելյան ու հարավային սահմանները: Այսպիսի իրավիճակը մշտապես սպառնալու է տարբեր կարգի միջադեպերով եւ բարդություններով: Սակայն նման վտանգներին համաաշխարհային տերությունը ծանոթ չէ: Եթե ԱՄՆ-ը մտահոգված է ողջ աշխարհի ճակատագրով, ապա մեր հետաքրքրությունները կրում են միանգամայն եսասիրական բնույթ: Մենք մեզ չենք համարում համաաշխարհային տերություն:

Պակաս կարելու չէ այն, որ մենք այլևս չունենք ընդհանուր թշնամի, ինչպիսին ԽՍՀՄ-ն էր: Մենք՝ Արեւմտյան Եվրոպայի բնակիչներս, շատ բանով պարտական ենք Իոսիֆ Ստալինին: Եթե չլիներ խորհրդային սպառնալիքը, Եվրոպան չէր միավորվի եւ 40 տարվա ընթացքում չէր պահպանի սերտ հարաբերություններ ԱՄՆ-ի հետ: Այնպես որ, Եվրոպան իր ծնունդով ավելի շատ պարտական է Ստալինին, քան Ժան Մոնեին (Ժամանակակից Եվրոպական ինտեգրացման հիմնադիրը): Մենք այլևս չենք ունենալու ընդհանուր թշնամի: Ահաբեկչությունն ընդհանուր թշնամի չէ, այլ ընդհանուր քավության նոխազ. ահաբեկչության հետ կապված վտանգներն ակնհայտորեն բավարար չեն կայուն ու երկարաժամկետ միություն ստեղծելու համար:

\* \* \*

ԱՄՆ-ի ու Եվրոպայի միջեւ ռազմավարական կապերը շարունակ թուլանում են: Ի՞նչ է ՆԱՏՕ-ն. կազմակերպություն, որ հազիվ է գլուխ հանում իր պարտականություններից՝ չունենալով որոշակի առաքելություն, համոզմունք եւ նպատակներ: ՆԱՏՕ-ն այլևս գոյություն ունի լոկ որպես գործիք, որի միջոցով Միացյալ Նահանգները խանգարում է Եվրոպային ստեղծել սեփական պաշտպանական համակարգ:

Եվրոպայում ԱՄՆ-ի հետ ներկա եւ ապագա հարաբերությունների վերաբերյալ կան տարբեր տեսակետներ: Բրիտանական վերնախավը, հասկանալով, որ Ամերիկյան վերափոխություն է ապրում, չի ցանկանում տվյալ փուլում խզել հատուկ հարաբերությունները նրա հետ: Նա գտնում է, որ քանի դեռ այդ կապը գոյություն ունի, կկարողանա ազդել ամերիկյան քաղաքականության վրա:

Գերմանիայի հետ ամեն ինչ քիչ թե շատ պարզ է. այն ձգտում է դառնալ Շվեյցարիա: Խաղաղասիրական (պացիֆիստական) տրամադրությունները հասարակությունում եւ «ռազմավարական կամքի» բացակայությունը վերածում են նրան շատ պարկեշտ ժողովրդավարական երկրի, որի ազդեցությունն ինչ-որ չափով իր սահմաններից արելելք է տարածվում եւ որն ԱՄՆ-ի հետ



հարաբերություններն այլևս սեփական քաղաքականության համար առանցքային չի համարում: Գերմանացիները Միացյալ Նահանգներին հավաստիացնում են իրենց հավատարմության մեջ, բայց նրանք անկեղծ չեն:

Ֆրանսիացիներն, ինչպես հայտնի է, հետևում են դը Գոլի պատգամներին եւ կողմնորոշված են դեպի Երրորդ աշխարհ. նրանք ցանկանում են հիմնել ու գլխավորել չմիավորման նոր շարժումը: Երբ գործերը լավ են գնում, Շիրակը հույս է տածում հանդես գալ Ներուի դերում, իսկ երբ հաջողությունը նրան դավաճանում է՝ Նասերի դերում: Սակայն մեզ հարկավոր է դրա հետ համակերպվել:

Իսպանացիներն իրենց տեսնում են «Իսպանիդադ» (Hispanidad) անվամբ ազգերի նոր միության ղեկավար, որի շնորհիվ կկարողանան առանձնակի հարաբերություններ հաստատել ԱՄՆ-ի հետ: Երկարաժամկետ հեռանկարում այդ նոր «առանձնակի հարաբերություններն» ամենեւին էլ չեն լինի բրիտանականի պատճենը. դրանք կկառուցվեն իսպանական ոճով: Միայն պատկերացրեք, թե ինչ նշանակություն ունի իսպանացիների համար այն փաստը, որ իրենց մայրենի լեզվով խոսում են 350 մլն մարդ, այդ թվում՝ 50 մլն ԱՄՆ քաղաքացիներ:

Ինչ վերաբերում է նոր եվրոպացիներին, ապա նրանք երախտապարտ են Միացյալ Նահանգներին «սառը պատերազմում» հաղթելու համար, եւ դա միանգամայն բնական է: Ֆրանսիացիները 1945թ. նույնպես երախտապարտ էին ԱՄՆ-ին Երկրորդ աշխարհամարտում Գերմանիային ջախջախելու համար: Արդյոք հարատե՞լ է լինելու այս բնական զգացումը: Արդյոք չե՞ն հեռանա Միացյալ Նահանգներից լեհերն ու հունգարացիները, եթե երբեւէ Օվալաձեւ աշխատասենյակը զբաղեցնի հնդկական կամ չինական ծագումով ամերիկացի:

Իսկ ահա տնտեսական կապերը Եվրոպայի ու ԱՄՆ-ի միջեւ կմնան հաստատուն: Մեր շուկայական տնտեսությունները գործում են միեւնույն պայմաններում, որոնք տարբերվում են աշխարհի մյուս մասերին բնորոշ պայմաններից: Եվրոպան վերցրել է կապիտալիզմի անգլոսաքսոնյան մոդելը, եւ դա երկար ժամանակով

է: Շահերի ընդհանրության ֆոնին մեր միջեւ առեւտրային կոնֆլիկտներն էական չեն:

Ձարգացող երկրների միասնության ամրապնդումը, որ ցայտուն կերպով արտահայտվեց Առեւտրի համաշխարհային կազմակերպության 2003թ. Կանկունի նստաշրջանում, ԱՄՆ-ին ու Եվրոպային ստիպում է մերձենալ՝ չնայած գյուղատնտեսության, պողպատի եւ բանանի արտահանման հարցերում նրանց միջեւ տարածայնություններին: Ինչ վերաբերում է դուլարի ու Եվրոյի հարաբերություններին, ապա դրանք չեն վերաճի առճակատման: Բացառված չէ, որ երկու կողմերն էլ արտահանմանն աջակցելու նպատակով փորձեն 10%-ով արժեզրկել սեփական արժույթները, բայց երկարաժամկետ հեռանկարում յուրաքանչ-յուրն էլ շահագրգռված կլինի կայուն դրամական համակարգի պահպանմամբ:

Զինաստանի, Զնդկաստանի եւ այլ նոր «խաղացողների» հետ աճող մրցակցությունն ավելի է խթանելու ԱՄՆ-ի ու Եվրոպայի միջեւ տնտեսական կապերի ամրապնդումը. մեր շուկաները հավասարապես թիրախ են հանդիսանում նոր «խաղացողների» համար:

Իհարկե, տարածայնությունները կպահպանվեն: Ապագայում ԱՄՆ տնտեսությունն ավելի արագ կաճի, քան Եվրոպայինը, քանզի Ատլանտիկայի տարբեր կողմերում գործում են երկու տարբեր մոդելներ. Եվրոպայում առավել զարգացած է հովանավորչությունը, իսկ ԱՄՆ-ում՝ մրցակցությունը: Սակայն մնացած աշխարհի առաջ մենք գտնվում ենք միեւնույն դիրքում, միեւնույն ճամբարում:

Այս համատեքստում հնարավոր են ԱՄՆ-ի ու Եվրոպայի միջեւ հարաբերությունների զարգացման չորս տարբեր սցենարներ.

1. Ես այն անվանում եմ «նվազագույն ատլանտիցիզմ» (ատլանտիցիզմը ԱՄՆ-ի ու Արեւմտյան Եվրոպայի երկրների միջեւ սերտ համագործակցության քաղաքականություն է): Այն ենթադրում է ամերիկյան նոր վարչակազմի վերադարձը բազմաբեւռության սկզբունքին: Ընդ որում, միավորված Եվրոպան առանց որեւէ բարդության կպահպանի ԱՄՆ-ի հետ ամուր կապը,

Ամերիկյան էլ կմնա այն նույն երկիրը, որին մենք միշտ սիրում էինք: Սա հնարավոր է, թեև, իմ կարծիքով, քիչ հավանական: Եթե այն իրագործվի, ապա իմ պատկերացումը նոր Միացյալ Նահանգների մասին լիովին սխալ դուրս կգա:

2. Շատ կտրուկ խզում: Ամերիկյան դառնում է «տիեզերական երկիր», իսկ Եվրոպան հանգիստ ինտեգրվում է: Միաժամանակ, արտաքին աշխարհն սպառնալիք չի ներկայացնում: Այնպես որ, օվկիանոսի տարբեր կողմերի երկու գործընկերներին այլևս ոչինչ չի կապում. չկան ոչ ընդհանուր շահեր, ոչ ընդհանուր վտանգներ, չկա եւ ահաբեկչությունը: Մենք կպահպանենք զուտ բարեկամական հարաբերություններ՝ ոչ ավելին, բայց ոչ էլ պակաս:

3. Կայսերական տիրապետություն: ԱՄՆ նոր նկարագիրը ամբողջովին ձեւավորված է: Եվրոպան չկարողացավ միավորվել, սակայն մենք ապրում ենք խաղաղ աշխարհում՝ առանց գլոբալ սպառնալիքների: ԱՄՆ տիրապետությունը դառնում է համապարփակ, ու Եվրոպայի առանձին երկրներ իրենց հույսը կապում են «ուճիվերսալ երկրի» հետ: Բայց մինչ Վաշինգտոնը նրանց վրա կիրավորի իր բարեհաճությունը, նրանք ստիպված կլինեն երկար ժամանակ մալայզիացիների, ինդոնեզացիների եւ այլոց արանքում, հնարավոր է նաեւ՝ նրանցից հետո մեծ հերթի կանգնել: Եվրոպան կլինի փոքր երկրների տարածաշրջան:

4. Նոր Ամերիկա, միավորված Եվրոպա, տրանսատլանտյան կապերի վերականգնում՝ խոր ճգնաժամի պատճառով: Այդպիսի ճգնաժամ կարող է հրահրել Չինաստանը՝ որոշելով հավակնել համաշխարհային տերության կարգավիճակին (ինչը հղի է ԱՄՆ-ի հետ բախմամբ՝ Թայվանի պատճառով) կամ էլ ահաբեկչական գործողությունը՝ միջուկային զենքի կիրառմամբ: Եթե լինի նման ճգնաժամ, ապա, չնայած նոր Միացյալ Նահանգների ու միավորված Եվրոպայի միջեւ բոլոր հնարավոր տարածայնություններին, նորից ի հայտ կգան ընդհանուր շահեր: «Նոր Ստալինը» տրանսատլանտյան կապերի ամրապնդման խթան կհանդիսանա:

Իրադրությունը, երբ իրականություն կարող է դառնալ ցանկացած սցենար, մեզ՝ եվրոպացիներին շատ բան է պարտավորեց-

նում: Առաջին. փորձել հասկանալ ԱՄՆ-ին եւ պատրանքներով չհուսադրել մեզ, թե ԱՄՆ-ը այն նույն երկիրն է, ինչպիսին նրան գիտեր ավագ սերունդը:

Մենք պետք է պատրաստվենք գոյակցել ուրիշ՝ այնպիսի Ամերիկայի հետ, որը կտեսնեն մեր զավակները: Երկրորդ. մեզ հարկավոր է պահպանել բարեկամական հարաբերությունները ԱՄՆ-ի հետ՝ չտաժելով նրա նկատմամբ ոչ ավելորդ սեր, ոչ ավելորդ ատելություն: Երրորդ. հաշվի առնելով նոր հանգամանքները՝ մենք պիտի գիտակցենք, որ Եվրոպայի ինտեգրումը մեզ համար ավելին է, քան սոսկ պարտականությունը:

Իսկ եթե մենք հավատարիմ ենք եվրոպական գաղափարին եւ չենք պատկերացնում մեր ապագան Եվրոպական միությունից դուրս, ապա մեզ հարկավոր է հասնել չորս նպատակի. ԵՄ Սահմանադրության ընդունման, Եվրոյի զոտու շրջանակներում տնտեսական ինտեգրման խորացման, պաշտպանության ոլորտում համագործակցության աշխուժացման եւ ֆրանկո-գերմանական միության ամրապնդման: Այս բոլոր խնդիրներն անհամեմատ հեշտ կլինի լուծել, եթե Եվրոպացիներն ըմբռնեն, որ Միացյալ Նահանգներն այլեւս այն երկիրը չէ, որն իրենք գիտեին եւ որը ոմանք կցանկանային նախկինը տեսնել:

«Россия в глобальной политике», 2004, դեկտեմբեր  
«Հանրապետական», 2005, ք. 1

## 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*Վլադիսլավ Ինոզենցեւ – Հետիմոնոստրիալ հասարակության հետազոտությունների կենտրոնի գիտական ղեկավար, «Свободная мысль XXI» հանդեսի գլխավոր խմբագիր:*

*Սերգեյ Կարազանով – Արտաքին եւ պաշտպանական քաղաքականության խորհրդի նախագահ, «Россия в глобальной политике» հանդեսի գլխավոր խմբագիր:*

Գլոբալ գործընթացների առավել անկանխատեսելիության, մարդկության դեմ արդեն հառնած խնդիրների խորացման եւ նորերի ծագման պայմաններում ոչ մի ազգային պետություն ի զորու չէ միայնակ երաշխավորել սեփական անվտանգությունը: Եթե որեւէ տարածաշրջան ներքաշվում է մի շարք կործանարար հակամարտությունների մեջ, ապա դրանց բացասական ազդեցությունն անխուսափելիորեն տարածվում է նաեւ մյուս, այդ թվում՝ առավել բարեկեցիկ երկրների ու տարածաշրջանների վրա: Ուստի, հատկապես այսօր, կարելոր է զնահատել համաշխարհային քաղաքական ճարտարապետության զարգացման հնարավոր տարբերակները եւ որոշել դրանցից առավել ընդունելիները (կամ, առնվազն՝ նվազագույն աղետալիները):

Այսօր առկա հայեցակարգերն այն մասին, թե հետագայում աշխարհակարգն ինչպես էվոլյուցիայի կենթարկվի կամ պիտի ենթարկվի, կարելի է բաժանել երեք մեծ խմբի:

Առաջին խումբը կազմում են այն սցենարները, որոնց հիմքում համենատաքար սովորական կատեգորիաների ուժի կենտրոններով կամ բեւեռներով աշխարհի իմաստավորումն է, թեւէ այդ հայեցակարգերի բովանդակությունները միմյանցից խիստ (երբեմն՝ նաեւ արմատապես) տարբերվում են:

Այսպես. «սառը պատերազմի» ավարտից հետո լայն տարածում գտավ (հատկապես ԱՄՆ-ում) այն գաղափարը, թե մոլորակի վրա երկար ժամանակով հաստատվել է Ամերիկայի կողմից փաստացի կառավարվող միաբեւեռ աշխարհ: Այս գաղափարի կողմնակիցները ելնում են նրանից, որ ԱՄՆ-ը, գտնվելով իր հզորության ծաղկման շրջանում, ավելի մեծ չափով է իրակա-

նացնում միակողմանի գործողությունների ռազմավարությունը, իսկ ամերիկյան քաղաքական գործիչների եւ փորձագետների զգալի մասն արդեն կոկորդով մեկ գովերգում է նոր կայսրության ուժն ու մեծությունը: Իրադարձությունների նման զարգացման հետ երբեք չի համաձայնի համաշխարհային ընկերակցության անդամների մեծ մասը, որոնք, անշուշտ, կծգտեն համատեղ դիմակայել գլոբալ հեգեմոնին:

Բայց մեզ առավել էական է թվում ոչ այն, թե ինչպիսի հետեւանքների կհանգեցնի այդպիսի սցենարի կենսագործումը, այլ, որ այն հիմնված է կասկածելի նախադրյալների եւ ինքնախաբեության վրա: Այո, այսօր Ամերիկյան տնտեսապես հզորագույն տերությունն է: Բայց նրա համեմատական հզորությունն էապես զիջում է անցած դարի 40-ականների վերջի եւ 50-ականների սկզբի կամ 20-ականների սկզբի մակարդակին: Առաջին հայացքից աննախադեպ թվացող ԱՄՆ ռազմական ներուժը «ստուգման» ժամանակ ծայրահեղ սահմանափակ է լինում, ինչի վկայությունն են մոլորակի մի շարք տարածաշրջանների իրավիճակների կարգավորման փորձերը: Վաշինգտոնի քաղաքական ազդեցությունը նույնպես բավարար չէ, որպեսզի արդյունավետ կերպով մեկուսացվեն ներկայիս աշխարհի ամենավտանգավոր գործընթացները: Օրինակ, ԱՄՆ-ը անկարող է կանխել Յնդկաստանի ու Պակիստանի կողմից միջուկային զենքի ձեռքբերումը կամ խոչընդոտել զանգվածային ոչնչացման զենքի (ՁՈՁ) բաղադրամասերի եւ արտադրության տեխնոլոգիաների՝ Իսլամաբադի ծավալած առեւտրին: Իր ողջ հզորությամբ հանդերձ, Ամերիկյան անգոր է նաեւ այժմեականության առանցքային հակամարտություններից մեկի՝ արաբա-իսրայելականի լուծման հարցում:

Ամերիկյան գերիշխանության հակառակորդները ջանում են ստեղծել այլընտրանքային մոդել եւ հանդես են գալիս բազմաբեւեռ աշխարհի օգտին: Բայց նման տեսակետն անիրական է ու հնաոճ, քանզի ժամանակակից աշխարհն անհնար է բերել միմյանց հավասարակշռող ուժի կենտրոնների հանրագումարի: Ինչպես եւ ԱՄՆ-ին հակակշռի ստեղծման հայեցակարգը, այս գաղափարն ուղղված չէ նոր գլոբալ խնդիրների լուծմանը, եւ նույնիսկ «բազմաբեւեռություն» եզրի իմաստը ենթադրում է ոչ թե համագործակցություն, այլ միջազգային գործերում մրցակցություն:

Այսօր այդ հայեցակարգի առավել հետեւողական կողմնակիցներ են Չինաստանն ու Ֆրանսիան: Ռուսաստանը նրանց ազդեցության տակ է եւ սեփական ուղու որոշման հարցում տատանվում է, ինչը երբեմն դրսեւորվում է Վաշինգտոնի ամբարտավանությունից առաջացած նրա դժգոհության մեջ: Բայց, վերջին ժամանակներս ռուս ղեկավարները նախընտրում են օգտագործել «բազմավեկտորականություն» եզրը, որը չունի հստակ քաղաքական (առավել եւս՝ հակաամերիկյան) երանգավորում: Նման մոտեցումն արտացոլում է գործնական քաղաքականության նվիրվածությունը «մշտական խուսանավմանը»: Արագ փոփոխվող աշխարհում, որտեղ մնայուն դաշինքներն ու կողմնորոշումներն անհնարին, նույնիսկ անցանկալի են, այն անխուսափելի է: Դա հատկապես էական է այնպիսի երկրի համար, ինչպիսին Ռուսաստանն է, որի դիրքերը ժամանակավորապես թուլացել են եւ որը միաժամանակ հայտնվել է հարուստ ու աղքատ երկրների, անկում ապրող իսլամական մեծ քաղաքակրթության ու դեռեւս առավել հաջողակ քաղաքակրթությունների բեկման գծին: Բայց «բազմավեկտորականությունը» մնում է ոչ այնքան որպես աշխարհակարգի հայեցակարգ, որքան՝ մի որոշ ժամանակ ընտրությունից խուսափելու միջոց:

Որքան էլ որ տարբեր թվան միաբեւեռ ու բազմաբեւեռ աշխարհների գաղափարները, դրանք երկուսն էլ խարսխված են ընդհանուր նախադրյալների վրա. յուրաքանչյուր երկիր կամ երկրների խումբ, որեւէ քաղաքականություն վարելիս, ելնում է մյուս երկրների հանդեպ իր վերաբերմունքից: Այսպիսի գաղափարախոսությունը, մեր կարծիքով, իր դարն ապրել է եւ անհեռանկարային է:

Այն հայեցակարգերի կողմնակիցները, որոնք պայմանականորեն կարելի է միավորել երկրորդ խմբում, կոչ են անում հրաժարվել հաշվեկշռի հասնելու ձգտումից՝ հօգուտ աշխարհի կառավարելիության մի որեւէ պարադիգմայի<sup>1</sup> ստեղծման: Նրանցից առավել հետեւողականները պաշտպանում են համաաշխարհային կառավարության գաղափարը: Բայց այս գաղափարը կորցնում է իր համբավը՝ անկում ապրող պետությունների թվի աճին, ՄԱԿ դերի նվազմանը, ամենուրեք ազգայնական եւ անջատողական միտում-

---

<sup>1</sup> Որոշակի պատմական ժամանակահատվածի համար իրականության կարեւորագույն գծերն արտահայտող հայեցակարգային մոդել. - խմբ.:

ների սաստկացմանը զուգընթաց: Այս ֆոնին, որպես միակ, բայց չափազանց կարեւոր բացառություն, հանդես է գալիս Եվրամիությունը: Բոլոր ակնհայտ խնդիրներով հանդերձ (Եվրոպական բյուրոկրատիայի դանդաղկոտությունը, ԵՄ արտաքին ազդեցության եւ նրա տնտեսական ու սոցիալական ներուժի անհամադրելիությունը եւ այլն)՝ միացյալ Եվրոպան համաշխարհային կառավարության հաջողված նախագիծ է: Ուզում ենք հավատալ, որ այս նախագիծը կապրի՝ չխորտակվելով պատմության հորձանուտում:

Եվրոպական փորձի հաջողությունը «սնուն» է եւս մեկ հայեցակարգի, որի հետեւորդները հանդես են գալիս համաշխարհային կառավարության տարբերակի բացասման օգտին, բայց, ըստ էության, հորդորում են «կենտրոնը» անջրպետել «ծայրամասերից»: Ելնելով քաղաքական բարեկրթության նկատառումներից՝ միայն քչերն են հանդգնում բացահայտորեն ձեւակերպել այդ գաղափարը: Բայց նման մոտեցման տարրեր դիտվում են զարգացած երկրների քաղաքականությունում, որոնք, հայտարարելով առաջընթացին աջակցելու անհրաժեշտության մասին, գործնականում կրճատում են օգնությունը, ըստ էության՝ հեռանում են աղքատացող ու դեգրադացվող Աֆրիկայից, նվազեցնում ՁՈՁ տարածման վտանգը: Նույնիսկ Եվրոպան, մնալով մարդասիրական օգնության խոշորագույն աղբյուր, էլ ավելի է կենտրոնանում սեփական խնդիրների եւ սահմանակից երկրների իրավիճակների վրա՝ ի վնաս իր միջազգային քաղաքական ակտիվության: Չարգացած երկրների էսկապիզմն<sup>1</sup> առավել ակնհայտորեն է դրսեւորվում «ընդլայնված» Մերձավոր Արեւելքի նկատմամբ վարվող կուրսում: Խնդիրները, որոնք կուտակվել էին այնտեղ տասնամյակների ընթացքում, նախընտրեցին չնկատել, ինչպես որ անտեսեցին Աֆրիկայի հրեշավոր պատերազմները:

Նման մոտեցման վրա հիմնված քաղաքականությունը հազիվ թե աշխարհի արդյունավետ կառավարման հիմք ծառայի: Փորձը ցույց է տալիս, որ հետամնաց երկրները, որպես օրենք, անընդունակ են ինքնուրույն դուրս գալ ճգնաժամից, եւ նրանց մոտ, վաղ թե ուշ, հասունանում են խնդիրներ (ահաբեկչությունից ու ՁՈՁ

---

<sup>1</sup> Իրականությունից պատրանքների ու երեւակայությունների աշխարհի հեռանալու ձգտում.- խմբ.:



ծավալումից մինչև տեղային էկոլոգիական համակարգերի կործանում եւ ընդգրկուն համաճարակների բռնկում), որոնք ընդգրկում են մնացած բոլոր տարածաշրջանները:

Աշխարհի կառավարելիության՝ համաշխարհային կառավարության ձեւավորման եւ «անջրպետման» այս երկու դիտարկված հայեցակարգերի անարդյունավետությունը դրդում է գլոբալ կառավարման մի նոր պարադիգմայի մշակման: Նրա էությունը հետեւյալն է. առաջադեմ եւ առավել հզոր ազգերը պետք է ոչ բարեկեցիկ պետություններին պարտադրեն տարրական կարգուկանոն: Նման կառավարումը կարող է ունենալ երկու մակարդակ՝ ցրված եւ կոլեկտիվ:

*Ցրված կառավարում.* որեւէ պետության՝ սեփական տարածքում քաղաքացիների նվազագույն իրավունքը պաշտպանելու անկարողությունը հիմք է տալիս պարտադրելու նրան «արտաքին կառավարում»: Այն իրականացվում է «հումանիտար ներխուժման» միջոցով, դրան հաջորդող՝ տարածքի մի մասի բռնի անջատմամբ կամ խաղաղապահ ուժերով լրիվ օկուպացմամբ (որպես օրինակ կարող են ծառայել ՆԱՏՕ փորձը նախկին Հարավսլավիայում, Ռուսաստանի գործողությունները Մերձդնեստրում, Հարավային Օսիայում եւ Աբխազիայում, ինչպես նաեւ՝ մի շարք եվրոպական երկրների ռազմական միջամտություններն Աֆրիկայի իրենց նախկին գաղութների գործերին): Վերջին տասնամյակների իրադարձությունները հավաստում են, որ «կենտրոնի» երկրները հարկադրված են լինելու ավելի հաճախակի դիմել այդ ոչ միանշանակ կերպով ընդունվող կառավարման «գործիքին»: Այն կիրառելու ճանապարհին խոչընդոտ է հանդիսանում նրա օրինականացման մեխանիզմի բացակայությունը, ինչը երբեմն այդպիսի կառավարումը վերածում է քառսի, մրցակցության եւ փոխադարձ կասկածանքի հերթական աղբյուրի: Ահա թե ինչու նման քաղաքականությունը, մեր կարծիքով, պետք է անցկացվի միջազգային ընկերակցության անունից. հնարավոր է՝ ՄԱԿ խնամակալության տակ գտնվող տարածքների ինստիտուտի վերստեղծման միջոցով, որոնք կկառավարվեն մեծ տերությունների կամ նրանց խմբերի մանդատով: Հայտնի չէ նաեւ, թե այդպիսի քաղաքականությունը կենսագործելու համար կբավականացնի, արդյոք, առաջատար եւ առավել զարգացած ժողովրդավարական պետությունների կամ-

քը: Խիստ հավանական է, որ ոչ. հատկապես պատերազմներից ու գաղութային բախումներից հոգնած Եվրոպայում:

*Կոլեկտիվ կառավարում.* այն ենթադրում է ազգերի նոր «համերգի» ստեղծում, որը հետապնդում է վերը նկարագրված նպատակները, բայց գործում է առաջատար, առավել հզոր պետությունների՝ համաշխարհային ընկերակցությունում բացահայտ գերակայության ճանապարհով: Միասին նրանք ընդունակ են համաշխարհային ընկերակցությանը թելադրել իրենց կամքը եւ հակազդել քառսի սաստկացմանն ինչպես ուղղակիորեն, այնպես էլ՝ միջազգային կազմակերպությունների միջոցով: Այս հայեցակարգը մեզ թվում է առավել համարժեք ու հետեւողական, թեւ՝ դժվար իրագործելի: Նրա գլխավոր առավելությունն այն է, որ ենթադրում է առաջատար պետությունների համագործակցություն, որոնք հսկում են համախառն համաշխարհային արդյունքի մեծ մասը, թողարկում հիմնական նոր տեխնոլոգիաները եւ տնօրինում ցանկացած հնարավոր կոալիցիաների ներուժի հետ անհամեմատելի լծակների: Այդ երկրների կողմից կոլեկտիվ գործողությունների ռազմավարության մշակումը տպավորիչ բեկում կլինի միջազգային հարաբերությունների ասպարեզում: Բայց նման պարադիգմայի (որի ուրվագծերը ոչ ակնհայտ կերպով երեւում են «մեծ ութնյակի» գաղափարում եւ որն առկա է ՄԱԿ Անվտանգության խորհրդի առանձին գործողություններում) ինստիտուցիոնալ հիմքն առայժմ խիստ անորոշ է երեւում:

Ի վերջո, գոյություն ունի հայեցակարգերի երրորդ խումբ, որն իր մի մասի հռեռետեսության ու մյուս մասի՝ ոչնչով չհիմնավորված լավատեսության պատճառով, կբնութագրենք որպես լուսանցքային:

Հռեռետեսները հաստատում են, թե աշխարհը սողում է դեպի գլոբալ քառսի վիճակ, որին դիմակայել անհնարին է: Քառսացումը շատերին է վախեցնում: Ստավախություններն ավելացան հատկապես այն բանից հետո, երբ արդի աշխարհի առաջատար ԱՄՆ-ը ներխուժելով Իրաք՝ լրջորեն վնասեց իր հզորությունը: Ռազմական ուժի անխոհեմ գործածման հետեւանքով Վաշինգտոնը, դեպի միաբեւեռ աշխարհի շարժվելու փոխարեն, հարցականի տակ դրեց իր ազդեցությունը՝ հսկայական քայլ կատարելով դեպի «անբեւեռ»՝ քառսային ու անվերահսկելի աշխարհ:

Ապագայի իրավիճակի զարգացման հանդեպ՝ դրան հակառակ, չափից ավելի լավատեսական մոտեցման օրինակ է մի սցենար, որը լայն ճանաչում է վայելում ամերիկյան փորձագետների շրջանում: Նրանց կարծիքով, խաղաղության եւ կայունության գրավական կարող է լինել ավելի շատ նորանոր երկրների ժողովրդավարացումը. իբր ժողովրդավարություններն ագրեսիվ, ռազմաշունչ քաղաքականություն չեն վարում: Բայց տվյալ կանխադրույթը կիրառելի է սոսկ ազատական ժողովրդավարությունների նկատմամբ ու ոչ մի կապ չունի ոչ ազատական ժողովրդավարությունների հետ, որոնք կառաջանան արհեստական (բռնի) ժողովրդավարացման արդյունքում: Ժողովրդավարական ձեւական կառավարման արագացված պարտադրումը, ասենք, Սաուդյան Արաբիայում կամ հենց նույն Իրաքում, կարող է լրջորեն խաթարել միջազգային կայունությունը:

\* \* \*

Մեր կարծիքով, գալիք աշխարհակարգի վերը թվարկված հայեցակարգերից ամենահեռանկարայինն այն է, որը հիմնված է առաջատար պետությունների խմբի իրականացրած կոլեկտիվ կառավարման գաղափարի վրա: Լինելով այդ գաղափարի կողմնակիցներ՝ մենք, այնուամենայնիվ, չենք մերժում աշխարհակառուցվածքի մյուս բոլոր ուսմունքները՝ հանդես գալով համադրական հայեցակարգի ստեղծման օգտին, որը հաշվի կառնի յուրաքանչյուր մոտեցման թերությունները եւ ընդունելի կլինի համաշխարհային քաղաքականության սուբյեկտների մեծ մասի համար:

Որքանով այս բոլորը իրական կլինի՝ կախված է զարգացած երկրների՝ իրենց քաղաքականությունները ներդաշնակեցնելու, ընթացիկ իրավիճակային նպատակներն անվտանգ ու կանխատեսելի աշխարհի կառուցման խնդիրներին ստորադասելու ունակությունից: Մենք այսօր չենք կարող վստահ ասել, թե որքան ուժեղ կլինի այդ երկրների՝ ընտրած ուղիով շարժվելու վճռականությունը: Բայց հուսով ենք, որ հեռանկարային պատկերացումները կհաղթեն այսրոպեական շահերին:

**«Россия в глобальной политике»**, 2005, փետրվար  
«Հանրապետական», 2005, ք. 3

## ԷԹՆԻԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

20-րդ դարում աշխարհը ցնցեցին էթնիկական բախումների երեք ալիքներ, որոնք ավարտվեցին տասնյակ նոր, հիմնականում՝ ազգային պետությունների կազմավորմամբ: Առաջին ալիքը բարձրացավ դարասկզբի աշխարհամարտի ավարտից եւ Ավստրո-հունգարական ու Օտոմանյան կայսրությունների կործանումից հետո, որոնց տարածքում գոյացան նոր պետություններ: Երկրորդ աշխարհամարտով եւ գաղութային տերությունների փլուզմամբ սկսվեց երկրորդ ալիքը: Երրորդ ալիքն առաջացավ ԽՍՀՄ անկումից հետո: Բազմաթիվ ուսումնասիրողներ համարում են, որ այսօր մարդկությունը գտնվում է «երրորդ ալիքի» մարման փուլում, ինչը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ նոր էթնիկական ընդհարումներ համեմատաբար հազվադեպ կժագեն: Բայց ոչ ոք չգիտի, թե երբ եւ ինչ պայմաններում կսկսվի «չորրորդ ալիքը»:

Էթնիկական բախումների առաջացման դրդապատճառները մինչ օրս մանրամասնորեն հայտնի չեն: Դրանց ծագման խնդրի վերլուծությանը զբաղվող գիտնականների տեսակետները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի: Ուսումնասիրողների մի մասը նախապատվությունը տալիս է բացառապես նյութական շարժառիթներին (պայքար տարածքների, բնական պաշարների, տնտեսության վրա հսկողության եւ այլնի համար), իսկ մյուս մասը՝ ոչ նյութականին (քաղաքական, պատմական, կրոնական եւ այլ խնդիրներ): Երրորդ մասն այն կարծիքին է, թե էթնիկական բախումները ծագում են վերնախավերի գործողությունների հետեւանքով, որոնք տարբեր պատճառներով շահագրգռված են բռնության գործադրմամբ: Այնուամենայնիվ, այս խնդիրն ուսումնասիրողների մեծ մասը համակարծիք է, որ յուրաքանչյուր բախում իր բնույթով եզակի է եւ, համապատասխանաբար, ունի եզակի նախադրյալներ:

Ընդունված է համարել, որ էթնիկական պատերազմները տարբեր հատկանիշներով միավորված (ընդհանուր կրոն, լեզու,

պատմություն, մաշկի գույն եւ այլն) մարդկանց խմբերի կողմից ազգային ինքնության համար մղվող կռիվներ են: Սակայն էթնիկական տարբերություններն ինքնին չեն հանդիսանում առճակատման պատճառ: Նման ճգնաժամերը միշտ առաջանում են միեւնույն սխեմայով.

1. Էթնիկ խումբը պետությունից պահանջում է իր իրավունքների եւ արտոնությունների բարելավում, քանզի բազմազգ երկրում մյուս՝ առավել բազմաքանակ ու ազդեցիկ խմբերն այդ իրավունքները փաստացի ունեն:

2. Դրանից հետո իշխանությունը հրաժարվում է բավարարել այդ պահանջները՝ համարելով, որ այն բացասաբար կանդդադառնա հասարակական կացության, պետության հզորության վրա եւ կարող է հանգեցնել երկրի մասնատման ու նույնիսկ կործանման:

3. Այնուհետեւ սկսվում է բռնությունը, որը կարող է ծագել ցանկացած կողմից:

4. Էթնիկական փոքրամասնությունները փորձում են հրավիրել միջազգային հանրության ուշադրությունը եւ սկսում են պայքարել կամ ինքնավարության, կամ անկախության համար:

Մի շարք տեսություններ յուրովի են մեկնաբանում այդպիսի հակամարտությունների՝ «թեժ» փուլին անցնելու պատճառները, սակայն դրանք բոլորն էլ էթնիկությունը համարում են նման բռնությունների առաջացման մեխանիզմը հասկանալու բանալի: Օրինակ, գիտնականների մի մասը գլխավոր շարժառիթ համարում է պատմական հիշողության «խռովքը», երբ բռնության պոռթկումը պայմանավորվում է այնպիսի գործոնների փոփոխմամբ, որոնք հանգեցնում են ժողովրդի կամ ազգային փոքրամասնության կողմից պատմական հիշողությանը դիմելուն: «Քաղաքակրթությունների բախման» տեսության կողմնակիցները գտնում են, որ էթնիկական ընդհարումները տարբեր հասարակությունների միջեւ առաջացող մշակութային խզումների դրսեւորումներ են: Նման բախումներ կարող են ծագել նաեւ գլոբալացման եւ արդիականացման հետեւանքով, երբ բնակչության առանձին

խմբեր լավ են հարմարվում փոփոխվող պայմաններին, ինչը հարուցում է «պարտվող» կողմի նախանձն ու ատելությունը:

Գոյություն ունի տեսություն, որն այս խնդիրը բացատրում է տարածքային պատճառներով. պետություններն ու ժողովուրդները միանգամայն տարբեր (ռացիոնալ եւ իռացիոնալ) կերպ են վերաբերվում իրենց տարածքին: Էթնոսների համար այն հաճախ հանդիսանում է ազգային ինքնության «սրբազան» մաս: Պետություններն, իրենց հերթին, ձգտում են տարածքների վրա սահմանել տնտեսական, ռազմական եւ իրավական հսկողություն: Մի շարք դեպքերում այս շահերը միմյանց հետ հակասության մեջ են մտնում, եւ սկսվում է ընդհարումը:

«Ազգայնականություն եւ էթնիկական բախում» գրքի հեղինակ Մայքլ Բրաունն առանձնացնում է այդպիսի ընդհարումների սկզբնավորման մի քանի գործոններ: Դրանցից են՝ պետության թուլությունը, խտրականություն դնող քաղաքական հաստատությունների առկայությունը, տվյալ երկրի էթնիկական աշխարհագրության յուրահատկությունները (օրինակ, երբ առանձին էթնիկ խմբեր ապրում են մեկուսացված) եւ այլն: Ընդհանրապես, Բրաունը նման պատերազմների անկյունաքար է համարում հասարակությունում ժողովրդավարության եւ ազատականության պակասը: Իրենց հերթին, «Ազգություն, ապստամբություն եւ պատերազմ» գրքի հեղինակներ Ջեյմս Ֆիրոնն ու Դեւիդ Լեյթինը հանգել են այն հետեւության, թե այդպիսի բախումների սկսման մեջ «առաջին ջութակի» դեր են կատարում ամենեւին ոչ քաղաքական, այլ տնտեսական գործոնները:

«Էթնիկական բախման պատճառները եւ կառավարումը» աշխատության հեղինակներ Դեւիդ Լեյքն ու Դոնալդ Ռոքսայլդը կարծում են, որ էթնիկական պատերազմներն առավել հաճախ ծագում են աշխարհագրորեն մեկուսացված տարածաշրջաններում, որտեղ երկար տարիներ հավաք կերպով ապրում են անկախության (կամ «մեծ պետությունում» իշխանության) կռվի փորձ ունեցող ազգային խմբեր:

Համաաշխարհային բանկի աշխատակից, «Ունե՞ն, արդյոք, էթնիկական եւ ոչ էթնիկական պատերազմներն ընդհանուր շար-

ժառիթներ» զեկույցի հեղինակ Նիկոլաս Սամբանիսը եզրակացնում է, որ էթնիկական ընդհարման վտանգն աճում է, եթե հարեւան պետությունում գնում է լուրջ ներքին առճակատում կամ պատերազմ: Բացի այդ, որքան ժողովրդավար ու ազատական են հարեւան երկրները, այնքան փոքր է նման արյունահեղության սկսման հավանականությունը:

Համաշխարհային բանկի աշխատակիցներ Փոլ Քոլերը եւ Անկե Յեֆլերը վերլուծել են այս խնդրի տնտեսական կողմն ու եկել այն հետեւության, որ էթնիկական բախման հավանականությունը կախված է էթնիկ փոքրամասնության կենսամակարդակից: Որքան նյութապես ապահով է «խնդրահարույց» տարածաշրջանի ազգաբնակչությունը, այնքան մեծ են պատերազմ սկսելու համար անհրաժեշտ միջոցներ ստանալու ապստամբների հնարավորությունները: Բացի այդ, զգալի դեր է խաղում հարուստ եւ ազդեցիկ սփյուռքի առկայությունը, որը, որպես կանոն, աջակցում է այդ շարժումներին: Քոլերի ու Յեֆլերի կարծիքով, որքան բազմազան եւ ժողովրդավար է հասարակությունը, այնքան փոքր է զինված էթնիկական ընդհարման կամ քաղաքացիական պատերազմի հավանականությունը:

«Ինչո՞ւ են մարտնչում ապստամբները» գրքի հեղինակ Թեդ Ռոբերտ Հարի տվյալներով, գոյություն ունեն մի քանի համապարփակ հատկանիշներ, որոնցով հնարավոր է գուշակել անկախության համար զինված պայքարի սկիզբը:

1. Էթնիկական կամ կրոնական փոքրամասնությանը պատկանող խումբը պահանջում է ավելի մեծ ինքնավարություն, քան ունի ներկա պահին: Դեպքերի ճնշող մեծամասնությունում այս հարցերը լուծվում են քաղաքական ու տնտեսական մեթոդներով:

2. Մոտ 60 տոկոսով ռազմական գործողությունների սկսման վտանգը մեծանում է, եթե փոքրամասնությունը մի ժամանակ ունեցել է պետականություն: Նշանակություն չունի, թե երբ եւ որտեղ է եղել այդ պետական կազմավորումը, ինչ կերպ է ստեղծվել, կառավարման ինչ ձեւ է ունեցել եւ ինչ պատճառներով է կորցրել անկախությունը: Օրինակ, կանադական

Քվեբեկ նահանգի բնակիչները, որոնք ֆրանսիական գաղութաբնակների սերունդներ են, պահանջում են անկախություն՝ հիմնավորելով դա նրանով, որ ժամանակին Կանադան եղել է Ֆրանսիայի գաղութ: Առավել վտանգավոր է, երբ անկախության կորուստը տեղի է ունեցել ոչ հեռու անցյալում:

3. Որքան մեծ է անկախության օգտին հանդես եկող խմբի կազմակերպվածությունը, այնքան մեծ է նրա կողմից զինված պայքար սկսելու հավանականությունը: Վատ կազմակերպված անջատողականների համեմատ՝ այս դեպքում վտանգն աճում է մոտ 80 տոկոսով: Օրինակ, բողոքական Մեծ Բրիտանիայի կազմում գտնվող Յուսիսային Իռլանդիայի կաթոլիկ բնակչության ինքնորոշման ցանկությունը նրա կողմից չամրապնդվեց հզոր վարչական կառույցների ձեւավորմամբ: Չնայած նրան, որ կաթոլիկները կարողացան ստեղծել մի քանի զորեղ ահաբեկչական խմբեր, սակայն բնակչության մեծ մասի շահերը ներկայացնող ընդհանուր կազմակերպական կենտրոն չհիմնվեց: Համանման գործընթացներ տեղի են ունենում նաև հետխորհրդային պետություններում ապրող էթնիկ ռուսների մոտ: Նրանք պարբերաբար հանդես են գալիս առանձին մարզերի կամ շրջանների ինքնավարության կամ դրանք Ռուսաստանին միացնելու օգտին, սակայն այդպիսի գործունեությունն արդյունք չի տալիս:

4. Որքան ինքնորոշման հավակնություն ունեցող տարածաշրջանում ենթակառույցների ու տեղեկատվական տեխնոլոգիաների հարցում գործերը հաջող են ընթանում, այնքան մեծանում է մարտական գործողությունների սկսման հավանականությունը: Եթե որոշակի էթնիկ խումբ գտնվում է մի պետության ենթակայության տակ եւ ապրում է հավաք տարածքում, ապա կապի գործոնը (հեռախոս, ռադիոկայան եւն) հատուկ դեր չի խաղում: Բայց դրա նշանակությունը բազմակի աճում է, եթե էթնիկ կամ կրոնական խումբը «բաժանված» է երկու եւ ավելի պետությունների միջեւ. օրինակ, այսպես պատահեց Սերբիայի, Ալբանիայի ու Մակեդոնիայի միջեւ «բաժանված» ալբանացիների, Ֆրանսիայի եւ Իսպանիայի բասկերի, Ռուսաստանի ու Ադրբեջանի լեզգիների, Ռուսաստանի եւ Վրաստանի չեչենների հետ:



5. Որքան բարձր է ծնելիության մակարդակը էթնիկ կամ կրոնական խմբերում, այնքան մեծ է ինքնորոշման համար պատերազմ սկսելու հավանականությունը: Ծնելիության ցածր մակարդակը կարող է փոխհատուցվել մեծ թվով գաղթականների հոսքով եւ այլն:

6. Պարադոքս է, սակայն որքան քիչ է այս կամ այն էթնիկ կամ կրոնական խումբը տառապում կենտրոնական իշխանության բռնություններից ու խտրական քաղաքականությունից, այնքան մեծ է զինված պայքարի սկսման հավանականությունը: Հետաքրքրական է, որ այժմ ինքնորոշման օգտին հանդես եկող խմբերի մեծ մասը գործում է ժողովրդավարական երկրներում: Ավելին, անկախության մասին խոսակցություններն սկսվեցին լոկ այն բանից հետո, երբ պետություններն անցան կառավարման ժողովրդավարական ձեւին:

7. Ռազմական գործողությունների սկսման հավանականությունն առավել մեծ է, եթե տվյալ կրոնական կամ էթնիկ խմբի ներկայացուցիչներն արդեն նման պայքար մղել են:

## Washington Profile

«Հանրապետական», 2005, ք. 4

## ՆՈՐ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

### *Ե. Սատանովսկի*

Մերձավոր եւ Միջին Արեւելքի զարգացման հեռանկարներն, ինչպէս երբեք, մշուշոտ են:

Արտաքին ուժերի մասնակցությունն այս տարածաշրջանը ծվատող ոչ մի հակամարտություն էլ չի լուծել: Լավագույն դեպքում դրանք «քշվել են խորքը» եւ արտաքին ճնշման վերացումից հետո՝ ցանկացած պահի կարող են բռնկվել: Սա հավասարապես վերաբերում է լարվածության եւ մեծ, եւ փոքր օջախներին, անկախ նրանից՝ դրանք դարավոր վաղեմության դիմակայությունների<sup>6</sup>, թե՛ ոչ հեռավոր անցյալի բախումների արդյունք են: ՄԱԿ խաղաղարար գործունեությունը Մերձավոր Արեւելքում նույնքան ձախողված է, որքան Աֆրիկայում, իսկ «իսլամական» կամ «միջարաբական» նախաձեռնությունները հաջողություն են բերում միայն անմիջական երկարատեւ օկուպացիայի տեսքով: Վերջինս արդարացի է նաեւ արեւմտյան տերությունների համար՝ չնայած քաղաքական գործիչների եւ լրատվամիջոցների ճարտասանությանը, որն ուղեկցում է ամերիկյան ծովային հետեւակայինների կամ ֆրանսիական արտասահմանյան լեգեոնի գործողություններին:

Արեւելյան քրիստոնեության եւ իսլամի դիմակայությունը 21-րդ հարյուրամյակի սկզբում վերջնականապես լուծվեց հօգուտ իսլամի:

Տարածաշրջանի քրիստոնյա բնակչությունը սրընթաց նվազում է, այդ թվում՝ նաեւ այնտեղ, որտեղ ունեւոր քրիստոնյա համայնքները՝ որպէս հակակշիռ լյումպենացված եւ ընդդիմադիր իսլամական քաղաքային ծայրամասերին, մինչեւ վերջերս աջակցություն էին ստանում տեղական դիկտատորների կողմից: Մերձավոր եւ Միջին Արեւելքի ներկա ժողովրդավարացումը նշանակում է ոչ թե փոքրամասնության իրավունքների հարգում, այլ նրանց վտարում կամ ոչնչացում: Դա հավասարապես վերաբերում է Եգիպտոսի, Իրաքի, Լիբանանի եւ Սուդանի քրիստոնյաներին: Իրանի ու Սիրիայի համայնքները համեմատաբար անվտանգ պայմաններում են ապրում, քանի դեռ այդ երկրներում իշխանության ղեկին են նույն կառավարող վարչակարգերը: Ինչ վերա-

բերում է Իսրայելի եւ Պաղեստինի քրիստոնյաներին, ապա, ինչպես ցույց է տալիս նախորդ տասնամյակի փորձը, այն պահից, ինչ տարվում է «պաղեստինյան ազգային օջախի կառուցումը», նրանց ապագան կախված է հետեւյալից՝ պաշտպանում է, արդյոք, հրեական պետությունը նրանց իրավունքները, թե՞ իրենք թողնված են զինված իսլամիստների քմահաճությանը:

Ստրկությունը, որն արմատախիլ անելու մասին անցած դարի 60-ականներից տարփողում էին միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները, տարածաշրջանում գոյություն ունի ոչ միայն թաքնված, այլեւ դասական ձեւերով: Մավրիտանիան ու Սուդանը լոկ առավել ճանաչված այն պետություններից են, որոնց տարածքում ծաղկում է համաշխարհային ընկերակցության կողմից «չնկատվող» ստրկավաճառությունը:

Քաղաքական իսլամիզմը՝ որպես հայդուկային կռիվների եւ ահաբեկչության տեսքով իշխանություններին դիմակայելու առավել գործուն միջոց, դարձավ տարածաշրջանում ընդհանուր արմատավորում գտած երեւույթ: Ալժիրում ու Եգիպտոսում բանակի ողջ ուժերի լարման եւ ժողովրդավարության կոշտ սահմանափակման գնով իսլամիստները հեռացվեցին իշխանությունից, սակայն ոչ մի երաշխիք չկա, թե դա առհավետ է՝ առավել եւս, որ իսլամիզմը տարածում է գտնում հարեւան երկրներում:

Հրեական համայնքային շենքերի ու արտասահմանցիների ոչնչացումը Մարոկոյում, որը տասնամյակներ շարունակ հանդիսանում էր ուլեմների եւ միապետության համագործակցության գոտի, լուրջ ահազանգ է՝ նույնիսկ Արեւմտյան Սահարայի լրացուցիչ կոնֆլիկտային ներուժը հաշվի չառնելու դեպքում, որի կարգավորումը նույնքան հեռու է, որքան քառորդ դար առաջ էր, երբ առաջին անգամ ծագեց հիմնախնդիրը:

Ալժիրը եւ Մարոկոն ոչ միայն ծերացող Եվրոպան լցնող միլիոնավոր ներգաղթյալների, այլեւ միջազգային, այդ թվում՝ ահաբեկչական կառույցների հետ սերտորեն կապված եվրոպական նոր քաղաքական իսլամի հայրենիք են: Նրանց առաջնորդները հաջողությամբ հենվեցին մադրիբյան զանգվածի վրա, իսկ երբ երկաթուղային կայարաններում իրականացված ահաբեկչական

գործողությունների (2004թ. մարտի 11-ի մադրիդյան պայթյունները) ընթացքում փորձության ենթարկվեց եվրոպական քաղաքական համակարգը, հնտորեն օգտագործեցին եվրամիության ազատական համակարգի ճեղքվածքները: Ահաբեկիչների դեմ իսպանական կառավարության անձնատուրության ֆոնին՝ թույլ սփոփանք է արաբա-բերբերական հակամարտության ավարտի հավանականությունը, որը նշարվեց այն բանից հետո, երբ ալժիրյան իշխանությունները, որոնք շուրջ 10 տարի քաղաքացիական պատերազմ էին մղում երկու ճակատով (իսլամիստների ու բերբերների դեմ), բերբերներին ընդառաջ խորհրդանշական քայլ կատարեցին:

Տարածաշրջանի մեծագույն հիմնախնդիրն իշխանության փոխանցման մեխանիզմի անկատարելությունն է, ինչը խարխուլում է կառավարող վարչակարգերի կայունությունը: Պարադոքսային կերպով՝ «հանրապետական միապետությունը» (Սիրիայի կամ Ադրբեջանի օրինակով, ժողովրդավարական միջավայրի օգտագործմամբ՝ կառավարող ընտանիքի շրջանակներում գերագույն իշխանության փոխանցումը) կարող է Մերձավոր և Միջին Արևելքի համար վերնախավային խռովությունների, քաղաքացիական պատերազմի կամ իսլամական հեղափոխության այլընտրանք հանդիսանալ: Լիբիայի ու Եգիպտոսի երկարակյաց տիրակալների համար ժառանգորդներին իշխանության օրինական փոխանցման խնդիրն ամենազխավորներից է: Հարցերի հարցն է՝ կպահեն՞, արդյոք, իշխանությունը ժառանգորդները:

Տարածաշրջանի առանցքային երկիր է հանդիսանում Եգիպտոսը, որտեղ անշեղորեն աճում է բնակչությունը և որն ունի վարչակարգի հետ զինված պայքարի փորձ ունեցող ամենահին իսլամիստական ընդդիմությունը:

Բացառված չէ, որ բնակչության 100 մլն-ի սահմանագծին հասնելու դեպքում՝ տնտեսության և բնապահպանության վրա ժողովրդագրական ճնշումը չափազանց ուժեղ կլինի, ինչը երկրին կստիպի անցնել արտաքին էքսպանսիայի, որպեսզի կանխի ալժիրյան տիպի քաղաքացիական պատերազմը: Այս դեպքում ավելի հավանական է սուդանյան ուղղությունը, առավել ևս, որ

մոտակա 10-15 տարիներին Սուդանը, հնարավոր է, դադարի լինել միասնական պետություն՝ մասնատվելով (հանրաքվեի միջոցով կամ առանց դրա) իսլամական հյուսիսի եւ քրիստոնյա-անի-միստական հարավի: Սուդանա-եգիպտական դաշինքը, որն ունի վաղեմի պատմական արմատներ, սպառնում է հեռանկարում Իսրայելի համար դառնալ առավել վտանգավոր հարեւան: Բացառված չէ, որ նրա հետ ընդհարումը դաշինքի ապագա առաջնորդներն արդարացված համարեն ինչպես գաղափարաբանական, այնպես էլ՝ ներքաղաքական տեսանկյունից:

Եթե «աֆղանական արաբների» իսլամիստ առաջնորդներին հաջողվի տապալել Սաուդյան Արաբիայի իշխող դինաստիան, ապա կա այդ թագավորության եւ սուդանա-եգիպտական դաշինքի միավորման հավանականություն: «Նոր Խալիֆաթը», որն, ամենայն հավանականությամբ, կառաջանա նշված միության հիմքի վրա, տնտեսական, ռազմական, ժողովրդագրական եւ աշխարհաքաղաքական առումներով ի գորու կլինի մարտահրավեր նետել Արեւմուտքին: Նման տիպի միության եւ Իսրայելի միջեւ բախումը գործնականում անխուսափելի է: Առավել եւս, որ Իսրայելի հարեւանների համար նրա միջուկային զենքի՝ որպես զսպիչ գործոնի կարեւորությունը նվազում է, քանզի արաբական երկրները համոզված են, որ Արեւմուտքը թույլ չի տա այն կիրառել նույնիսկ իբրեւ «վերջին հարվածի զենք»:

Ինչպիսի՞ն են այլընտրանքային սցենարներն Արաբական թերակղզու համար՝ իսլամիստների հաղթանակի պարագայում. կառուցվածքով կամ իրանական այաթոլանների (քիչ հավանական սցենար), կամ աֆղանական թալիբների (առավել հավանական սցենար) վարչակարգերին մոտիկ կարգերի հաստատում: Այս դեպքերից յուրաքանչյուրում իրադարձությունների հետագա զարգացումը կախված է նրանից՝ կմիջամտի՞, արդյոք, Արեւմուտքը, թե՞ ոչ: Իրանական տիպի սուլենիական իսլամական պետությունը հնարավորություն կունենա երկար ժամանակ «խաղալ» արեւմտյան առաջատար տերությունների միջեւ առկա տարածայնությունների վրա՝ մինչեւ «Նոր Խալիֆաթի» աստիճանական էվոլյու-

ցիայի պահը, եթե նրա գլուխ ի սկզբանե չկանգնի Ուսամա բեն Լադենի նման անձնավորություն:

Վերջինիս դեպքում մեծ է ամերիկյան ռազմական գործողությունների հավանականությունը (հնարավոր է՝ ՆԱՏՕ շրջանակներում) եւ Սաուդյան Արաբիայի ներկայիս տարածքի մասնատումը: Ենթադրելի են բաժանման հետեւյալ գոտիները. Զիջազ նահանգը՝ իր սրբավայրերով (ԱՄՆ արաբ դաշնակիցների, օրինակ՝ հորդանանյան դինաստիայի վերահսկողության տակ), Արեւելյան նահանգը՝ իր նավթով, Եմենյան Ասիրն ու վահաբական Նեջդը: Բացառված չէ, որ փաստացի էթնոդավանական սկզբունքով գոտիների բաժանմամբ՝ Իրաքի կառավարման փորձն այստեղ ամերիկացիների համար որոշիչ լինի:

Պարսից ծոցի գոտու փոքր միապետությունների ճակատագիրը մեծապես կախված է տվյալ տարածաշրջանում ԱՄՆ ու Մեծ Բրիտանիայի դիրքերի ամրությունից: Այս միապետությունները, բացառությամբ Օմանի Սուլթանության, սեփական ուժերով իսլամիստներին դիմակայել չեն կարող:

Եմենը զենքով գերհագեցած է, կենտրոնական իշխանությունն այստեղ թույլ է, միլենույն ժամանակ, մոտակա 10 տարիներին հնարավոր է ջրային ճգնաժամ, ինչը հավասարազոր է բնապահպանական աղետի:

Նման իրավիճակում մեծ է Սաուդյան Արաբիայի հետ նրա ընդհարման հավանականությունը: Այս հակամարտությունից դուրս Եմենի հիմնախնդիրների լուծման հեռանկարներն ամենեւին էլ պարզ չեն, իսկ բախումը կհանգեցնի ոչ պակաս կործանարար հետեւանքների, քան 1990թ. Իրաքի կողմից Քուվեյթի գրավումն էր:

Եմենի՝ Բաբ էլ Մանդեբի նեղուցի մյուս ափի հարեւաններ Սոմալին, Երիթրեան ու Ջիբութին երկար ժամանակով ներգրավված կլինեն նախկին եթովպիական կայսրության անկումին զուգընթաց՝ սահմանային ընդհարումներով, միջկրոնական եւ միջցեղային կոտորածներով, համաճարակներով եւ զանգվածային սովով ուղեկցվող գործընթացներում: Իրադրությունն Աֆրիկյան եղջյուրում ավելի կբարդանա Սուդանի վերոհիշյալ հնարավոր քայքայմամբ եւ, քաղաքագետ-աֆրիկագետների կարծիքով՝

սպասվող առաջին մայրցամաքային գերպատերազմով, որում ներքաշված կլինեն Սահելի<sup>1</sup> ու Մեծ լճերի ավազանի շատ երկրներ:

Տարածաշրջանի արեւելքում գտնվող Աֆղանստանը շարունակում է մնալ մի տարածք, որը մասնակիորեն վերահսկում են ՆԱՏՕ օկուպացիոն զորքերը: Այն ոչ ոք չի կառավարում (ինչի մասին է վկայում թմրանյութերի տեղական արտադրության աճը) եւ մասամբ գտնվում է թալիբների հսկողության տակ, որոնց ջախջախման մասշտաբներն արեւմտյան լրատվամիջոցները խիստ չափազանցնում են: Այս տարածքում ծավալվող իրադարձությունները Պակիստանի կայունության համար մահացու վտանգ են ներկայացնում: Վերջինիս փլուզումը հեռանկարում չի բացառվում՝ հատկապես աֆղանական անցքերում նրա ներգրավվածության պատճառով:

Սահմանամերձ շրջանների իրավիճակի վրա կենտրոնական կառավարության հսկողության կորուստը (այն էլ սեփական միջուկային զենքի ու միջուկային տեխնոլոգիաների, ինչպես եւ պակիստանյան վերնախավի բոլոր մակարդակներում միջազգային ահաբեկչական կազմակերպությունների հետ կապեր ունեցող ազդեցիկ իսլամիստական լոբբիի առկայության պայմաններում) այսօր փաստ է:

Իրանը, որ մոտ է սեփական միջուկային ծրագրի՝ ինչպես Խաղաղ, այնպես էլ ռազմական տեսանկյունից իրականացմանը, ԱՄՆ համար մնում է որպես «չարիքի առանցքի» կենտրոնական օղակ: Յեղափոխական հանրապետությունը, ինչպես մի քանի տասնամյակներ առաջ ԽՍՀՄ-ը, էվոյուցիա է ապրում եւ նպաստում է տարածաշրջանային կայունությանը՝ չմասնակցելով հակամարտություններից շատերին կամ նրանցում խաղալով կառուցողական դեր: Արեւմուտքի, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի ու Իսրայելի հետ Իրանի դիմակայությունը սպառնում է անդառնալիորեն ապակայունացնել իրադրությունը Մերձավոր եւ Միջին Արեւելքում, այդ թվում՝ Մերձկասպիայում եւ Պարսից ծոցի գոտում: Ինչպես երեւում է, ԱՄՆ-ը ջանում է խուսափել Իրանի հետ ուղղակի առձա-

---

<sup>1</sup> Սահարա անապատից մինչեւ Արեւմտյան Աֆրիկայի տափաստաններն ընկած գոտին.- խմբ.:

կատումից, սակայն հնարավոր ամեն բան անում է նրա բախումն Իսրայելի հետ հրահրելու համար՝ վերջինիս դրդելով իրանական միջուկային օբյեկտների վրա գրոհելու: Իրադարձությունների զարգացման նման տարբերակը չի բացառվում՝ լիբանանյան շիաների հակաիսրայելական ահաբեկչական գործունեության աշխուժացման ու նաեւ այն պատճառով, որ հրեական բնակավայրերի տարիանմանը հասարակության աննախադեպ դիմադրման պայմաններում՝ Իսրայելի ղեկավարությանն անհրաժեշտ է «փոքր հաղթական պատերազմ»:

Իրաքը երկար ժամանակ կհանդիսանա «բուլդոզի՝ բուլդոզի դեմ» քաղաքացիական պատերազմի գոտի՝ ողջ աշխարհի իսլամիստների եռանդուն մասնակցությամբ, որոնց համար նրա տարածքը դարձել է ջիհադի փորձարկման մարտադաշտ: Անցկացված խորհրդարանական ընտրությունները նվազագույն իսկ չափով ընդունակ չեն բավարարել ոչ սուննիներին, որոնք նախկին վարչակարգի ժամանակ կազմում էին քաղաքացիական վարչակազմի, բանակի ու ոստիկանության կորիզը եւ քվեարկություններին գործնականում չմասնակցեցին, ոչ էլ այսօր ակտիվ արտագաղթող քրիստոնյաներին: Իրաքի մասնատումը խիստ հավանական է, եւ այդ դեպքում օրակարգում կլինի ոչ միայն տարածաշրջանում առաջին շիական-արաբական, այլեւ քրդական պետության առաջացումը: Վերջինիս դեպքում կիրագործվի դեռեւս Ազգերի լիգայի տված խոստումը, սակայն, դրա հետ մեկտեղ, կաճի Թուրքիայի փլուզման հավանականությունը. չէ՞ որ նրա արագ ավելացող քուրդ բնակչությունն ունի զինված անջատողականության հին ավանդույթներ:

Այս վտանգը թուրք-ամերիկյան հարաբերություններում առաջացրեց սառնություն, երբ Թուրքիայի կառավարությունն իր գլխավոր դաշնակցին մերժեց Սադամ Յուսեյնի վրա հարձակվելու համար երկրի տարածքի օգտագործումը՝ վերջին հաշվով կորցնելով մի քանի մլրդ դոլար եւ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների զգալի մասը: ԱՄՆ-ից հեռանալու դեպքում, Յուսիսային Կիպրոսի խնդրի ապաշրջափակման պայմանով՝ Թուրքիայի նախատեսվող «ներխուժումը» Եվրոպա կարող է ինչպես Եվրամիության «մադրի-



բացման», այնպես էլ քեմալական Թուրքիայի իսլամացման հաջող այլընտրանք չիմել:

Նախկին վարչապետ Ռաֆիկ Չարիրիի սպանությունից հետո Լիբանանում առաջացած ճգնաժամը ոչ միայն կհանգեցնի այնտեղից սիրիական զորքերի դուրսբերմանը, այլև, ամենայն հավանականությամբ, քաղաքացիական պատերազմի նոր ալիք կհրահրի երկրում, որտեղ տասնամյակներ շարունակ միայն օտարերկրյա զորակազմերն էին կարողանում նվազեցնել Լիբանանյան հասարակությունը քանդող էթնոդավանական զինված խմբավորումների դիմադրության աստիճանը: Չնայած բոլոր ջանքերին, բացառված չէ, որ Սիրիայի նախագահ Բաշար Ասադին չհաջողվի երկրում իշխանությունը պահել իր ձեռքում:

Լիբանանի վրա հսկողությունը կորցնելուց հետո դրան կարող են նպաստել ինչպես Սիրիայի կուսակցական-պետական վերնախավը, որի վրա ներկայիս սիրիական առաջնորդի իշխանությունը զգալիորեն թույլ է, քան նրա հոր օրոք էր, այնպես էլ՝ Միացյալ Նահանգները, որը ձգտում է Սիրիայի ջախջախումով ավարտել իրաքյան «մեծագործությունների» պատմությունը: Արդյունքում՝ Սիրիան կվերադառնա մինչասադյան վերնախավային խռովությունների եւ լատինաամերիկյան տիպի խունտաների վիճակին՝ տարածաշրջանում չխաղալով որեւէ նշանակալից դեր:

Յասիր Արաֆաթի մահը թուլացրեց իսրայելա-պաղեստինյան հակասությունների հանգույցը: Պարզ չէ, թե նրա փոխանորդ Մահմուդ Աբասին որքանով կհաջողվի հսկողության տակ վերցնել ռազմականացված կազմավորումները եւ տեղական ինքնակառավարման մակարդակներում, առաջին հերթին՝ Գազայի հատվածում գերակշռություն ունեցող իսլամիստների հետ դիմակայության պայմաններում պահել իշխանությունը:

Բացառված չէ, որ մոտ ապագայում Պաղեստինում քաղաքացիական պատերազմ բռնկվի, եւ որ երկիրը կարող է վերածվել տեղական առաջնորդներին ենթարկվող անկլավի, որոնք ինքնուրույն կերպով կկառուցեն հարաբերությունները Յորդանանի, Եգիպտոսի ու Իսրայելի հետ:

Հրեական բնակավայրերի տարհանման հարցը պառակտեց իսրայելական հասարակությունը: Վարչապետ Արիել Շարոնը, հոգալով սեփական միջազգային վարկանիշի, որով՝ քաղաքական ասպարեզից հեռանալու դեպքում իր ընտանիքի անվտանգության ապահովման մասին, երկիրը հասցրեց «նարնջագույն հեղափոխության» շեմին: Շարոնի գործողությունները ցույց տվեցին, որ իր ժողովրդավարությամբ հպարտացող Իսրայելում կլանային ավտորիտարիզմի ավանդույթները հարեւան արաբական երկրներից (որոնք իսրայելցիները համարում են բռնապետություններ) թույլ չեն: Ստեղծված իրավիճակը կարող է իսրայելական այդչափ քաղաքականացված հասարակությանը հասցնել քաղաքացիական դիմակայության շեմին կամ ներքաղաքական համակարգում բերել անշրջելի փոփոխություններ: Փորձագետներն առաջ են քաշում մոտ հեռանկարում Իսրայելի՝ նախագահական կառավարման ձևին անցման, քաղաքական ասպարեզում բանակի ակտիվացման եւ «ազգային համաձայնության» շրջանակներից իսրայելցի արաբների դուրսնղման հնարավորությունը, որոնց «պաղեստինացունը» անցած դարի 90-ականներին արդեն իրողություն էր դարձել:

Ընդհանուր առմամբ, Մերձավոր եւ Միջին Արեւելքում մոտ ապագայում սպասվում են հակամարտությունների հին օջախների բորբոքում եւ նորերի առաջացում, ԱՄՆ գերակայություն՝ Եվրամիության ու առավելապես Չինաստանի հետ մրցակցությունում, ինչպես նաեւ սահմանների գոյություն ունեցող համակարգի խորտակում եւ անկայունության աճ, այդ թվում՝ տարածաշրջանից դուրս՝ սեպտեմբերի 11-ի մոդելով: Նոր Մերձավոր Արեւելքի հեռանկարը տխուր է, բայց իրական:

**«Россия в глобальной политике»**, 2005, ապրիլ

**«Հանրապետական»**, 2005, ք. 5

## ԶԳՏՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ Է ՁԱԽՈՂՄԱՆ

### *Էրիկ Չոբսքաուն*

«Սառը պատերազմի» ժամանակաշրջանի ԱՄՆ գլոբալ նկրտումների եւ 2001թ. հետո համաշխարհային տիրապետության հասնելու նրա փորձերի միջեւ գոյություն ունի անմիջական կապ, ընդ որում՝ երեք հիմնական ուղղություններով:

Առաջին կապը՝ միջազգային ասպարեզում ԱՄՆ գերիշխանությունն է. «սառը պատերազմի» ժամանակ՝ համայնավարական վարչակարգերի ազդեցության ոլորտի սահմաններից դուրս, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո՝ արդեն համաշխարհային մասշտաբով: Այս գերիշխանությունն այլեւս չի հիմնվում լոկ ԱՄՆ տնտեսական հզորության վրա:

ԱՄՆ տնտեսական ներուժը նախկինի պես մեծ է, սակայն 1945 թվականից այն նվազում է, եւ այդ համեմատական անկումն այժմ էլ շարունակվում է: Այսօր ԱՄՆ ազդեցության հիմքում, առաջին հերթին, ընկած է «սառը պատերազմի» ժառանգությունը. ԱՄՆ դոլարի կարգավիճակը՝ որպես համաշխարհային արժույթ, այդ ժամանակահատվածում ամերիկյան ձեռնարկությունների ձեռք բերած միջազգային կապերը (հատկապես պաշտպանության ոլորտում), միջազգային տնտեսական գործառնությունների եւ գործարար փորձի վերակառուցումն ամերիկյան մոդելով, իսկ հաճախ էլ՝ ամերիկյան ձեռնարկությունների ղեկավարությամբ: Սա հզոր «ակտիվ» է, որը միայն դանդաղ եւ աստիճանաբար կնվազի:

Ռազմատեխնիկական ուժի տեսանկյունից ԱՄՆ-ին առաջվա պես հավասարը չկա: Շնորհիվ այդ ներուժի ԱՄՆ-ն այսօր միակ տերությունն է, որն ի զորու է կարճ ժամկետում արդյունավետ ռազմական ինտերվենցիա իրականացնել երկրագնդի ցանկացած անկյունում, եւ այն արդեն երկու անգամ գործով ապացուցել է ոչ մեծ պատերազմներն արագ շահելու իր ունակությունը: Եվ այնուամենայնիվ, ինչպես ցույց են տալիս Իրաքի դեպքերը, այս աննախադեպ ներուժը բավարար չէ նույնիսկ մեկ՝ դիմադրելու պատրաստ երկրի վրա արդյունավետ վերահսկողություն սահմանելու

(էլ չխոսենք ողջ մոլորակի մասին): Ինչեւէ, ամերիկյան գերիշխանութունը փաստ է, եւ ԽՍՀՄ անկումից հետո այն ձեռք է բերել գլոբալ բնույթ:

Երկրորդ ընդհանուր տարրը՝ ամերիկյան կայսրության յուրօրինակ «ֆիրմային ձեռագիրն» է: ԱՄՆ-ը միշտ նախընտրել է գործ ունենալ արբանյակ պետությունների եւ պրոտեկտորատների, այլ ոչ թե զուտ գաղութների հետ: Էքսպանսիոնիզմը՝ արտահայտված այն անվամբ, որ իրենց համար ընտրեցին Ատլանտիկայի արեւելյան ափի 13 միավորված գաղութները (ԱՄՆ), կրում էր մայրցամաքային, այլ ոչ թե գաղութատիրական բնույթ: Յետագայում այդ էքսպանսիոնիզմը «նախասահմանված ճակատագրի» դոկտրինայի տեսքով տարածվեց Արեւմտյան կիսագունդ եւ, մասամբ, Արեւելյան Ասիա:

Այսպիսով, ամերիկյան կայսրությունը կազմված էր ձեւակաւորեն անկախ պետություններից, որոնք ենթարկվում էին Վաշինգտոնի հրամաններից, բայց քանի որ նրանք, այնուամենայնիվ, մնացել էին ինքնուրույն, ԱՄՆ-ը պետք է միշտ պատրաստ լիներ ճնշում գործադրել նրանց կառավարությունների վրա, այդ թվում՝ «վարչակարգի փոխման» նպատակով, իսկ այնտեղ, որտեղ դա նպատակահարմար էր (օրինակ՝ Կարիբյան ավազանի գաճաճ պետություններում)՝ նաեւ պարբերաբար դիմել ռազմական ինտերվենցիաների:

Երրորդ «ուղիղ գիծը» Բուշի թիմի նեոպահպանողականների կոնցեպցիաները կապում է «մաքրակրոն» գաղութարարների այն համոզման հետ, թե հենց իրենք են Աստծո գործիքը երկրի վրա, ինչպես եւ՝ Ամերիկյան հեղափոխության գաղափարների հետ, որը, ինչպես եւ բոլոր մեծ հեղափոխությունները, ծնեց հաղթողների՝ համաշխարհային պատմական առաքելություն ունենալու համոզվածությունը:

Իզոլյացիոնիզմի ու գլոբալացման միջեւ այս հակասությունը շրջանցելու ամենաարդյունավետ միջոցը հետեւողականորեն կիրառվել է 20-րդ հարյուրամյակում եւ 21-րդ դարում էլ շարունակում է բավական լավ ծառայել Վաշինգտոնին: Այդ միջոցի ելությունն այն է, որպեսզի գտնեն արտաքին թշնամու, որն

անմիջական ու մահացու սպառնալիք կներկայացնի ամերիկյան կենսակերպին եւ ԱՄՆ քաղաքացիների անվտանգությամբ: ԽՍՀՄ «վախճանից» հետո ԱՄՆ-ը մնաց առանց այդ դերի համար ամենահարմար թեկնածուի, բայց 90-ականների սկզբին նրան փոխարինող գտնվեց. բախումը Արեւմտյան քաղաքակրթության եւ այն ընդունել չցանկացող այլ մշակույթների, առաջին հերթին՝ իսլամի միջեւ: Ուստի համաշխարհային տիրապետության վաշինգտոնյան կողմնակիցներն իսկույն հասկացան ու լիովին օգտագործեցին սեպտեմբերի 11-ին Ալ-Կաիդայի կատարած գործողությունների վիթխարի քաղաքական ներուժը:

Ողջ մոլորակն «իր հավատքին բերելու» այս երազանքը կյանքի կոչելու առաջին փորձը ձեռնարկվեց դեռ Առաջին աշխարհամարտի տարիներին՝ վերածելով ԱՄՆ-ը գլոբալ տերության: Սակայն Վուդրո Վիլսոնը ջախջախիչ պարտություն կրեց: Համաշխարհային տիրապետության վաշինգտոնյան ներկայիս գաղափարախոսներին արժե դրանից դասեր քաղել. չէ՞ որ նրանք իրավացիորեն Վիլսոնին համարում են իրենց նախահայրը: Մինչեւ «սառը պատերազմի» ավարտը, այլ գերտերության գոյությունը նրանց խանգարում էր ամբողջ ուժով ծավալվել, բայց ԽՍՀՄ փլուզումից հետո այդ խոչընդոտը վերացվեց:

Ֆրենսիս Ֆուկույաման շտապեց հայտարարել կապիտալիստական հասարակության ամերիկյան մոդելի լիակատար եւ վերջնական հաղթանակի մասին: Միաժամանակ, ԱՄՆ ճնշող ռազմական գերակշռությունը ծնեց իրենց համաշխարհային գերիշխանության ընդունակ համարող պետություններին բնորոշ՝ անչափելի ամբիցիաներ: Իրոք, 21-րդ դարասկզբին ԱՄՆ-ն աշխարհում ուներ պատմության մեջ բացառիկ ու նախադեպը չունեցող հզորություն եւ ազդեցություն: Առայժմ այն մնում է միակ գերտերությունը, որի ուժն ու շահերը սփռվում են ամբողջ աշխարհում: Ամերիկյան մի գլուխ բարձր է մնացած բոլոր պետություններից:

Պատմությունում բոլոր գերտերություններն ու կայսրությունները գիտեին, որ իրենք միակը չեն, եւ նրանցից ոչ մեկը հնարավորություն չուներ ձգտելու իսկական համաշխարհային տիրապե-

տության: Նրանցից եւ ոչ մեկը վստահ չէր սեփական անխոցելիության մեջ:

Բայց դա բավարար չէ՝ բացատրելու ամերիկյան քաղաքականությանը հատուկ մեծամոլությունը, սկսած այն պահից, երբ վաշինգտոնյան «գորշ կարդինալների» խումբը որոշեց, որ սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններն իրենց կատարյալ հնարավորություն են տալիս՝ հայտարարելու աշխարհում ամերիկյան միանձնյա գերիշխանության մասին: Նախեւառաջ, այս հայեցակարգն աջակցություն չգտավ հետպատերազմյան ամերիկյան կայսրության «հիմնասյուների»՝ Պետդեպարտամենտի, զինված ուժերի, հետախուզական ընկերակցության, ինչպես նաեւ «սառը պատերազմի» ժամանակաշրջանի պետական գործիչների (ինչպիսիք Քիսինջերն ու Բժեզինսկին են) կողմից: Իրենց դաժանությամբ այս քաղաքական գործիչները ոչնչով չեն զիջում այսօրվա Ռամսֆելդին եւ Վուլֆոլիցին:

Հենց նրանց ժամանակ տեղի ունեցավ մայա-հնդկացիների ցեղասպանությունը Գվատեմալայում<sup>1</sup>: Նրանք 50 տարի մշակեցին եւ մոլորակի մի մեծ հատվածի վրա իրականացրին կայսերական գերիշխանության քաղաքականությունն ու լիովին պատրաստ էին տարածել այն ողջ երկրագնդում: Նրանք քննադատում են պենտագոնյան ռազմավարներին ու համաշխարհային տիրապետության նեոպահպանողական մոլեռանդներին այն բանի համար, որ վերջինները, անտեսելով ամերիկյան դիվանագետների ու զինվորականների կուտակած ողջ փորձը, ոչ մի կոնկրետ գաղափար չեն առաջադրում, միայնակ եւ բացառապես ռազմական ուժով գերիշխանության պարտադրումից բացի:

Անշուշտ, Իրաքում անհաջողությունը սոսկ կամրապնդի նրանց կասկածները: Նույնիսկ նրանք, ովքեր չեն բաժանում վետերանների հայացքները, կհամաձայնեն, որ ԱՄՆ կայսերական ամբի-

---

<sup>1</sup> Խոսքը 1980-ականների քաղաքացիական պատերազմի ընթացքում մայաների զանգվածային սպանությունների մասին է, որին զոհ դարձան 750 հազար մարդ.- խմբ.:

ցիաների, ինչպես նաև ամերիկյան կապիտալիզմի գլոբալ շահերի տեսանկյունից՝ Վաշինգտոնի ներկայիս քաղաքականության տրամաբանական արդարացում պարզապես չկա:

Միգուցե այն ինչ-որ իմաստ ունի սոսկ ներքաղաքական հաշվարկների առումով: Հնարավոր է, որ դա ամերիկյան հասարակության ընդհանուր ճգնաժամի ախտանշան է կամ էլ՝ ստահեղափոխական-դոկտրինյորների խմբի կողմից իշխանության բռնազավթման դրսեւորում: Նման հարցերին դեռևս պատասխան չկա:

Սակայն կարելի է բավական վստահորեն ասել, որ այս նախագիծը ձախողվելու է: Բայց քանի դեռ այն իրականացվում է, նրանց համար, ում անմիջականորեն առնչվելու է ամերիկյան ռազմական օկուպացիան, աշխարհն ավելի ու ավելի անտանելի է դառնալու եւ առավել քիչ անվտանգ՝ մնացած բոլորի համար:

**The Guardian**, Մեծ Բրիտանիա  
«Հանրապետական», 2005, թ. 7

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԵՐՏՈՂՆԵՐԸ ՎԵՆՍԱՆ ԺՈՎԵՐ

Արդեն հինգ տարի նրանք հեղափոխությունն արտահանում են Արևելյան Եվրոպա ու Կենտրոնական Ասիա: Նրանք երիտասարդ են, բավական կրթված: Նրանց ընդհանուր լեզուն անգլերենն է: Որպես կանոն՝ նրանք աշխատում են արեւմտյան հաստատություններում ու կազմակերպություններում՝ հիմնականում ամերիկյան: Նրանց կարելի է կոչել «միջազգային ժողովրդավարական բրիգադներ», որոնց գործունեությունը համակարգում է Վաշինգտոնը: Նրանցից մի քանիսն անձամբ Ջորջ Բուշի կողմից արժանացել են «ազատության հաղթողների» կոչմանը:

Նրանց ներկայացուցիչների հետ մենք հանդիպեցինք Բելգրադում եւ Թբիլիսիում, ինչպես նաեւ Բրատիսլավայում ու Կիեւում, որոնք մանրամասն շարադրեցին հետհամայնավարական բռնապետությունների տապալման իրենց «դեղատոմսերը»:

Նրանցից ամենավորձառուին կոչում են Պավել Դեմեչ: Նա սլովակ է, 49 տարեկան եւ առաջիններից է ոտք դրել այդ ճանապարհին: 2000թ. Դեմեչը գաղտնի համակարգում էր ընդդեմ Միլոշեվիչի՝ արտասահմանյան օգնության ծրագիրը: Անցյալ տարի նա (նույնպես գաղտնի) ուկրաինական հեղափոխականների խորհրդատու էր: Բրատիսլավայում ղեկավարում է շատ ազդեցիկ ամերիկյան ոչ կառավարական կազմակերպության՝ «German Marshall Fund»-ի արևելաեվրոպական բաժանմունքը: Նախկինում լինելով իր երկրի ԱԳ նախարար՝ նա հիմնավորապես գիտի նախկին խորհրդային բլոկի քաղաքական իրադրությունը եւ գիտի, թե ինչպես ընտրել հեղափոխություն անցկացնելու ամենահարմար պահը:

Հաջողությունն, առաջին հերթին, պայմանավորված է առանց բռնության դեմարշով: «Բռնության չդիմելը տալիս է բարոյական առավելություն եւ առաջ բերում մյուսների աջակցությունը, եւ հետո՝ բռնությունն այն ուրտն է, որտեղ իշխանությունն ուժեղ է», – բացատրում է Դեմեչը: Հաջողության երկրորդ բանալին գործողությունների մեթոդի մեջ է: «Քվեարկության օրը, երեկոյան, –



պատմում է նա,– հավաքվում են կեղծիքների ապացույցները, եւ այդ տեղեկությունները շատ արագ տարածվում են երկրով մեկ: Եվ անմիջապես հարյուր հազարավոր մարդիկ դուրս են գալիս փողոց: Յետո նրանք պետք է խաղաղ ճանապարհով հսկողության տակ վերցնեն պետական հիմնարկները, որ ցույց տան ինքնակալներին, որ օրինական իշխանությունն անցել է ուրիշի ձեռքը: Եվ քանզի ոստիկանությունը չի կրակում` գործն արված է»:

Սա` տեսությունում: Որպեսզի իմանանք, թե գործնականում ինչպես է, լսենք սերբ Սրջա Պոպովիչին: Չնայած 32 տարեկան է` այդ բարձրահասակ եւ վտիտ անձնավորությունն արդեն առասպելական կերպար է: Նա 21-րդ դարի առաջին հեղափոխական շարժման կազմակերպիչն է, ինչը մնացածների նախատիպը հանդիսացավ. Նրա «Օրոս»-ը («Դիմադրություն») 2000թ. ոչ մի կաթիլ արյուն չթափելով տապալեց Սիլոշեւիչին: Այդ օրվանից խորհուրդների համար Սրջա Պոպովիչին դիմում են գրեթե ամեն տեղից` անգամ Ջիմբաբվեից: Որպեսզի բավարարի պահանջարկը, նա հիմնեց հեղափոխության փորձագետների բյուրո` «Canvas Group»: «Սա մասնավոր բիզնես է,– խոստովանում է նա,– սակայն բյուրոն գրանցված է որպես ոչ կառավարական կազմակերպություն, որպեսզի չմուծի տուրքերը»: Տարեկան շրջանառությունը` «առեւտրական գաղտնիք է»: Բելգրադի կենտրոնի նորածեւ «Movie Bar»-ում (որի սեփականատերն է), սեղանի շուրջ նստած, Սրջան բացում է գաղտնիքը. «Յեղափոխության հաջողության համար անհրաժեշտ է երիտասարդություն, երիտասարդություն ու նորից երիտասարդություն:

Ինչո՞ւ: Որովհետեւ երիտասարդ էնտուզիաստները քաջ են, եւ իշխանությունը քիչ կարող է ազդել նրանց վրա: Նրանք չունեն երեխաներ, աշխատանք, հարստություն. նրանք կորցնելու ոչինչ չունեն»: Կա եւս մեկ պատճառ` առավել գործնական բնույթի, նույնիսկ փոքր-ինչ ցինիկ: «Ամեն անգամ, երբ վարչակարգն ուժ է կիրառում անզեն երիտասարդության հանդեպ, ծեծում նրանց ու բանտ նետում,– ասում է Պոպովիչը,– նա թիկունք է դարձնում նրանց հայրերին, պապերին, բարեկամներին, մտերիմներին... Կարճ ասած` շատերին, այդ թվում` նաեւ իրեն հավատարիմ կողմնակիցներին: Եվ հենց սա է որոնելի նպատակը»:

«Ցանկանո՞ւմ եք մի խորամանկություն պատմեմ,- շարունակում է նա ժպիտով:- Ցույցերի ժամանակ, որոնք խոստանում են ավարտվել բախումներով, առաջին շարքում կանգնեցրեք սպիտակ վերնաշապիկներով երիտասարդ աղջիկների: Եվ սպասեք ոստիկանության գրոհին: Արդյունքն ապահովված է. մի քանի հարվածներից հետո սպիտակ վերնաշապիկների վրա մի քիչ (կամ՝ ցավոք, շատ) արյուն կլինի: Ու կստացվեն փայլուն կադրեր, որոնք կշրջեն ողջ աշխարհի էկրաններով... Եվ վարչակարգը կվարկաբեկվի»:

Հաջող հեղափոխությունը զարգանում է նույնքան ճշգրիտ սցենարով, ինչպիսին համակարգչային ծրագիրն է:

*Առաջին փուլ.* «Ընտրություններից շատ առաջ հարկավոր է ստեղծել ծայրահեղ շահագրգիռ երիտասարդության խմբեր, որոնք կլինեն «նիզակի ծայրակալը»՝ հեղափոխության գործիքը», - բացատրում է Պոպովիչը: Այդ խմբի համար անհրաժեշտ է ընտրել անուն: Ինչպիսի՞:

Լսենք Ալեքսանդր Մարիչին: «Օտոր»-ի մյուս երեք վետերանների հետ մեկտեղ այս 30-ամյա սերբը Բելգրադում ստեղծել է հեղափոխության եւս մեկ փորձագիտական գրասենյակ. նա Պոպովիչի մրցակիցն է: Մարիչը երաժշտամուլ է, եւ դա օգնեց նրան ընտրել անվանումը: Հեղափոխական խմբի անունը պետք է լինի կարճ, երկու վանկից ոչ ավելի, հեշտ հիշվող՝ ինչպես «Levis»-ը կամ «Coca»-ն, եւ հզոր՝ ինչպես կարգախոսը: Այն լինելու է հեղափոխության ստորագրությունը, «մակնիշը»:

*Երկրորդ փուլ.* հարկավոր է «գործի գցել» այդ նոր «մակնիշը»: Սիւս բլիցկրիզ գործողության օրինակ: 2003թ. գարնանը Սորոսի հիմնադրամն Ալեքսանդր Մարիչին ու նրա թիմին ուղարկեց Վրաստան. նրանք պետք է դառնային սաղմնավորվող բողոքող խմբի առաջնորդների խորհրդատուները: Վրացի ներկայացուցիչները 20-ն էին, եւ նրանք արդեն ընտրել էին անվանումը՝ «Կմարա» («Բավ է»): Մնում էր երկրով մեկ տարածել այդ անունը: Բելգրադի «Չե Գեւարա»-ները առաջարկեցին ծրագիր. վրացի երիտասարդ էնտուզիաստներն այն անմիջապես ի կատար ածեցին:

Ապրիլյան գիշերը նրանք Թբիլիսիի եւ ինն այլ քաղաքների գլխավոր փողոցներում փակցրին «Կմարա» մակագրությամբ հարյուրավոր պլակատներ: Արդյունքը գերազանցեց բոլոր սպասելիք-

ները. լուսաբացին ողջ երկիրը միայն խոսում էր այդ պլակատների մասին: Շեւարդնաձեն ծուղակն ընկավ: Այդ «խզբզոցներն» արհամարհելու փոխարեն, նա ռադիոյով ու հեռուստատեսությամբ շարունակ հանդես էր գալիս մերկացումներով՝ ակամա գովազդելով այդ փոքրիկ խումբը, որը բուլոբին թվում էր որպես զանգվածային շարժում: Մարքեթինգային գրոհը հաջողվեց. մի գիշերվա ընթացքում «Կմարա» հեղափոխական «մակնիշը» գործի դրվեց:

*Երրորդ փուլ.* գտնել միջոցներ, քանզի խմբին շուտով անհրաժեշտ է լինելու տպել հազարավոր թռուցիկներ, պիտակներ, թողարկել մակագրություններով վերնաշապիկներ: Հարկավոր է ստեղծել ինտերնետային կայք, գնել քարթրիջներ, մոբիլ հեռախոսներ, պլակատներ... Շարժմանն անհրաժեշտ է լինելու նաեւ կազմակերպել իր մարտնչող կողմնակիցների հավաքը, որոնք, պետք է հուսալ, կժամանեն երկրի բոլոր ծայրերից: Այդ նպատակով անհրաժեշտ է վճարել գնացքի հարյուրավոր տոմսերի, հյուրանոցներում անցկացվող գիշերների, վարձակալվող բնակելի տարածքների, սննդի համար: Եվ հետո՝ պահանջվելու է արտասահմանյան խորհրդատուների ծառայությունների վճարումը: Կարճ ասած՝ անհրաժեշտ է գտնել «ընդամենը» մի քանի միլիոն դոլար:

Որպեսզի դրանք ճարվեն, պետք է գործի լծվել նախապես, քանզի նման գումարներ կարելի է գտնել միայն արտասահմանում: Տեղերում հարուստ գործարարներն այս ձեռնարկին անվստահությամբ են վերաբերվում. նրանք չեն ցանկանում փչացնել հարաբերություններն իշխանությունների հետ: Սոսկ հեղափոխության սկսումից նրանք կնետվեն մյուս ճամբարը եւ կապոցներով փողեր կտան երիտասարդ հեղափոխականներին: Իսկ առայժմ օգնությունը պետք է փնտրել դրսում, մասնավորապես՝ Վաշինգտոնում, որովհետեւ, համաձայն ընդհանուր կարծիքի, եվրոպացիները զգուշավոր են, դանդաղկոտ ու ժլատ, բացառությամբ, այն էլ միայն առանձին դեպքերում՝ բրիտանացիների, հոլանդացիների եւ լեհերի: Ֆրանսիացիներին երբեք չեն դասում «դոնորների» շարքը:

Ինչ վերաբերում է «նարնջագույն հեղափոխությանը», ապա դիմումները ԱՄՆ խոշոր մասնավոր հիմնադրամներին ու հասարակական կազմակերպություններին (USAID եւ National Endowment for Democracy) իրականում սկսվեցին դեռ 2003թ.

աշնանը, այսինքն՝ իրադարձություններից մեկ տարի առաջ: Սլովակ Բալաշ Յարաբիկն օգնել է ուկրաինական «Որօ» խմբին՝ Ատլանտիկայի մյուս ափից դրամական օժանդակություն հայթայթել: Դրա համար նա գումար է ստացել ամերիկյան «Freedom House» կազմակերպությունից, որը չի ցանկացել միայնակ ֆինանսավորել «Որօ»-ին: Այո, հեղափոխությունում, ինչպես եւ բիզնեսում, հաճախ է ամեն ինչ սկսվում ներդրողների խորհրդակցությունից...

«Ղեկավարությունը բարձր մրցակցությամբ շուկա է, – ասում է Յարաբիկը, որը բարձրագույն կրթություն ստացել է Կոլումբիական համալսարանում:– Ժողովրդավարական խմբերի առաջնորդները պետք է ուղեւորվեն Վաշինգտոն, որպեսզի լավագույնս «իրենց վաճառեն» կապիտալ տվող հիմնադրամներին: Որպեսզի պատրաստվեն այդ մեծ քննությանը, հարկ է լինում հղկել սեփական փաստարկները, պատրաստել ծրագրեր եւ ֆինանսական աղյուսակներ...»: Այո, ճիշտ այնպես, ինչպես բիզնեսում:

*Չորրորդ փուլ.* հավաքել առավելագույն թվով ակտիվիստներ:

Ստանալով առաջին գումարները՝ «բարի լուր» տանելու համար շրջաններ են ուղարկվում հեղափոխության շրջիկ գործակալները: Ժողովից ժողով նրանք պետք է նորից կրկնեն, թե ամեն ինչ հնարավոր է, որ իրենց հաջողվել է սեփական երկրում տապալել դիկտատորին: Սովորաբար ժողովները կազմակերպվում են բաց երկնքի տակ՝ քաղաքից դուրս: Որպեսզի չհարուցեն ոստիկանության կասկածները, ասում են, թե դա հանգստի մեկնող խումբ է: Ժողովներում տիրող մթնոլորտը միաժամանակ հիշեցնում է եւ «խենթերի ակումբ», եւ զինվորական պատրաստության պարապմունք:

«2004թ. ապրիլին, – պատմում է հետխորհրդային տարածքում հեղափոխությունների գծով խորհրդատու՝ 24-ամյա Կետո Կոբիաշվիլին, – մի հոլանդական կազմակերպություն ինձ ուղարկեց Օդեսա, որպեսզի հավաքեմ մոտ 30 երիտասարդ մարդկանց, պատրաստեմ ու ոգեւորեմ նրանց: Ես երկու շաբաթ ապրում էի ճոխ հյուրանոցում, առանձին համարում: Դեռ ավելին՝ ստացա 250 եվրո: Երազ էր»: Սա դեռ ամենը չէ: «Դրանից մի քանի ամիս անց Սորոսի հիմնադրամը Ալմա Աթայում կազմակերպեց սեմինար դազախ ակտիվիստների համար: Այնտեղ էլ մենք հանդիպեցինք

մեծ հյուրանոցում: Ամեն ինչ մեր տրամադրության տակ էր. տեսախցիկներ, որպեսզի պատրաստվենք հարցազրույցներին, եւ անգամ սարքավորումներ՝ միկրոֆոնները խլացնելու համար, որոնք ղազախական գաղտնի ոստիկանությունը չէր զլացել տեղադրել նիստերի դահլիճում»:

*Հինգերորդ փուլ.* հասարակական կարծիքի ուշադրության գրավման նպատակով՝ միաժամանակ երկու կամպանիա տանել: Սա ամենաբարդ փուլն է. այստեղ պահանջվում է առավելագույն նրբություն: Առաջին կամպանիայի նպատակն է՝ բացատրել քաղաքացիներին, թե որոնք են ընտրություններում իրենց իրավունքները եւ դրդել նրանց քվեարկելու:

Երկրորդի նպատակն է՝ կոռուսպացված եւ ավտորիտար վարչակարգերի մերկացումը: Յուրաքանչյուր կամպանիա ունի իր անվանումը, կարգախոսը, բուկլետը: Այս երկու գործողություններն իրականացվում են ակտիվիստների միեւնույն խմբով, բայց ուշադրություն. այդ մասին չպիտի իմանան: «Հակառակ դեպքում առաջին կամպանիան, որը պիտի լինի անկախ, կծախողվի», – բացատրում է Դմիտրի Պոտեխինը: Ոչ բարձրահասակ, կլոր ակնոցներով այս 29-ամյա ժպտերես ուկրաինացին «նարնջագույն հեղափոխության» առանցքային դեմքերից էր: Յուշչենկոյի հաղթանակից հետո նա անմիջապես մեկնեց Մոլդովա, որպեսզի նրանց «բերի իր հավատքին»: Այս նորահավատը մարքեթինգի արհեստավարժ մասնագետ է: «Միաժամանակ ու գաղտնի երկու գործողություններ անցկացնելը չափազանց դժվար է, – ասում է նա: – «Որս» շարժումում մենք այնքան քիչ էինք, որ ակտիվիստները պետք է օրվա ընթացքում մի քանի անգամ զգեստափոխվեին՝ տարածելով այդ եւ մյուս կամպանիայի թռուցիկները...»:

*Վեցերորդ փուլ.* փողոցներում, առանց բռնության գործադրման, կատարել արդյունավետ գործողություններ: Նպատակը՝ արթնացնել քաղաքացիներին եւ գրգռել ոստիկանությանը: Առավել նախընտրելի մեթոդը՝ «հայտնվող եւ անհետացող» խմբի կազմակերպումն է: «Դրանք մեծաքանակ մարդկանց կարճատեւ հավաքներ են, եւ ոստիկանությունը չի հասցնում ոչ ոքի կանգնեցնել, – բացատրում է Դմիտրի Պոտեխինը: – Օրինակ, հեղափոխական խմբի 15 անդամներ զգեստավորվում են բանտարկյալների հագուստով եւ հագնում գորշ վերարկուներ: Սոբիլ կապի միջոցով

նրանք նշանակում են հանդիպում մայրաքաղաքի գլխավոր փողոցում այն պահին, երբ այնտեղ խառնաշփոթ է: Նշանակված ժամին հանում են վերարկուներն ու նմանվում բանտարկյալների: Նրանք մի քանի անգամ գոչում են. «Ես քվեարկում եմ X-ի օգտին»: X-ն, անշուշտ, հանդիսանում է տեղի դիկտատորը: Այնուհետև ցուցարարները հազնում են վերարկուները, հեռանում մետրոյի խորքը եւ կորչում անհետ: Արդյունքն ապահովված է. ոստիկանությունը զազազած է, սկսվում են բռնությունները»:

*Յոթերորդ փուլ.* պահպանել խումբը: Ինչպե՞ս: Սերբ Միլոշ Միլենկովիչն իր բելառուս կամ ադրբեջանցի «կլիեմտներին» սովորեցնում է ընդհատակյա գործունեության այբուբենը: «Սրանք դիմակայության դասական հնարքներ են, – ասում է 27-ամյա այս հաղթանդամ, զվարճասեր անձնավորությունը:– Յեղափոխական խումբը չպետք է մեկ մարդ ղեկավարի: Յակառակ դեպքում նրա գործունեությունն առաջնորդի ձերբակալության պատճառով կաթվածահար կլինի: Պետք է ստեղծել կոլեգիալ ղեկավարություն, այսինքն՝ առաջնորդի գործառնությունները բաշխել մի քանի պատասխանատու անձանց միջեւ, որոնք չգիտեն այն մանրամասները, թե ինչ են անում մյուսները»: Մեկ այլ օրինակ. «Որպեսզի խճճվի կառավարման սխեման, անհրաժեշտ է ամեն շաբաթ փոխել պաշտոնական ներկայացուցչին»: Միլենկովիչի կարծիքով, հարկավոր է պահպանել գաղտնիության այս մթնոլորտը: «Երիտասարդներին հրապուրում են խորհրդավոր կազմակերպությունները, – շարունակում է նա: – Գաղտնիության այս հմայչությունը թույլ է տալիս հաղթահարել հուսահատությունը եւ միանալ խմբին, որին իշխանությունը համարում է ահաբեկչական»:

*Ութերորդ փուլ.* սովորել կառավարել վախը: «Դրա համար կան բազմաթիվ նրբություններ, – ճշտում է Միլոշ Միլենկովիչը:– Ցույցի ժամանակ երիտասարդները երբեք չպետք է իրենց մեկուսացված զգան. նրանք պետք է մյուսների հետ մշտապես ֆիզիկական շփման մեջ լինեն:

Անհրաժեշտ է նաեւ, որ նրանք երգեն ու չլսեն ոստիկանության կամ զինվորների անհանգստություն առաջացնող աղմուկը: Որպեսզի թաքցվի ցույցի առջև բազմաքանակ զինված մարդկանց առկայությունը, կարելի է երթի սկզբից տանել մեծ ցուցապատառ. այն ցուցարարներին կխանգարի տեսնել իրենց վախեցնող

զինվորների կուտակումները»: Մյուս հնարքը՝ բացատրել, որ ձերբակալությունը ողբերգություն չէ: Սեմինարներում սկսնակ հեղափոխականների դաստիարակները կազմակերպում են ոստիկանական շուրջկալների փորձեր: Ոմանք հանդես են գալիս ոստիկանների դերում, մյուսները՝ ցուցարարների: Սեմինարներում սովորեցնում են պատասխանել խուսափողաբար, երբեք չդրսելորել ագրեսիվություն, նույնիսկ ժպտալ: Մշակվում է նաև բանտ նետված ընկերներին աջակցելու ռազմավարությունը: «Նրանք, ովքեր չեն ձերբակալվել, պետք է իմանան ում դիմել՝ որ փաստաբանին, ոչ կառավարական որ կազմակերպությանը, տեղական կամ արտասահմանյան որ լրագրողին:

Նրանց մոտ պիտի լինի այն ակտիվիստների ցանկը, որոնց հետ հնարավոր է կապվել եւ որոնք այնուհետեւ իրենք կկապվեն նրանց հետ, որպեսզի ոստիկանական տեղամասի առջև ցույց կազմակերպեն, ինչի մասին կխոսեն զանգվածային լրատվամիջոցները», – ասում է Գեորգի Կանդելակին, որն անցյալ տարի այս կանոնները բացատրում էր ղազախներին: Եվ քաղաքական գիտությունների այս մասնագետն ու ամերիկյան համալսարանի շրջանավարտը հետեւություն է անում. «Այդպիսով, մենք հակառակորդի ուժը շրջում ենք հենց իր դեմ»:

Ահա՛ ամեն ինչ իր տեղում. ակտիվիստներին հավաքագրում եւ ուսուցանում են, տարածվում են մի քանի հազար թռուցիկներ, կազմակերպվում են մի քանի «հայտնվող եւ անհետացող» խմբեր, ու շարժումը հասցնում է առաջին հարվածները: Եվ երբ պետք է սկսվեն անխուսափելիորեն կեղծիքներով ուղեկցվող ընտրությունները, նորաթուխ հեղափոխականներն արդեն պատրաստ են դրանք բողոքարկելու:

Դաստիարակների աշխատանքն ավարտված է:

Առաքելությունն իրականացված է, եւ ժողովրդավարական հեղափոխության շրջիկ գործակալներն արդեն նոր նպատակներ ունեն: Նախկին խորհրդային կայսրությունում նոր հեղաշրջումներ են պատրաստվում:

Որպեսզի արագացվի գործընթացը, նրանք մտադրված են Կիևում հիմնել հեղափոխությունների տարածման նոր կենտրոն՝ ժողովրդավարության միջազգային ինստիտուտ անվամբ: 2005թ. փետրվարին ինստիտուտի ստեղծման նախաձեռնող, պատվա-

խնդիր Վլադիսլավ Կասկիվն իր նախագիծը ներկայացրեց անձամբ Ջորջ Բուշին: «Ես նրան ասացի, թե կցանկանայի, որ ինստիտուտը հովանավորեին եւ համակարգեին այնպիսի ճանաչված դեմքեր, ինչպիսիք են Վացլավ Զավելը, Լեխ Վալենսան կամ Մադլեն Օլբրայթը»,– ասում է «Որո» շարժման նախկին առաջնորդը, որը «նարնջագույն հեղափոխությունից» հետո ջինսը փոխեց փողկապով եւ մուգ կոստյումով: Այս լուրջ անձնավորությունը բախտ է ունեցել տպավորություն գործել Սպիտակ տանը. ամերիկացիները, երեւում է, նրան խոստացել են օգնել, այդ թվում՝ նաեւ ֆինանսապես: Նման ուշադրությունը նյարդայնացնում է Արեւելքի վերջին բռնապետերին: Տարեմուտին ընտրություններ կանցկացվեն Ղազախստանում:

Տեղի տիրակալն արդեն նախազգուշական միջոցներ է ձեռնարկել. նա բանտ է նստեցրել շատ ակտիվիստների եւ մերժել Վլադիսլավ Կասկիվին՝ գտնվել իր տարածքում:

Ինչ վերաբերում է բելառուսական միապետին, որի դեմ հղացված «թավշյա հեղափոխությունը» 2001թ. պարտվեց, ապա նա ջանում է ցանկացած գնով «ժողովրդավարական բրիգադների» անդամներին հետ պահել իր երկրի տարածք մտնելուց: Վերջերս նա բանտ նետեց ուկրաինացի հինգ ակտիվիստների: Անցած տարի նրա հրամանով ծեծի ենթարկվեցին ու հետո երկրից վտարվեցին սերբ եւ սլովակ հեղափոխականները: Սակայն, այնուամենայնիվ, հեղափոխության որոշակի պատրաստություններ երկրից դուրս կատարվում են: «International Republican Institute»-ը, որը ֆինանսավորվում է ԱՄՆ Կոնգրեսի կողմից, հարեւան Լիտվայում գաղտնի պատրաստում է բելառուս ակտիվիստներին:

2004թ. վերջին «Freedom House» հիմնադրամը Ռուսաստանը դասեց ոչ ազատ երկրների շարքը: Խորհրդային Միության փլուզումից հետո նման բան առաջին անգամ էր տեղի ունենում: Ռուսաստանի նախագահին իրենց «ռազմական ավարների» հավաքածուում ավելացնելը նոր «Չե»-երի երազանքն է: Առավել եւս՝ այդ է նրանց գերագույն նպատակը: Մի քանիսն արդեն աշխատում են սկզբնավորվող հեղափոխական խմբերում:

Այս ամռանը նախատեսված է սեմինարների անցկացում Ղրիմում եւ Ռուսաստանում, որոնց կոնկրետ վայրն առայժմ գաղտնի են պահում:



Սակայն Կրեմլի տիրոջ տապալումը դյուրին գործ չէ: Թվում է, թե նա ամուր ձեռքով պահում է իր հատուկ ծառայություններն ու բանակի մեծ մասը: Նա բացահայտորեն պաշտպանեց արյունոտ բռնարարքներն Ուզբեկստանում, եւ այդպիսով հասկանալ տվեց, որ ինքն էլ չի վախենա կրակել ամբոխի վրա, եթե դա անհրաժեշտ համարի: Վերջապես, ՌԴ նախագահին ակտիվիստների գործունեությունը խափանելու համար այլ միջոցներ է գտել: Նա ստեղծել է սեփական երիտասարդական կազմակերպությունը:

Այն «Օրոս», «Կմարա» եւ մյուս շարժումների նմանակն է՝ նույնպես երկվանկանի անվանումով՝ «Наш». նույն վերնաշապիկներն են, նույն ժպիտները: Բայց ծրագիրն ազգայնական է, ելույթները՝ կոշտ: Եվ սա ամենը չէ: Անվտանգության դաշնային ծառայությունը դես ու դեն է ընկնում, լրտեսում, մանիպուլացնում. գործակալները ներդրվում են «բողոքող» խմբերում եւ ստեղծում այլ՝ կեղծ խմբեր, որպեսզի խառնեն խաղաքարտերը: Մոսկվայում միջազգային ժողովրդավարական գործակալների համար դժվար կլինի:

Շատ հարցեր են մնում: Առաջին. արդյո՞ք «ժողովրդավարական բրիգադների» անդամները Վաշինգտոնի սովորական գործակալներ են, ինչպես ցանկանում են ներկայացնել Կրեմլում եւ այլուր: Գիշտ է, նրանք աշխատում են ամերիկյան (երբեմն՝ նաեւ եվրոպական) կազմակերպությունների համար, եւ դա չեն թաքցնում: Գիշտ է նաեւ այն, որ նրանք կիսում են քեռի Սեմի արժեքները՝ ժողովրդավարությունն ու դուլարը, եւ ցանկանում են դրանք ամուր ներդնել հետխորհրդային տարածքում:

Վերջապես, ակնհայտ է, որ Սպիտակ տունը, հանձինս նրանց, տեսնում է իր «փափուկ ուժի» վեկտորներին, Ռուսաստանի հետ տարվող աշխարհաքաղաքական շախմատային խաղի զինվորներին: Բայց արդյո՞ք նրանք ԱՄՆ շահերը վեր են դասում այն երկրների շահերից, որտեղ աշխատում են: Եվ ինչպիսի՞ Ամերիկայի մասին է խոսքը՝ «Freedom House»-ի նեոպահպանողականների՞ Ամերիկայի, թե՞ ֆինանսիստ-հումանիստ Ջորջ Սորոսի, որը միլիոնավոր դոլարներ է ծախսում Ջորջ Բուլչի հետ պայքարում:

Հարց երկրորդ. իրո՞ք այդ հեղափոխությունները ժողովրդավարական էին, թե՞ մի քանի ակտիվիստների ձեռքի գործ: Իրականում՝ ե՛ւ նա, ե՛ւ մյուսը:

Ինչպես մենք ցույց տվեցինք, դրանք կանխապես նախապատրաստվել էին ակտիվիստների ոչ մեծ կորիզի կողմից: Որպեսզի արթնացնեն ժողովրդին, բորբոքեն նրան, այդ խմբերը դիմեցին քարոզչության այժմ բոլորին հայտնի հնարքներին, իսկ երբեմն՝ նաև մանիպուլյացիաների:

Սակայն առանց ավտորիտար ու կոռուսմայացված վարչակարգի կողմից հուսահատության հասցված ժողովրդի ցասման, առանց նրա կամքի՝ կրկին թույլ չտալու գողանալ իրենից ընտրությունները եւ առանց հարյուր հազարավոր մարդկանց, ովքեր կամովին դուրս էին եկել Բելգրադի, Կիեւի կամ Թբիլիսիի փողոցները, ոչինչ տեղի չէր ունենա:

Սակայն ծագում է եւս մեկ՝ վերջին հարցը. իսկ ի՞նչ է լինելու հեղափոխությունից հետո: Այլ խոսքով՝ ի՞նչ կկատարվի այդ ժողովուրդների հետ մի քանի տարի անց: «Զե՞ն հայտնվի, արդյոք, նոր ղեկավարները նույն փոսում, ինչպես իրենց նախորդները, որոնք, հարկ է հիշել, նույնպես իշխանության եկան ժողովրդական ապստամբության ալիքի վրա»,– հարցնում է Միջազգային հետազոտությունների կենտրոնի Արեւելյան Եվրոպայի գծով խոշոր մասնագետ Ժակ Ռուպնիկը: Սերբական օրինակն ավելի շուտ հուսադրում է: Միլոշեւիչի վարչակարգի անկումից հինգ տարի անց երեւում է, որ ժողովրդավարությունը Բելգրադում հետզհետե կայունանում է, եւ մարդու իրավունքներն, ընդհանուր առմամբ, պաշտպանվում են: Սակայն Թբիլիսիի պարագայում, որտեղ Բուշը մայիսին որպես մեսիա ընդունվեց, կացությունն առավել խնդրահարույց է. 2003թ. «վարդերի ապստամբության» շատ առաջնորդներ արդեն հանդես են գալիս նոր իշխանությունների դեմ՝ կոռուպցիային ու միլիտարիզմին վերադառնալու մերկացումներով:

Այսպիսով՝ խաղն ավարտված չէ: Եվ հեղափոխության «ալքիմիկոսների» ղեղատոմսերով գրքերը դեռ պետք կգան: Քանզի Թբիլիսիում, Կիեւում կամ Բիշքեկում նրանց գուցե մեկ անգամ եւս հարկ լինի ամեն ինչ նորից սկսել:

**Le Nouvel Observateur**, Ֆրանսիա  
«Յանրապետական», 2005, ք. 7

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՄՏՆՈՒՄ Ե «ԴԱԴԱՐԻ» ՓՈՒԼ

### *Յուրեր Վեդրին*

*Ֆրանսիայի արտաքին գործերի նախկին նախարար Յուրեր Վեդրինը լայնորեն ճանաչված է որպես «գերտերություն» եզրի հեղինակ, որով նա բնորոշում էր ԱՄՆ կարգավիճակը սառը պատերազմից հետո: Նրա ողջ գործունեությունը կապված է պետական ծառայության հետ: 34 տարեկանում դառնալով նախագահ Միտերանի դիվանագիտական խորհրդական՝ նա այնուհետև հաջորդաբար զբաղեցրեց նրա մամլո ծառայության պետի եւ աշխատակազմի ղեկավարի պաշտոնները: 1997թ. խորհրդարանական ընտրություններում Սոցիալիստական կուսակցության հաղթանակից հետո Վեդրինը ժոսպենի կառավարությունում նշանակվեց արտաքին գործերի նախարար: Ներկայացնում ենք հատվածներ Ֆրանսիայի Սոցիալիստական կուսակցության այս ազդեցիկ գործչի հետ «Свободная мысль-XXI» հանդեսի զլխավոր խմբագիր Վլադիսլավ Ինոզենցեւի հարցազրույցից:*

**Հարց:** Պարոն Վեդրին, ԵՄ Սահմանադրության հանրաքվեի բացասական արդյունքը նշանակո՞ւմ է, արդյոք, որ Եվրոպայում ծավալվում է «երկու համակարգերի յուրատեսակ պայքար»:

**Պատ.:** Դա ակնհայտ չէ, քանզի ֆրանսիացիների «ոչ»-ը չափից ավելի բազմանշանակ է: Որոշ ընտրողներ քվեարկեցին կառավարության, ոմանք՝ Եվրամիություն թուրքիայի մտնելու, մի մասը՝ Եվրոպական բյուրոկրատիայի, իսկ շատերը՝ նաեւ միասնական Եվրոպայի սոցիալական քաղաքականության դեմ: Այնպես որ, ես չեի ասի, թե խոսքը ինչ-որ երկու համակարգերի պայքարի մասին է: Միաժամանակ, հանրաքվեի արդյունքում ի հայտ եկան ամբողջ շարք լուրջ խնդիրներ:

Առաջինը վերաբերում է Միացյալ Եվրոպայի եւ ազգային պետությունների միջեւ հաշվեկշռին: Ինչպե՞ս պիտի նրանց միջեւ բաշխվեն լիազորությունները: Իմ կարծիքով, սահմանադրական պայմանագրի նախագիծն այս հարցին լավ պատասխան էր տալիս: Ցավոք, որոշ Եվրոպական ժողովուրդներ դրան չհամաձայնեցին: Բայց դա չափազանց կարելոր քաղաքական հարց է եւ

անմիջապես կապված է ինչպես ազգային, այնպես էլ համա-  
եվրոպական բյուրոկրատիայի հետ:

Երկրորդ խնդիրը Միացյալ Եվրոպայի համար սոցիալական քաղաքականության կողմնորոշիչների ընտրության մեջ է, եւ այնտեղ, իր հերթին, ամփոփված են երկու հարց: Մի կողմից՝ արժե՞, արդյոք, սոցիալական քաղաքականությունը փոխանցել վերազգային ինստիտուտների տնօրինությանը, թե՞ պետությունները պետք է պահպանեն նրա նկատմամբ հսկողությունը: Եվ, մյուս կողմից՝ ինչպիսի՞ սոցիալական քաղաքականություն է անհրաժեշտ Եվրոպային՝ հովանավորչակա՞ն, թե՞ ազատական: Արժե՞, արդյոք, ամեն կերպ հոգ տանել աշխատավորների շահերի պաշտպանության մասին՝ հաշվի չառնելով աճող գործազրկու-  
թյունը, թե՞ նախապատվությունը տալ առավել ճկուն սկզբունք-  
ներից, որոնք ապահովում են նվազ պաշտպանվածություն, բայց խթանում են նոր աշխատատեղերի ստեղծմանը: Այս թեմայով վեճեր ծավալվում են յուրաքանչյուր եվրոպական պետությունում:

**Չարք:** Նման պայմաններում Եվրոպան կարո՞ղ է, արդյոք, ընդարձակվել:

**Պատ.:** Իրավաբանական տեսանկյունից ԵՄ Սահմանադրու-  
թյան հավանության ու նրա ընդարձակման միջև կապ չկա: Բայց քաղաքական տեսանկյունից այս երկու խնդիրների միջև կապն ակներեւ է: Ֆրանսիայում եւ Յուլանդիայում շատերը քվեարկելով Սահմանադրության դեմ՝ քվեարկեցին ընդլայնման դեմ, որը, նրանց կարծիքով, չափից ավելի սրընթաց էր:

Եվրոպական վարչարարներին չհետաքրքրեց հանրության կարծիքը, եւ տվյալ հարցով բանավեճեր այդպես էլ չծագեցին: Ուստի, կար գագցում, թե ընդարձակումը վերելից է պարտա-  
դրված: Մեկին դա ձեռնտու է, մեկին՝ ոչ, ինչն ապագայում կդանդաղեցնի ինտեգրման գործընթացները:

Եվրոպան, անշուշտ, չի հրաժարվի ընդլայնման գաղափարից, բայց եվրոպական ինստիտուտների զարգացումը, որոնց լեգիտի-  
մությունն առավել չափով տուժեց «բողոքող» քվեարկությունից, կդանդաղի: Անհնար է ժխտել կապը ընդարձակման (որը կարծես «ողողում-տանում» է Եվրոպայի ինքնությունը) եւ վտանգի աճող

զգացումի միջեւ: Իրավիճակի կայունացման համար ժամանակ է պետք: Եվրոպական ինտեգրումը մտնում է «դադարի» փուլ:

**Ջարգ:** Դուք ինչպե՞ս եք պատկերացնում Եվրոպայի ապագան: Ձարգանո՞ւմ է, արդյոք, Միացյալ Եվրոպան դաշնության կամ համադաշնության ուղղությամբ:

**Պատ.:** Ես գտնում եմ, որ Դաշնային Եվրոպան մեռած է: Այն պատրանք է, ուտոպիա, որն իր կառուցողական դերակատարումն ունեցավ Երկրորդ աշխարհամարտից հետո, սակայն արդեն վաղուց հասկանալի է, որ Եվրոպական ժողովուրդները չեն ցանկանում միավորվել դաշնության մեջ: Եվրոպացիները ցանկանում են ապրել խաղաղության ու լիության մեջ, լինել ազատ, զգալ իրենց պաշտպանված, ունենալ լայն քաղաքացիական իրավունքներ, ընդ որում՝ ցանկալի է առանց կոշտ պարտավորությունների: Միաժամանակ, նրանք ձգտում են պահպանվել որպես ազգ: Եվրոպայի Միացյալ Նահանգների ստեղծման կամ մեկ երկրում Ֆրանսիայի եւ Գերմանիայի միավորման գաղափարներն ուտոպիական են: Դրանք ճանաչում էին վայելում ինտելեկտուալների, փիլիսոփաների, անգամ որոշ քաղաքական գործիչների մոտ: Եվրոպական բոլոր ժողովուրդները խաղաղություն ցանկանում են, բայց չեն ուզում ծուլվել միմյանց մեջ:

**Ջարգ:** Դուք ասում եք, որ Եվրոպան չի կարող անվերջ ընդարձակվել: Բայց որտե՞ղ են Եվրոպայի սահմանները: Նշանակո՞ւմ են, արդյոք, Ձեր բառերը, թե Ռուսաստանը երբեք չի կարող մտնել ԵՄ:

**Պատ.:** Չնայած իմ ողջ հարուստ փորձին, ես չեմ կարող Ձեզ ասել, թե որտեղով է անցնում Եվրոպայի սահմանը: Բայց ես համոզված եմ, որ զգալ այն անհրաժեշտ է: Իհարկե, այդ սահմանը չի կարող լինել «պաշտպանական բնագիծ», ինչպես անցյալում էր: Օրինակ, Միացյալ Նահանգներն ունի սերտ, այդ թվում՝ տնտեսական կապեր Կանադայի ու Մեքսիկայի հետ, բայց նա չի առաջարկում նրանց մտնել իր կազմի մեջ. նշեմ, որ դա չեն ցանկանում ոչ մեքսիկացիները, ոչ կանադացիները:

Եվրոպային նույնպես հարկ է լինելու ինչ-որ տեղ կանգ առնել: Եթե Եվրոպական բյուրոկրատները չկարողանան հստակ նշել սահմանները, կբարձրանա բողոքի զանգվածային ալիք: Յենց նման փաստարկը կանխորոշեց Սահմանադրության մերժումը

հոլանդացիների կողմից, չնայած նրանք բաց, ձեռներեց ու եվրոպամետ ազգ են: Եվրոպայի սահմանները գոյություն ունեն. մնում է հասկանալ, թե որտեղով են դրանք անցնում:

Եվ դրանում ողբերգական ոչինչ չկա, քանզի Եվրոպան չի պատրաստվում մարտնչել նրանց հետ, ովքեր կհայտնվեն իր սահմաններից դուրս: Գոյություն ունեն համագործակցության բազմաթիվ այլ ձևեր ոչ Եվրոպական պետությունների հետ, որոնք, հնարավոր է, նույնիսկ շահագրգռված էլ չեն ԵՄ մտնելու մեջ: Անհեթեթություն է ենթադրել, թե, օրինակ, Ռուսաստանը կցանկանա մտնել 35 պետություններից կազմված կառույցի մեջ մյուսների հետ հավասար պայմաններով՝ նույնիսկ այն դեպքում, երբ այսօր իր լավագույն օրերը չի ապրում: Իմ կարծիքով, Ռուսաստանին վիճակված է վերադառնալ համաշխարհային ասպարեզ՝ որպես ինքնուրույն եւ հզոր «խաղացող», այլ ոչ թե Եվրոպական բարդ համակարգի հասարակ պտուտակ:

**Ջարգ:** Ունի՞, արդյոք, Եվրոպան հստակ ռազմավարություն Ռուսաստանի նկատմամբ:

**Պատ.:** Եռշված քաղաքականություն Ռուսաստանի նկատմամբ Եվրոպայում չկա: Յուրաքանչյուր երկիր հավատարիմ է սեփական վարքագծին: Եվրոպացիների մեծ մասը կարծում է, թե Ռուսաստանը պատճառ չունի ցանկանալու մտնել Միացյալ Եվրոպա: Չնչին փոքրամասնությունը գտնում է, որ Ռուսաստանը կարող է դառնալ ԵՄ անդամ: Կան նաեւ այլ տեսակետներ: Օրինակ, Ֆրանսիան Ռուսաստանը համարում է կարելուր դիվանագիտական դաշնակից: Գերմանիան Ռուսաստանը նախելառաջ ընկալում է որպես տնտեսական գործընկեր:

Մյուսներն առաջնային են համարում ռուսական պետության ժողովրդավարացումը՝ գտնելով, որ Եվրոպայի դերն այն է, որպեսզի նպաստի ժողովրդավարության կայացմանը Ռուսաստանում: Բայց կան նաեւ այնպիսիները, որոնք Ռուսաստանի մեջ տեսնում են սպառնալիք. թեպետ ԽՍՀՄ փլուզումից անցել է մեկուկես տասնամյակ, խորհրդային ազդեցության գոտում գտնվող բալթյան պետությունները, Լեհաստանը շարունակում են երկյուղել Ռուսաստանից:

ԵՄ ու Եվրոպական հանձնաժողովի 25 անդամ երկրների ներկայացուցիչներ այսօր անընդունակ են սահմանել Ռուսաստանի վերաբերյալ առաջնահերթությունների աստիճանակարգը: Ուստի, կրկնում են, ձեր երկրի նկատմամբ համաձայնեցված քաղաքականություն Եվրոպայում բացակայում է:

**Ջարգ:** Ռուսաստանի հանդեպ եվրոպացիները կողմնակից են չմիջամտելու քաղաքականությանը եւ երեւութներն անվանում են այնպես, ինչպես դրանք կան: Սակայն արդարացնո՞ւմ է իրեն, արդյոք, նման քաղաքականությունն այն երկրների նկատմամբ, ուր իրադրությունն անհամեմատ ավելի ծանր է, քան Ռուսաստանում: Կարո՞ղ եք Դուք պատկերացնել, թե Եվրոպան կամ ԱՄՆ-ը, չհամբերելով, կմիջամտեն այդպիսի պետությունների գործերին:

**Պատ.:** Դա բարդ խնդիր է: Մի կողմից՝ ԵՄ-ը եւ ԱՄՆ-ը կցանկանային լինել ողջ աշխարհում ժողովրդավարության ու մարդու իրավունքների դատապաշտպանը: Ընդ որում, եթե Միացյալ Նահանգները նման նպատակների հասնելու համար չի խորշում ռազմական մեթոդներից, ապա ԵՄ-ը գերադասում է ձեռնպահ մնալ ուժի կիրառումից: Բայց ե՛ւ ամերիկացիները, ե՛ւ մենք մնում ենք իրատեսներ, ուստի ջանում ենք հասկանալ՝ որո՞նք են մեր շահերը:

Ամերիկացիները բարդույթ չեն զգում, երբ ժողովրդավարություն են պարտադրում որեւէ երկրի, սակայն ընդդիմանում են հարեւան պետության ժողովրդավարացմանը, եթե դա վնասում է իրենց ազգային շահերին: Նույնպիսի խնդիր ծառացած է նաեւ եվրոպացիների առջեւ:

Արդեն բազում տասնամյակներ եվրոպական պետությունները տքնում են Աֆրիկան ուղղել ժողովրդավարացման ճանապարհ: Երբեմն այն տալիս է դրական արդյունքներ, սակայն հաճախ էլ հրահրում է էթնիկական բախումներ: Վերջինս հող է ստեղծում տարակուսանքի համար: Եվրոպան դեգերում է սեփական իդեալիզմի եւ անողորմ իրականության միջեւ: Չի կարելի մոռանալ՝ եվրոպացիներն անուղղելի իդեալիստներ են. նրանք շատ են ցանկանում, որ աշխարհը կախարդական փայտիկի շարժումով վերածվի մեծ ժողովրդավարության: Բայց նրանք չզիտեն ինչպես դրան հասնել: Այսօր նրանք կոշտ հայտարարություններ են անում, սակայն մյուս օրը լռում են կամ, որն ավելի վատ է, միմյանց միջեւ

հարաբերություններ պարզում: Բայց, որպես կանոն, եվրոպական պետությունները պատրաստ չեն սատարել ժողովրդավարությանն այնտեղ, որտեղ չունեն անմիջական շահեր:

**Նայեք Սեծ Բրիտանիային:** Այն կարող է իրեն թույլ տալ կտրուկ հայտարարություններ Բիրմայի հասցեին, քանզի դա չի սպառնում իր տնտեսական շահերին: Այն խիստ քննադատության է ենթարկում Ջիմբաբվեի վարչակարգը, որովհետև Ռոբերտ Մուզաբեն խրախուսում է բրիտանական ֆերմերներին հողից սեփականագրկելը: Սակայն շատ այլ հարցերում Ֆորին օֆիսը լռում է: Նույնը վերաբերում է Ֆրանսիային. մենք պարտավոր ենք հաշվի առնել մեր սերտ հարաբերությունները Յուլիսային Աֆրիկայի երկրների եւ մյուսների հետ: Այլ խոսքերով՝ մարդու իրավունքների եւ ժողովրդավարության պաշտպանման միասնական քաղաքականություն գոյություն չունի: Ես ավստում եմ, բայց ստիպված եմ խոստովանել. եթե դուք ժողովրդավար եք մի պետությունում, որը հավասարակշռում է ժողովրդավարությունը եւ ավտորիտարիզմը, հարկ չկա հույս դնել Եվրոպայի վրա: Եվրոպան կարող է ձեզ աջակցել, սակայն հազիվ թե ցանկանա լուծել ձեր խնդիրները:

ԵՄ-ը հստակ դիրքորոշում ունի միայն այն պետությունների նկատմամբ, որոնք ցանկանում են մտնել իր կազմի մեջ: Այն տարածաշրջաններում, որտեղ Եվրոպան որոշակի ազդեցություն ունի, ինչպես, օրինակ, Բալկաններում, հնարավոր են համագործակցության առավել նուրբ ձևեր: Բայց ինչ վերաբերում է մյուս խոշոր տարածաշրջանների հետ հարաբերություններին, ապա այստեղ մեզ հարկ է լինելու հաշվեկշիռ փնտրել սկզբունքայնության եւ անմիջական շահերի միջեւ:

**Հարց:** Միացյալ Նահանգներն աշխարհում «տարածում» է ազատություն եւ ժողովրդավարություն, որոնք էլ ստեղծել են ժամանակակից Ամերիկան: Սակայն Եվրոպան աշխարհին առաջարկում է կառավարման հատուկ մոդել, որը ստեղծվել ու մշակվել է իր կողմից: Կարո՞ղ է, արդյոք, Եվրոպական մոդելը տարածվել Եվրոպայի սահմաններից դուրս:

**Պատ.:** Ամեն ինչ այդպես պարզ չէ: Ես կարծում եմ, որ ամերիկացիներն ունեն «գլոբալ» ծրագիր, եւ դա ամերիկյան առաջատարության ծրագիրն է: Նրանց անհրաժեշտ է իշխել աշխարհի



վրա՝ անկախ այն բանից, թե ինչպիսին կլինի այդ աշխարհը: Ես ԱՄՆ-ը կոչեցի «գերտերություն», մյուսներն օգտագործում են «հեգեմոն» կամ «կայսրություն» եզրերը: Իմ նախկին գործընկեր Մադլեն Օլբրայթը խորհում էր «անփոխարինելի ազգի» մասին: Ժողովրդավարացումն իր նշանակությամբ երկրորդական ամերիկյան «նախագիծ» է: Եվ չկա երաշխիք, որ այդ ժողովրդավարացումը բարօրություն կբերի Ամերիկային. չէ՞ որ այսօր պարզ է, որ եթե Սաուդյան Արաբիայում անցնեն ազատ ընտրություններ, այնտեղ կհաստատվի հակաարեւմտյան վարչակարգ:

Եվրոպական քաղաքական համակարգն, իր ներկայիս տեսքով, եվրոպական մայրցամաքի բացառիկ, երբեմն նաեւ չափազանց արյունալի պատմության արգասիքն է: Եվրոպական հասարակությունն՝ իր սոցիալական պաշտպանվածությամբ եւ անհատի ու հանրության միջեւ հարաբերությունների ներդաշնակությամբ, սկսեց ձեւավորվել արդեն Երկրորդ աշխարհամարտից հետո: Եվրոպացիներն այսօր անչափ բավարարված են նրանով, ինչը ձեռք են բերել եւ դեմ չէին լինի տարածել այդ համակարգը մնացյալ աշխարհում, բայց չգիտեն ինչպես դա անել: Չէ՞ որ յուրաքանչյուր պետություն ունի սեփական պատմությունը, եւ վերստեղծել այն բացառիկ պայմանները, որ Եվրոպայում ձեւավորվել էին 20-րդ դարի կեսին, անհնար է:

Դատողություններ անելով աշխարհի մյուս տարածաշրջաններում կառավարման եվրոպական համակարգի ներդրման հնարավորության մասին՝ եվրոպացիները տատանվում են իդեալիզմի եւ իրականության միջեւ: Անձամբ ես վստահ չեմ, թե եվրոպական համակարգն ընդհանրապես հնարավոր է «պատճենել»: Չէ՞ որ խոսքն ինքնուրույն զարգացման տեւական ավանդույթներ ունեցող 20-ից ավելի պետությունների միավորման մասին է. միավորում՝ թելադրված իրենց ինքնիշխան իրավունքները միասին վայր դնելու ձգտումով: Եվ, չնայած ես համոզված եմ, որ, օրինակ, Ռուսաստանը Եվրոպայից սովորելու բան ունի, բայց նաեւ գտնում եմ, որ «օտար հող» եվրոպական փորձի կուրորեն փոխադրումից հարկավոր է խուսափել:

**Свободная мысль-XXI**, 2005, р. 7

«Հանրապետական», 2005, р. 8

## FREEDOM HOUSE. «ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ՏՈՒՆ

1941թ. ԱՄՆ-ում՝ մեկուսացվածության եւ չեզոքության քաղաքականության դեմ պայքարելու, ինչպես նաեւ երկիրը Երկրորդ աշխարհամարտում ներգրավելու նպատակով, ստեղծվեցին մի քանի կազմակերպություններ, որոնք Փերլ Յարբորի վրա հարձակումից քիչ առաջ միավորվեցին եւ Սպիտակ տան գաղտնի օժանդակությամբ Նյու Յորքում հիմնեցին ընդհանուր կենտրոնակայան՝ Freedom House (Ազատության տուն) անվանումով:

Չորջ Ֆիլդի ղեկավարությամբ Freedom House-ը պատերազմի ընթացքում թողարկեց հարյուրավոր ռադիոհաղորդումներ, հրապարակեց պամֆլետներ եւ կազմակերպեց էքսպոզիցիաներ՝ ներգաղթյալներին օգնելու, զինված ուժերում ռասայական ինտեգրումն արագացնելու համար: Բայց ասոցիացիան չսահմանափակվեց սոսկ հասարակությունում պատերազմի պաշտպանմանն ուղղված կամպանիայով. այն գործատուների եւ արհմիությունների հատուկ բյուրոյի միջոցով նաեւ կազմակերպեց արդյունաբերության մոբիլիզացումը: Սկսած 1943թ., Freedom House-ը սահմանեց ազատության ամենամյա մրցանակ, որի առաջին դափնեկիրը եղավ 20-ականներին քարոզչության պետական մարմինների հիմնադիր Ուոլթեր Լիպմանը:

Պատերազմի վերջում Freedom House-ը չլուծարվեց եւ շարունակեց պաշտպանել Սպիտակ տան նոր ճակատամարտերը: Կազմակերպությունն անցկացրեց Մարշալի պլանին եւ ՆԱՏՕ-ին աջակցող, ֆրանսիական ու բրիտանական կայսրությունների ապագադուքացմանը սատարող եւ, իհարկե, կոմունիզմի դեմ կամպանիաներ: Այն, առավել, քան մյուս կազմակերպությունները, զարգացրեց «Միացյալ Նահանգներն ազատության երկիր է» կարգախոսը: Հենց «Ազատության տան» աշխատասենյակներում 1949թ. դրվեց արեւմտաեվրոպական ինտելեկտուալների մանիպուլացման՝ ԿՀՎ լայնածավալ գործողության հիմքը, որի համար ստեղծվեց այսպես կոչված Մշակույթի ազատության կոնգրեսը:

\* \* \*

60-ականների վերջին Ջորջ Ֆիլդը պաշտոնաթող եղավ, եւ Freedom House-ի ղեկավար դարձավ Լեոնարդ Սասմանը, որի առջեւ ծառայավ Վիետնամում ամերիկյան ինտերվենցիայի պաշտպանման դժվարին խնդիրը:

1982թ., երբ նախագահ Ռոնալդ Ռեյգանը հիմնեց ժողովրդավարության ազգային հիմնադրամը (NED), որպեսզի պատշաճ քողի ներքո ապահովի ԿՀՎ որոշակի գաղտնի գործունեության հաջորդականությունը, Freedom House-ն ինտեգրվեց այդ նոր համակարգում: Նույն ժամանակ Փոլ Վուլֆովիցն ու իր նեոպահպանողական ընկերներն այդ կառույցներում ներդրեցին բազմաթիվ ակտիվ տրոցկիստների՝ ամերիկացի սոցիալ-դեմոկրատներից: NED-ը դրամական օժանդակություն է ցույց տալիս Freedom House-ին, որն իր հերթին մասնակիորեն ֆինանսավորում է NED-ի ընտրած ծրագրերը՝ դրանով քողարկելով ԱՄՆ միջամտության հետքերը:

1983թ. հունվարին Իրան–Կոնտրաս սկանդալի ժամանակ Ռեյգանը վերակազմավորեց ԱՄՆ «հրապարակային դիվանագիտության» ողջ համակարգը, որը Ազգային անվտանգության խորհրդում գլխավորեց Ուոլթեր Ռեյմոնդը: Վերջինս ստեղծեց վերահսկողության կոմիտե, որի կազմի մեջ, որպես Freedom House-ի ներկայացուցիչ, մտցրեց Սասմանին:

1986թ. Freedom House-ն աշխատանքի ընդունեց Մշակույթի ազատության կոնգրեսի հրապարակումների նախկին գլխավոր խմբագիր Մելվին Լեքսիին, որը Լոնդոնում բացեց միջազգային մամուլում պատվերով հոդվածների տարածման գործակալություն: Ինչպես ժամանակին նրա կողմից ղեկավարվող Encounter հանդեսը, այս ծրագիրը (Exchange) նույնպես ֆինանսավորում էր ԿՀՎ-ն: Այս ծրագրում աշխատում են Վլադիմիր Բուկովսկին, Ադամ Միխնիկը, Անդրե Գյուլքսմանը, Ժան-Ֆրանսուա Ռեյելը եւ ուրիշներ: Հոդվածները վերատպվում են Միացյալ Թագավորության The Daily Mail, The Daily Telegraph, The Times պարբերականներում, Ջամայկայի The Daily Gleaner-ում, բայց հատկապես ԱՄՆ The Wall Street Journal հանդեսում:

Նույն թվականին Freedom House-ն սկսեց «աշխարհում դավանանքի ազատության» իր ծրագիրը: Կոնգրեսի կողմից վերսկսված հատկապես այս նախաձեռնությունը 1998թ. հանգեցրեց Արտասահմանում դավանանքի ազատության խորհրդակցական հանձնաժողովի երեւան գալու, որը կազմում է ամենամյա զեկույց այդ թեմայով:

1988թ. Freedom House-ն ստեղծեց Կենտրոնական Ամերիկայի գծով աշխատանքային խումբ, որի նպատակն էր սանդիհիստական հեղափոխության մասին նյութերի տարածումը: Այս առիթով AFL-CIO-ի արհմիութենական գործիչները մտցվեցին Freedom House-ի վարչության կազմի մեջ, որը հաջողությամբ օգտագործում էր արհմիության հիմնած եւ ԿՀՎ նպատակներին ծառայող American Institute for Free Labor Development մասնագիտացված ինստիտուտը:

\* \* \*

90-ականներին Freedom House-ն ընդարձակեց գործունեությունը, որի համար բացեց բյուրոներ Ալժիրում, Յունգարիայում, Չորդանանում, Ղազախստանում, Կիրգիզիայում, Մեքսիկայում, Ուզբեկստանում, Լեհաստանում, Ռումինիայում, Սերբիայում եւ Ուկրաինայում: Ասոցիացիան ցանկացավ իր բյուրոն բացել նաեւ Նիգերիային սահմանակից որեւէ պետությունում, սակայն հետո ժամանակավորապես հրաժարվեց դրանից:

Freedom House-ը, համագործակցելով Ամերիկյան փաստաբանների ասոցիացիայի հետ (որը միջամտության արդեն գոյություն ունեցող մոդելի – գաղտնի գործողություններում արհմիությունների եւ գործատուների մասնակցություն – հիման վրա ստեղծել է մասնագիտացած բյուրո), գործարկեց Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի այլախոհների՝ մարդու իրավունքների հարցերով կրթության ծրագիրը: Այս ասոցիացիան վայելում էր Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI)՝ NED/ԿՀՎ-ի ներսում ժողովրդավարական կուսակցության բաժանմունքի աջակցությունը:

1999թ. Freedom House-ը հիմնեց «Չեչնիայի խաղաղության ամերիկյան կոմիտեն»: Այն ղեկավարում են ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով նախկին խորհրդակցական Ջրիգնեւ

Բժեզհինսկին, նախկին պետքարտուղար Ալեքսանդր Չեյզը եւ նախկին կոնգրեսական Սթիվեն Սոլերսը: Այդ նրանք Աֆղանստանում Խորհուրդների դեմ ջիհադ նախաձեռնեցին, երբ բոլոր երեքն էլ աշխատում էին իրենց պաշտոններում, այնուհետեւ շարունակեցին օժանդակել Բեն Լադենին, որպեսզի ուղղեն ջիհադը սկզբում Բոսնիա-Յերզեզովինա՝ ընդդեմ Բելգրադի կոմունիստական իշխանությունների, իսկ հետո՝ Չեչնիա, որ նպաստեւ Ռուսաստանի Դաշնության փլուզմանը եւ ստանան Կովկասի ածխաջրածինների վրա հսկողություն:

2002թ. Freedom House-ը Հունգարիայում, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, բացեց վեբ-սերվիս՝ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի այն ոչ կառավարական կազմակերպությունների համար, որոնց հետ նա համագործակցում է:

Բոլորովին վերջերս Freedom House-ը ARENA ծայրահեղ աջ կուսակցության (որը մասնակցել է Միջազգային հակակոմունիստական լիգայի աշխատանքներին եւ պատասխանատու է Սալվադորում բազմաթիվ անօրենք դատաստանների համար) ռեաբիլիտացման նպատակով կամպանիա անցկացրեց: Այդ ջանքերը պսակվեցին հաջողությամբ, քանզի Անտոնիո Սաքան դարձավ երկրի նախագահ:

Վերջապես, նախագահ Բուշը Freedom House-ին հանձնարարեց կազմել ամենամյա զեկուլյց՝ աշխարհում քաղաքացիական ազատությունների եւ քաղաքական իրավունքների վերաբերյալ, որի հիման վրա Միացյալ Նահանգները որոշում է կայացնում Millenium Challenges Corporation-ի (Հազարամյակի մարտահրավերների կորպորացիա) շրջանակներում օգնություն տրամադրելու կամ մերժելու մասին:

Վերջին տարիներին Freedom House-ի ղեկավարն էր դեմոկրատ կոնգրեսական Բիլ Ռիչարդսոնը՝ Նյու Մեքսիկո նահանգից. գաղտնի դիվանագիտության մասնագետ, որին 4 անգամ ներկայացրին (ապարդյուն) Խաղաղության Նոբելյան մրցանակի: Նա համատեղում էր իր ֆունկցիաները NDI-ի փոխնախագահի պարտականությունների հետ, Մադլեն Օլբրայթի հետ մեկտեղ: Սակայն Ռիչարդսոնը՝ Նյու Մեքսիկոյի նահանգապետ ընտրվելու կապակցությամբ (նաեւ հուլյս ուներ 2004թ. նախագահական քարոզար-

չավուն դառնալ Ջոն Քերիի գործընկերը), վայր դրեց այդ պարտականությունները: Նրա հաջորդը դարձավ Ջեյմս Վուլսին՝ ԿՀՎ նախկին տնօրենը եւ Իրաքի Ազգային կոնգրեսի ստեղծման գաղափարի հեղինակը:

Կազմակերպության վարչության կազմը կարող է հետախուզության տեղեկագիրք ծառայել: Բացի վերոհիշյալ անձանցից, այնտեղ են նաեւ NDI-ի նախկին նախագահ եւ ԱՄՆ մարդասիրական օգնության նախկին համակարգող Բրայան Էթվուդը, Եռակողմ հանձնաժողովի նախագահ, Յետախուզության գծով նախագահին կից խորհրդակցական խորհրդի նախկին ղեկավար, դեսպան Թոմաս Ֆոլին, Empower America-ի նախագահ Թեոդոր Ֆորսթմանը, քաղաքակրթությունների բախման տեսաբան Սամուել Յանտինգտոնը, ժնեւում ՄԱԿ դեսպան, Պենտագոնի Պաշտպանության խորհրդակցական խորհրդի անդամ Ջին Քըրքպատրիկը եւ CME կոնսորցիումի (որը գնում կամ հիմնում է հեռուստատեսային ընկերություններ ողջ Արեւելյան Եվրոպայում) հիմնադիր, դեսպան Մարկ Փալմերը:

Կազմակերպության աշխատանքային բյուջեն 2002թ. կազմել է շուրջ 14 մլն դոլար:

**Reseau Voltaire**, Ֆրանսիա  
«Հանրապետական», 2005, թ. 8

## 21-ՐԴ ԴԱՐ. ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՈՒՐՎԱԳԾԵՐ

### *Սերճեյ Կարազանով*

#### **Ասիա. ներխուժում համաշխարհային քաղաքականության կենտրոն**

Միջազգային քաղաքականության կենտրոնն անշեղորեն տեղափոխվում է Ասիա: Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը (ՉԺՀ), որի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), սկսած 1978թ. տնտեսական բարեփոխումների մեկնարկից, աճել է 4 անգամ, շարունակում է ավելացնել իր ներուժը: Չինական տնտեսության աճի ամենամյա տեմպերը տատանվում են 8,5-10%-ի սահմաններում, ընդ որում, ըստ որոշ ենթադրությունների, Պեկինն աճի իսկական ծավալները գիտակցաբար գաղտնի է պահում: Հնարավոր է՝ նա այդպիսով ջանում է թաքցնել պաշտպանական ծախսերի իրական աճը:

Վերլուծաբանների մեծ մասն այն եզրակացությանն է հանգում, որ Չինաստանի զարգացման տեմպերը կմնան բարձր, ու երկիրն առաջիկա 20 տարիներին հիմնական ցուցանիշներով «դատապարտված» է վերածվելու աշխարհի երկրորդ տերության: Նա այժմ էլ ՀՆԱ գնողունակությամբ այդպիսին է: Միայն ՉԺՀ տնօրինության տակ գտնվող ԱՄՆ արժեթղթերի ծավալը այդ երկրին Միացյալ Նահանգների եւ համաշխարհային ֆինանսական համակարգի վրա ազդելու լուրջ հնարավորություններ է տալիս: Ծիշտ է, շատերը կանխագուշակում են, որ չափից արագ բարեփոխումները կհանգեցնեն անխուսափելի ճգնաժամի, սակայն նման մարգարեություններ արդեն երկու տասնամյակ հնչում են:

Համաձայն մի շարք կանխատեսումների, 2040-2050թթ. Չինաստանին բաժին կընկնի համաշխարհային ՀՆԱ 14-16%-ը: Այս հեռանկարների առկայությունը հանդես է գալիս որպես ՉԺՀ ներկայիս տնտեսական, քաղաքական եւ ռազմական հզորության յուրատեսակ բազմապատկիչ՝ լրացուցիչ մեծացնելով Պեկինի միջազգային կշիռը:

Համաշխարհային տերությունների բարձրագույն լիգա է սրընթաց ներխուժում Հնդկաստանը: Վերջին 10 տարիներին նրա

տնտեսությունը միջին հաշվով տարեկան աճել է 8%-ով, ընդ որում՝ այդ աճը, որ ապահովվում է առավելապես ներքին, այլ ոչ թե օտարերկրյա ներդրումների հաշվին, համարվում է առավել կայուն եւ առողջ, քան Չինաստանում:

Հնդկաստանը վերածվում է համաշխարհային տեխնոլոգիական առաջընթացի շարժիչներից մեկի, իսկ 20-30 տարի անց այն, համաձայն կանխատեսումների, կդառնա ԱՄՆ-ից ու Չինաստանից հետո երրորդ համաշխարհային տերությունը: Հնդկաստանը ծրագրային ապահովման եւ մի շարք այլ բարձր տեխնոլոգիաների համաշխարհային գլխավոր մատակարարներից է: Այստեղ ձեւավորվել է հզոր միջին խավ, որն ավելի մեծաթիվ է, քան Եվրամիությունում:

Անշուշտ, Հնդկաստանն ու Չինաստանը, իրենց աղքատ բնակչության հսկայական զանգվածներով, մնում են համեմատաբար թույլ զարգացած երկրներ: Սակայն մարդիկ այնտեղ չեն սովում, ինչպես 5-10 տարի առաջ էր, ինչը բավական մեծ կայունություն է հաղորդում այդ երկրներին՝ հատկապես Հնդկաստանին, որտեղ առկա է հաստատուն ժողովրդավարություն:

Հնդկաստանի համեմատաբար համեստ զինված ուժերը (1 մլն զինծառայող. ավելի քիչ, քան Ռուսաստանինն է) ընդունակ են արագ ավելացնել մարտական պատրաստությունը: Ստեղծվում է հզոր նավատորմ՝ հեռանկարում 4 ավիակիր խմբերով: Առկա է Հարավարեւելյան եւ Պարսից ծոցի տարածաշրջաններում կայունության ինքնուրույն ռազմաքաղաքական երաշխավորի դերի հայտը: Դելին աշխուժացնում է նաեւ խաղաղարարական գործունեությունը՝ իր ամենախոշոր զորակազմերը տրամադրելով ՄԱԿ համապատասխան գործողությունների անցկացման համար:

Որքանով կարելի է դատել, Հնդկաստանի գլխավոր նպատակը ողջ Ասիայում, այդ թվում՝ նաեւ նրա անկայուն հատվածներում («ընդլայնված» Մերձավոր Արեւելք՝ հատկապես Իրան եւ Պարսից ծոցի երկրներ) ազդեցության կարելոր գործոն դառնալն է: Վարելով Չինաստանին աստիճանաբար մերձենալու գիծ՝ Դելին միաժամանակ ձգտում է Պեկինին հակակշռի դեր խաղալ, թեեւ մտադիր չէ վերածվել նրան զսպելու գործիքի:

Ասիայում առկա է տարածաշրջանային տնտեսական դաշինքի ձեւավորման միտումը՝ ընդունակ տասնամյակներ հետո դառնալ



տնտեսական ուժի հզորագույն կենտրոն: Այսպիսի դաշինքը կարող է հիմնվել Հարավարեւելյան Ասիայի պետությունների ասոցիացիայի (ԱՄԷԱՆ) վրա: Այսպես թե այնպես, նոր միավորման կազմավորմանը լուրջ հակազդեցություն ցույց կտրվի (առաջին հերթին՝ ԱՄՆ-ի կողմից), սակայն այս գործընթացը հազիվ թե հնարավոր լինի կանգնեցնել:

Ձուգահեռաբար ուժ է հավաքում նոր երեւոյթ՝ ազգայնականության աճը, որը դիտվում է տարածաշրջանի զարգացող երկրներում: Այն դրսևորվում է թե Ասիայի պետությունների մակարդակով (հակամարտությունները ճապոնիայի եւ Չինաստանի, ճապոնիայի ու Հարավային Կորեայի միջեւ՝ պայմանավորված պատմության տարբեր մեկնաբանությամբ), թե, ամենից առաջ՝ Արեւմուտքի նկատմամբ: Ասիայի տերությունները, ձեռք բերելով վստահություն սեփական ուժերի հանդեպ, ձգտում են թոթափել դարեր շարունակ Արեւմուտքի կողմից իրենց պարտադրված գաղափարախոսական ու մշակութային տիրապետությունը: Նրանք հայտարարում են տնտեսությունում եւ քաղաքականությունում կամ հարեւանների աջակցությամբ, կամ (առայժմ) միայնակ ինքնուրույն գիծ վարելու պատրաստականության մասին:

Վերն ասվածի համատեքստում՝ կասկածի ենթակա չէ, որ ասիական տարածաշրջանի վրա ազդեցության համար մրցակցությունը (ինչպես նախորդ դարերում Եվրոպայի համար պայքարը) դառնում է միջազգային քաղաքականության գլխավոր բաղադրիչը:

### **Միացյալ Նահանգներ. թուլացում՝ հզորության պահպանումով**

ԱՄՆ-ը ապրում է ժողովրդականության (որի վրա էր դեռ վերջերս հիմնվում նրա միջազգային ազդեցությունը) աննախադեպ անկման ժամանակաշրջան: Վերջին տարիների իրադարձությունների արդյունքում՝ Վաշինգտոնի հեղինակությանը եւ ազդեցությանը զգալի վնաս հասցվեց:

21-րդ դարասկզբում Միացյալ Նահանգները կրկնակի «դրույթ» կատարեց: Առաջինը՝ միջազգային հարաբերությունների «չվերահսկվող անկայունության» եւ այդ իրադրությունում իր ռազմական

գերակշռության օգտագործման, երկրորդը՝ ահաբեկչության սպառնալիքի նվազեցման ու տարածաշրջանում սեփական դիրքերի ուժեղացման նպատակով՝ Մեծ Մերձավոր Արեւելքի ժողովրդավարացման վրա:

Սակայն այս նպատակներին հասնելու փորձը՝ մասնավորապես Իրաք ներխուժելու ճանապարհով, անհաջող ստացվեց: Իրաքյան գործողությունը կապեց Վաշինգտոնի ձեռքերը՝ սահմանափակելով մյուս ճգնաժամերի (Իրան, ՅՍ. Կորեա, պաղեստինա-իսրայելական հակամարտություն) վրա ազդելու նրա հնարավորությունները: Վերջին տասնամյակների ընթացքում առաջին անգամ ամերիկյան վերնախավն արտաքին քաղաքականության հարցում պառակտվեց: Պարզվում է, որ Միացյալ Նահանգներն ունի բավարար ռազմական ուժ, որպեսզի շահի ցանկացած պատերազմ, բայց քաղաքական նպատակներին հասնելու, «խաղաղություն շահելու» համար չեն բավականացնում պաշարները: Նոր Օռլեանի ողբերգական դեպքերը դրսևորեցին սեփական տարածքում բնական աղետների դեմ ամերիկյան պետական մեքենայի անարդյունավետությունը եւ ցուցադրեցին միակ գերտերության հնարավորությունների սահմանները:

Թեեւ ԱՄՆ-ն ու Եվրոպան մնում են որպես մեկ քաղաքական տնտեսական եւ մշակութային քաղաքակրթության մասեր, սակայն նրանց միջեւ տարանջատումը հաղթահարել չհաջողվեց եւ արդեն դժվար թե հաջողվի: Վաշինգտոնը գործնականում չի թաքցնում Եվրոպական այնպիսի ինտեգրմանը խոչընդոտելու իր մտադրությունը, որը Հին աշխարհը կդարձնի համաշխարհային կարգի ռազմաքաղաքական «խաղացող»: Միացյալ Նահանգներն ավելի պարզորոշ կերպով է հրաժարվում դեպի Եվրոպա՝ որպես հիմնական գործընկերոջ, կողմնորոշումից՝ հեռանկարային «դրույթ» կատարելով Ասիայի վրա: Ամենայն հավանականությամբ, մոտակա տարիներին հենց ասիական ուղղությունն է լինելու ամերիկյան քաղաքականության գլխավոր գիծը:

ԱՄՆ-ը Հնդկաստանի վրա ազդեցության համար ծավալվող մրցակցությունում հանդես է բերում աննախադեպ ակտիվություն:

Վաշինգտոնը Դելիին առաջարկում է ոչ միայն «հատուկ հարաբերություններ», տեղ «Մեծ ութնյակում» եւ ՄԱԿ Անվտանգության խորհրդում, այլեւ նորագույն սպառազինություն: Ամերիկյան

պատրաստ է մասնակցել հնդկական ԱԷԿ-ների շինարարությանը. առաջարկը ստացվել է General Electric եւ Westinghouse ընկերություններից, որոնք վայելում են Սպիտակ տան աջակցությունը: Եվ դա՝ չնայած նրան, որ Հնդկաստանի կողմից միջուկային տեղության կարգավիճակի ձեռքբերումը դաժան հարված հասցրեց «չտարածման» պայմանակարգին:

ԱՄՆ արտաքին քաղաքական դժվարությունները խորացվում են ամերիկյան տնտեսության կառուցվածքային խնդիրներով:

Առաջվա պես աճում են եւ արտաքին, եւ ներքին պարտքերը, ձեւավորվել է նոր «փուլչիկ»՝ անշարժ գույքի վերագնահատումը: Միաժամանակ, լոկ խոսքերով գերազատական ԱՄՆ վարչակազմը պետական պարտքի մեխանիզմի օգնությամբ «հետին դռնով» տնտեսությունը լցնում է փողով ու ներդրումներով՝ այդպիսով ապահովելով բավական բարձր եւ կայուն աճ: Նոր «փուլչիկը» կարող է հանգիստ ուռչել, բայց կարող է նաեւ պայթել՝ առաջացնելով սոցիալական ցնցումներ:

ԱՄՆ-ը որակյալ կրթության եւ կարելորագույն տեխնոլոգիաների ամենախոշոր արտահանողն է աշխարհում: Միաժամանակ, ամերիկյան փորձագետներին անհանգստացնում է երկրում տեխնիկական կրթության մակարդակը: Պակասը լրացվում է (ճիշտ է՝ մասնակի) ի հաշիվ կրթված ներգաղթյալների ներգրավման, ինչպես նաեւ՝ տեխնոլոգիապես զարգացող երկրներում պատվերների բաշխման ճանապարհով:

Ամենայն հավանականությամբ, Ամերիկյան բախվելու է տնտեսական լուրջ խնդիրների, սակայն տեսանելի ապագայում մնալու է առավել հարաճուն (դինամիկ) հասարակությունը եւ գլխավոր համաշխարհային գերտերությունը՝ տնտեսական, ռազմական, դիվանագիտական, նաեւ գաղափարախոսական իմաստով: ԱՄՆ հրաժարումը ակտիվ գլոբալ դերից քիչ հավանական է. ներկայիս եռանդուն զավթողական քաղաքականությանը սատարում են նաեւ այն շրջանակները, որոնք ավանդաբար պաշտպանում են մեկուսացման գաղափարախոսությունը: ԱՄՆ մասնակի թուլացումն օգտագործելու փորձերը չափազանց վտանգավոր են. այն թանկ կնստի ցանկացած պետության վրա:

## Եվրոպական Միություն. հնարավոր հրաժեշտ ամբիցիաներին

Համաեվրոպական Սահմանադրության հանրաքվեների ծախտողունը Ֆրանսիայում եւ Նիդեռլանդներում ի հայտ բերեց ԵՄ կառուցվածքային շատ թերություններ՝ կուտակված տարիների ընթացքում: Մասնավորապես, դրանք են՝ տնտեսական դանդաղ աճը, գործազրկության կայուն բարձր մակարդակը («հին Եվրոպայի» երկրների մեծ մասում՝ շուրջ կամ նույնիսկ 10%-ից ավելի), ազատական բարեփոխումներ իրականացնելու անկարողությունն ու բնակչության մեծամասնության կողմից դրանց չընդունումը: Ընդ որում, չնայած ճգնաժամային իրավիճակի եւ աճի ցածր տեմպերի կործանարարության գիտակցմանը, տնտեսական ու սոցիալական քաղաքականության կտրուկ նորացման հնարավորությունները շատ փոքր են: Եվրոպան չափից ավելի բարձր է գնահատում սեփական բարեկեցությունը, որպեսզի գնա ցավոտ բարեփոխումների: Համաշխարհային պատերազմներ ծնող պատճառները հաղթահարված են, կոմունիստական ազդեցության հետ պայքարելու հարկ չկա: Եվրոպացիները հասել են գրեթե ամեն ինչի, որին ի սկզբանե ձգտում էր ինտեգրման նախագիծը: Իշխանության է եկել մի սերունդ, որը ստեղծված բարենպաստ կացությունն ինքնին հասկանալի է համարում: Ճիշտ է, «նոր եվրոպացիները» «հին Եվրոպային» կորդեն բարեփոխումների, սակայն նրանց ազդեցության ներուժը սահմանափակ է:

Հանրաքվեների տապալումից հետո քաղաքական միության կամ կեղծ պետության (Եվրոպացիների հին սերնդի վերջին խոյանքը) ստեղծման գործընթացը, թերեւս, առնվազն մի քանի տարով դադարի: ԵՄ հետագա ընդարձակումը չի առաջացնում կառավարող վերնախավի խանդավառությունը եւ չի աջակցվում բնակչության զգալի մասի կողմից:

2007թ. այս կազմակերպության մեջ Բուլղարիայի ու Ռումինիայի մտնելու որոշումը, որոնց հետ պայմանագրերն արդեն ստորագրված են, ընդունվել է կուլուարներում, եվրոպական հանրությունից գրեթե գաղտնի՝ պետությունների արտաքին գործերի նախարարների, այլ ոչ թե նախագահների մակարդակով՝ ինչպես սովորաբար է: Թուրքիայի անդամակցության հարցն առաջիկա

տարիների օրակարգից գործնականում հանված է, Ուկրաինայի թեկնածությունը լրջորեն չի քննարկվում, Ռուսաստանին՝ առավել եւս:

ԵՄ-ն իր ապագայի մասին բանավեճերի վրա կարող է եւս 4-5 տարի վատնել՝ այդպիսով կորցնելով բարեփոխումների անցկացման համար այդքան անհրաժեշտ ժամանակը: Առաջիկա տարիներին քիչ հավանական է միասնական արտաքին կամ, առավել եւս, պաշտպանական քաղաքականության ձեւավորումը: Արդյունքում՝ մյուս կենտրոններից Եվրոպայի հետ մնալու միտումը, հավանաբար, կխորանա եւ կդառնա անշրջելի: Ենթադրվում է, որ 2030-2050թթ. միացյալ Եվրոպան ՅՆԱ ծավալով ոչ միայն կզիջի ԱՄՆ-ին, այլեւ Չինաստանին:

Աշխարհում, որտեղ ռազմական ուժի գործոնը կրկին ստանում է կարեւոր նշանակություն, ԵՄ-ը ստեղծում է «հետպատերազմյան զինված ուժեր»՝ թվով միլիոն մարդ, որոնք, փաստորեն, ոչ միայն կռվելու, նույնիսկ խաղաղարար գործողությունների մեծ մասին արդյունավետ մասնակցելու անընդունակ են:

Չնայած բարեկամական ճարտասանությանը, այս պայմաններում ԵՄ-ն «ապավինեց» Ռուսաստանի հետ մերձեցման գործընթացի փաստացի սառեցմանը եւ սկսեց վարել «խաղաղ գոյակցության», իսկ տնտեսական ոլորտում՝ նաեւ կոշտ մրցակցության քաղաքականություն: Մի շարք վերջնական լուծում չստացած խնդիրների ֆոնին՝ կապված գյուղատնտեսական նպաստների, էներգակիրների գների, կալիինի գրադյան տրանզիտի հետ, նաեւ փորձեր են արվում թուլացնել ռուսական քաղաքացիական ավիացիայի եւ ավիացիոն արդյունաբերության մրցունակությունը:

Եվ դա՝ այն բանից հետո, երբ Ռուսաստանն արձագանքեց Բրյուսելի դիմումին ու համաձայնեց ստորագրել Կիոտոյի արձանագրությունը: ԵՄ-ը ձգտում է Ռուսաստանի հաշվին տպավորություն ստեղծել, թե իբր ինքն, այնուամենայնիվ, միասնական արտաքին քաղաքականություն ունի, եւ այն նույնիսկ արդյունավետ է:

Այստեղից էլ՝ «սառեցված ճգնաժամերի» կամ, ավելի ճիշտ, «չճանաչված պետությունների» խնդիրների կարգավորման գործում որպէս դատավոր հանդես գալու փորձերը եւ այնտեղից ռուսական զորքերի դուրսբերման մշտական պահանջները: Սրան

է վերաբերում նաեւ «Կենտրոնական Ասիայի գծով հատուկ ներկայացուցչի» նշանակումը:

Եվրախորհրդարանը գրեթէ միշտ բալթյան երկրների կողմն է, որոնք հակառուսական դիրքորոշում ունեն, ինչպես նաեւ պաշտպանում է «հյուսիսային տարածքների վերադարձման» ճակատի պահանջները:

Սակայն Եվրոպայի հետ Ռուսաստանի հարաբերություններում «պատմության վերջը» չի հասել: Ապագայում ԵՄ արժեքային պաշարները կարող են փոփոխվել. հնարավոր է, որ քաղաքական միավորման հետագա կառուցման փոխարեն տեղի ունենա վերադարձ «ընդլայնված ընդհանուր շուկա եւ սոցիալական միություն՝ գումարած միասնական արժույթ» մոդելին: Բացի այդ, Բրյուսելն ինքը, տեսնելով իր համաշխարհային դիրքերի թուլացումը, վերջապես կարող է Ռուսաստանի հետ ռազմավարական մերձեցման ուղի վերցնել: Ուստի ԵՄ-ի հետ սերտ համագործակցումը մնում է ռուսական քաղաքականության հրամայականը:

**«Россия в глобальной политике»**, 2005, ք. 5  
«Ձանրապետական», 2005, ք. 10

## ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

### Շամիլ Սուլթանով

*Շամիլ Սուլթանովը ՌԴ Պետական դումայի պատգամավոր է, «Ռուսաստանի մուսուլմաններ» շարժման համանախագահ: Ստորելու ներկայացնում ենք հատվածներ նրա «Արեւմուտքն ընդդէմ իսլամի» հետազոտությունից:*

Վերջին 40-50 տարում արեւմտյան քաղաքակրթությունն անպասելիորեն բախվեց բազմազան հոգեկան խանգարումների ու հիվանդությունների բուռն զարգացող համակարգին:

Եվրոպայում հիվանդությունների ընդհանուր բեռի գրեթե 20 տոկոսը բաժին է ընկնում հոգեկան խանգարումներին: Աշխարհում ինքնասպանությունների ամենաբարձր ցուցանիշներ ունեցող 10 երկրներ եվրոպական ընկերակցությունից են:

Սակայն, եթե խոսենք ժամանակակից արեւմտյան քաղաքակրթության հոգեկան ախտորոշման մասին, ապա իր հետեւանքներով ամենավտանգավոր հիվանդությունը սեռական անկարողությունն է (իմպոտենցիա). թեւեւ որոշ մասնագետներ կարծում են, որ այն առանձին, մեկուսացված հիվանդություն չէ, այլ ամբողջ շարք հոգեկան խանգարումների ու հիվանդությունների արդյունք: Ձարգացած արեւմտյան երկրներում բացարձակ եւ իրավիճակային իմպոտենտների թիվը մշտապես աճում է՝ որոշ դեպքերում արդեն հասնելով տղամարդկանց ընդհանուր թվի 80 տոկոսին:

Աճող իմպոտենցիան ուղեկցվում է նաեւ մեկ այլ տխուր երեւոյթով՝ այսպես կոչված «սպերմատոզոիդի (արական սերմնաբջիջ) ճգնաժամով»: տնտեսապես զարգացած արեւմտյան երկրներում աստիճանաբար նվազում է տղամարդկանց օրգանիզմում արտադրվող սպերմատոզոիդների քանակը: Այս գործընթացի արագությունը, որը սկսվեց մի քանի տասնամյակ առաջ, կազմում է տարեկան 1,5-2 տոկոս: Այլ կերպ ասած՝ արդեն 30-40 տարի հետո Արեւմուտքում տղամարդն ընդհանրապես կարող է զրկվել բեղմնավորելու ընդունակությունից:

Ձարգացած երկրներում կանանց ֆրիգիդությունը (սառնություն) նույնպես աճում է, բայց տղամարդկանց անկարողության

համենատ՝ ավելի փոքր տեմպերով: Իմպոտենցիայի եւ ֆրիգիդու-  
թյան հակառակ կողմն արտահայտվում է սեռական սանձարձա-  
կության աճով, պոռնոգրաֆիայի, մարմնավաճառության, այսպես  
կոչված, «քաղաքացիական ամուսնությունների» տարածմամբ,  
վեներական հիվանդությունների ավելացմամբ: Օրինակ, Մեծ Բրի-  
տանիայում միայն վերջին 5 տարում վեներական հիվանդություն-  
ներով վարակվածների թիվը կրկնապատկվել է: Արեւմտյան աշ-  
խարհում աղետալիորեն սաստկացող իմպոտենցիայի հիմնական  
պատճառը տիրապետող կենսակերպն է: Այս սոցիալական միջա-  
վայրում անհատն ապրում է մշտական, գիտակցաբար խթանվող  
մշակութասեռական սադրանքների պայմաններում, որոնք հանդի-  
սանում են կենսական եռանդը (ամենից առաջ՝ տղամարդու) խլող  
խկական էներգետիկ վամպիրներ:

Իր հետեւանքներով՝ տղամարդու ենթագիտակցության հա-  
մար ամենավտանգավորը ժամանակակից կնոջ արտաքին տեսքն  
է, հագուստը, անբռնազբոսիկ պահվածքը եւ այլն: Ժամանակակից  
նորածեւությունն ավելի շուտ ոչ թե հազցնում է կնոջը, այլ առա-  
ջարկում է նրա մերկացման տարբեր ձեւեր՝ լրիվ, մասնակի եւ  
այլն: Համապատասխան գովազդը դեպքերի գերակշիռ մասում  
կառուցված է կնոջ մարմնի շահագործման վրա: Կինը՝ որպես հա-  
մապարփակ սեռական խորհրդանիշ, արդի կինոարտադրության,  
գովազդի, հեռուստատեսության, առեւտրի, շուռ բիզնեսի անքակ-  
տելի մասն է:

Հատկապես տղամարդուն, նրա ենթագիտակցությանն է ուղղ-  
ված այս սադրիչ ազդեսիան: Փողոցներում, աշխատանքում, տե-  
ղեկատվական շրջապատում բախվելով տարբեր աստիճանի  
մերկացած կանանց՝ նա ամեն անգամ գեմային եւ մոլեկուլյար  
մակարդակներում իր տղամարդկային գիտակցությունում ապրում  
է յուրատեսակ փոքր ատոմային պայթյուն: Բնական է՝ նորմալ  
տղամարդը դադարում է նորմալ լինելուց, եւ ժամանակի ընթաց-  
քում այստեղ էլ չեն օգնում ոչ վիագրան, ոչ ալկոհոլը, ոչ էլ թմրա-  
նյութերը: Արդի արեւմտյան կենսակերպը ձեւավորում է ժամանա-  
կակից կնոջ մի քանի գերակայող կերպարներ, որը ոչ միայն չի  
ցանկանում երեխա ծնել, այլեւ ավելի ու ավելի է անընդունակ  
դառնում առողջ երեխա ծնելու:



Առաջինը՝ գործնական, ագրեսիվ կին-վաճառորդի կերպարն է՝ ընդունակ վերջնականապես ահաբեկել զարգացող անլիարժեքությամբ տղամարդուն: Նման կնոջ համար առաջին տեղում կարիերան է. նա ամբողջովին ընդունեց այն քաղաքակրթական դրույթը, թե երեխաներ ծնելը նվազեցնում է իր սոցիալական-պաշտոնական շարժունակությունը կամ էլ վերջնականապես խաչ է քաշում սեփական կարիերայի վրա: Այդ պատճառով է, որ, օրինակ, բարձրագույն կրթությամբ գերմանուհիների 40 տոկոսը ներկայումս անզավակ է: Որպեսզի կարիերա ստեղծեն, Արեւմուտքի կանայք զանգվածաբար հրաժարվում են երեխա ծնելուց: Հաջողակ բիզնես-կանայք ստիպված են արհեստական վիժումներ անել, որպեսզի չփչացնեն կարիերան: Այդ նույն պատճառով բիզնես-տիկնայք առավել հաճախ դառնում են լեսբուհիներ:

Երկրորդը՝ միջին սեռի էակի կերպարն է, այսինքն՝ այն կնոջ, որը գիտակցաբար դադարում է կին լինելուց՝ առավելագույնս թաքցնելով իր սեռական պատկանելությունը, օգտագործելով տղամարդու հագուստի ոճը, համապատասխան պահվածքը, ճարտասանությունը եւ այլն:

Կան երկու հիմնական գործոն, որոնք զգալի չափով թույլ են տալիս բացատրել արեւմտյան քաղաքակրթության շրջանակներում Թանատոսի ինքնասպանական սինդրոմի<sup>1</sup> շեշտակի զարգացումը:

Առաջինը՝ տնտեսական գործոնն է: Կին-սպառողը ժամանակակից արեւմտյան հանրության կարելոր բաղադրիչն է: Սպառողական տնտեսության առավել հարաճուն հատվածը կին-սպառողի համար նախատեսված ապրանքների արտադրությունն է: Հատկապես կանայք են այս կամ այն ձեւով կատարում աշխարհում բոլոր գնումների առավել քան 75 տոկոսը:

Այդ իսկ պատճառով կնոջ առավելագույն տնտեսական ազատականացումը, նրան բոլոր ավանդական գործառույթներից (ներառյալ երեխա ծնելը) ազատումը, որոնք նրան խանգարում են սպառել եւ մասնակցել սպառողական տնտեսության վերարտադրմանը՝ ներկայիս արեւմտյան հասարակության հիմնարար արժեքներից են:

---

<sup>1</sup> Մահվան եւ ավերման բնագրի ֆրեյդյան բնորոշումը.- խմբ.:

Երկրորդն՝ այսպես կոչված, «երկնագույն» գործոնն է: Որոշ հիմաստով, Արեւմուտքը կարելի է կոչել «ձեւավորվող երկնագույն քաղաքակրթություն»: Գոյություն ունի ուղղակի կախվածություն վերջին 50 տարում արեւմտյան քաղաքակրթության էվոլյուցիայի բնույթի եւ արեւմտյան երկրների միասեռական ընկերակցության թվակազմի ու ազդեցության աճի միջեւ:

Օրինակ, այժմ Մեծ Բրիտանիայի յուրաքանչյուր 20-րդ հիմնական բնակիչը կամ գեյ է, կամ լեսբուհի: Սակայն սեռական փոքրամասնության ազդեցությունն անհամեմատ մեծ է նրա թվաքանակից՝ հաշվի առնելով, առաջին հերթին, «երկնագույնների» եւ «վարդագույնների» պատկանելությունը հասարակության վերին շերտերին:

Միասեռականներն արդեն ոչ միայն չեն թաքցնում իրենց արժեքներն ու աշխարհընկալումը, այլեւ դրանք եռանդով քարոզում են եւ բավական արդյունավետ տարածում ժամանակակից հասարակությունում: Արդի արեւմտյան հանրությունում համասեռամոլության գաղափարախոսությունն առաջատարներից է: «Երկնագույն» լինելը դառնում է ոչ միայն մոդայիկ, այլեւ կարիերայի համար կենսականորեն անհրաժեշտ: Խոշոր քաղաքական գործիչներն ու մայրաքաղաքների քաղաքագլուխները հպարտորեն են հայտարարում իրենց «երկնագույն» լինելը: Ողջ աշխարհում հայտնի երգիչ-երգահաններ, նկարիչներ, դիզայներներ, մոդելագործներ, շոու բիզնեսի այլ գործիչներ ագրեսիվորեն ցուցադրում են իրենց միասեռական պատկանելությունը: Հեռուստատեսությունը եւ կինոն, փաստորեն, զավթել են «երկնագույն կլանները»: Միասեռ ամուսնությունները վերջին 10 տարիներին բառացիորեն դադարել են էկզոտիկա լինելուց եւ գրեթե դառնում են նորմ:

Ամերիկյան սենատոր ու միասեռական Ջ.Ստադսը, որը սեռական բռնության էր ենթարկել 16-ամյա դեռահասի, կրկին իր թեկնածությունն առաջադրեց Սասաչուսեթսից սենատորի պաշտոնի համար եւ բարեհաջող վերընտրվեց այդ կաթոլիկ նահանգում: Մեկ այլ սենատոր՝ Բ.Ֆրենկը, հեշտությամբ խուսափեց իր սիրելեկանին հովանավորելու մեղադրանքից, որը հասարակաց տուն ուներ սենատորի կալվածքի տարածքում: Բացի այդ, նախագահ Քլինթոնի տարիներին սենատոր Ֆրենկն սկսեց իր զուգընկերոջը բերել Սենատի բաց նիստերին: 2001թ. միասեռական Ջ.Հորմելը

դարձավ Լյուքսեմբուրգում ԱՄՆ նախագահի դեսպան: Արեւմուտքում էլ ավելի է «երկնագույն» դառնում քրիստոնեությունը:

Դեռ 1972թ. Քրիստոսի միավորված եկեղեցում (ՔՄԵ)՝ ԱՄՆ ավագագույն բողոքական համայնքում բողոքականության պատմության մեջ երեւան եկավ առաջին պաստոր-միասեռականը, իսկ 2005թ.՝ սեռը փոխած առաջին պաստորը: Բոլորովին վերջերս ՔՄԵ Գերագույն սինոդը հավանություն տվեց միասեռ զույգերի անուսնության ծեսերը թույլատրող բանաձեւին: Այս որոշումը պաշտպանեց սինոդի պատգամավորների շուրջ 80 տոկոսը: ՔՄԵ-ից հետ չի մնում նաեւ անգլիկան եկեղեցին, որը նույնպես հիմնովին փոխել է միասեռականների հանդեպ իր վերաբերմունքը: Քենթրբերիի արքեպիսկոպոս եւ այդ եկեղեցու առաջնորդ Ռ.Ուիլյամսը վերջին ժամանակներս բազմիցս է հրապարակավ արտահայտվում գեյերի նկատմամբ «դրական վերաբերմունքի» անհրաժեշտության առիթով:

Ըստ էության, մնան «ազատությունը» բողոքական եկեղեցիներում վարկաբեկում է ողջ քրիստոնեությունը: Մարդիկ, որ արագ փոփոխվող եւ ծայրաստիճան անկայուն աշխարհում փնտրում են ամուր հենարան, չեն կարող վստահել «քրիստոնյաներին», որոնք իրենք չեն շարժվում իրենց իսկ սրբազան տեքստերով ու դաբերով մշակված ուսմունքով:

Հիմնականում հենց այս պատճառով է ողջ աշխարհում դիտվում իսլամի ընդունման աճ, որը տալիս է արժեքների կոշտ համակարգ եւ ակտիվ սոցիալական ծրագիր՝ չմերժելով մոնոթեիզմի (միաստվածություն) հիմնարար դոգմաները:

Յոգեկան ախտանիշների տարածման, արեւմտյան հասարակությունը «նյարդային ընկերակցության» վերածելու գործում վճռորոշ դեր խաղաց արեւմտյան վերնախավի (իսթեբլիշմենթ)՝ այսպես կոչված, «բարձր նորաձեւության տների» ստեղծողների ու ղեկավարների չափազանց նեղ, սակայն ազդեցիկ խումբը: Փաստորեն, լինելով «երկնագույն ընկերակցության» գաղափարախոսներ եւ առաջնորդներ, ըստ էության, հենց նրանք են ոճերի, նորաձեւության, կենսակերպի որոշման գործում տոն տալիս, այսինքն՝ սահմանում արեւմտյան սպառողական հասարակության ռազմավարությունն ու մարտավարությունը:

«Երկնագույնները» լավ կազմակերպված են, համակարգված են, բնականաբար, ձգտում են քաղաքական, մշակութային ու սոցիալական էքսպանսիայի՝ ընդհուպ մինչև իշխանության վերին էշելոններում առաջատար դիրքերի զբաղեցման: Համապատասխանաբար՝ նաև ողջ արեւմտյան քաղաքակրթությունն է աստիճանաբար վերածվում էլ ավելի ազդեցիկ դարձող համասեռամուլության գաղափարախոսության, մշակույթի եւ հոգեբանության լայնածավալ հարձակման օբյեկտի:

Քանի որ միասեռական ընկերակցությունն ինքը չի կարող բնական եղանակով օրգանապես վերարտադրվել, ապա նաև բուն արեւմտյան հասարակության վերարտադրման խնդիրն է աստիճանաբար նենգափոխվում:

Հետաքրքիր է եւս մեկ հանգամանք: Արեւմտյան քաղաքակրթության շրջանակներում հոգեկան հիվանդությունների աճի ընդհանուր միտման պայմաններում՝ հատկապես ոչ ավանդական սեռական կողմնորոշման ընկերակցություններն են ցուցադրում հոգեկան հիվանդությունների ու շեղումների ամենաբարձր ցուցանիշները:

[www.islam.ru](http://www.islam.ru)

«Հանրապետական», 2005, ք. 11

## ԱՇԽԱՐՀԸ ԲՈՆԿՎԱԾ Է ՑԱՆՑԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՎ

### *Ալեքսանդր Դուզին*

Ցանցային պատերազմը պատերազմների վարման նոր հայեցակարգ է, որը մշակվել է ԱՄՆ Ջինված ուժերի Բարեփոխումների վարչության կողմից: Այս տեսության մշակողները համոզված են, որ մոտ ապագայում եթե այն չփոխարինի պատերազմի ավանդական տեսությամբ, ապա էապես ու անշրջելիորեն կփոխի նրան:

Պատերազմի ցանցային կամ ցանցակենտրոն տեսությունը հիմնվում է մարդկային պատմությունը հողագործական, արդյունաբերական եւ տեղեկատվական դարաշրջանների բաժանելու սկզբունքի վրա: Այս դարաշրջաններին խստորեն համապատասխանում են նախամոդեռն, մոդեռն եւ հետմոդեռն սոցիոլոգիական հասկացությունները: Տեղեկատվական դարաշրջանը հետմոդեռնի ժամանակաշրջանն է, երբ Արեւմուտքի (առաջին հերթին՝ ԱՄՆ) զարգացած հասարակությունները մտնում են որակապես նոր փուլ:

Այս տեսության համար ամենակարեւոր հասկացությունը «ցանց» եզրն է: Ցանցային սկզբունքի իմաստն այն է, որ ամբողջ մոդելի գլխավոր տարրը հանդիսանում է «տեղեկատվության փոխանակումը»՝ այդ տեղեկատվության արտադրության ձեւերի, նրա բաշխվածության, այնտեղ մուտքի հնարավորության, հակադարձ կապի առավելագույն ընդարձակումը: Ցանցը ներկայացնում է նոր տեղեկատվական տարածություն, որտեղ եւ ծավալվում են հիմնական ռազմավարական գործողությունները, ինչպես նաեւ դրանց լրատվական, դիվանագիտական, տնտեսական եւ տեխնիկական ապահովումը: Մարտական միավորներ, կապի համակարգեր, գործողության տեղեկատվական ապահովում, հասարակական կարծիքի ձեւավորում, դիվանագիտական քայլեր, սոցիալական գործընթացներ, հետախուզություն եւ հակահետախուզություն, ազգային, կրոնական ու հավաքական հոգեբանություն եւ այլն. այսուհետ այդ բոլորն ընկալվում են որպես միասնական ցանցի փոխկապակցված տարրեր, որոնց միջեւ պետք է իրականացվի մշտական տեղեկատվական փոխանակում:

Տեղեկատվական դարաշրջանի «պատերազմի տեսության» շրջանակներում ռազմական բարեփոխման իմաստը հզոր եւ համապարփակ ցանցի ստեղծումն է, որը կոնցեպտուալ կերպով փոխարինում է ռազմական ստրատեգիայի ավելի վաղ գոյություն ունեցած մոդելներին ու հայեցակարգերին, ինտեգրում նրանց միասնական համակարգում:

Կանոնավոր բանակը, հետախուզության բոլոր տեսակները, տեխնիկայի հայտնագործությունները եւ բարձր տեխնոլոգիաները, լրագրությունն ու դիվանագիտությունը, տնտեսական գործընթացները եւ սոցիալական ձեւափոխումները, քաղաքացիական բնակչությունն ու կադրային զինվորականները, կանոնավոր զորամասերը եւ առանձին թույլ կազմակերպված խմբերը՝ այս ամենը ինտեգրվում է միասնական ցանցում, որով շրջանառվում է տեղեկատվությունը: Նման ցանցի ստեղծումը ԱՄՆ Ջինված ուժերի ռազմական բարեփոխման էությունն է:

Բոլոր ցանցային պատերազմների վարման առանցքային խնդիրը «գործողությունների հանրագումարն է՝ ուղղված խաղաղության, ճգնաժամի ու պատերազմի իրադրություններում բարեկամների, չեզոք ուժերի եւ թշնամիների պահվածքի մոդելի ձեւավորմանը»: Դա նշանակում է հրատապ կամ հնարավոր ռազմական գործողությունների բոլոր մասնակիցների նկատմամբ լիակատար հսկողության սահմանում եւ բոլոր իրավիճակներում նրանց համընդհանուր մանիպուլացում եւ այն դեպքում, երբ պատերազմ է գնում, եւ այն դեպքում, երբ այն հասունանում է, եւ այն դեպքում, երբ խաղաղություն է տիրում:

Ցանցի ներդրումը աշխարհի երկրներին, ժողովուրդներին, բանակներին ու կառավարություններին զրկում է ամեն տեսակ ինքնուրույնությունից, ինքնիշխանությունից, վերածում նրանց կոշտ կառավարվող, ծրագրավորված մեխանիզմների, ինչը նշանակում է համանվորակային ուղղակի վերահսկողություն, նոր տիպի համաշխարհային տիրապետություն, երբ կառավարման են ենթակա ոչ թե առանձին սուբյեկտները, այլ նրանց բովանդակությունը, գործողությունները, մտադրությունները եւ այլն: Ըստ էության, եւ թշնամիները, եւ չեզոք դիրք գրաված ուժերն

ակնհայտորեն ենթարկվում են պարտադրված սցենարին, գործում ոչ իրենց կամքով: Դա ճակատամարտի շահում է՝ մինչ այն սկսելը:

Ցանցային պատերազմների նպատակն է համաշխարհային մասշտաբով պատմական գործընթացների բոլոր մասնակիցների վրա բացարձակ վերահսկողության սահմանումը: Եվ այստեղ պարտադիր չեն ուղղակի օկուպացիան, մեծաքանակ զորք մտցնելը կամ տարածքի զավթումը: Ցանցն առավել ճկուն զենք է. այն բռնությամբ ու ռազմական ուժով մամիպուլացնում է լոկ ծայրահեղ դեպքերում, եւ հիմնական արդյունքները ձեռք են բերվում գործոնների (տեղեկատվական, սոցիալական եւ այլն) լայն հանրագումարի վրա ազդեցությամբ:

ԱՄՆ-ի համար ցանցակենտրոն պատերազմների խնդիրն է «բոլորին ԱՄՆ-ի հետ ռազմական մրցակցության անիմաստության գաղափարի ներշնչումը»: Այսօր ցանցային պատերազմ վարում է ԱՄՆ-ը եւ այն վարում է բոլոր մնացած երկրների ու ժողովուրդների դեմ՝ ինչպես թշնամիների, այնպես էլ բարեկամների եւ չեզոք ուժերի: Արտաքին հսկողության ու գործողությունների արտաքին կառավարման հաստատումը հենց ստրկացում է, միայն թե հետմոդեռնի դարաշրջանում այն այլ տեսքով է ձեւակերպված, քան արդյունաբերական դարաշրջանում: Սակայն ցանցը ոչ այլ ինչ է, քան պատերազմի եւ ռազմական գործողությունների վարման համակարգ, անգամ եթե այն մատուցվում է որպես բարիք: Այդ պատերազմը տարվում է նաեւ Ռուսաստանի դեմ եւ, ինչպես ամեն պատերազմ, ուղղված է նրա նվաճմանը, հպատակեցմանը՝ ինչպիսի եզրերով էլ որ այն հրամցվի:

Միանգամայն ակներեւ է, որ ռուսական հատուկ ծառայությունները, քաղաքական ինստիտուտները, պաշտպանական համակարգերը, ուժային նախարարությունները, գերատեսչությունները հայեցակարգային առումով մնում են մոդեռնի դարաշրջանի (ինդուստրիալ հասարակության) ռազմավարության շրջանակներում: Նման կառույցները սկզբունքորեն ի զորու չեն ոչ միայն արդյունավետ կերպով դիմակայել հետմոդեռնական ցանցային տեխնոլոգիաների մարտահրավերները, այլեւ քաղաքակիրթ ձեւով ճանաչել դրանց կիրառման փաստը:

Օգտագործվող ցանցային տեխնոլոգիաները չափազանց նուրբ ու կատարյալ են ռուսական հատուկ ծառայությունների գործող՝ դարձնելով համակարգերի համար, որոնք ԱՄՆ համակարգային գործողությունների դեմ անպաշտպան են եւ միանգամայն անարդյունավետ:

Որպես այս գլոբալիստական ցանցի սեզմենտներ հանդես են գալիս ինչպես փորձագետների, քաղաքագետների, վերլուծաբանների, տեխնոլոգների ուղղակիորեն ամերիկամետ լրբբին, որն իշխանությանը շրջապատում է ամուր օղակով, այնպես էլ ամերիկյան բազմաքանակ հիմնադրամները: Ռուսական խոշոր կապիտալի եւ բարձրագույն վարչարարության ներկայացուցիչները բնական եղանակով ինտեգրվում են արեւմտյան աշխարհին, որտեղ պահում են իրենց խնայողությունները:

Ձանգվածային լրատվամիջոցներն ընթերցողներին ու հեռուստադիտողներին «ճառագայթահարում» են ամերիկյան կաղապարներով պատրաստված տեսողական եւ իմաստային տեղեկատվության հոծ հոսքերով: Եվ այդ գործընթացների մեծ մասն անհնարին է որակել սոսկ իբրեւ «դրսի գործակալների» գործողություններ, ինչպես արդյունաբերական դարաշրջանում էր: Տեղեկատվական դարաշրջանի տեխնոլոգիաները նախորդ դարաշրջանի հատուկ ծառայությունների համակարգերով ու մեթոդներով չեն «որսվում»:

\* \* \*

Վերջին տարիներին ցանցային պատերազմները դարձել են ավելի ակնհայտ: Նրանք ԱՄՆ-ի կողմից կոշտ ձեւով տարվում են Իրաքում եւ Աֆղանստանում, նախապատրաստվում Իրանում ու Սիրիայում, նուրբ ձեւով փորձարկվեցին Վրաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում եւ ԱՊՅ այլ երկրներում: Նարնջագույն հեղափոխությունը Կիեւում հենց այդպիսի տեխնոլոգիաների իրականացման տիպիկ օրինակ է: Ռուսաստանից Ուկրաինայի «պոկման» խնդիրը լուծվեց եռանդով, համառությամբ, բազմաթիվ գործոնների օգտագործմամբ, ընդ որում՝ առանց դասական ուժային մեթոդների կիրառման: Այս գործընթացի կարեւորագույն գործիքը նարնջագույն ցանցն է: Այն ստեղծված է ցանցակենտրոն գործո-



ղությունների վարման բոլոր կանոններով: 2004թ. ուկրաինական դրամատիկ աշնան յուրաքանչյուր մասնակից մանիպուլացված էր. որն ուղղակիորեն, որն անուղղակի, որը Ռուսաստանի, որը Եվրոպայի, որը տնտեսական, որը կրոնական լծակների միջոցով:

Ուկրաինայում Ռուսաստանի եւ ռուսամետ ուժերի ձախողումը, մինչ ողջ իրադրության սկիզբը, արդեն կանխորոշված էր, քանզի միմյանց բախվել էին միանգամայն անհամաչափ ուժեր՝ ինդուստրիալ ու տեղեկատվական (հետիմդուստրիալ) տեխնոլոգիաները: Հատկապես Կիեւի նարնջագույն հեղափոխությունը ցուցադրեց ռուսական հետամնացության ողջ անհունությունը եւ ամերիկյան գերազանցության ողջ ծավալը: Համաշխարհային ցանցային տիրապետության ճանապարհին ԱՄՆ-ը կատարեց եւս մեկ բազմանշանակ ու տպավորիչ քայլ:

Այժմ արդեն տարակուսանք չկա, որ նման ճակատագիր է սպասվում նաեւ Ռուսաստանին: Դա տեղի կունենա անգամ այն դեպքում, եթե Ռուսաստանը մնա չեզոք տերության կամ նույնիսկ ԱՄՆ բարեկամի կարգավիճակում: 2008թ. մոտերքին Ռուսաստանում բնական կերպով հասունանալու է ճգնաժամ, եւ այդ շրջանում նրա «պահվածքով» զբաղվելու են ու արդեն եռանդով զբաղվում են ցանցային պատերազմների ամերիկյան ճարտարապետները: Դրա համար օգտագործվելու են բուն Ռուսաստանի ներսի հիմնական հատվածները, ազդեցությունը սոցիալական, տեղեկատվական գործընթացների վրա. բոլորին հատկացվելու են իրենց դերերը, եւ բոլորը ստիպված են լինելու դրանք կատարել՝ ե՛ւ նարնջագույնները, ե՛ւ նրանց հակառակորդները, ե՛ւ ընդդիմությունը, ե՛ւ պահպանության կառույցները...

Ռուսաստանի կողմից տեսականորեն միակ վայելուչ պատասխանը կլիներ հետմոդեռնացման ուղղությամբ համաչափ ցանցային ռազմավարության մշակումը՝ զուգահեռ ու սրընթաց վերափոխելով պետության առանձին ոլորտները (կառավարում, հատուկ ծառայություններ, ակադեմիական գիտություն, տեղեկատվական դաշտ): Ռուսական պետականության որոշակի մասը պետք է միահամուռ կերպով մաքրվի ամերիկյան ցանցի հատվածներից, փոխադրվի աշխատանքի ոչ սովորական ռեժիմ, օժտվի արտա-

կարգ լիազորություններով ու լծվի համարժեք ցանցային կառուցվածքի ստեղծմանը՝ ընդունակ գոնե մասնակիորեն հակազդելու ամերիկյան մարտահրավերին: Այն պահանջում է ստեղծել հատուկ խումբ, ուր պետք է մտնեն առանձին բարձրաստիճան վարչարարներ, տարբեր հատուկ ծառայությունների լավագույն պասիոնար կադրեր, ինտելեկտուալներ, գիտնականներ, ճարտարագետներ, քաղաքագետներ, հայրենասիրորեն տրամադրված լրագրողներ ու մշակույթի գործիչներ:

Այդ խմբի խնդիրը պետք է լինի եվրասիական ցանցի մոդելի մշակումը՝ իր մեջ ընդունելով ամերիկյան հետմոդեռնի եւ տեղեկատվական հնարքների հիմնական տարրերը, սակայն ուղղված նրա ազդեցության վեկտորին համաչափորեն հակառակ: Այն ենթադրում է ռուսական զինուժի, հատուկ ծառայությունների, քաղաքական ինստիտուտների, տեղեկատվական համակարգերի, հաղորդակցության ուղիների շտապ ու արտակարգ «հետմոդեռնացում»: Սա անհավատալիորեն դժվարին խնդիր է, բայց չլուծելով կան գոնե չառաջադրելով այն՝ Ռուսաստանը 2008թ. (եթե ոչ ավելի շուտ) դատապարտված կլինի պարտության նարնջագույն ցանցային տեխնոլոգիաների կողմից:

Ցանցային պատերազմը կարելի է շահել միայն ցանցային միջոցներով՝ սեփական պայմաններին ու նպատակներին հարմարեցնելով արդյունավետ եւ սրընթաց զարգացող տեխնոլոգիաները:

**«Независимое военное обозрение»**

«Յանրապետական», 2005, ք. 11

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԵՐԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ<sup>1</sup>

Գիտակցելով, որ աշխարհն ապրում է պատմության բեկումն-նային պահ, կանգնած է քաղաքակրթությունների բախման սպառնալիքի առաջ, որոնք յուրովի են ընկալում մարդուն եւ նրա առաքելությունը, Ռուսական ժողովրդական համաշխարհային ժողովն ընդունում է սույն հռչակագիրը:

Մարդը, որպես Աստծո պատկեր՝ ունի բացառիկ արժեք, որը չի կարող խլվել: Այն պետք է հարգվի հասարակության, պետության, ամենքիս կողմից: Բարիք գործելով՝ անձը ձեռք է բերում արժանապատվություն:

Այսպիսով, մենք տարբերակում ենք անձի արժեքն ու արժանապատվությունը:

Արժեքը այն է, ինչը տրված է, արժանապատվությունը այն է, ինչը ձեռք է բերվում:

Բարոյականության հավիտենական օրենքը մարդու հոգում ունի ամուր հիմք, որը կախված չէ մշակույթից, ազգությունից, կենսապայմաններից: Այդ հիմքը մարդկային բնության մեջ դրվել է Արարչի կողմից եւ արտահայտվում է խղճում: Սակայն խղճի ձայնը կարող է խլացվել մեղքով: Հենց այս պատճառով է բարին ու չարը տարբերելուն օժանդակելու կոչված կրոնական ավանդույթը՝ իր Սկզբնաղբյուրն ունենալով Աստծուն:

Մենք առանձնացնում ենք երկու ազատություն՝ ներքին ազատությունը չարից եւ բարոյական ընտրության ազատությունը: Ազատությունը չարից ինքնին արժեք է հանդիսանում: Ընտրության ազատությունը ձեռք է բերում արժեք, իսկ անձը՝ արժանապատվություն, երբ մարդն ընտրում է բարին: Ընդհակառակը՝ ընտրու-

---

<sup>1</sup> Ընդունվել է 2006թ. ապրիլի սկզբին Մոսկվայում անցկացված Ռուսական ժողովրդական 10-րդ համաշխարհային ժողովի (*Собор*) կողմից: Այն առանձնակի երեւոյթ է հոգեւոր-գաղափարախոսական ոլորտում այսօր աշխարհում տեղի ունեցող նոր վերափոխումներում եւ, անշուշտ, հետաքրքրական է նաեւ մեզ համար.- խմբ.:

թյան ազատությունը տանում է ինքնախորտակման ու վնասում մարդու արժանապատվությունը, երբ նա ընտրում է չարը:

Մարդու իրավունքները հիմնվում են անձի արժեքի վրա եւ պետք է ուղղված լինեն նրա արժանապատվության իրացմանը: Հատկապես այս պատճառով մարդու իրավունքների պահպանումը չի կարող կապված չլինել բարոյականության հետ: Այդ իրավունքների խզումը բարոյականությունից նշանակում է դրանց խեղաթյուրում, քանզի անբարոյական արժանապատվություն չի լինում:

Մենք կողմ ենք ապրելու իրավունքին եւ դեմ՝ մեռնելու «իրավունքին», կողմ՝ արարելու իրավունքին, դեմ՝ «ավերելու» իրավունքին: Մենք ընդունում ենք մարդու իրավունքներն ու ազատություններն այնքանով, որքանով դրանք օգնում են անձի խոյանքին դեպի բարին, պաշտպանում նրան ներքին եւ արտաքին չարից, հնարավորություն ընձեռում դրականորեն դրսեւորվել հասարակությունում: Այս լույսի ներքո՝ մեր կողմից հարգվում են ոչ միայն քաղաքացիական, քաղաքական իրավունքներն ու ազատությունները, այլեւ սոցիալական, տնտեսական եւ մշակութային իրավունքները:

Իրավունքներն ու ազատություններն անխզելիորեն կապված են մարդու պարտականությունների եւ պատասխանատվության հետ: Անձն իր շահերն իրագործելիս կոչված է դրանք համադրել մերձավորի, ընտանիքի, տեղական համայնքի, ժողովրդի, համայն մարդկության շահերի հետ: Կան արժեքներ, որոնք մարդու իրավունքներից ստորադասելի չեն:

Դրանք այնպիսի արժեքներ են, ինչպիսիք են հավատը, բարոյականությունը, սրբությունները, Հայրենիքը: Երբ այդ արժեքներն ու մարդու իրավունքների կենսագործումը հակասության մեջ են մտնում, հասարակությունը, պետությունը եւ օրենքը պարտավոր են դրանք ներդաշնակեցնել: Չի կարելի թույլ տալ այնպիսի իրավիճակներ, որոնց դեպքում մարդու իրավունքների իրականացումը կճնշի հավատն ու բարոյական ավանդույթը, կվիրավորի կրոնական եւ ազգային զգացմունքները, պաշտելի սրբությունները, կսպառնա Հայրենիքի գոյությանը: Վտանգավոր է նաեւ այնպիսի «իրավունքների» «հայտնագործումը», որոնք օրինականացնում են ավանդական բարոյախոսության եւ բոլոր պատմական կրոնների կողմից դատապարտվող պահվածքը:

Մենք մերժում ենք մարդու իրավունքների բնագավառում երկակի ստանդարտների քաղաքականությունը, ինչպես նաև փորձերը՝ օգտագործել այդ իրավունքները քաղաքական, գաղափարախոսական, ռազմական ու տնտեսական շահերի առաջնդման, որոշակի պետական եւ հասարակական կարգի պարտադրման համար:

Մենք մարդու իրավունքների ապահովման գործում պատրաստ ենք համագործակցել պետության ու բոլոր բարեմիտ ուժերի հետ: Այդպիսի համագործակցության հատուկ ոլորտներ պիտի լինեն ազգերի եւ էթնիկ խմբերի դավանանքի, լեզվի ու մշակույթի իրավունքների պահպանությունը, կրոնի ազատության եւ հավատացյալների՝ սեփական կենսակերպ ունենալու իրավունքի պաշտպանությունը, դիմակայությունը ազգային ու կրոնական հենքով հանցագործություններին, իշխանությունների եւ գործատուների կամայականություններից անձի պաշտպանությունը, զինծառայողների իրավունքների հանդեպ հոգածությունը, երեխայի իրավունքների պահպանությունը, կալանավայրերում ու սոցիալական հիմնարկներում գտնվող մարդկանց խնամքը, քայքայիչ աղանդների զոհերի պաշտպանությունը, մարդու անձնական կյանքի ու հանդուժողունքների վրա համապարփակ հսկողության անթուլատրելիությունը, դիմադրությունը հանցագործության, կոռուպցիայի, ստրկավաճառության, մարմնավաճառության, թմրամոլության, խաղամոլության մեջ մարդկանց ներգրավելուն:

Մենք ձգտում ենք տարբեր դավանանքների ու հայացքների տեր մարդկանց հետ երկխոսության՝ մարդու իրավունքների ու արժեքների հիերարխիայում դրանց տեղի հարցերում: Այսօր նման երկխոսությունը, ինչպես ուրիշ ոչինչ, կօգնի խուսափել քաղաքակրթությունների բախումից, հասնել մոլորակի վրա տարբեր աշխարհայացքների, մշակույթների, իրավական եւ քաղաքական համակարգերի խաղաղ զուգակցմանը: Թե մարդկանց որքանով կհաջողվի լուծել սույն խնդիրը՝ դրանից է կախված նրանց ապագան:

«Հանրապետական», 2006, ք. 5

## ԱՐԴԻ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(հատված «Ռուսաստանը եւ գլոբալացումը» հոդվածից)

### *Գեորգի Վելյամինով*

#### **Արդի գլոբալացման առանձնահատկությունները**

Ներկայիս գլոբալացման եւ պանամերիկանիզմի միջեւ միանգամայն տեղին է հավասարության նշան դնելը. գլոբալիզացիոն համակարգի կառուցման լոկոմոտիվն այսօր Միացյալ Նահանգներն է:

ԱՄՆ գլոբալ-կայսերական հավակնությունների գաղափարախոսական հենքը (Նախագահ Վուդրո Վիլսոնի ժամանակներից սկսած) ԱՄՆ քաղաքակրթիչ բացառիկ առաքելության փրկչական (մեսիական) գաղափարն է, որը ենթադրում է «Pax Americana»-ի<sup>1</sup> կառուցում: Պրովիդենցիալ (նախախնամությամբ տրված) այս գաղափարն այսօր տիրում է համաշխարհային կայսրության ամերիկյան ճարտարապետների մտքերին:

1990-ականներից ԱՄՆ վարչակազմը բռնեց գլոբալ ռազմաստրատեգիական գերակշռության բացահայտ ուղի:

Ինչ վերաբերում է առեւտրաֆինանսական գլոբալացմանը, ապա այստեղ Վաշինգտոնի քաղաքականությունը որոշվում է ԱՄՆ խոշոր կապիտալի տնտեսական շահերով: Ընդ որում, նման գլոբալացման բոլոր իրական «հաջողությունները» գործնականում կենտրոնացած են տնտեսական էքսպանսիոնիզմի ոլորտում (միջազգային առեւտուր, ֆինանսական տրանսֆերտներ եւ ներդրումներ, եւն):

Նույնիսկ, այսպես կոչված, մշակութային գլոբալացումն, ըստ էության, ավելին չէ, քան առեւտրային էքսպանսիայի լուսանցքային արդյունք. ընդ որում, զանգվածային մշակույթի գլոբալ տարածման շարժիչ ուժը ԱՄՆ մշակութային ինդուստրիան է: Գլոբալացման սոցիալական բաղադրիչը բացասական է գնահատվում:

---

<sup>1</sup> Ամերիկյան աշխարհի.- խմբ.:

Իլիմոյսի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Ռոբերտ Մաքչես-  
նիի խոսքերով՝ «գլոբալացման քաղաքականությունը հանգեցրել  
է սոցիալական եւ տնտեսական անհավասարության զգալի աճի,  
աշխարհի ամենաաղքատ ազգերի ու ժողովուրդների կացության  
էլ ավելի վատթարացման...»: «United States Command, Vision for  
2020»-ի ծրագրային փաստաթղթում նշվում է, որ «համաշխարհա-  
յին տնտեսության գլոբալացումը շարունակվում է, իսկ «ունենոր-  
ների» եւ «չքավորների» միջեւ վիհը՝ մեծանում»: Այդ վիհն էլ հենց  
հանդիսանում է հանցագործությունը, ահաբեկչությունը, թմրամո-  
լությունն ու նման արատները սնող միջավայր: Սակայն այս  
իրավիճակի շտկման համար ոչինչ չի արվում:

Գլոբալացումը կործանարար ազդեցություն է թողնում նաեւ  
շրջակա միջավայրի վրա: Անգամ մթնոլորտի աղտոտվածությունը  
բազմակողմ հիմքի վրա սահմանափակելու համեստ փորձը  
(1997թ. Կիոտոյի արձանագրությունը, որը մասնակից երկրների  
համար նախատեսում է ջերմոցային գազերի արտանետման վրա  
քվտաների սահմանում) աջակցություն չստացավ ամենագլխա-  
վոր «աղտոտողների»՝ Միացյալ Նահանգների ու Չինաստանի  
կողմից:

Արդի գլոբալացման կարեւորագույն համակարգակազմիչ  
առանձնահատկությունը նրա վառ արտահայտված կառավարե-  
լիությունն է:

Թեեւ գլոբալացման գործընթացներն օբյեկտիվորեն պայմա-  
նավորված են երկրագնդի վրա կյանքի ընդհանուր ինտերնա-  
ցիոնալացմամբ եւ, թվում է, թե տարերայնորեն են, սակայն իրա-  
կանում դրանք հմտորեն ուղղորդվում են դեպի շուկայական  
տնտեսության հուն՝ նրա հայեցակարգորեն կապիտալիստական,  
նեոազատական մոդելի շրջանակներում: Գլխավոր ղեկավարող  
ուժն, անշուշտ, ԱՄՆ-ն է՝ միջազգային մեզակապիտալի պատվարը:

Կառավարման առավել գործունե եւ հուսալի մեթոդը իրա-  
վունքն է:

Բայց գլոբալացումը՝ որպէս այդպիսին, չի կարող անմիջակա-  
նորեն ձեւավորել իրավունք, քանզի վերջինս պետական կամքի  
դրսեւորում է, իսկ միջազգային իրավունքը (այդ թվում՝ տնտեսա-  
կան ոլորտում) արտահայտում է պետությունների համաձայնեց-  
ված կամքերը:

Ժամանակակից աշխարհում նման համաձայնությունը կայանում է բանակցությունների ընթացքում, առաջին հերթին՝ միջազգային կազմակերպությունների անդամ երկրների միջև, իսկ առեւտրատնտեսական գլոբալիզացիոն հարաբերությունները կարգավորվում են Առեւտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) շրջանակներում:

Ինչ վերաբերում է արժութա-ֆինանսական հարաբերություններին, ապա Բրեթոն-Վուդի համակարգի փլուզման հետ (1972թ.)՝ արժութային փոխարժեքները, կապիտալի վերազգային տրանսֆերտները միջազգային իրավական բազմակողմ մակարդակում էականորեն չեն կարգավորվում:

Դա վերաբերում է նաեւ արտադրության ոլորտին: Ինչպես գրում են անգլիացի հեղինակավոր հետազոտողները, այսօր «արտադրության գլոբալացումը զգալի չափով իրականացնում են վերազգային կորպորացիաները, որոնք մնում են արդի համաշխարհային տնտեսության միջուկը»: Բոլոր խոշորագույն վերազգային կորպորացիաների (ՎԱԿ) շուրջ 25%-ը տեղակայված է Միացյալ Նահանգներում: ՎԱԿ-երի համար, բնականաբար, պետական կամ միջպետական որեւէ միջամտություն իրենց գործունեությանն անենելին էլ ցանկալի չէ: Սակայն, այսպես կոչված ոչ առեւտրային (քաղաքական) ռիսկերով երկրներում հույժ կարեւոր է ուղղակի ներդրումների պաշտպանությունը դրանցից, եւ այն հիմնականում իրականացվում է ներդրումների խրախուսման ու պաշտպանության մասին միջազգային երկկողմ համաձայնագրերի շրջանակներում, ինչպես նաեւ Ներդրումային երաշխիքների բազմակողմ գործակալության (MIGA) միջոցով:

**Կողմնակիցները, հակառակորդները  
եւ գաղափարական ոգեշնչողները**

Գլոբալացման էությունն ու հեռանկարները գիտնականների կողմից տարբեր կերպ են գնահատվում:

Ուղղափառ գլոբալիստները (հիպերգլոբալիստներ) գլոբալացումը դիտում են որպես գլոբալ քաղաքակրթության նոր դարաշրջան, որի շարժիչ ուժերն են կապիտալիզմը եւ նոր տեխնոլոգիաները: Ազգային պետություններն անկում են ապրում, իսկ



մարդկային ճակատագրերն ամբողջովին կախված են միջազգային շուկայում տիրող կարգերից:

Վերափոխիչների (տրանսֆորմիստներ) կարծիքով, գլոբալացումը խորապես ձեւափոխում է համաշխարհային քաղաքականությունը, պետական իշխանությունն ու հասարակությունը, որոնք փորձում են ադապտացվել առավել փոխկապակցված եւ արագ փոփոխվող աշխարհում: Սակայն, քանզի ինտեգրացմանն ուղեկցում է հատվածականությունը, ապա գլոբալացման հետագա զարգացման կայունությունն այդ գիտնականների կողմից կասկածի տակ է դրվում:

Թերահավատները համարում են, որ գլոբալացումը միջ է: Խոսք կարող է գնալ սոսկ տարածաշրջանային երեք հիմնական դաշինքների, քաղաքակրթությունների բախման եւ Չարավի լուսանցքայնացման մասին: Ազգային կառավարությունների իշխանությունը մնում է անփոփոխ եւ չափազանց հզոր, ինտերնացիոնալացումը կախված է պետությունների միջեւ համաձայնությունից: Աշխարհն այսօր նույնիսկ ավելի քիչ է փոխկախվածության մեջ, քան 19-րդ դարի 90-ականներին:

Հակագլոբալիստները, որոնցից ոմանք իրենց կոչում են ակտերգլոբալիստներ, գործնականում հանդես են գալիս ոչ թե ինքնին գլոբալացման գործընթացի, այլ նրա նպատակների ու մեթոդների դեմ:

Դիմակայությունն արդի միակողմանի գլոբալացմանը - «հանրնդհանուր ապրանքայնացմանը եւ աշխարհի մասնավորեցմանը» - իրականացվում է ինտերնացիոնալ, այսինքն՝ գլոբալ մասշտաբով. ճիշտ է, երբեմն նաեւ փողոցային անկարգությունների ձեւով:

Շուկայական գլոբալացման գաղափարական հենքը նեոազատականությունն է: Նրա հետեւորդների կարծիքով, ազատ շուկային այլընտրանք չկա: Ինչպես իր «Կապիտալիզմ եւ ազատություն» գրքում նշում է նեոազատական գուրու Միլթոն Ֆրիդմանը, քանի որ շահույթ ստանալը հենց ժողովրդավարության էությունն է, ուստի ցանկացած կառավարություն, որն անցկացնում է հակաշուկայական քաղաքականություն՝ հակաժողովրդավարական է:

Լինելով յուրատեսակ դավանաբանություն՝ նեոազատականությունը պատված է սրբազան լուսապսակով. այս հավատքի աստվածը Կապիտալն է, տաճարը՝ Ազատ շուկան: Ունի նաեւ իր

ավետարանը, այսպես կոչված՝ «Վաշինգտոնյան համաձայնությունը»<sup>1</sup>: Այս եզրը, որ քաղաքական առօրյա մտցվեց անցած դարի վերջին՝ տնտեսագետ Ջոն Ուիլյամսի կողմից, կոչված է ընդամենը այս աշխարհի մեծերի վիրտուալ համաձայնությունն ուրվագծելու, որոնք առավել խոցելի երկրների ու ընկերակցությունների վերաբերյալ ընդունում են կարեւորագույն որոշումներ եւ դրանք կենսագործում միջազգային՝ հիմնականում ԱՄՆ-ի կողմից վերահսկվող հաստատությունների միջոցով:

Մինչդեռ, գլոբալացման՝ այսօր գերակշռող նեոազատական հայեցակարգային մոդելն այնքան էլ անվնաս չէ, ինչպես կարծում են նրա ջերմ կողմնակիցներից շատերը: Երկրորդ աշխարհամարտից հետո ազատականացումն ազատ մրցակցության դրոշի ներքո, որպես համադարման բոլոր չարիքների, դարձավ Տարիֆների եւ առեւտրի մասին գլխավոր համաձայնագրի (ՏԱԳՀ) առանցքը. այդ դրոշը մինչ օրս էլ ծածանվում է ԱՀԿ գլխին: Սակայն, ինչպես վկայում է Մասաչուսեթսի համալսարանի պրոֆեսոր Նոան Յոնսկին, «շուկաներում մրցակցությունը բավական հազվադեպ է պատահում: Տնտեսության մեծ մասը վերահսկվում է խոշոր կորպորացիաների կողմից, որոնք լիովին իշխում են իրենց շուկաներում»:

Արդյունքում՝ ՏԱԳՀ հովանու ներքո եւ, ըստ էության, ողջ կապիտալիստական աշխարհի շրջանակներում իրականացվեց արդյունաբերական ապրանքների ներմուծման մաքսային տարիֆների իրավական ազատականացման տպավորիչ ծրագիր: Նրանց վրա ներմուծման տուրքերի միջին մակարդակը ՏԱԳՀ մասնակից երկրների համար իջեցվեց 40%-ից (1948թ.) մինչեւ 4% (1990թ.): Սակայն ազատականացումը, որն ի սկզբանե հռչակել է *Laisser faire, laisser passer* («մի խանգարեք գործարար ակտիվությանը, մի խանգարեք սահմանները հատելուն») սկզբունքը, ընդունեց խիստ միակողմանի բնույթ, քանզի ենթադրում է, որ աղքատ ու թույլ երկրները պետք է բացեն իրենց շուկաները հարուստ եւ հզոր պետությունների արդյունաբերական ապրանքների համար, իսկ վերջիններս էլ իրենց իրավունք են վերապահում

---

<sup>1</sup> Երկրներին առաջարկված միջոցառումների համալիր՝ նրանց տնտեսությունը բարեփոխելու համար. - խմբ.:

թույլ երկրների գյուղատնտեսական, տեքստիլ եւ այլ ներմուծումներից հովանավորչական պաշտպանություն ունենալ: Նման մոդելը կարելի է անվանել էքստրավերտիվ (դեպի արտաքին աշխարհ ուղղված) ազատականություն, որը միտված է ոչ թե սեփական, այլ արտասահմանյան շուկայի ազատականացմանը: Այլ կերպ ասած՝ ի հայտ է գալիս արտասահմանյան շուկաներ սեփական արտադրանքի արտահանման առանձնահատուկ հովանավորչություն:

Բայց ինչո՞ւ առավել թույլ երկրները գնացին նման անհավասարագոր՝ միաժամանակ իրավաբանորեն ամրագրված համագործակցության: Որպեսզի դա նրանց հարկադրեն, գործի դրվեցին տնտեսական ու քաղաքական բազում լծակներ. օրինակ՝ վարկերից, ֆինանսական եւ մարդասիրական օգնություններից զրկելու սպառնալիքները:

«Ձարգացող երկրների պարտքերն Արժույթի միջազգային հիմնադրամի ու Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի համար լծակ ծառայեցին՝ ստիպելու Երրորդ աշխարհի երկրների կառավարություններին՝ 1980-ականներին ընդունել «կառուցվածքային կարգավորման» նեոազատական ծրագրերը, իսկ կոմունիզմի կրախն ԱՄՆ-ին թույլ տվեց օժանդակել Արևելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ երկրներին՝ «շուկային թերապիայի» անցկացման գործում» (Ուոլդեն Բելո): Եվ բացի այդ՝ լավ է խաղալ երկրորդական դերեր, քան լինել հետմապահ կամ, որ ավելի վատ է՝ լուսանցքային երկիր:

**«Россия в глобальной политике», 2006, р. 3**

**«Հանրապետական», 2006, р. 7**

## ԸՆԴՀԱՆՐԱՎԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ, ՈՒՐՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

(հատված ԱՄՆ նախկին պետքարտուղար  
*Չենրի Քիսինջերի* հարցազրույցից)

**Չարք:** Ոմանք պնդում են, թե սեպտեմբերի 11-ից հետո «աշխարհը փոխվել է»։ ընդ որում, նկատի է առնվում, որ 21-րդ հարյուրամյակի միջազգային համակարգն առավելապես ձեւավորում են ոչ թե ազգային պետությունները, այլ նոր տարրերը՝ ենթապետական կառույցները, վերազգային շարժումները եւ այլն, ինչից հետեւում է, որ սառը պատերազմի ժամանակների Ամերիկայի փորձը դառնում է առավել քիչ արդիական ներկայիս միջազգային քաղաքականության մշակման համար։ Այս առիթով Դուք ի՞նչ եք մտածում։

**Պատ.:** Ե՛հ շտ է, որ միջազգային հարաբերությունների ոլորտ են ներխուժել միանգամայն նոր տարրեր, սակայն առաջին հարցը, որին հարկ կլինի պատասխանել, հետեւյալն է. գոյություն ունե՞ն, արդյոք, միջազգային քաղաքականության ընդհանուր սկզբունքներ, որոնք կարող են կիրառվել ողջ աշխարհում միաժամանակ եւ միեւնույն կերպ։

Աշխարհի տարբեր հատվածներ գտնվում են իրենց ներքին զարգացման տարբեր փուլերում. համապատասխանաբար, տարբեր փուլերում են գտնվում նաեւ զանազան միջպետական տարածաշրջանային միավորումների կառուցվածքները։ Մեր պատկերացումներն այն մասին, թե ինչի ենք ձգտում, պետք է լինեն անփոփոխ, բայց դրված նպատակներին հասնելու միջոցներն անհրաժեշտ է հարմարեցնել տարբեր տարածաշրջաններում գոյություն ունեցող առանձնահատուկ պայմաններին։

**Չարք:** Դուք ի՞նչ կպատասխանեիք նրանց, ովքեր պնդում են, թե այս կամ այն վարչակարգի ուրույն բնույթն այսօր ԱՄՆ-ի հետ հարաբերությունների ձեւավորման առավել կարեւոր գործոն է։

**Պատ.:** Վարչակարգի ուրույն բնույթը մի գործոն է, որն անհրաժեշտ է հաշվի առնել։ Սակայն ես հարցն այլ կերպ կդնեի. հնարավո՞ր է կողմնորոշվել սոսկ այս գործոնով։ Բացի այդ, վերոնշյալ ենթադրությունը ելնում է նրանից, թե մենք տիրում ենք այս

կամ այն վարչակարգի ներքին կառուցվածքների վրա ազդելու անսահմանափակ հնարավորությունների: Այս հաշվով ես մեծ տարակուսանքներ ունեմ: Քաղաքական մտքի իրապաշտական եւ տեսական (կամ գաղափարապաշտական) դպրոցների միջեւ տարբերությունը, որպես կանոն, նպատակների մեջ չէ: Սովորաբար նպատակները միանգամայն համանման են: Վիճում են նրա շուրջ, թե ինչ կարելի է անել տվյալ ժամանակահատվածում, եւ այստեղ այլընտրանք է առաջանում. կամ կոպտորեն առաջնորդվել նպատակային հայեցակարգի պահանջներով, կամ նրա վրա գործնական սահմանափակումներ դնել՝ այլ նշակույթին ու ձեւավորված հանգամանքներին ադապտացումը դյուրացնելու համար:

**Չարք:** Մտահոգության առարկա է նաեւ այն, թե բուռն կերպով զարգացող Չինաստանը «կմտնի՞», արդյոք, առկա միջազգային հանակարգի մեջ, թե՞ կփորձի այն արմատապես փոխել:

**Պատ.:** Ես կասկածում եմ այնպիսի մոտեցման իմաստության մեջ, որի դեպքում Չինաստանի նկատմամբ քաղաքականությունը խարսխվում է այն համոզումների վրա, թե Չինաստանը լի է վճռականությամբ՝ ռազմական ուժի օգնությամբ շրջել միջազգային համակարգը: Ինձ առավել ճիշտ է թվում այն ենթադրությունը, թե Չինաստանը, ապրելով տնտեսական աճի բուռն ժամանակաշրջան, միջազգային համակարգում իր քաղաքական ու տնտեսական դերի մեծացման միջոցներ կփնտրի: Եվ մենք պարտավոր ենք ուշադրություն հրավիրել այդ՝ իր էությանը մրցունակ մարտահրավերի վրա:

Չինաստանի եւ կայսերական Գերմանիայի միջեւ հաճախ անցկացվող զուգադրությունը ճիշտ չէ: Կայսերական Գերմանիան պատերազմ հրահրեց այն քաղաքականության հետեւանքով, որ նա վարում էր 1914թ. նախորդող տասնամյակների ընթացքում: Նա իր նավատորմի հզորացման շնորհիվ մարտահրավեր նետեց ծովերում Բրիտանիայի գերիշխանությանը եւ ամեն ինչ արեց Ֆրանսիային ու Ռուսաստանին նվաստացնելու համար: Արդյունքում՝ գերմանացիները գործնականում հարկադրեցին ֆրանսիացիներին ու ռուսներին դաշինք կնքել, որին հետագայում միացավ նաեւ Բրիտանիան:

Մոտ ապագայում Չինաստանը հազիվ թե դիմի ռազմական ուժի՝ որպես իր միջազգային քաղաքականության սկզբունքային տարրի: Եթե չինական տնտեսությունն այսպես հաջողությամբ զարգանում է, ես չեմ տեսնում խելամիտ պատճառ՝ սպասելու, թե Չինաստանը, գտնվելով բավականին հզոր եւ ռազմական մեծ ներուժով երկրների շրջապատում, ռազմատենչ մարտահրավեր կնետի Միացյալ Նահանգներին եւ իրեն ուժասպառ կանի սպառազինության մրցավազքում:

**Ջարգ:** Ի՞նչ պետք է անի ԱՄՆ-ը, որպեսզի ամրապնդի իր գլոբալ առաջատարությունը:

**Պատ.:** Ես կխլացնեի գերիշխանության հասնելու կոչերը: Ցանկացած կայուն միջազգային համակարգ մասամբ հենվում է ուժերի հաշվեկշռի եւ մասամբ էլ՝ նրանց միջեւ համաձայնության վրա: Չի կարելի ապավինել միայն հաշվեկշռին կամ միայն համաձայնությանը:

**Ջարգ:** Կա՞ վտանգ, որ Չինաստանն ու Ռուսաստանը կարող են գնալ մերձեցման, որպեսզի հակակշռեն ԱՄՆ-ին:

**Պատ.:** Եթե խորհենք զուտ ռազմական կատեգորիաներով, ապա հույժ դժվար է ստեղծել կոալիցիա, որը հակակշիռ հանդիսանա ԱՄՆ-ին: Ռուսաստանի մոտ կարող է Չինաստանի հետ մարտավարական մերձեցման գալթակցություն առաջանալ: Սակայն Չինաստանի հետ ցանկացած էական ռազմավարական մերձեցում կհանգեցնի ԱՄՆ-ից Ռուսաստանի օտարման եւ նրան կդնի կախվածության մեջ Չինաստանի աջակցությունից: Նման վիճակը հակառակ կգործի Ռուսաստանի իրական ռազմավարական շահերին նրա հեռավորարեւելյան սահմաններում՝ հաշվի առնելով տեղի բնակչության արդեն իրականություն դարձած կրճատվելն ու բացասական ժողովրդագրական միտումները:

Մենք չպետք է կենտրոնանանք այն դավերի վրա, որ կարող են մեր դեմ նյութել Ռուսաստանն ու Չինաստանը: Ամերիկյան քաղաքագետներն ավելի իմաստուն կվարվեն՝ ջանքերը սեւեռելով ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Չինաստանի հետ սերտ հարաբերությունների հաստատման վրա: Այսպիսի քաղաքականությունն ունի ամուր հիմք, քանզի այդ երկրների համար ԱՄՆ-ի հետ համագործակցությունը պայմանավորված կլինի առնվազն նույն-

պիսի (եթե ոչ մեծ) առավելություններով, բայց անհամեմատ փոքր ռիսկով, քան «բարեկամությունն ընդդեմ» ԱՄՆ-ի: Ուստի ես կարծում եմ, որ այս առնչությամբ մենք հաջողության բոլոր հնարավորություններն ունենք:

Ես չեմ տեսնում ոչ մի իմաստ այն շահարկումներում, թե մենք ինչ պետք է ձեռնարկենք, որպեսզի խոչընդոտենք Ռուսաստանի եւ Չինաստանի միջեւ առավել սերտ կապերի հաստատմանը. ունե՞նք մենք, արդյոք, դրա համար բավարար հնարավորություններ եւ ո՞վ կարող է դրանից օգուտ քաղել: Մենք պետք է նախեւառաջ մտահոգված լինենք նրանով, թե ինչպիսին են մեր երկկողմանի հարաբերություններն այդ երկրների հետ:

**Ջարգ:** Ինչպե՞ս եք Դուք գնահատում Յնդկաստանի նկատմամբ ԱՄՆ նոր մոտեցումը:

**Պատ.:** Դա կարելու ու դրական նախաձեռնություն է: Սակայն մենք պետք է հասկանանք, թե այն ինչի վրա է հիմնված: Մեր մերձեցման նպատակն ընդհանուր ազգային շահերի առաջնդման մեջ է, այլ ոչ թե ուժերը Չինաստանի դեմ համախմբելու: Այն չափով, որ Յնդկաստանը ներուժ է կուտակում, այն կարող է դառնալ էլ ավելի ծանրակշիռ գործոն միջազգային ուժերի հաշվեկշռում եւ օգտագործել իր հնարավորությունները ոչ թե ԱՄՆ-ին հաճոյանալու, այլ սեփական շահերը պաշտպանելու համար: Ուստի Յնդկաստանի եւ ԱՄՆ-ի մերձեցման ռազմավարական նպատակն ու փոխշահավետ համագործակցության իրականացման մարտավարական մեթոդները չպետք է ուղղված լինեն Չինաստանի դեմ: Մենք Յնդկաստանի հետ բազմաթիվ այլ ընդհանուր խնդիրներ ունենք, այդ թվում՝ նաեւ շատ կարելու:

Ես կարծում եմ, որ Յնդկաստանը կծգտի սերտ հարաբերություններ հաստատել Չինաստանի եւ Ռուսաստանի հետ: Մեր խնդիրն այն է, որպեսզի ամենատարբեր ոլորտներում մեզ հետ համագործակցության օգուտները միշտ գերակշռեն այդ երկրների համար այլ գալթակողություններին: Այդ՝ վերջնական արդյունքում էլ կայանում է արտաքին քաղաքականության իմաստը:

**Ջարգ:** Կիրառելի՞ է, արդյոք, նման մոտեցումն Իրանի հանդեպ:

**Պատ.:** Մոտ ժամանակներս մեզ հարկ է լինելու Իրանի վերաբերյալ կարելու որոշումներ ընդունել: Մենք որքանով ենք պատրաստ միջուկային զենքի տարածմանը խոչընդոտելու նպատակով ճնշում գործադրելու մեջ հեռուն գնալ եւ դրա համար ի՞նչ միջոցների ենք պատրաստ դիմելու: Մեզ չի հաջողվի Իրանի վրա ճնշման գործում դիվանագիտական հաջողությունների հասնել առանց ՅՆԿԿ-ի, Ռուսաստանի, Չինաստանի:

Նախեւառաջ, հարկավոր է համաձայնության հասնել իրանական ծրագրի բնույթի հարցում: Մենք ժամանակի որքան պաշար ունենք՝ մե՞կ, թե՞ տասը տարի: Այնուհետեւ, անհրաժեշտ է մի կողմից՝ ճնշման մեթոդների շուրջ համաձայնություն դիվանագիտական մակարդակում, եւ մյուս կողմից՝ գրավիչ առաջարկներ: Ռազմական գործողությունը վերջին միջոցն է: Եվ Բուշի վարչակազմը ճիշտ է վարվում՝ «պահեստավորելով» նման հնարավորությունը:

**Չարք:** Դուք միջազգային համակարգի ճարտարապետն եք եղել այն պատմական ժամանակահատվածում, երբ Միացյալ Նահանգներին վերջնական կործանում էր սպառնում: Սակայն գոյություն ուներ նաեւ այդ սպառնալիքը կանխելու մեխանիզմ: Արդյո՞ք արդի աշխարհն ավելի անվտանգ է, քան «սառը պատերազմի» ժամանակներում:

**Պատ.:** Ես կարծում եմ, որ այսօր չկա համաձայնություն այն բանի շուրջ, թե գոյություն ունի ինչ-որ մի գերակայող սպառնալիք:

Միջազգային համակարգն առավել անվտանգ է, բայց ավելի պակաս կազմակերպված, քան անցյալում էր: Այսօր քիչ են անմիջական վտանգները, սակայն կառուցվածքային պլանում իրավիճակն առավել սպառնալից է: Ասենք, ԱՄՆ-ի վրա միջուկային հարձակման վտանգն այսօր նվազ հավանական է, բայց սպառնալիքի աղբյուրներն անհամեմատ շատ են, քան քսան տարի առաջ էր:

**The National Interest**  
**russ. ru**

«Հանրապետական», 2006, ք. 8



## ՆՈՐ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

### *Ռիչարդ Չասս*

#### **Ամերիկյան դարաշրջանի վերջը**

Մերձավոր Արեւելքում ամերիկյան դարաշրջանն ավարտվեց: Խաղաղ, ծաղկող, ժողովրդավարական տարածաշրջանի մասին պատկերացումները չիրականացան:

Այս դարաշրջանի ավարտը պայմանավորվեց բազում գործոններով՝ ինչպես կառուցվածքային, այնպես էլ տարերային: Դրանցից ամենանշանակալիցը եղավ 2003թ. Բուշի վարչակազմի Իրաք ներխուժելու որոշումը: Իրաքը դարձավ այդ պատերազմի զոհը, որը ղեկավարվում էր առավելապես սոււննիների կողմից, ուներ բավականաչափ հզորություն ու շահագրգիռ էր, որպեսզի հավասարակշռի շիական Իրանին:

Սոււննիների ու շիաների միջեւ ժամանակավորապես մարած լարվածությունը կրկին սրվեց ինչպես Իրաքում, այնպես էլ ողջ տարածաշրջանում: Ահաբեկիչներն Իրաքում ձեռք բերեցին հենակայան եւ սկսեցին մշակել իրենց հետագա էքսպանսիայի ծրագրերը: Գրեթե ողջ տարածաշրջանում ժողովրդավարությունը սկսեց ասոցիացվել հասարակական կարգի խախտման ու սոււննիների գերիշխանության ավարտի հետ:

Առանց այդ էլ զգալի հակամերիկյան տրամադրություններն էլ ավելի սաստկացան: Տարածաշրջանում «կապված» է մնացել ամերիկյան զինուժի հսկայական մասը եւ, ընդհանուր առմամբ, այդ պատերազմը թուլացրել է ԱՄՆ ազդեցությունը ողջ աշխարհում: Սա պատմության հեզմանքներից մեկն է. անհրաժեշտությունից ծագած առաջին իրաքյան կամպանիան նշանավորեց Մերձավոր Արեւելքում ամերիկյան դարաշրջանի սկիզբը, իսկ «ընտրությամբ» սկսված երկրորդ պատերազմն Իրաքում արագացրեց այդ դարաշրջանի վախճանը:

Էական նշանակություն ունեն եւ այլ գործոններ: Դրանցից մեկը մերձավորարեւելյան խաղաղ գործընթացի ավարտն է: ԱՄՆ-ը ավանդաբար տիրապետել է եւ արաբների, եւ իսրայելցիների հետ աշխատելու բացառիկ կարողության: Բայց այդ

կարողության լիմիտները 2000թ. Քենսի Դեւիդուն սպառվեցին: Այդ պահից Յասիր Արաֆաթի հետնորդների թուլությունը, ՀԱՄԱՍ-ի հզորացումը եւ Իսրայելի խիստ միակողմանի քաղաքականությունը, ավելացրած Բուշի ներկայիս վարչակազմի՝ ակտիվ դիվանագիտություն վարելու անընդունակությունը, միասնորեն օժանդակեցին ԱՄՆ հնարավորությունների սահմանափակմանը:

Ամերիկյան դարաշրջանի վախճանին օժանդակող մյուս գործոնը եղավ ավանդական արաբական վարչակարգերի հրաժարումը արմատական իսլամի գրավչությամբ հակադրվելուց: Բախվելով օտար ընկալվող ու կոռումպացված քաղաքական գործիչների եւ վառ կրոնական առաջնորդների միջեւ ընտրության անհրաժեշտությամբ՝ տարածաշրջանում շատերը գերադասեցին վերջիններին: Հարկ եղան սեպտեմբերի 11-ի իրադարձությունները, որպեսզի ԱՄՆ առաջնորդները հայտնաբերեին փակ հասարակությունների եւ արմատականների առաջացման միջեւ կապը: Սակայն նրանց ռեակցիան (ներքաղաքական համատեքստը հաշվի չառնող, հաճախ հապճեպ որոշումների կայացման դրդող) ահաբեկիչներին զարգացման ավելի մեծ հնարավորություն ընձեռեց, քան նախկինում էր:

Վերջապես, գլոբալացումը փոխել է տարածաշրջանը: Այսօր արմատականներին հեշտ է ֆինանսավորում, զենք, գաղափարներ ու նոր զորակոչիկներ հայթայթել: Ջանգվածային տեղեկատվության նոր միջոցների եւ, նախեւառաջ, արբանյակային հեռուստատեսության զարգացումն արաբական աշխարհը վերածեց «տարածաշրջանային գյուղի» ու քաղաքականացրեց այն: Առավելապես հեռարձակվում են բռնությունների եւ ավերածությունների տեսարաններ Իրաքում, իրաքցի ու մահմեդական կալանավորների հետ անգութ վերաբերմունքի նկարներ, տառապանքի տեսարաններ Գազայի հատվածից, Հորդանան գետի արեւմտյան ափից, իսկ այժմ էլ՝ նաեւ Լիբանանից: Մերձավոր Արեւելքում այս ամենը շատերին էլ ավելի է հեռացնում ԱՄՆ-ից: Արդյունքում, այսօր մերձավորարեւելյան կառավարություններին դժվար է բացահայտորեն համագործակցել ԱՄՆ-ի հետ, եւ ԱՄՆ ազդեցությունը տարածաշրջանում թուլանում է:

## Ինչ է սպասվում

Մերձավոր Արեւելքի նոր դարաշրջանի ուրվագծերը դեռևս աղոտ են, սակայն բնականորեն բխում են ամերիկյան դարաշրջանի ավարտից: Ըստ այդմ՝

Առաջին. Միացյալ Նահանգները տարածաշրջանում դեռ կունենա մեծ ազդեցություն, քան ցանկացած այլ արտաքին ուժ, բայց այդ ազդեցությունը կթուլանա, ինչպես մի անգամ արդեն տեղի է ունեցել: Դա կհանգեցնի ամերիկյան քաղաքականության փոփոխման:

Երկրորդ. մյուս երկրների արտաքին քաղաքական ուղղությունները հաճախ են մարտահրավեր նետելու Միացյալ Նահանգներին:

Եվրոպական միությունն Իրաքին ոչ մեծ օգնություն է առաջարկելու եւ, հավանաբար, պաղեստինյան խնդրի նկատմամբ այլ մոտեցում է դրսևորելու: Չինաստանը դիմակայելու է Իրանի վրա ճնշմանը եւ ձգտելու է երաշխավորել էներգետիկ մատակարարումների մատչելիությունը:

Ռուսաստանը նույնպես ընդդիմանալու է Իրանի հանդեպ պատժամիջոցների կիրառմանը եւ փնտրելու է ԱՄՆ-ից իր անկախությունը ցուցադրելու հնարավորություններ: Ե՛վ Չինաստանը, ե՛ւ Ռուսաստանը, ինչպես նաեւ եվրոպական շատ պետություններ հեռու են մնալու Մերձավոր Արեւելքի ոչ ժողովրդավարական պետություններում քաղաքական բարեփոխումների անցկացման ԱՄՆ ջանքերից:

Երրորդ. Իրանը դառնալու է տարածաշրջանի երկու ամենահզոր պետություններից մեկը: Նա, ով կանխատեսել է, թե Իրանը կանգնած է դրամատիկ ներքին փոփոխությունների եզրին, սխալվել է: Իրանը տիրում է հսկայական հարստության, ունի Իրաքի վրա ամենամեծ արտաքին ազդեցությունն ու կառավարում է ե՛ւ ՅԱՄԱՍ-ին, ե՛ւ «Հիզբալլահին»: Այն դասական կայսերական ուժ է, որը մտադրված է վերածել տարածաշրջանն իր պատկերացումների համապատասխան՝ ունենալով դրան անհրաժեշտ ներուժ:

Չորրորդ. Իսրայելը դառնալու է տարածաշրջանի մյուս հզոր, ժամանակակից տնտեսությամբ պետությունը՝ ընդունակ գլոբալ

մրցակցության: Մերձավոր Արեւելքի միջուկային զինանոցով միակ պետությունը տիրում է նաեւ տարածաշրջանի ամենամարտունակ ռազմական ուժին: Սակայն այս պետությունը դեռ կրում է Արեւմտյան ափի օկուպացման ծախսերի լուծը եւ բախվում է սեփական անվտանգության բազմավեկտոր ու բազմապլան սպառնալիքներին:

Ռազմավարական տեսանկյունից՝ ներկայումս Իսրայելի դիրքերը թույլ են, քան մինչլիբանանյան ամառային ճգնաժամը: Եվ, ինչպես Միացյալ Նահանգների դեպքում, նրա վիճակն ավելի կվատթարանա, եթե Իրանը շարունակի միջուկային զենքի մշակումները:

Հինգերորդ. տեսանելի ապագայում որեւէ կենսունակ խաղաղ գործընթացի հավանականությունը փոքր է: Լիբանանում Իսրայելի գործողության վիճելի արդյունքներից հետո, կառավարությունը, «Քաղիմա» կուսակցության գլխավորությամբ, չափազանց թույլ կլինի, որպեսզի պահանջի ներպետական աջակցություն որեւէ քաղաքականության համար: Պաղեստինյան կողմում ակնհայտորեն չկա որեւէ մեկը, որը կարող է կամ ցանկանում է զնալ փոխզիջման, եւ այնտեղ շարունակում են արգելակել խնդրի խաղաղ լուծման հնարավորությունը: ԱՄՆ-ը համենայնդեպս այժմ կորցրել է հուսալի եւ արդար միջնորդի իր համբավի մեծ մասը: Միեւնույն ժամանակ, բնակավայրերի իսրայելական էքսպանսիան ու ճանապարհաշինությունը սրընթաց կերպով շարունակվում են՝ առավել բարդացնելով դիվանագիտական բանակցությունները:

Վեցերորդ. Իրաքը երկար տարիներ գտնվելու է քառսի մեջ՝ տառապելով կենտրոնական կառավարության թուլությունից, հասարակության տարանջատվածությունից եւ դավանական հողի վրա բռնության պարբերական պոռթկումներից: Վատագույն դեպքում, այն, որպես պետություն, չի կայանա՝ խորտակվելով համընդհանուր քաղաքացիական պատերազմի արդյունքում, ուր կներգրավվեն նաեւ նրա հարեւանները:

Յոթերորդ. նավթի նկատմամբ Չինաստանի ու Յնդկաստանի մեծ պահանջարկի, Միացյալ Նահանգներում դրա սպառումը նվազեցնելու սահմանափակ հաջողության պատճառով նավթի գները կմնան բարձր:

Նավթի մեկ բարելի գինը, թերեւս, գերազանցի 100 դոլարի նշագիծը, քան կիջնի մինչեւ 40 դոլար: Իրանը, Սաուդյան Արաբիան եւ մյուս խոշոր արտադրողներն անչափ կհարստանան:

Ութերորդ. շեշտակիորեն շարունակվում է «ռազմականացման» գործընթացը: Իրաքում, Լիբանանում եւ Պաղեստինում այժմ արդեն զորեղանում են մասնավոր ռազմական խմբավորումները: Զինված ջոկատները, հանդիսանալով պետության թուլության եւ արդյունք, եւ պատճառ, հայտնվում են ամենուրեք, որտեղ առկա է պետական իշխանության եւ իրավասության շոշափելի կամ փաստացի պակաս:

Լիբանանի վերջին պատերազմը կսաստկացնի այդ միտումները, քանզի «Յիզբալլահը», չկրելով տոտալ պարտություն, հաղթեց, մինչդեռ Իսրայելը, չհասնելով լիակատար հաղթանակի, պարտվեց. արդյունք, որը կարող է քաջալերել «Յիզբալլահին» ու նրանց, ովքեր նրան պաշտպանում են:

Իններորդ. ահաբեկչությունը մնալու է տարածաշրջանի առանձնահատկությունը: Այն կհանդիպի մեկուսի հասարակություններում, ինչպիսին Իրաքն է, հասարակություններում, որտեղ արմատական խմբերը ձգտում են թուլացնել եւ վարկաբեկել կառավարություններին, ինչպիսին Սաուդյան Արաբիան ու Եգիպտոսն են: Ահաբեկչությունը կընդլայնվի՝ մնալով որպես Իսրայելի ու տարածաշրջանում ԱՄՆ (եւ այլ արտաքին ուժերի) ներկայության դեմ օգտագործվող զենք:

Տասներորդ. իսլամը լրացնելու է արաբական աշխարհում առկա քաղաքական ու ինտելեկտուալ վակուումը եւ տարածաշրջանի բնակչության մեծ մասի համար ապահովելու է քաղաքական գործունեության հիմք: Արաբական ազգայնականությունն ու արաբական սոցիալիզմն անցյալի հասկացություններ են, իսկ ժողովրդավարությունը, լավագույն դեպքում, առնչվում է հեռավոր ապագային:

Արաբական միասնությունը կարգախոս է, այլ ոչ իրականություն: Իրանի եւ նրա հետ կապված խմբերի ազդեցությունն ամրանալու է, իսկ արաբական կառավարությունների եւ Իսրայելի ու ԱՄՆ-ի միջեւ կապերի ամրապնդմանն ուղղված ջանքերը դժվար

րանալու են: Ընդ որում, սուսնիների եւ շիաների միջեւ լարվածությունը կաճի ողջ Մերձավոր Արեւելքում՝ խնդիրներ առաջացնելով այն երկրներում, որտեղ հասարակությունը կրոնական հատկանիշներով տարանջատված է (Բահրեյն, Լիբանան եւ Սաուդյան Արաբիա):

Տասնմեկերորդ. արաբական վարչակարգերն, ամենայն հավանականությամբ, կմնան ավտորիտար եւ կլինեն հակաամերիկանիստ ու կրոնական տեսանկյունից առավել անհանդուրժողական: Առաջատարներ կմնան երկու պետություններ՝ Եգիպտոսը եւ Սաուդյան Արաբիան:

Եգիպտոսը, որի կազմում է ողջ արաբական աշխարհի բնաչության մեկ երրորդը, ներդրեց որոշ տնտեսական կառուցողական բարեփոխումներ:

Բայց նրա քաղաքական գործիչներն անկարող եղան շարունակել դրանք: Ընդհակառակը, այնտեղ կառավարող վարչակարգը երկրի սակավաթիվ ազատականներին ճնշելու եւ եգիպտացիներին ավանդական ավտորիտարիզմի ու մուսուլմանական եղբայրության միջեւ ընտրություն առաջարկելու վճռականություն է դրսևորում: Վտանգն այն է, որ մի գեղեցիկ օր եգիպտացիները կնախընտրեն վերջինը. ոչ այն պատճառով, թե դա իրոք իրենց ձեռնտու է, այլ որովհետեւ հոգնել են նախկին կյանքից: Որպես այլընտրանք, վարչակարգը կարող է օգտագործել իր իսլամական ընդդիմախոսների ընտրանուն՝ ինքը համալրելով նրանց կոչերը, ընդ որում, հեռավորություն պահելով ԱՄՆ-ից: Սաուդյան Արաբիայում կառավարությունն ու թագավորական վերնախավն էներգակիրների վաճառքից ստացված գերշահույթներն օգտագործում են փոփոխությունների ներքին կոչերը մեղմելու համար: Խնդիրն այն է, որ ճնշումների մեծ մասը, որին նրանք արձագանքում են, ելնում է ոչ թե ձախ ազատականներից, այլ աջ կրոնականներից, որոնք ստիպեցին նրանց օրակարգ մտցնել կրոնական իշխանության հարցը:

Վերջապես, տարածաշրջանային հաստատությունները կմնան չզարգացած՝ էապես հետ մնալով մյուս երկրներից: Մերձավոր Արեւելքի ամենահայտնի կազմակերպությունը՝ Արաբական պե-

տությունների լիզան, իր շարքերը չի թողնում տարածաշրջանային երկու ամենահզոր պետություններին՝ Իսրայելին եւ Իրանին: Արաբա-իսրայելյան տեւական հակամարտությունն այսուհետեւ էլ կխոչընդոտի ցանկացած տարածաշրջանային երկարատեւ հարաբերություններում Իսրայելի մասնակցությանը: Իրանի եւ արաբական պետությունների մեծ մասի միջեւ լարվածությունը եւս կխոչընդոտի տարածաշրջանային քաղաքականության ձեւավորմանը: Մերձավոր Արեւելքի ներսում առեւտուրը կմնա չափավոր, քանզի փոքրաթիվ երկրներ են առաջարկում ապրանքներ ու ծառայություններ, որոնք մեծ քանակով կցանկանային ձեռք բերել մյուսները, եւ ժամանակակից արդյունաբերական ապրանքները կստացվեն այլ երկրներից: Գլոբալ տնտեսական ինտեգրման առավելություններից քչերը «կհասնեն» աշխարհի այս հատվածը՝ չնայած դրանց նկատմամբ կենսական պահանջմունքին:

**Foreign Affairs, 2006, նոյեմբեր/դեկտեմբեր**

«Յանրապետական», 2006, ք. 10

## ՀԱՍԱՇԽԱՐՅԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ. ՀԱՅԱՑՔ ԱՊԱԳԱՅԻՆ

### Ա. Գոնչարենկո

Համաշխարհային էներգետիկայի ընթացիկ վիճակը որոշում են այնպիսի երկրներ ու տարածաշրջաններ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Մերձավոր Արեւելքը, Ռուսաստանը, Չինաստանն ու Եվրամիության անդամ պետությունները: ԱՄՆ-ը նավթի խոշորագույն սպառողն է (24,6%, որի կեսից ավելին ներմուծվում է), բնական գազի առաջատար ներկրողը (համաշխարհային ներմուծման 16%-ը):

Վերջին 40 տարիներին նավթի սպառումը Չինաստանում ավելացել է ավելի քան 25 անգամ եւ կազմում է համաշխարհային սպառման 8,55%-ը:

Արեւմտյան Եվրոպայի նավթի սպառման բաժինը կազմում է 22%, ընդ որում, Գերմանիան հանդիսանում է աշխարհում գազի երկրորդ ներկրողը (14%): ԵՄ տնտեսական գոտում զետեղված է գազի համաշխարհային ապացուցված պաշարների սոսկ 3,5%-ը եւ նավթի համաշխարհային ապացուցված պաշարների 2%-ից էլ պակաս մասը (հիմնականում Նորվեգիայում եւ Մեծ Բրիտանիայում): Միաժամանակ, նավթագազային հանքավայրերն այնտեղ անհամեմատ ինտենսիվ են շահագործվում, քան աշխարհի մյուս շրջաններում, ինչը հանգեցնում է պաշարների արագ սպառմանը: ԵՄ հիմնական խնդիրը էներգակիրների ներկրումից կախվածության աճն է. 2030թ. այն կկազմի 70%, մինչդեռ նավթի ներմուծումը կարող է ավելանալ 76-90%-ով, գազինը՝ 40-70%, ածխինը՝ 50-70%:

Ռուսաստանին է պատկանում բնական գազի համաշխարհային պաշարների 26,6%-ը, տարբեր գնահատումներով՝ նավթի հետազոտված պաշարների 6,2-13%-ը, քարածխի հետազոտված պաշարների շուրջ 20%-ը: Երկիրը բնական գազի խողովակաշարային առևտրի գծով աշխարհում գրավում է առաջին տեղը եւ որպես նավթ արտահանող՝ առաջնության դափնին կիսում է Սաուդյան Արաբիայի հետ:

Այսօր ռուսական արտահանվող էներգակիրների ավելի քան 90%-ը մատակարարվում է Եվրոպայի պետություններին:



Մերձավոր Արեւելքի երկրներում կենտրոնացած են նավթի համաշխարհային պաշարների 61%-ը եւ գազի համաշխարհային պաշարների 40,1%-ը: Մերձավորարեւելյան տարածաշրջանի երկրներից առանձնանում են Սաուդյան Արաբիան՝ նավթի համաշխարհային ապացուցված պաշարների 22%-ով, Իրանը՝ 11,5%-ով, Իրաքը՝ 9,6%-ով: Բացի այդ, Սաուդյան Արաբիայում կենտրոնացված է նավթի համաշխարհային արտադրության 13,5%-ը: Գազի ապացուցված համաշխարհային պաշարների 14,3%-ը պատկանում է Կատարին, 14,9%-ը՝ Իրանին:

Այս պայմաններում սկզբունքային նշանակություն է ձեռք բերում Չինաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ աշխարհաքաղաքական դիմակայությունը: 2030թ. ՉԺՀ-ն ներմուծվող նավթի ծավալներով կհավասարվի ԱՄՆ-ին: Ընդ որում, չինական ղեկավարությունը պարզորեն գիտակցում է, որ առանց էներգապաշարների հուսալի աղբյուրների ապահովման՝ անհնարին կլինի տնտեսության հետագա աճը: Հենց այդ պատճառով էլ էներգետիկ անվտանգությունը եւ նոր շուկաների փնտրումը համաշխարհային տնտեսության առաջատարներից մեկի՝ Չինաստանի համար կդառնա «գոյատեւման» խնդիր: Իր հերթին, Վաշինգտոնը շահագրգռված չէ ածխաջրածնային շուկայում չինական ներկայության ուժեղացմամբ եւ պատրաստ է օգտագործել քաղաքական ու տնտեսական առավելագույն լծակներ՝ այնտեղ թույլ չտալու չինական նավթագազային ընկերություններին:

### **Ջարգացման հիմնական ուղղությունները մոտակա տասնամյակում**

Մոտակա տասնամյակում նավթը մնալու է հիմնական էներգակիրը՝ ապահովելով էներգասպառման գրեթե 40%-ը: Նրան հետեւում է գազը՝ 28%, ածուխը՝ 20%, վերականգնվող աղբյուրները՝ 7% եւ միջուկային էներգիան՝ 5%: Բնական գազի ու նավթի մասնաբաժինները կավելանան, մինչդեռ ածխինը եւ միջուկային էներգիայինը կկրճատվեն: Հնարավոր է, որ տասնամյակի վերջին միջուկային էներգիայի սպառումը կայունանա եւ սկսի ընդարձակվել այլընտրանքային աղբյուրների կիրառման ոլորտը, սակայն դա առնվազն մոտակա 15-25 տարիների ընթացքում չի ազդի

բազային միտումների վրա: Ավելի հեռավոր ապագայում համաշխարհային էներգահաշվեկշռի կառուցվածքը, հավանաբար, կծգտի ձեւափոխության հիմնականում երկու սցենարով:

Առաջինը նախատեսում է նավթից աստիճանական անցում գազի, մոտավորապես այնպես, ինչպես նավթը դուրս մղեց ածխին: Այնուհետեւ սպասվում է տեղաշարժ դեպի վերականգնվող աղբյուրները եւ, ըստ երեւութին, դեպի ատոմային էներգիան: Ընդ որում, նավթը, ամեն դեպքում, մինչեւ 21-րդ դարի կեսերը պահպանելու է դիրքերը որպես էներգիայի կարեւոր աղբյուր:

Համաձայն երկրորդ սցենարի, եթե մոտակա տասնամյակում ջրածնային տեխնոլոգիաների բնագավառում ձեռք բերվի առաջընթաց, որը կնպաստի բենզինային շարժիչների արագ դուրսմղմանը, ապա նավթի գործածման կրճատումը կսկսվի անհամեմատ շուտ՝ մոտավորապես 2025թ.: Սակայն դա առայժմ քիչ հավանական է:

Չինաստանը, հավանաբար, բոլոր ուժերը կգործադրի, որպեսզի ընդլայնի սեփական ազդեցությունն ու տնտեսական ներկայությունը Մերձավոր Արեւելքում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում եւ Կենտրոնական Ասիայում: Կանխատեսելի են նրա «իրավիճակային» դաշինքները Չնդկաստանի եւ, հնարավոր է, Ռուսաստանի հետ՝ ընդարձակելու համար ներկայությունը համաշխարհային էներգետիկայում:

Աշխարհագրական էքսպանսիայի գծով՝ էներգետիկ շուկաներում Չինաստանի հիմնական մրցակիցը մնալու է ԱՄՆ-ը:

Լատինական Ամերիկայում արդյունահանման ավելացման գլխավոր աղբյուրը կլինի Բրազիլիայի խորջրյա շելֆը: Հավանաբար, այն կշահագործեն ամերիկյան կորպորացիաները, եւ բրազիլական նախագծերի հիման վրա արդյունահանվող ածխաջրածինները ԱՄՆ-ը կօգտագործի այն քաղաքականության շրջանակներում, որն ուղղված է մերձավորարեւելյան մատակարարներից կախվածության նվազմանը:

Միեւնույն ժամանակ, Վենեսուելա-Կուբա-Բոլիվիա միության ստեղծումը կարող է ներգրավել լատինաամերիկյան այլ երկրներ: Այդպիսով, նավթի բարձր գների պայմաններում ստեղծվում են նախադրյալներ, որպեսզի հարավամերիկյան նավթի հոսքերը

հյուսիսամերիկյան ուղղությունից վերակողմնորոշվեն դեպի ասիա-խաղաղօվկիանոսյան:

Միաժամանակ, Միացյալ Նահանգներ նավթի մատակարարման լրիվ դադարեցման վտանգի դեպքում՝ ԱՄՆ-ը Վենեսուելայում վարչակարգի փոխման ուղղությամբ կարող է դիմել առավել վճռական միջոցների:

Սպասվում է համաշխարհային էներգետիկայում Սեւ աշխարհամասի մասնաբաժնի զգալի ավելացում: Հյուսիսային եւ Արեւմտյան Աֆրիկայում (Նիգերիա, Ալժիր, Եգիպտոս, Լիբիա) գոյություն ունեցող արդյունահանման նախագծերից զատ, միջազգային էներգետիկ ընկերությունները եռանդուն կերպով ներդրումներ կկատարեն Արեւելյան ու Հարավարեւելյան Աֆրիկայի (Սուդան, Տանզանիա, Անգոլա) երկրաբանական հետախուզության եւ արդյունահանման մեջ:

Աֆրիկայում աճի տեմպերով առաջատար կլինի Անգոլան, որտեղ ողջ հզորությամբ աշխատում են վերջին տարիներին բացված խորջրյա հանքավայրերը:

Աֆրիկյան նավթագազային նախագծերում հիմնական մրցակիցները Միացյալ Նահանգներն ու Չինաստանն են: ԱՄՆ-ը առաջինը ձեռնամուխ եղավ այս ուղղությամբ աշխատանքներին, սակայն ՉԺՀ-ն գերազանցող տեմպերով ընդարձակում է իր ներկայությունն Աֆրիկայում: Ամենայն հավանականությամբ, Վաշինգտոնը կջանա օգտագործել սեփական քաղաքական ազդեցությունն աֆրիկյան պետությունների մեծ մասում՝ նպատակ ունենալով սահմանափակել չինական ընկերությունների մուտքը աֆրիկյան վառելիքաէներգետիկ համալիր (ՎԷՀ):

Կասպիայում նավթի արդյունահանումը կաճի: Մինչեւ 2015թ. ժամանակահատվածում այստեղ առաջնության դափնին կպահպանի Ադրբեջանն՝ իր Ազերի-Չիրահ-Գյունեշլի նավթային հորանցքներով եւ Շահ-Դենիզ գազային հանքավայրերով: 2015 թվականից նավթի բազային աղբյուրը կդառնա դազախական Քաշահանը: Ինչ վերաբերում է գազի պաշարներին, ապա 2017թ. նրա հիմնական մատակարարները կմնան Թուրքմենստանը եւ Ղազախստանը, մինչդեռ Ադրբեջանի բաժինը կնվազի:

Կասպյան տարածաշրջանում, ընդհանուր առմամբ, աշխարհաքաղաքական իրավիճակը դասավորվում է Արեւմուտքի օգտին:

Արդեն գործում է Բաքու–Թբիլիսի–Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղը՝ շրջանցելով Ռուսաստանը եւ թուրքական նեղուցները, 2007թ. կշահագործվի Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազամուղը: Ամենայն հավանականությամբ, մինչեւ 2015թ. կկառուցվի գազամուղ Թուրքիայից (հեռանկարում՝ գազի մատակարարումներ Իրանից, Ղազախստանից եւ Թուրքմենստանից) դեպի Եվրոպա («Նաբուկո» նախագիծ): Այդ կապակցությամբ կարելի է սպասել ԱՄՆ-ի ու ԵՄ-ի կողմից Թուրքմենստանի վրա ճնշման մեծացում՝ նպատակ ունենալով գազային հոսքերն ուղղել դեպի ծրագրվող գազամուղ: Միաժամանակ, Ղազախստանը եւ Թուրքմենստանը կիրագործեն Չինաստան նավթի ու գազի մատակարարման խողովակաշարային նախագծերը: Կասպիայի վրա Ռուսաստանի ազդեցությունը կլինի նվազագույն:

Թերեւս, նրա դիրքերը՝ որպէս կասպյան նավթի ոչ մեծ ծավալները խողովակաշարով տարանցող երկիր, կպահպանվեն ներկայիս մակարդակում: ԲԹՋ լրիվ հզորությամբ գործարկման դեպքում Բաքու–Նովոռոսիյսկ խողովակաշարով նավթի մատակարարումները, հավանաբար, կսառեցվեն:

Մեծ Մերձավոր Արեւելքն, ընդհանուր առմամբ, մնալու է ԱՄՆ ռազմավարական հսկողության տակ: Էներգետիկ անվտանգության տեսանկյունից, մինչեւ 2017թ. ժամանակահատվածում պաշարների հիմնական աղբյուրը նախկինի պէս լինելու է Սաուդյան Արաբիան, որը 2010թ. շահագործելու է նոր արդյունահանող հզորություններ: Այդ իսկ պատճառով նավթի համաշխարհային շուկայում սաուդցիների մասնաբաժինը կպահպանվի, թեւէ Միացյալ Նահանգները, Չինաստանը, ԵՄ-ը եւ ճապոնիան զգալի ջանքեր կգործադրեն մերձավորարեւելյան նավթից կախվածությունը նվազեցնելու համար: Ընդհանրապէս, տարածաշրջանի երկրների մեծ մասը կշարունակի խուսանավելու քաղաքականությունը գլխավոր սպառողների՝ ԱՄՆ-ի եւ ՉԺՀ-ի միջեւ:

Եթէ ընդլայնված Մերձավոր Արեւելքում պահպանվի ռազմաքաղաքական անկայունությունը, հազիվ թէ հնարավոր լինի մինչեւ 2015թ. ժամանակահատվածում որեւէ հեղափոխական ճեղքում սպասել իրաքյան նավթի եւ իրանական գազի մատակարարումներում: Բացառված չէ, որ մոտակա 10 տարիներին Վաշինգտոնը փորձեր կձեռնարկի՝ իր համար նվազագույն ֆինանսական

ու վարկանիշային կորուստներով հսկողություն սահմանել նավթի եւ գազի մատակարարումների տեսանկյունից առավել կարելոր տարածաշրջանների վրա: Իրաքի նկատմամբ արդեն գործի է դրվել երկիրը երեք հատվածի մասնատելու գործընթացը, որի արդյունքում նավթով առավել հարուստ հյուսիսը, ինչպես հույս ունեն ԱՄՆ-ում, կանցնի ամերիկա-քրդական ղեկավարությանը:

Մոտակա տասնամյակում Մեծ Մերձավոր Արեւելքն ԱՄՆ-ի համար, ըստ էության, կմնա որպես ածխաջրածինների՝ ավելի տեսական հեռանկարի «պահուստային» աղբյուր, մինչդեռ ակտիվորեն կգարգանան նավթի հանույթի լատինաամերիկյան, աֆրիկյան, կանադական եւ կասպյան ուղղությունները:

Իրանի ինչպես քաղաքական, այնպես էլ էներգետիկ դերը միջազգային ասպարեզում կաճի: Թեհրանը կշարունակի էներգակիրների արտահանման աշխարհագրությունն ընդարձակելու փորձերը: Նրա գազային ռազմավարության տարածաշրջանային ուղղություններից կարելի է առանձնացնել արեւմտյանը (Թուրքիա, Եվրոպական շուկաներ), հյուսիսայինը (Հարավային Կովկաս եւ Կենտրոնական Ասա) եւ արեւելյանը (Պակիստան, Հնդկաստան, Չինաստան, Հարավարեւելյան Ասիայի երկրներ): Իրանի գազային քաղաքականության «արեւմտյան վեկտորի» հեռանկարները (Իրան-Թուրքիա գազամուղ՝ Եվրոպական շուկաներ դուրս գալու հեռանկարով) կհայտնվեն քաղաքական մեծ ռիսկերի գոտում: Այնուամենայնիվ, Իրանն իր պաշարներով Ռուսաստանից ԵՄ էներգետիկ անկախության հիմնական բանալին է:

Այս տեսակետից, Միացյալ Նահանգները շահագրգռված է «իրանական խնդրի» շուտափույթ հանման եւ իրանական էներգետիկ կարողությունը սեփական աշխարհաքաղաքական խնդիրների լուծման համար օգտագործելու մեջ: Խոսքն, առաջին հերթին, Ռուսաստանից ԵՄ էներգետիկ կախվածության նվազեցման մասին է: Այնուամենայնիվ, Եվրոպական շուկաներ իրանական ածխաջրածինների փոխադրման ոլորտում խոշոր նախաձեռնությունները, փաստորեն, կարող են կենսագործվել միայն իրանական միջուկային խնդրի լուծումից հետո:

Այնքան ժամանակ, քանի դեռ այդ խնդիրը չի հանվել, Իրանը կշարունակի նախելառաջ կողմնորոշվել դեպի Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների իրացման շուկա:

Մոտակա տասնամյակում անշեղորեն կաճի զարգացած սպառող երկրների ուշադրությունն այլընտրանքային եւ վերականգնվող էներգակիրների նկատմամբ: Ներկայումս այն էներգետիկայի առավել հարածուն հատվածներից է: Համընդհանուր հետաքրքրություն կառաջանա քանու էներգիայի, հիդրոէներգետիկայի, ինչպես նաեւ էթանոլի նկատմամբ, որի խոշորագույն արտադրողը Բրազիլիան է: Երեւան կգան լուրջ նախագծեր՝ կապված կենսավառելիքի օգտագործման հետ: Էներգետիկայի այլընտրանքային տեսակների մշակման մեջ հիմնական ներդրումները սպասվում են ԱՄՆ-ի, ճապոնիայի, Չինաստանի, ինչպես նաեւ համաշխարհային առաջատար նավթային կոնցեռնների՝ «British Petroleum»-ի, «ExxonMobil»-ի, «Royal Dutch/Shell»-ի եւ մյուսների կողմից: Նոր տեխնոլոգիաները կապահովեն էներգասպառման արդյունավետության մեծացումը, սակայն այլընտրանքային աղբյուրների մասնաբաժինն էներգիայի ընդհանուր հաշվեկշռում կաճի սոսկ չնչին չափով:

Որպեսզի էներգիայի վերականգնվող աղբյուրները ծածկեն էլեկտրաէներգիայի պահանջվող աճի թեկուզեւ կեսը, հարկ կլինի նրանց հզորություններն ավելացնել 63 անգամ: Նման ծրագրի իրականացումը 10 տարվա ընթացքում հնարավոր չի թվում: Նշված ժամկետում (մինչեւ 2017թ.) նույնպես գործնականում անիրական է մոբիլիզացնել «այլընտրանքային» նավթի (գերծանր նավթ, թերթաքարեր եւ այլն) արտադրությունը կամ յուրացնել դժվարամատչելի շրջաններում գտնվող հանքաշերտերն ու հանքավայրերը:

Բնական հեղուկ գազի (ԲՀԳ) շուկան դառնում է գլոբալ: Հեղուկ գազի պահանջարկի հիմնական աճը սպասվում է Միացյալ Նահանգների եւ Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների կողմից: ԱՄՆ-ը, արդեն իսկ հանդիսանալով բնական գազի խոշորագույն ներկրող, մինչեւ 2017թ. կավելացնի ԲՀԳ ներմուծումը, որին են ուղղված 55 նոր ընդունող տերմինալների նախագծերը՝ ներառյալ ԲՀԳ վերագազաֆիկացման գործարանները: Ամենայն հավանականությամբ, ընդհուպ մինչեւ 2020թ., ճապոնիան մնալու է առաջատար ԲՀԳ շուկայում, որից հետո հեղուկ գազի սպառման գծով առաջին տեղ է դուրս գալու Միացյալ Նահանգները: Այսպես թե այնպես, գազի հիմնական

ծավալը, նախկինի պես, սպառողներին հասցվելու է խողովակաշարային տրանսպորտով:

Միջուկային էներգիայի բաժինը կրճատվելու է մինչև 5,3%, ինչը պայմանավորված է էներգետիկ համակարգի անվտանգության եւ էկոլոգիական հուսալիության բարձրացման ուղղությամբ զարգացած երկրների քաղաքականությամբ: Աշխարհում միջուկային էներգիայի օգտագործման նվազեցումը տեղի է ունենալու Եվրոպայում նրա արտադրության կրճատման (տարեկան 1,1%) եւ Յուսիսային Ամերիկայում սպառման կայունացման հաշվին: ԱԷԿ-ների հետեւողական վերացումը Եվրոպայում (բացի Ֆրանսիայից) փոխարինվելու է Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներում (Չինաստան, Հնդկաստան, Պակիստան, Հարավային Կորեա եւ այլն), ինչպես նաեւ Ռուսաստանում, Իրանում եւ Բրազիլիայում նրանց գործարկմամբ:

Ատոմային էներգիայի սպառումը Յուսիսային Ամերիկայում, ճապոնիայում ու Ֆրանսիայում մոտակա տարիներին փոքր-ինչ կավելանա, որից հետո տեղի կունենա նրա կայունացում:

Միջնաժամկետ հեռանկարում համաշխարհային գների էական անկման վտանգը խիստ լուրջ է: Դրան են նպաստում նավթի եւ գազի պակասի բացակայությունը, ինչպես նաեւ ապագայում վառելիքի ավանդական տեսակների հանդեպ զարգացած երկրների հետաքրքրության կտրուկ նվազումը, Կասպիայում, Աֆրիկայում եւ աշխարհի մյուս տարածաշրջաններում նոր հզորությունների երեւան գալը, տոկոսային դրույքների բարձրացման ուղղությամբ սպառող երկրների՝ առաջին հերթին, ԱՄՆ նպատակաուղղված քաղաքականությունը: Արդյունքում՝ ներդրողների զգալի մասը հեռանում է հումքային շուկայից, ինչը սահմանափակում է ածխաջրածինների գների սպեկուլյատիվ աճի հնարավորությունները:

Մոտակա ժամանակներում ածխաջրածնային շուկայի գնային իրավիճակի ձեւավորման հիմնական գործոնը կլինի Իրանի շուրջ քաղաքական կացության զարգացումը:

Առավել իրական է համարվում Վաշինգտոնի ու Թեհրանի հետագա դիմակայության սցենարը, որը, սակայն, չի հանգեցնելու ռազմական բախման: Տվյալ պայմաններում համաշխարհային էներգետիկ շուկայում երկու-երեք տարի պահպանվելու է նավթի գների անկման միտումը, եւ այն կհասնի մինչև մեկ բարելի

համար 40-50 դոլարի մակարդակին՝ 5-10 դոլար տատանումներով:

Ռազմական սցենարի իրականացման դեպքում նավթի մեկ բարելի գինը կգերազանի 100 դոլարը: Հետագայում, եթե հակամարտությունն ընդունի տեսական բնույթ, նավթի գինը կբարձրանա մինչև 130-150 դոլար մեկ բարելի համար, ինչը կստիպի Վաշինգտոնին ճնշում գործադրել OPEC երկրների վրա՝ նպատակ ունենալով ապահովել ածխաջրածնային պաշարների լրացուցիչ ծավալներ էներգետիկ շուկայում: Միաժամանակ, այս սցենարը զգալիորեն կուժեղացնի մրցակցությունը OPEC-ից դուրս գոտիներում ածխաջրածինների հանույթի համար:

Եվ եթե ռազմական դիմակայությունը զարգանա «իրաքյան» սցենարով, սպասվում է էներգետիկ շուկայի աստիճանական վերափոխում, որը կարող է ձգվել մինչև 2015–2017 թվականները:

**«Россия в глобальной политике»**, 2006, թ. 6

**«Հանրապետական»**, 2007, թ. 1



**«ՊԱՅՊԱՆԵԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ  
ՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»**

***Ժակ Դելոր***

*Ժամանակակից Եվրոպայի ժողովուրդների միավորման գործում հիրավի բացառիկ դեր խաղացած մարդկանցից մեկն է ֆրանսիացի ֆինանսիստ եւ քաղաքական գործիչ **Ժակ Դելորը**: Նրա՝ Եվրահանձնաժողովի նախագահ եղած ժամանակ (1985-1995) Եվրոպական ընկերակցությունը վերափոխվեց Եվրոպական միության, առաջացավ միասնական ներքին շուկա, դրվեցին համաեվրոպական արժույթի ապագա ներդրման հիմքերը եւ ձեւակերպվեցին ԵՄ ընդարձակման չափորոշիչները: Վերջին շրջանում միասնական Եվրոպայի ռահվիրան քննադատորեն է արտահայտվում այն մասին, թե ինչ է կատարվում ԵՄ-ում:*

**Հարց:** Շատերը գտնում են, որ մինչ նոր անդամ երկրների միացումը, ԵՄ-ին հարկավոր է ընդարձակման ճանապարհին արգելակել ու «շունչ քաշել»: Համաձայն եք Դուք այս կարծիքին:

**Պատ.:** Եվրոպայի ընդարձակումն ինքնին խնդիր չի առաջացնում: Բարդությունները ծագում են որոշ կարելու հարցերին պատասխանել փորձելիս: Հատկապես ի՞նչ կարող ենք անել մենք միացյալ Եվրոպայում: Ի՞նչ կերպ պետք է փոխգործակցեն 15 կամ 30 անդամները, որպեսզի խուսափեն Եվրոպական ինստիտուցիաների բյուրոկրատացումից եւ իրավաբանական կողմերի վրա նրանց չափազանց կենտրոնացումից: Որպեսզի պատասխանները ստանանք, հարկավոր է միացյալ Եվրոպայի նպատակների մասին հստակ, բոլոր անդամ երկրների կողմից ընդունվող պատկերացում ունենալ:

Վերջին տարիներին Եվրոպական երկրների միջեւ այլեւս զինված դիմակայություն թույլ չտալու գաղափարը խորապես ոգեւորեց երիտասարդներին. բազմաթիվ պատանիներ ու աղջիկներ եռանդուն կերպով սատարեցին քաղաքական գործիչների ջանքերին՝ այն կյանքի կոչելու համար: Այսօր մենք ունենք այն Եվրոպան, որին նրանք հավատացել են: Արդարացրե՞լ է նա

նրանց հույսերը: Ես գտնում եմ, որ այո: Ներկայիս եվրոպական կառուցվածքին հարկ եղավ երեք փորձություն վերապրել, որոնցում նա իրեն լիովին կենսունակ դրսևորեց:

Առաջինը՝ 1970-ականների սկզբին, երբ միասնական Եվրոպային միավորվեց Մեծ Բրիտանիան: Չնայած շատ հարցերում Լոնդոնի հատուկ դիրքորոշմանը եւ ԱՄՆ-ի հետ նրա սերտ կապին, մենք, ընդհանուր առմամբ, Միացյալ Թագավորության ինտեգրման ոչ դյուրին խնդիրը հաղթահարեցինք:

Երկրորդ. հարկավոր է հիշեցնել այն պահը, երբ երեք եվրոպական երկրներ՝ Յունաստանը, Պորտուգալիան եւ Իսպանիան, որոնք դիկտատուրա էին ապրել, վերադարձան ժողովրդավարական կառավարման եւ անգամ դարձան միասնական Եվրոպայի մաս: Հենց ինձ վիճակվեց ավարտել Իսպանիայի ու Պորտուգալիայի ընդունման բանակցային գործընթացը: Մենք պե՞տք է նրանց մերժեինք միայն այն բանի համար, որ նրանց ինտեգրումը բարդ գործ էր եւ կարող էր մեզ համար ներքին խնդիրներ առաջացնել: Չնայած ամեն ինչին, մենք այդ երկրներին օգնության ձեռք մեկնեցինք, եւ տեսեք՝ ինչպիսի նշանակալից հաջողությունների են նրանք այսօր հասել:

Երրորդ. խորտակվեց Բեռլինյան պատը, իսկ նրա հետ միասին փլուզվեց կոմունիստական համակարգը Արեւելյան Եվրոպայի երկրներում: Մի՞թե նրանց պիտի ասվեր, որ քանզի իրենց տնտեսությունը չափազանց թույլ է, իսկ հոգեմտածելակերպն անչափ տարբերվում է մերից, անհրաժեշտ է 20 տարի սպասել: Մենք համարեցինք, որ նման վերաբերմունքը կհակասեր եվրոպական արժեքներին, եւ ուստի նրանց ընդունեցինք մեր միության մեջ: Կարծում եմ՝ հարկավոր էր առավել հիմնավոր մոտենալ նրանց ընդունման կազմակերպմանը, սակայն, ամեն դեպքում, այն անհրաժեշտ էր:

**Հարց:** Դուք խոսեցիք նպատակների որոշման անհրաժեշտության մասին: Իսկ Դուք պատկերացնո՞ւմ եք, թե այսօր ինչ նպատակներ կարող է ունենալ Եվրոպան:

**Պատ.:** Անձամբ ես տեսնում եմ երեք գլոբալ նպատակ: Առաջինն այն է, որպեսզի ամեն կերպ պահպանվեն խաղաղությունն ու համաձայնությունը ժողովուրդների միջեւ: Երկրորդը՝

անել ամեն հնարավորը եվրոպական փոխադարձ համերաշխության զարգացման համար, ինչը պետք է օգնի հավասարեցնել երկրների ու տարածաշրջանների զարգացման մակարդակները: Եվ երրորդը՝ եվրոպական ժողովուրդների մշակութային տարբերությունների պահպանումն է:

**Ջարգ:** Տարբերությունների պահպանում: Մի՞թե ինտեգրման նպատակը հակառակը չէ:

**Պատ.:** Ինձ համար միավորված եվրոպան տարբերությունների միասնությունն է: Յուրաքանչյուր լեզու այս կամ այն ազգի ոգու արտացոլումն է: Ստնելով միասնական եվրոպայի մեջ՝ ժողովուրդները դեն չեն նետում իրենց սեփական պատմությունը: Այս սկզբունքային պայմանը եվրոպայի իսկական մեծությունն է:

Եթե սահմանափակ թվով ԵՄ անդամ երկրներ ցանկանում են ընթանալ ինտեգրման ուղով՝ զարգացնելով տնտեսական կամ մոնետար (դրամական) կապերը, ստեղծելով համատեղ տեխնոլոգիական գոտիներ կամ միասին գործելով արտաքին քաղաքականության կամ պաշտպանության ոլորտներում, նրանք, անշուշտ, դա կարող են անել: Երկրների քանակն այստեղ դեր չի խաղում: Մյուսները, եթե ցանկանան, հետագայում կարող են միանալ նրանց:

Սակայն պետք է տարբերել երկու հանգամանք: Ինչում ես իրոք կշտամբում եմ քաղաքական գործիչների եւ ղեկավարների ներկայիս սերնդին՝ այն է, որ նրանք շփոթում են երկու հասկացություն. միացյալ եվրոպան՝ որպես այդպիսին եւ տարբեր հավաքական գործողությունները: Նման խառնումն էլ ավելի սխալ է, եթե խոսենք եվրոպական առաջապահ երկրների միասնական գործողությունների մասին: Խզումը շարժման ու արագության միջեւ միշտ գոյություն ունի եւ, անշուշտ, չի կարող չդրսեւորվել տարբեր հավաքական գործողություններում:

Ասենք, պե՞տք էր, արդյոք, սպասել 15 պետությունների՝ այն ժամանակվա ԵՄ անդամների համաձայնությանը, որպեսզի շրջանառության մեջ դրվեր եվրոն: Այն ժամանակ, ինչպես նաեւ այժմ, միայն 12 երկիր էին համաձայն միասնական արժույթին: Ի՞նչ է, մեզ հարկավոր էր սպասել, մինչ մնացած երե՞քն էլ վերջապես համաձայնեին: Այս դեպքում միասնական արժույթը կարող էր ընդ-

հանրապես չհայտնվել: Անհրաժեշտ է հաշտվել այն իրողությանը, որ որոշ պետություններ իրականացնում են ինչ-որ համատեղ գործողություններ, իսկ մյուսները դրանց չեն մասնակցում:

Ցավոք, ինձ այդպես էլ չհաջողվեց համոզել իմ ընդդիմախոսներին, որ Եվրոպային իրապես միավորում են միայն իմ կողմից թվարկված երեք նպատակները: Չնարավոր է՝ դրանք քաղաքական տեսանկյունից այնքան էլ գայթակղիչ չեն երեւում: Քո առջեւ դնել սոսկ երեք նպատակ՝ դա թեւ պարզ, սակայն իրագործելի մոտեցում է:

**Չարք:** Կարծում եմ՝ Դուք չեք զարմանա, եթե հաջորդի թուրքիայի, Ուկրաինայի եւ, որոշակի վերապահումներով, Ռուսաստանի վերաբերյալ հարցը: Ինչպե՞ս վարվել նրանց հետ:

**Պատ.:** Թեպետ ես չեմ էլ ուրվագծում միացյալ Եվրոպայի վերջնական սահմանները, երեք դեպք առանձնակի են: Դրանք Չարավսլավիայի նախկին հանրապետություններն են, Ռուսաստանը եւ Թուրքիան: Ուկրաինան ու Բելառուսը առայժմ թողնենք մի կողմ: Նախկին Չարավսլավիայի տարածքում կազմված պետությունները պետք է տեղ գտնեն միավորված Եվրոպայում: Դա միակն է, որ կարող է հակազդել նրանց միջեւ էքնիկ հակամարտություններին: Խոսքն այն մասին չէ, որպեսզի նրանց բնակիչներին ստիպեն ամեն ինչ մոռանալ, այլ այն, որ դադարեցվեն կոնֆլիկտներն ու երկրորդ պլան մղվեն նախկինում այդ երկրները բաժանող փոխադարձ պահանջները: Այն թույլ կտա հետագայում խուսափել այնպիսի դրամաներից, ինչպես, օրինակ, Կոսովոյում էր:

Եթե խոսենք Ռուսաստանի մասին, ապա ռուսները շատ մեծ ազգ են, որոնք, ըստ էության, դրանով էլ հպարտանում են. չափազանց մեծ, որպեսզի ինտեգրվել նրա հետ այնպես, ինչպես Լեհաստանի կամ Չեխիայի: Ռուսաստանի հետ պետք է ստորագրել գործընկերության մասին համաձայնագիր՝ նախապես հստակեցնելով այն հարցը, թե որքանով ենք մենք միասնական գոյատեւման նպատակներին ու համագործակցության ձեւերին վերաբերող կարծիքներում: Բայց դա հասարակ գործընթաց չէ, ընդ որում՝ հավասարապես դժվար երկու կողմերի համար:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այստեղ դեպքը խորհրդանշական է: Հասարակությունների եւ, մասնավորապես, եվրոպական ընկերակցության կայացման գործում խորհրդանիշները ոչ պակաս դեր են խաղում: Թուրքիան մուսուլմանական երկիր է, իսկ իսլամիստական ծայրահեղականության աճը սպառնում է ողջ աշխարհին: Առավել եւս, ի հայտ են գալիս իսլամական մոլեռանդներ, որոնք ժխտում են մեր գոյության իրավունքը սոսկ նրա համար, որ մենք, ինչպես համարում են նրանք, տարբերվում ենք իրենցից: Սույն միտումները կարող են հեշտությամբ հանգեցնել տեղային կրոնական պատերազմների, եթե չասենք՝ քաղաքակրթությունների պատերազմի: Այս գունապատկերի վրա ես ասում եմ «այո» Թուրքիայի հետ բանակցություններին, որպեսզի ցուցադրել, որ եվրոպան «կաթոլիկ գետտո», «կաթոլիկ կայսրություն» չէ, որպեսզի ընդգծել, որ չնայած իսլամական արմատականությանը, մենք ձեռք ենք մեկնում մյուսներին, փորձում ենք հասկանալ մեկս մյուսին: Բայց, բնականաբար, ես չեմ կարող ասել՝ հաջողությամբ կպսակվե՞ն, արդյոք, այս բանակցությունները:

Վկայակոչելով իմ կողմից նշված փաստերը՝ որոշ եվրոպական քաղաքական գործիչներ կտրականապես հանդես են գալիս ԵՄ Թուրքիայի մտնելուն դեմ: Կարծում եմ՝ նրանք ճիշտ չեն: Մենք պետք է հանդես գանք մարդկանց ընկերակցությամբ, որոնք, չլինելով ոչ պարզամիտ, ոչ դյուրահավատ, այնուամենայնիվ, ցանկանում են երկխոսություն վարել մյուսների հետ՝ նրանց, ովքեր հրաժարվում են իրենց հայացքների նեղությունից եւ սահմանափակությունից՝ պատմության աղբանոցը նետելով հատվածականությունը:

**Հարց:** Եթե վերանաք Ձեր քաղաքական հայացքներից, մի՞թե Ձեզ՝ որպես հավատացյալ մարդու, հասարակ եվրոպացու՝ կրթված կաթոլիկ ընտանիքում, չի զգաստացնում իսլամիզմի ներկայիս վերելքը եվրոպայում:

**Պատ.:** Մենք կարողացանք յուրաքանչյուր եվրոպական պետության ներսում «մարսել» մուսուլմանների հետ գոյակցությունը: Ապրելով կողք կողքի մարդկանց հետ, որոնք այլ հավատք ունեն եւ հաճախ՝ կյանքի այլ փիլիսոփայություն՝ մենք ջանում ենք հետեւել փոխադարձ հարգանքի ու ամեն երկրի օրենքների պահ-

պանման սկզբունքին: Դա, անշուշտ, այնքան էլ հեշտ չէ: Դժվարությունները, սակայն, բավարար փաստարկ չեն, որպեսզի միայն մեր փոխադարձ տարբերության պատճառով վերջնականորեն «ոչ» ասենք Թուրքիային: Գոյակցությունը դրսեւորվում է տարբեր ձևերում, եւ դրանք կարգավորող օրենքները տարբեր երկրներում ամենեւին էլ միանման չեն: Այն կապված է ամբողջ շարք խնդիրների հետ, որոնցից շատերը դեռ հեռու են լուծումից: Այնուամենայնիվ, չի կարելի ժխտմանը ժխտմամբ, ատելությանն ատելությամբ, ուժին ուժով պատասխանել: Եթե մենք մտնենք այդ արատավոր շրջանը, ապա այլեւս չենք կարող միասին ապրել: Եթե մենք ի վիճակի չլինենք եվրոպական ընկերակցության ներսում պահպանել խաղաղությունն այլահավատների հետ, ապա ինչպե՞ս անել մնացած ողջ աշխարհում: Մյուս երկրներին մենք ի՞նչ օրինակ կծառայենք:

**Ջարգ:** Քաղաքական գործիչները չեն սիրում մեզ սպասվող ապագայի մասին հարցերը: Բայց քանզի Դուք ինքներդ հիշատակեցիք, թե տարբեր երկրներ կարող են ունենալ ապագայի մասին տարբեր պատկերացումներ, ապա ցանկություն է առաջանում իմանալ այդ մասին նաեւ Ձեր սեփական կարծիքը:

**Պատ.:** Նախեւառաջ կցանկանայի շեշտել, որ չեն հավատում գալիք աղետներին, որոնք կհանգեցնեն աշխարհի վախճանի: Անշուշտ, գլոբալացումն իր հետ բերում է ոչ քիչ խնդիրներ: Մենք պետք է ձգտենք առավել արդյունավետ կերպով կարգավորել գլոբալացման գործընթացները, ինչը, ընդհանուր առմամբ, մշանակում է լավագույն համաշխարհային կառավարում: Օրինակ, անհրաժեշտ է այնպիսի երկրների, ինչպիսիք են Չինաստանը, Յնդկաստանը, Բրազիլիան, որոնց տնտեսությունը զարգանում է արտակարգ արագ տեմպերով, պարտավորեցնել հարգել ու պահպանել շրջակա միջավայրի պահպանման թեկուզ նվազագույն կանոնները: Բացի այդ, նրանց հարկ է իրենց մոտ մտցնել որոշակի սոցիալական նորմեր, այլ ոչ թե կողմնորոշվել լոկ առեւտրային շահ ստանալուն:

Անտարակույս, աշխարհը շարժվում է մեծ փոխկախվածության եւ սոցիալական ու բնական գործոնների նկատմամբ առավել ուշադիր վերաբերմունքի ուղղությամբ, թեւ չի կարելի խուսափել

գլխավոր ուղուց շեղումներից: Որպեսզի տնտեսական զարգացումը չկործանի մեր «ալեւոր» երկիր մոլորակը, միայն եվրոպացիների ճիգերը բավարար չեն: Անհրաժեշտ է, որ նույն Չինաստանը եւ նաեւ Ռուսաստանն այս սպառնալիքին դիմակայելու նպատակով ավելի շատ ջանք թափեն: Իսկ քաղաքական պլանում բավական շատ են տազնապալի գործոնները: Առաջին հերթին դա, այսպես կոչված, կրոնների պատերազմն է եւ տարբեր ծայրահեղական դրսեւորումները: Շատ երկրներ «գլորվում» են դեպի ազգայնականություն կամ ձգտում միջազգային ասպարեզում ինչ-որ առանձնահատուկ դեր խաղալ:

Ինձ թվում է, որ ապագա զարգացումը պետք է Ռուսաստանի, Եվրամիության ու Միացյալ Նահանգների միջեւ հանգեցնի հիրավի համապարփակ պայմանավորվածության ձեռքբերման. պայմանավորվածություն, որը կսահմանի ընդհանուր նպատակները եւ կցուցաբերի երկխոսության հաստատման ու փոխզիջումների որոնման միասնական ձգտումը: Դա չի նշանակում, թե հենց տվյալ երրորդությունը կգերիշխի աշխարհում. չէ՞ որ պետք է ավելի շատ հաշվի առնել Չինաստանին, Հնդկաստանին եւ Լատինական Ամերիկայի երկրներին, հատկապես՝ Բրազիլիային:

**«Россия в глобальной политике», 2007, р. 1**  
**«Հանրապետական», 2007, р. 4**

## «ԱՐԵՎՍՈՒՏՔԸ ՄԱՅԱՆՈՒՄ Է ՆԵՐՍԻՑ»

### Պատրիկ Բյուքենեն

*Ամերիկյան քաղաքական գործիչ Պատրիկ Բյուքենենը 1966–1973թթ. եղել է նախագահ Ռիչարդ Նիքսոնի խորհրդականն ու ճառագիրը, իսկ 1985–1987թթ. Ռոնալդ Ռեյգանի վարչակազմում զբաղեցրել է հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավարի պաշտոնը: Երկար տարիներ նա Հանրապետական կուսակցության անդամ էր, սակայն ի վերջո հեռացավ նրա շարքերից: Ներկա հանրապետականները, որոնց նա համարում է մեռյալ պանդանոսներ, նրան կոչում են հնապահ պանդանոս (պալեոկոնսերվատոր): Ստորել ներկայացնում ենք հատվածներ «Պրոֆիլ» հանդեսին Պ. Բյուքենենի տված հարցազրույցից:*

**Հարց:** Ինչո՞ւն եք Դուք տեսնում ԱՄՆ ներկա արտաքին քաղաքականության զլխավոր տարբերությունը «սառը պատերազմի» ժամանակների քաղաքականությունից:

**Պատ.:** «Սառը պատերազմի» ընթացքում կար համոզմունք, թե խորհրդային կայսրությունն ու կոմունիզմը սպառնալիք են ներկայացնում արեւմտյան աշխարհին՝ ընդհանրապես եւ Միացյալ Նահանգներին՝ մասնավորապես: Մենք ղեկավարվում էինք զսպան գլոբալ ռազմավարությամբ: Սակայն մեզնից նրանք, ովքեր իրենց համարում էին ավանդապահ, համոզված էին, որ եթե խորհրդային կայսրությունը փլուզվի եւ կարմիր բանակը վերադառնա տուն, մենք պետք է փակենք արտասահմանի մեր հեռակայանները եւ վերադարձնենք զորքերը ԱՄՆ: Ներկայիս վարչակազմի արտաքին քաղաքականությունը հակասության մեջ է սույն հայեցակարգի հետ: Դա ինտերվենցիոնիստական քաղաքականություն է, որը սկզբնավորվել է Վուդրո Վիլսոնի ժամանակներից: Այն նպատակ է դրել վերակառուցել աշխարհը՝ ելնելով ամերիկյան պատկերացումներից, եւ պատրաստ է օգտագործել մեր ողջ հարստությունն ու իշխանությունը, որպեսզի դա անի:



**Հարց:** Ի՞նչ է, Ձեր կարծիքով, նեոպահպանողական շարժումը:

**Պատ.:** Նեոպահպանողականները եղել են դեմոկրատներ՝ տրոցկիստներ, սոցիալիստներ, ծախեր, ազատականներ: Նրանք բոլորն էլ եղել են Դեմոկրատական կուսակցությունում: Դեմոկրատական կուսակցությունը 1972թ. ընտրարշավին պաշտպանել է Ջորջ Մաքհոլվերնին (որը պարտվել է): Մենք պահպանողականներ էինք: Ես աշխատում էի Նիքսոնի մոտ, երբ մենք հաղթեցինք 49 նահանգներում: Այդ ժամանակ ապագա նեոպահպանողականները Դեմոկրատական կուսակցությունից անցան մեզ մոտ: Դա տեղի ունեցավ միայն այն ժամանակ, երբ մենք եկանք իշխանության: Նրանք հիմնականում նյույորքյան ինտելեկտուալներ էին: Նրանք «սառը պատերազմի» կողմնակիցներ էին՝ հակակոմունիստական եւ իսրայելամետ տրամադրություններով: Եվ մենք ընդունեցինք նրանց, քանզի հակակոմունիզմը հենց այն էր, որը համախմբում էր պահպանողական շարժումը: Եվ նրանք ծուլվեցին պահպանողական շարժմանը, ու դա շատ ողջունվեց այնպիսի մարդկանց կողմից, ինչպիսին ես էի: Սակայն հետզհետե, ցանց ստեղծելու իրենց ընդունակության շնորհիվ, նրանք սկսեցին տնօրինել կուսակցության ֆոնդերը եւ ֆինանսավորել պահպանողական հանդեսներն ու գիտական կենտրոնները: Նրանք եկան պահպանողականության նոր սահմանման՝ նեոպահպանողականության:

Ի՞նչն է տարբերությունը: Նեոպահպանողականությունը՝ արտաքին քաղաքականության ինտերվենցիոնիզմի եւ ներքին քաղաքականության ազատականության յուրօրինակ խառնուրդ է: Հին պահպանողականությունը՝ հոսանք, որին պատկանում են ես՝ պետության նվազագույն միջամտություն է, արտաքին քաղաքականություն, որը հետամուտ է ուժեղ պաշտպանությանը, սակայն, միաժամանակ, ենթադրում է, որ Ամերիկային հարկ չկա միջամտել այլ երկրների գործերին, խառնվել բոլոր պատերազմներին: Ներկայումս պահպանողական շարժման ներսում պայքար է գնում նեոպահպանողականների եւ ավանդական պահպանողականների միջեւ: Նեոպահպանողականներն այժմ գտնվում են պաշտպանվողների վիճակում: Այն, ինչ կատարվում է Մերձավոր Արեւելքում, նրանց համար աղետ է: Նրանք չեն հասկանում, որ

Մերձավոր Արեւելքում ամերիկյան արտաքին քաղաքականությունը պետք է տարբերվի իսրայելյան արտաքին քաղաքականությունից:

Նրանք վիլսոնականներ են: Դա վիլսոնյան գաղափար է, թե Ամերիկյան պետք է աշխարհը դարձնի անվտանգ, որ նա չի կարող իրեն անվտանգ զգալ ոչ ժողովրդավարական աշխարհում: Դրանք ամենեւին էլ պահպանողական գաղափարներ չեն: Նրանք նեոյակորիններ են:

Ինչպես ֆրանսիական հեղափոխության առաջնորդները, նրանք չեն վստահում գաղափարներին, եթե իրենց չի հետեւում ողջ աշխարհը:

Նրանք խորապես անհանդուրժողական են: Եվ նրանք կարող են այս երկրին պատճառել բազում անախորժություններ՝ մինչ ստիպված կլինեն հեռանալ: Այժմ նրանք խուլ պաշտպանությունում են, որովհետեւ պարզվեց, որ Իրաքը կայսերական չհաջողված միջոցառում էր: Նրանց հաջորդ նախագիծը՝ ԱՄՆ-ն Իրանի հետ պատերազմի մեջ ներքաշելն է: Նրանք միայն էսկալացիայի հաշվին կարող են արդարացում գտնել:

Ավանդական պահպանողականների խնդիրն է կանգնեցնել արկածախնդրությունն Իրաքում, դուրս բերել զորքերը, հեռացնել այնտեղից նավատորմը, եւ թող իրենք իրենց խնդիրները լուծեն: Ես կարծում եմ՝ նեոիմպերիալիզմը, որը հանդիսանում է պատերազմի պատճառ, ծնում է ահաբեկչություն:

**Չարք:** Այսինքն՝ սեպտեմբերի 11-ը Մերձավոր Արեւելքում ամերիկյան քաղաքականության հետեւա՞նքն էր:

**Պատ.:** Եթե մենք այնտեղ չլինեինք, նրանք այստեղ չէին լինի:

**Չարք:** Այսպիսով, արդի ամերիկյան քաղաքականության արատը, Ձեր տեսակետից, հանդիսանում է ժողովրդավարությունն աշխարհում ուժով տարածելու ձգտումը: Ձեր «Արեւմուտքի վախճանը» գրքում Դուք կասկածի ենթարկեցիք ժողովրդավարության ժամանակակից հայեցակարգի հիմնավորվածությունն ու խորքայնությունը: Ո՞րն է նրա թուլությունը:

**Պատ.:** Իմ կարծիքով, ժողովրդավարությունը համակարգ է, որն ընդունված քաղաքական որոշումների եւ առաջնորդների վերարտադրության գործընթացում բավական երկար ժամանակահատված աշխատել է Ամերիկայի համար: Այն միավորել է երկիրը: Սակայն ես համարում եմ, որ կան շատ ավելի խորքային արժեքներ - ընկալումը, թե որն է ճիշտ, որը՝ սխալ, որն է ճշմարտությունը, որը՝ կեղծիք, որոնք պետք է պահպանվեն հասարակությունում, որոնք անհրաժեշտ է պաշտպանել: Այն, ինչ կատարվում է երկրի ներսում, սոցիալական ու բարոյական հեղափոխության հետեւանք է, որը մենք վերապրել ենք:

Այս հեղափոխությունը, թերեւս, առավել էական է, քան ֆրանսիականը, թեպետ եղել է խաղաղ: Նա վերացրել է ավանդական հավատալիքներն ու արժեքները, պատկերացումները՝ թե ինչ է ճշմարտությունը, ամեն ինչ գլխիվայր շրջել է: Օրինակ, սեռական խնդիրների ոլորտում: Այն, ինչ տեղի է ունենում ամերիկյան հասարակությունում, գաղափարների ընդունումն է, որոնցից մենք սովոր ենք ամաչել եւ ընկալում ենք որպես մեղք: ԱՄՆ-ում յուրաքանչյուր օր գրանցվում է շուրջ 4 հազ. արհեստական վիժում: Նրանց համար, ովքեր իրենց համարում են դեմոկրատներ, դա սոցիալական առաջընթաց է: Մեզ համար դա նշանակում է Արեւմուտքի վախճան: Մենք ոչնչացնում ենք այդ չճանաչված երեխաներին: Եվ նրանք ամերիկյան հասարակությունում փոխարինվում են օրինական եւ անօրինական գաղթյալներով երրորդ աշխարհի երկրներից: Եվ ես չեմ կարծում, թե Ամերիկան կկարողանա գոյատևել ընթացիկ հարյուրամյակում, եթե շարունակի շարժումն այդ ուղղությամբ:

Ժողովրդավարության գաղափարն անհնարին է պարտադրել իսլամական աշխարհին, որն ավանդապաշտ է, մերժում է եկեղեցու անջատումը պետությունից, մերժում է գաղափարը, թե բոլոր կրոնները հասարակությունում պետք է ունենան հավասար իրավունքներ: Միացյալ Նահանգները պետք է դուրս բերի իր զորքերն այդ երկրներից եւ թողնի իրենք որոշեն իրենց ճակատագիրը:

**Չարք:** Ժողովրդագրական անկումը սպառնալիք ներկայացնո՞ւմ է Արեւմուտքին:

**Պատ.**: Արեւմուտքը մահանում է ներսից: Չկա որեւէ արեւմտյան երկիր, ներառյալ Ռուսաստանը, որտեղ բնիկ ազգաբնակչությունն արտադրի բավականաչափ երեխաներ, որպեսզի գոյատևի: Որպեսզի կարողանալ գոյատևել որպես հասարակություն եւ պետություն, յուրաքանչյուր կին պետք է ունենա միջինը 2.1 երեխա: Ոչ մի արեւմտյան երկիր չունի այդպիսի ցուցանիշներ: Ռուսաստանը տարեկան կորցնում է 1 մլն մարդ: Կաթոլիկ Իտալիայում եւ Իսպանիայում, որտեղ ծնելիության մակարդակը բարձր է, քան մյուս արեւմտյան երկրներում, երեխաներ ծնվում են ոչ ավելի այն թվի կեսից, որը բավարար կլինի հասարակությունը պահպանելու համար:

Բոլոր արեւմտյան երկրները, ներառյալ ԱՄՆ-ը, եթե խոսենք սպիտակ բնակչության մասին, այժմ աստիճանաբար մահանում են: Երբ քաղաքացիների մեծ մասը ծերանում է եւ գնում թոշակի, տնտեսական բեռն ընկնում է երիտասարդ բնակչության վրա, որն այն պարզապես չի տանի: Մենք արդեն Գերմանիայում եւ հին Եվրոպայի մյուս երկրներում տեսնում ենք սոցիալական նպաստների կրճատում:

Դա, մասնավորապես, տեղի է ունենում նաեւ Ռուսաստանում: Այդ հասարակություններում այն տեղերը, որոնք ազատ են մնում մահացածների եւ չծնվածների պատճառով, լրացվում են իսլամական աշխարհից, իսկ Արեւմտյան Եվրոպայի դեպքում՝ Աֆրիկայից գաղթյալների զանգվածային ներխուժմամբ: Այդ մարդիկ այլ մշակույթների ներկայացուցիչներ են, որոնք դեռ չեն ձուլվել արեւմտյան հասարակության մեջ: Եվ դա այդ հասարակության տրոհման ու Արեւմուտքի վախճանի սկիզբն է:

Երբ ես 2001թ. գրում էի գիրքը, մտածում էի, թե ռուսները Չեռափոր Արեւելքում այնքան են, որքան չեխերը Չեխիայի Չանրապետությունում, բայց հետո պարզեցի, որ վերջին 4-5 տարիներին այդ տարածաշրջանում մոտավորապես 2 մլն ռուս է մահացել, միեւնույն ժամանակ՝ 3 մլն չինացի հաստատվել է այնտեղ: Ես կարծում եմ, թե Ռուսաստանը, որը կորցրել է երկրի մեկ երրորդը, ժամանակի ընթացքում կկորցնի նաեւ Չեռափոր Արեւելքի կեսը, որը բնակեցվում է չինացիներով: Եթե խոսենք Արեւմուտքի ճակատագրի երկարաժամկետ կանխատեսումների մասին, մենք ԱՄՆ-ում կտեսնենք այն, ինչը ոմանք անվանում են «Մեքսիկացիները»՝ մեք-

սիկացիների եւ ամերիկացիների միութուն, Եվրոպայում կաճի իսլամականացման գործընթացը: Եվ դա անխուսափելի է: Ես կարծում եմ, որ Ռուսաստանում կգերակշռեն կովկասյան ու միջինասիական ժողովուրդները, որոնց ծնելիության մակարդակն ամերեակայելիորեն բարձր է:

Արեւմուտքը մահանում է: Առայժմ նա ապրում է քաղցր կյանքով, սակայն 21-րդ դարում մենք կտեսնենք Արեւմուտքի մայրամուտը, արեւմտյան ժողովուրդների փաստացի անհետացումը, որոնք 19 եւ 20-րդ հարյուրամյակներում գերիշխում էին ողջ աշխարհում: Դա զարմանալի է: Ես ուսումնասիրել եմ վիճակագրական տվյալները. 1950թ. մենք՝ արեւմտյան սպիտակամորթներս, ներառյալ ռուսները, կազմում էինք աշխարհի բնակչության 35%-ը, 1960-ին՝ 25%-ը: Ներկայումս մենք 16% ենք, 21-րդ հարյուրամյակի կեսերին կլինենք սոսկ 10%: Եվ դա կլինի երկրագնդի ամենատարեց 10%-ը:

**Հարց:** Դուք չե՞ք կարող առավել մանրամասն կանգ առնել ժամանակակից աշխարհի համար կրոնների կարեւորության հարցի վրա:

**Պատ.:** Արեւմուտքը ծնվել է քրիստոնեությունից: Գաղափարների մեծ մասն Արեւմուտք է եկել Երուսաղեմից ու Սուրբ երկրից. գաղափարներ, թե մարդն Աստծո ստեղծածն է, որ նա անկախ է, ունի իրավունքներ, ունի հոգի, որ գոյություն ունեն պետության իշխանության սահմանափակումներ. ընտանիքի, երեխաների արժեքի անձնական արժանապատվության եւ ազատության գաղափարներ: Դրանք գաղափարներ են, որոնք քրիստոնեությունից եկան Հռոմեական կայսրություն ու նրա անկումից հետո դարձան այն հիմքը, որը մենք կոչում ենք արեւմտյան քաղաքակրթություն: Եվ բացարձակ ճիշտ կլինի ասել, որ եթե մեռնում է հավատքը, մեռնում են մշակույթը եւ քաղաքակրթությունը: Այժմ մեռնում է քրիստոնեությունը ողջ Եվրոպայում, ու նրա հետ մեռնում է մշակույթը եւ արեւմտյան քաղաքակրթությունը: Ահա թե ինչ է կանգնած արեւմտյան ժողովուրդների ֆիզիկական մահվան հետեւում: Նրանք զրկվել են այն մտահորիզոնից, որը տվել է իրենց քրիստոնեական աշխարհայացքը: Նրանք ապրում են ներկա պահով.

գեղոնիզմը, ինդիվիդուալիզմը, ամերիկյան երազանքի տարրերը վարակել են այս աշխարհի մարդկանց:

**Չարք:** Ամերիկյան երազանքը սպանո՞ւմ է Արեւմուտքը:

**Պատ.:** Ամերիկյան միշտ եղել է բախտավոր ու հաջող պետություն, եթե խոսենք քաղաքացիների կենսամակարդակի մասին: Մինչ Երկրորդ աշխարհամարտը եւ անգամ դրանից հետո Ամերիկյան խորապես քրիստոնեական պետություն էր. առավելապես բողոքական: Բայց 50-ական թվականներին կաթոլիկ եկեղեցին նույնպես ընդարձակվեց եւ մեծացավ շուրջ 2 անգամ: Դրա հետ էր կապված այդ տարիներին ապահարզանների թվի կրճատումը: Այնուհետեւ այս երկիրն ապրեց սոցիալական, բարոյական եւ մշակութային հեղափոխություն, որն իր էութամբ հակաքրիստոնեական էր՝ անհատապաշտական, գեղոնիստական եւ մատերիալիստական: Նրա հիմքում դրված էին ֆրանսիական հեղափոխության գաղափարները: Այդ հոսանքն առաջին հերթին ընդգրկեց համալսարանները, հետո ամերիկյան վերնախավերը եւ, վերջապես, մարտահրավեր նետեց ԱՄՆ-ում գերիշխող մշակույթին:

Այժմ Միացյալ Նահանգները երկու երկիր է: Խոսում են «կարմիր» եւ «կապույտ» նահանգներից: Այն մարդիկ, որոնք շաբաթը մեկ անգամ կամ ավելի հաճախ են այցելում եկեղեցի, քվեարկում են հանրապետականների օգտին: Նրանք, ովքեր երբեք եկեղեցի չեն հաճախում, գրեթե միշտ քվեարկում են դեմոկրատների օգտին: Ես գտնում եմ, որ այս հեղափոխությունն ընդգրկել է ամերիկյան վերնախավերը, բոլոր արեւմտյան երկրները, նախեւառաջ՝ Եվրոպան:

**Չարք:** Ամերիկյան զանգվածային մշակույթի էքսպանսիան պատճառներից մեկն է, որի համար առավել ավանդական հասարակություններն ատում են Արեւմուտքին: Կարո՞ղ եք Դուք այդ երեւույթն անվանել մշակութային իմպերիալիզմ, որն այժմ հարվածում է իրեն ծնած հասարակությանը:

**Պատ.:** Միանգամայն ճիշտ է: Պատասխան հակազդեցությունը 60-ականների մշակութային հեղափոխությանը եղավ պահպանողական հոսանքը, որին ես պատկանում եմ: Սոցիալական

պահպանողականությունը՝ հակազդումն է Յուլիվուդի մշակութային գերիշխանությանն ու մեզ օտար այն արժեքներին, որոնք նա պարտադրում է: Ավանդական պահպանողական քրիստոնեական հասարակությունն այդ արժեքներին դիմակայում է տարբեր մեթոդներով: Քրիստոնեական ընկերակցության ներկայացուցիչները վերցնում են իրենց երեխաներին պետական վարժարաններից, նրանք այլևս չեն հաճախում կինոթատրոններ, ջանում են ազատվել հեռուստացույցից, երեխաներին սովորեցնում են տանը: Ուշագրավ է ավանդական իսլամական ընկերակցությունների հակազդեցությունն այդ ախտին, որը տարածվում է նաև իրենց երկրներում: Այդ հակազդեցությունն Արեւմուտքի ու Միացյալ Նահանգների դեմ է:

Ի հավելումն մշակութային եւ բարոյական իմպերիալիզմի, այժմ երեւան է գալիս մեկ այլ իմպերիալիզմ՝ ամերիկյան ռազմական իշխանությունը եւ քաղաքական գերակայությունը:

**Չարք:** Ինչպե՞ս եք դուք տեսնում Ռուսաստանի հետ Արեւմուտքի համագործակցությունը:

**Պատ.:** Ուղղափառները, բողոքականները եւ կաթոլիկները, իմ կարծիքով, կազմում են արեւմտյան քաղաքակրթությունը: Անշուշտ, վերահաս ճգնաժամի համատեքստում ես Ռուսաստանը տեսնում եմ որպես Արեւմուտքի մաս: Նրա մոտ նույն խնդիրներն են, ինչ մյուս արեւմտյան երկրներում. բնակչության կրճատում, հավատքի կորուստ, գեդոնիզմի եւ մատերիալիզմի գրոհ:

«Պրոֆիլ», 2007, ք. 33

«Յանրապետական», 2007, ք. 9

## ՊԱՏԵՐԱԶՍ ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ

«Պատերազմի վտանգ. ժողովրդավարական աշխարհի ապացույցների վերագնահատում» գրքի (տպագրվել է 1997թ.) հեղինակներ, հետազոտողներ Արվիդ Ռաքներուդի եւ Հովարդ Էգրեի հաշվարկներով՝ 1840-1992թթ. ժամանակահատվածում կառավարման ժողովրդավարական ձեւ ունեցող երկու առանձին վերցրած երկրների միջեւ կոնֆլիկտների առաջացման հավանականությունը 57 տոկոսով ցածր է եղել, քան ավտորիտար ու ժողովրդավարական վարչակարգ ունեցող երկու երկրների միջեւ, եւ 35 տոկոսով ցածր, քան երկու ավտորիտար երկրների միջեւ ռազմական դիմակայության առաջացման հավանականությունը: Որոշ ուսումնասիրություններ կասկածի ենթարկեցին սույն հաշվարկները՝ վկայակոչելով «ժողովրդավարական վարչակարգ» եզրի սահմանման պայմանականությունը, «ռազմական կոնֆլիկտ» հասկացության ոչ ճիշտ մեկնաբանությունը եւ այլն: Ամեն դեպքում, կարծիքը, որ ժողովրդավարական երկրները հակված են միմյանց հետ ապրել խաղաղությամբ, լայն տարածում ունի:

Այդուհանդերձ, այն կարծիքը, թե ժողովրդավարությունը նպաստում է ժողովրդավարական երկրների միջեւ առավել խաղաղ գոյակցությանը, վերջին ժամանակներս քննադատության է ենթարկվում: Ինչպես հիմնավորում է Ինդիանայի համալսարանի պրոֆեսոր Ուիլյամ Թոմպսոնն իր «ժողովրդավարությունը եւ խաղաղությունը. ձին լծելով սայլի հետեւից» ուսումնասիրությունում, եթե անգամ վիճակագրական տվյալները վկայում են ժողովրդավարական երկրների միջեւ ռազմական կոնֆլիկտների փոքր քանակի մասին, պարզ չէ պատճառահետեւանքային կապը երկրում ժողովրդավարական համակարգի ու խաղաղության միջեւ: Անհասկանալի է՝ նպաստո՞ւմ է, արդյոք, ժողովրդավարական վարչակարգը խաղաղ գոյակցությանը, թե՞ հակառակը՝ պատերազմի բացակայությունը թույլատրում է պետություններին զարգացնել ժողովրդավարությունը:

Նիլս Գլեդիշը, Լին Քրիստիանսենը եւ Հովարդ Էգրեն իրենց «ժողովրդավարական ջիհա՞դ. ռազմական ինտերվենցիան եւ ժողովրդավարությունը» հետազոտությունում նշում են, որ այսօր



աշխարհի երկրների ավելի քան 40 տոկոսը, որտեղ ապրում է երկրագնդի բնակչության 50 տոկոսից ավելին, դասվում է «ժողովրդավարական պետություններ» կատեգորիային: Այնուամենայնիվ, ժողովրդավարության ուղին եղել է անհարթ ու ալիքածել, եւ հաճախ երկրները գլորվել են հետ՝ դեպի ավտորիտար կամ կիսավտորիտար վարչակարգեր, որպեսզի որոշ ժամանակ անց կրկին վերադառնան կառավարման ժողովրդավարական ձեւին: Ժողովրդավարական սկզբունքներից հեռանալու առաջին գլոբալ միտումը սկսվեց 1920-ական թվականներին՝ Եվրոպայում տոտալիտար վարչակարգերի առաջացմամբ: Երկրորդ հոսանքը սկսվեց այն շրջանում, երբ Երրորդ աշխարհի երկրներն իրենց նախկին մետրոպոլիաներից ստանալով անկախություն՝ չկարողացան ստեղծել իրապես գործող ժողովրդավարական հասարակություն: Ինչպես գրում են հեղինակները, չնայած ծայրաստիճան անհանգստությանը, «հետընթացի» երրորդ՝ գլոբալ ապաժողովրդավարացման փուլի մոտենալուց առայժմ հաջողվում է խուսափել:

Սոցիալիստական ճամբարի փլուզումից հետո ժողովրդավարության գաղափարը գործնականում մնում է պետական կառավարման միակ գլոբալ գերիշխող մոդելը: Ու թեեւ Չինաստանը, ինչպես գրում են հեղինակները, մինչ օրս հանդիսանում է ավտորիտար պետություն եւ քարոզում է պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, իրականում չինական տնտեսական քաղաքականությունն ավելի շուտ վկայում է նրա ազատական ուղղվածության մասին: Ուսումնասիրողները համաձայնում են, որ պատերազմների շրջանում անվտանգության գործոնը ստանում է առաջնային նշանակություն՝ բոլոր մյուս ներքին գործոնների համեմատ, այդ թվում նաեւ մարդու իրավունքների պաշտպանության եւ խոսքի ազատության ոլորտում:

Որոշ դեպքերում պատերազմները եւս կարող են հերթական ժողովրդավարական ընտրությունների հետաձգման պատճառ դառնալ, ինչպես, օրինակ, Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Մեծ Բրիտանիայում խորհրդարանական ընտրությունների հետաձգման դեպքը: Բացի այդ, որպես հասարակության ժողովրդավարացման գործընթացների վրա ռազմական կոնֆլիկտների բացասական ազդեցության օրինակ կարող է ծառայել 1960-ական թվականներին Հունաստանի ու Թուրքիայի փորձը: Այնուհանդերձ,

ժողովրդավարական երկրների մեծ մասն ավտորիտար վարչակարգի չանցավ պատերազմների եւ միջպետական կոնֆլիկտների պատճառով՝ կարողանալով պահպանել ժողովրդավարական պետության բոլոր խորհրդանիշները:

Փորձը ցույց է տալիս, որ թեւեւ ժողովրդավարական երկրներն իրենք հազվադեպ են սկսում պատերազմներ, դրա փոխարեն, շատ հաճախ, ռազմական գործողությունների զարգացմանը համապատասխան, ներքաշվում են կոնֆլիկտներում: Ընդ որում, ժողովրդավարական պետությունները շատ հաճախ հայտնվում են հաղթողի կողմում: Որպես օրինակ են բերվում Առաջին ու երկրորդ աշխարհամարտերը, Կորեայի, Պարսից ծոցի (1991թ.), Կոսովոյի (1999թ.), Աֆղանստանում թալիբանի վարչակարգի հետ (2001թ.) եւ Իրաքի (2003թ.) պատերազմները: Որպես ժողովրդավարական վարչակարգերի կայունության հաստատում՝ հետազոտողները մեջբերում են ԱՄՆ փորձը, որտեղ ինչպես Դեմոկրատական, այնպես էլ Հանրապետական կուսակցություններն ընտրություններում պարտություն կրեցին՝ Վիետնամում 1968 եւ 1975թթ. կորուստների համար, բայց դա ամենեւին էլ երկրում չհանգեցրեց ավտորիտար կամ կիսավտորիտար վարչակարգերի:

Առաջին աշխարհամարտում ավտորիտար վարչակարգերով երկրների պարտությունը (Գերմանական, Հաբսբուրգյան եւ Օտոմանյան կայսրություններ) խթանեց ժողովրդավարության գաղափարի գլոբալ զարգացման առաջին ալիքը, այնպես, ինչպես նացիստական Գերմանիայի ու ճապոնիայի պարտությունը երկրորդ աշխարհամարտում:

Ժողովրդավարության զարգացման երրորդ ալիքը սկսվեց «սառը պատերազմի» ավարտից հետո: Այսպիսով, ինչպես գտնում են հեղինակները, վերոհիշյալ պատմական իրադարձությունների վերլուծությունը շատ վերլուծաբանների կարող է բերել այն գաղափարին, թե ժողովրդավարությունը կարելի է եւ նույնիսկ ցանկալի է տարածել ռազմական միջամտության օգնությամբ:

Գլեդիշը, Քրիստիանսենը եւ Էդրեն հաշվարկել են, թե ինչ հաճախականությամբ են ժողովրդավարական երկրները ներխուժել այլ պետությունների տարածքներ: Վերլուծելով 1960-1996թթ. ռազմական ինտերվենցիաների դեպքերը՝ հեղինակները բացա-

հայտել են, որ տվյալ ժամանակաշրջանում առաջատարն ԱՄՆ-ն է (63 ինտերվենցիա):

Երկրորդ տեղում ՄԱԿ-ն է (45), այնուհետև գալիս են Ֆրանսիան (41) ու Մեծ Բրիտանիան (25): 1990-ականներին բոլոր ռազմական ինտերվենցիաների ավելի քան 2/3-ը բաժին է ընկնում ժողովրդավարական երկրներին. այդպիսով՝ հեղինակները սահմանում են, որ ժողովրդավարական երկրներն առավել հակված են ինտերվենցիաների:

Գլխավոր հարցին՝ «ժողովրդավարության տարածման նպատակով ռազմական ինտերվենցիան բերո՞ւմ է, արդյոք, նվաճված երկրի իրական ժողովրդավարացման», հեղինակները տալիս են հաստատող պատասխան: Ինչպես փաստում են հեղինակները, մանրակրկիտ վերլուծությունը վկայում է ներխուժման եւ նվաճված պետությունների հետագա ժողովրդավարացման միջև թույլ, բայց եւայնպես՝ դրական կոռելյացիան: Հեղինակների կարծիքով, ավտոկրատ վարչակարգերի դեմ կետային ռազմական գործողությունների զգույշ ու նպատակասլաց անցկացումը կարող է զգալիորեն նվազեցնել ցեղասպանության, քաղաքական եւ էթնիկ զտումների դեպքերը, փոքրացնել քաղաքացիական պատերազմների ծագման հավանականությունը:

Եկոնմիկայի լոնդոնյան դպրոցի պրոֆեսոր Մերգոթ Լայթը «ժողովրդավարության արտահանում» հոդվածում նշում է, որ 1912-1932թթ. ժամանակահատվածում ԱՄՆ-ը ժողովրդավարության տարածման նպատակով Արեւմտյան կիսագնդում անցկացրել է առնվազն 40 ռազմական ինտերվենցիա՝ դրանով ցույց տալով, որ ռազմական ճանապարհով ժողովրդավարության տարածման գաղափարն ԱՄՆ իշխող շրջանակներում ամենեւին էլ նորություն չէ: Նախագահներ Վուդրո Վիլսոնը եւ Ֆրանկլին Ռուզվելտը համապատասխանաբար Առաջին ու Երկրորդ աշխարհամարտերի մեջ մտան հիմնականում աշխարհում ժողովրդավարության պաշտպանման եւ տարածման նպատակով:

Անշուշտ, նկատում են հեղինակները, ամերիկյան ռազմական միջամտության դեպքում իրականում բավական դժվար է պարզել ինտերվենցիայի բուն պատճառները: Հանդիսանո՞ւմ է, արդյոք, ժողովրդավարության տարածումն այլ երկրների դեմ ռազմական գործողությունների սկսման իրական խթան, թե՞ այդ վերամբարձ

խոսքերի տակ քողարկվում են այլ խնդիրներ, ինչպիսիք են ամերիկյան քաղաքացիների եւ կորպորացիաների պաշտպանությունը, ԱՄՆ նավթի մատակարարումների անվտանգության ապահովումը եւ այլն: Հեղինակները պնդում են, որ եթե նույնիսկ ժողովրդավարության տարածման գաղափարը շղարշ է հանդիսանում ինչ-որ քաղաքական կամ տնտեսական շահերի հասնելու համար, շատ դեպքերում նվաճված երկիրն իրականում սկսում է զարգանալ ժողովրդավարական ուղղությամբ:

Բնականաբար, կա վտանգ, որ ժողովրդավարական երկրների առաջնորդները, տվյալ դեպքում, աշխարհի ցանկացած երկրի դեմ, որին իրենք համարում են ավտորիտար, ռազմական գործողության անցկացման ազատություն կստանան: «Ժողովրդավարության արտահանում» հասկացությունն օգտագործում է ոչ միայն ԱՄՆ-ը: Եվրոպական միությունը, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ն եւս հետապնդում են ժողովրդավարության տարածման նպատակներ: Ու թեեւ «սառը պատերազմի» ժամանակաշրջանում ՆԱՏՕ անդամ արեւմտյան երկրները հաճախ էին փակում աչքերն ավտորիտար վարչակարգերի եւ տարբեր երկրներում մարդու իրավունքների ոտնահարման վրա (օրինակ, Թուրքիայում ու Պորտուգալիայում՝ սոցիալիստական ճամբարի դեմ պայքարում նրանց աջակցությունը ստանալու նպատակով), սոցիալիստական համակարգի փլուզումից հետո ժողովրդավարական սկզբունքների պահպանման պահանջները զգալիորեն խստացան:

Ելի համալսարանի պրոֆեսոր Բրյուս Ռեսեթը գտնում է, որ ողջ աշխարհում ժողովրդավարության բռնի արմատավորումն իրեն չի արդարացնում: Ինչպես նշում է Ռեսեթը, նման փորձերը հաճախ ավարտվել են պարտությամբ, իսկ «ժողովրդավարացվող» երկրները կրում են ահռելի վնաս: Քաղաքագետ Մայքլ Ուորդը նշում է, որ ռազմական «ժողովրդավարական» ինտերվենցիաների ելքը դժվար կանխատեսելի է, ու եթե երկիրը գտնվում է ոչ ժողովրդավարական պետությունների հարեւանությամբ, ապա այդ երկրի ժողովրդավարացման հավանականությունը մեծ չէ:

**Washington ProFile**, 26.10.2007  
«Հանրապետական», 2007, թ. 10

## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱ

### *Վիկտոր Մյասնիկով*

Նոյեմբերի 18-ին բրիտանական «Օբսերվեր» թերթում տպագրվեց Թոնի Բլերի վարչապետության ժամանակ նրա քարտուղարության ղեկավար Ջոնաթան Փաուելի ճառը՝ հնչած Բրիտանիայի «Portland Communications» խոշորագույն ինտերնետ-պրովայդերի կողմից կազմակերպված ընթրիքում: Մարդը, որը երկար տարիներ անմիջականորեն մասնակցել է պետության բոլոր արտաքին քաղաքական կարեւորագույն գործողություններին, ոչ քիչ չափով որոշել է Միացյալ Թագավորության միջազգային քաղաքականությունը, պնդում էր այսպես կոչված «ազատագրական ինտերվենցիայի» անհրաժեշտության մասին: Մեզ մոտ բռնապետությունների «ժողովրդավարացման» եւ ժողովուրդների «փրկության» այս ուժային մեթոդն առավել հայտնի է «մարդասիրական ինտերվենցիա» անվամբ: Կարելի է չկասկածել, որ Փաուելն արտահայտում էր ոչ միայն իր, այլեւ Թոնի Բլերի եւ ընդհանրապես արեւմտյան աշխարհի առաջնորդների մեծ մասի մտքերը:

\* \* \*

Իշխանության տասը տարիներին Թոնի Բլերի վարչակազմն անցկացրել է չորս պատերազմ: Բոլորն էլ, բնականաբար, նշվել են որպես մարդասիրական ինտերվենցիաներ: Առաջինը Սիերա Լեոնեում էր: Այդ մասին Ջոնաթան Փաուելն այսպես է ասել. «Մեր ռազմական գործողությունն այդ երկրում հազիվ թե կարելի է հիմնավորել ինքնապաշտպանության փաստարկներով: Բայց քանի որ այն պսակվեց հաջողությամբ, ոչ ոք կասկածի չենթարկեց նրա տեսական արդարացումը»:

Հաջորդը եղավ Կոսովոն: Այն մասին, որ դա Հարավսլավիայի մաս է, նախկին բարձրաստիճան պետական պաշտոնյան եւ քաղաքական գործիչը նույնիսկ չհիշատակեց: Կարծես թե այն առանձին երկիր է: «Սակայն ռուսական վետոյի իրավունքի պատճառով մեզ այդպես էլ չհաջողվեց ստանալ ՄԱԿ-ի կողմից այդ պատերազմին աջակցությունը,– ավստում է Փաուելը:– Այնուամենայն-

նիվ, Արեւմուտքում նորից ոչ ոք չառարկեց, քանզի այդ գործողությունը նույնպես հաջող էր»:

Ողջ համաշխարհային ընկերակցության կարծիքն Արեւմուտքին չի հետաքրքրում: Նա ընդունում է միայն սեփական կարծիքը: Հիմնական հետեւությունն է. հաղթողներին չեն դատում: Սրան արժե ուշադրություն դարձնել:

«Պատերազմն Աֆղանստանում նույնպես ինքնապաշտպանության դեպք չէր, – խոստովանում է Բլերի քարտուղարության նախկին ղեկավարը: – Թալիբանին ներկայացվել էր հստակ վերջնագիր. հրաժարվեք Ալ-Կաիդային աջակցելուց, կամ մենք կտապալենք ձեր վարչակարգը: Հենց այդպես էլ վարվեց ԱՄՆ-ը»: Ե՛վ Բլերը, ե՛ւ Բուշը հիանալի գիտեին, որ աղքատ թալիբներն անկարող էին պահել սաուդյան բազմամիլիոնատեր բեն Լադենին իր համաշխարհային ընդհատակով, բայց հո չպե՞տք է գրոհել իսլամական աշխարհի իրենց դաշնակիցների վրա: Եվ «այս անգամ ոչ ոք չառարկեց, նույնիսկ չնայած նրան, որ այդ ինտերվենցիան մինչ օրս չի պսակվել կայուն հաջողությամբ», – ամփոփում է Ջոնաթան Փաուելը՝ ամենեւին հաշվի չառնելով մուսուլմանների բողոքները:

Մեծ հաշվով, նրան անհանգստացնում է սոսկ վերջին պատերազմը: «Ամենադժվարին կացությունը ստեղծվեց Իրաքի դեպքում, թեւ տեսական փաստարկների տեսանկյունից մեր այդ ինտերվենցիան քիչ էր տարբերվում նախորդներից»: Հիմնական դասը, որ այդ ամենից քաղել է Փաուելը. «Մեզ անհրաժեշտ է միջազգային իրավական համակարգ: Գերտերության կարգավիճակի ճանապարհին գտնվող մյուս խոշոր երկրների արժեքային կողմնորոշչները խիստ տարբերվում են մերից: Ուստի, օրենքի գերակայությունը ոչ միայն ներքաղաքական, այլև միջազգային ասպարեզում համապատասխանում է ինչպես ԱՄՆ, այնպես էլ միջին մեծության տերությունների շահերին, ինչպիսին Մեծ Բրիտանիան է»: Ընդհանուր առմամբ, հասկանալի է, թե ում շահերից կբխի այդ «օրենքի գերակայությունը», թեպետ, ինչպես ցույց է տվել փորձը, կարելի է եւ առանց դրա էլ հնարովի պատրվակներով ռմբակոծել Հարավսլավիան եւ օկուպացնել Իրաքը:

Պաշտոնաթող բարձրաստիճան պետական պաշտոնյան իրեն կարող է թույլ տալ ասել այն, ինչի մասին Արեւմուտքի առաջնորդները նախընտրում են չբարձրաձայնել: «Մեզ պետք են

երաշխավորված եւ արդյունավետ դաշինքներ, որոնք թույլ կտան իրականացնել միջամտություն այն դեպքերում, երբ միջին մեծության երկրները, ինչպիսին իմ հայրենիքն է, չեն կարող դա միայնակ անել: Սա նշանակում է, որ Ֆրանսիայի հետ համագործակցությունում մեզ հարկավոր է ստեղծել արդյունավետ եվրոպական ինտերվենցիոնիստական ուժեր: Սակայն դրա համար նախեսառաջ անհրաժեշտ է երաշխավորել, որ ԱՄՆ-ը չի վերադառնա իզոլյացիոնիզմին»: Այսինքն, ԱՄՆ մասնակցությունը պարտադիր է: ՆԱՏՕ-ի դաշինքը ոչ ոք չի պատրաստվում արձակել: «Սառը պատերազմում» հաղթանակից հետո այն արդեն չի կարող ձեւացնել, թե ստեղծված է պաշտպանության համար: Այն ինտերվենցիայի գործիք է: Ու եթե նա դրա համար չափազանց դանդաղաշարժ է, կստեղծվեն առանձին ուժեր: Ոչինչ չի խանգարի «մարդասիրական» շահերից բխող նոր պատերազմներ մղել:

\* \* \*

Ինչո՞ւ մի դեպքում տեղի է ունենում մարդասիրական ինտերվենցիա, իսկ մյուսում՝ ոչ: Բացատրությունը պարզ է. մարդասիրական գործողություն անցկացնել չի կարելի, եթե սպանված խաղաղապահների թիվը գերազանցում է խաղաղ բնակչության շրջանում զոհերի թվին, որը նրանք կարող էին կանխել: Ակնառու օրինակ. 1992թ. Սոմալիում ԱՄՆ անցկացրած՝ ՄԱԿ-ի կողմից աջակցություն ստացած գործողությունը: Սոմալեցիները, որոնց ամերիկյան զինվորները պետք է պարեն մատակարարեին, սկսեցին հզոր ռազմական դիմադրություն ցույց տալ: Այսպիսով, նրանք թույլ չտվեցին չեզոքացնել ապօրինի զինված խմբավորումները եւ սնել իրենց: Գործողությունն անընդունելի կորուստների պատճառով հարկ եղավ դադարեցնել:

Այդ նույն պատճառով, կարծում է Բրուքինգի ինստիտուտի՝ ԱՄՆ-ում քաղաքականության ճանաչված վերլուծական գիտահետազոտական կենտրոնի գիտական աշխատակից Մայքլ Օ'Յենլոնը, Չեչնիայում մարդասիրական ինտերվենցիա չանցկացվեց: Ինչպես նա արտահայտվեց, ակնհայտ էր, որ խաղաղապահներին հիմնականում հարկ է լինելու կռվել ռուսական զորքերի հետ, այլ ոչ թե չեչեններին պարեն մատակարարել:

Չեչնիան «ազատ աշխարհի» բոլոր իրավապաշտպաններին շատ է անհանգստացնում: «Հյունան Ռայթս Վոտչ»-ը, «Միջազգային համաներում»-ն ու ԵԱՀԿ-ն արդեն տասը տարուց ավելի անցկացնում են հանրապետությունում զոհերի անուղղակի հաշվարկում եւ պահանջում են «Ռուսաստանի անխոհեմ կուրսի» փոփոխում: Հիմնական միտքն է. Չեչնիան հանդիսանում է միջազգային կենսական խնդիր, որը պահանջում է համաձայնեցված, հավաքական, ոչ բռնի միջազգային անդրադարձ: Ոչ բռնի անդրադարձը ենթադրում է բանակցություններում միջազգային միջնորդություն ու Եվրամիության, ապա եւ ՆԱՏՕ խաղաղապահ զորքերի տեղակայում ՄԱԿ հովանու ներքո: Հանուն երեխաների...

Մարդասիրական ինտերվենցիան Չեչնիայում պատրաստել է ամերիկյան արհեստավարժ «փրկարար» Ֆրեդ Քյունին: Նա համբավ էր ձեռք բերել 1991թ. Օոցի առաջին պատերազմից հետո: Այն ժամանակ, Սադամ Հուսեյնի պարտությունից եւ շիաների անհաջող ապստամբությունից հետո, Իրաքի միլիոնավոր քրդեր հայտնվեցին կործանման սպառնալիքի տակ: Նրանք նետվեցին Թուրքիա, սակայն նա փակեց սահմանը: ՄԱԿ Անվտանգության խորհուրդն անհապաղ որոշում կայացրեց փրկարար զործողության անցկացման մասին, իսկ ԱՄՆ-ը դա իրագործեց՝ ստեղծելով փաստացի անկախ իրաքյան Քուրդիստան: Այնուհետեւ նույն սցենարը ճշտությամբ կրկնվեց Կոսովոյում, բայց արդեն այլ մարդկանցով:

20-րդ դարավերջին աշխարհը խիստ կերպափոխվեց, եւ ԱՄՆ այն ժամանակվա նախագահ Բիլ Բլինթոնին այլեւս դժվար էր կոնֆլիկտների գոտիներում օգտագործել ԿՀԿ-ին կամ իր վարչակազմի զործիչներին: Նախաբեմ դուրս եկան համեստ մասնավորներ, որոնք այնքան էլ չէին ցուցադրում իրենց գործունեությունը: 1993թ. Ֆրեդ Քյունին Բոսնիայում Ջորջ Սորոսի փողերով, սակայն ՄԱԿ պատվերով կազմակերպեց մարդասիրական ինտերվենցիա: Դրանից առաջ նա Սոմալիում այնքան էլ հաջող չէր աշխատել:

1995թ. ապրիլին Քյունին մեկնեց Չեչնիա: Համարվում է, որ արդեն ամեն ինչ պատրաստ էր մարդասիրական ինտերվենցիայի համար: Համենայնդեպս, տասնյակ հազարավոր փախստականներ արդեն ճամբարներով դուրս էին թափվել, բարձրաձայն միտինգ էին անում հեռուստախցիկների առջեւ: Համաաշխարհային ՁԼՄ-ն ամբողջ թափով ըմբռնում էին չեչենական ժողովրդի



ողբերգությունը: Բայց Քյունիի հիմնական գաղափարը Գրոզնիից «ռուս տատիկներին» փրկելն էր: Ռուս զինվորներին եւ հասարակական կարծիքը մեղմելու համար: Դա պետք է անեին ամերիկյան զինվորները՝ այդ ձեռով կառչելով Յուսիսային Կովկասից: Սակայն Մոսկվայում ամերիկյան դեսպան Թոմաս Փիքերինգը նրան հայտնեց, թե Վաշինգտոնը Կովկասում ռազմավարական շահեր չունի: Շահերն, իրոք, հետո երեւան եկան:

Քյունին, իրեն վտանգի ենթարկելով, Նազրանից մեկնեց Ջոհար Դուդաեւի հետ հանդիպման, որպեսզի համաձայնեցնեն գործողությունը: Եվ երեք ուղեկիցների հետ անհետ կորավ: Ամենայն հավանականությամբ, նրանց վերացրել էին այն չեչենները, որոնց բնավ էլ ցանկալի չէր «շարիաթական հանրապետության» փոխարեն ստանալ ամերիկյան հսկողություն: Բայց դա չէր Չեչնիայում, այսինքն՝ Ռուսաստանում արեւմտյան ինտերվենցիայի փորձի տապալման պատճառը: Խանգարեցին ռուսական միջուկային զենքը եւ նախագահ Ելցինի անզիջողականությունը: Նա շատ բաներում գնում էր զիջումների, սակայն ոչ այս հարցում, որքան էլ ձգտում էին նրան քանել «գործընկերները»:

Այժմ վերընթեռնելով 1990-ականների հրապարակումները՝ զարմանք ես կտրում. եվրոպական ու ամերիկյան պատկառելի պրոֆեսորներ, քաղաքագետներ, քաղաքական գործիչներ դատողություններ են անում, թե ինչպես հակազդել «Մոսկվայի ինտերվենցիային Չեչնիայում», թեեւ ոչ ոք չէր ընդունում Իչկերիայի անկախությունը: Եվ սաստիկ վշտանում էին, որ Արեւմուտքում չկա միասնական կարծիք Չեչնիա զորքեր մտցնելու վերաբերյալ, որոնք «ընդունակ կլինեն դիմակայել ռուսական բանակին եւ աջակցել չեչենական դիմադրությանը»:

2001թ. սեպտեմբերի 11-ից հետո նման դատողությունները գրեթե դադարեցին, սակայն աստիճանաբար ամեն ինչ վերադառնում է ի շրջանս յուր: Այսօր իրավապաշտպանները խոսում են Չեչնիայից հազարավոր անհետ կորածների ու կադիրովականների գազանությունների մասին: Պնդվում է, թե ոչինչ չի փոխվել, պատերազմը գնում է առաջվա պես՝ նույն մասշտաբով: Բայց դա մարդասիրական ինտերվենցիայի համար այլեւս թույլ առիթ է. անգամ փախստականների ճամբարներ չեն մնացել:

ՋԼՄ-ում ԴարՖուրը եւ Սուդանը վաղուց առանձին են հորջորջվում, կարծես այն արդեն միասնական պետություն չէ: Ի լրումն Աֆրիկյան միության խաղաղապահների, շուտով Սուդան կմեկնի լրացուցիչ զորակազմ՝ ՄԱԿ հովանու ներքո: Վերջին հաշվով, ԴարՖուրը կարող է անկախանալ: Երբ պարզվի, որ միլիոնավոր փախստականների ու հարյուր հազարավոր սպանված խաղաղ քաղաքացիների մասին տվյալները հնարովի են, այն այլևս նշանակություն չի ունենա: Աշխարհի վերաբաժանման գործում ազատական-ժողովրդավարական Արեւմուտքն իր օգտին եւս մի հաջողված մարդասիրական ինտերվենցիա կգրանցի:

**«Независимое военное обозрение»**

«Հանրապետական», 2007, ք. 11

## ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՊԱՔՐԻՍՏՈՆԵԱՑՈՒՄԸ

### *Օ. Սկսիչ*

Մերձավորարեւելյան տարածաշրջանի երկրներում արդի գլոբալացման դեմ զարգացող «պաշտպանական ռեակցիաներից» կարելի է առանձնացնել մի այնպիսի գործընթաց, ինչպիսին է տարածաշրջանի «ապաքրիստոնեացումը»:

Ապաքրիստոնեացմանը՝ Մերձավոր Արեւելքի երկրներից քրիստոնյաների արտագաղթին, շատ բանում օժանդակում են իսլամական ծայրահեղականության աճը, զինվորական, պետական եւ գործարար վերնախավի իսլամացումը: Մերձավոր Արեւելքում քրիստոնյաների թվաքանակը, տարբեր տվյալներով, կազմում է 12-ից մինչեւ 15 մլն մարդ: Պաշտոնական տեղեկատվության պակասի եւ մշտական գաղթի պատճառով դժվար է ճշգրիտ թիվ սահմանել: 20-րդ դարի սկզբին քրիստոնյաները կազմում էին տարածաշրջանի բնակչության 24 տոկոսը՝ ներառյալ Պաղեստինը, Եգիպտոսը, Հորդանանը, Լիբանանը, Սիրիան, Իրաքը եւ Թուրքիան: Այսօր նրանք 5 տոկոսից ավելի չեն: 70-ական թվականներին Իրաքում քրիստոնյաները կազմում էին 5,8 տոկոս, այսօր՝ 3 տոկոս: Երկրորդ աշխարհամարտից հետո Բեթղեհեմում քրիստոնյաները հաշվվում էին 85 տոկոս, այսօր՝ 12 տոկոս: Նույն միտումը բնորոշ է քրիստոնյաների համար մյուս սուրբ քաղաքին՝ Երուսաղեմին, որտեղ քրիստոնյաների թիվը 1922թ. 53 տոկոսից նվազել է մինչեւ ներկայիս 2 տոկոսը: 20-րդ դարի սկզբին քրիստոնյաները Սիրիայում կազմում էին երկրի բնակչության մեկ երրորդը, այսօր՝ 10 տոկոսից պակաս: Հորդանանում նույն իրավիճակն է. բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ քրիստոնյաների բաժինը 20-րդ դարի սկզբի համեմատ կրճատվել է շուրջ 10 տոկոսով: Եգիպտոսում ղպտիների թիվը 70-ականների համեմատ նվազել է մոտ երկու անգամ:

Պատերազմներն Իրաքում, դրացի համայնքների անվստահությունը եւ այլ գործոններ քրիստոնյաներին լուրջ հարված հասցրին: Անգլիկան եկեղեցու առաջնորդը Լոնդոնին ու Վաշինգտոնին մեղադրեց Իրաքի նկատմամբ «անհեռառես կուրսի» անցկացման մեջ, ինչը, նրա խոսքերով, սպառնալիք է ստեղծել «տարածաշրջանում քրիստոնեական համայնքի բուն գոյությանը»:

Քրիստոնյաներն աստիճանաբար հեռանում են Լիբանանից, եգիպտոսից ու Մերձավոր Արեւելքի այլ երկրներից: Իրաքում վերջին մարդահամարը (1987թ.) ցույց տվեց, որ երկրում ապրել է 1,4 մլն քրիստոնյա: Շատերն արտագաղթեցին 1990-ին երկրի նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ մտցնելուց հետո: Սադան Յուսեյնի վարչակարգի տապալումից հետո սաստկացան քրիստոնյաների հանդեպ հալածանքները, որոնց որոշ իսլամիստներ կոչում էին «խաչակիրներ», «ԱՄՆ զորքերին նվիրվածներ»: Տեղի Քրիստոնեական խաղաղ ասոցիացիայի տվյալներով՝ այսօր Իրաքի քրիստոնյաները կազմում են 450 հազար (մինչ ԱՄՆ գործողությունը եղած 800 հազարի փոխարեն), որոնց հաճախումները եկեղեցիներ կտրուկ նվազել են:

Հյուսիսային Իրաքի Էրբիլ քաղաքն այսօր դարձել է գլխավոր ապաստան քրիստոնյաների ներքին տեղափոխության համար, որոնց թիվը, տեղի կրոնական առաջնորդների գնահատականներով, հաշվվում է հազարներով: Բաղդադի ավանդաբար քրիստոնեական այնպիսի շրջաններ, ինչպիսիք են Դորան եւ Քարադը, այսօր գործնականում դատարկվել են:

Հալածանքների նոր ալիք բարձրացավ 2006թ. սեպտեմբերին՝ ի պատասխան իսլամի հասցեին Բենեդիկտոս XVI պապի արած արտահայտությունների: Կրկին հաճախացան պայթյունները եկեղեցիներում, Մոսուլի քահանաներից մեկն առեւանգվեց ու գլխատվեց: Հռոմի պապի ելույթից հետո Բաղդադի եկեղեցիների առնվազն 60 տոկոսը ծայրահեղականների գրոհների վտանգի պատճառով փակվեց (մինչ պատերազմը Բաղդադի քրիստոնեական համայնքն ընդհանրապես ամենամեծն էր ողջ Մերձավոր Արեւելքում):

Այսօր Իրաքում շարունակ տեղի են ունենում հարձակումներ քրիստոնյաների վրա, հաճախակի են դարձել առեւանգումները: Հարյուր տարի անց վերադարձավ ջիզան. շատ քրիստոնյաների ստիպում են վճարել հատուկ հարկ, որը երբեմն կազմում է հարյուրավոր, անգամ հազարավոր դոլարներ: Քրիստոնյա ծնողները երկյուղում են իրենց երեխաներին ուղարկել դպրոց եւ ինստիտուտ՝ նրանց հասակակիցների կողմից սպառնալիքների պատճառով: Քրիստոնյա կանայք սկսում են կրել աբա (մուսուլման կանանց ավանդական վերնազգեստ) ու գլուխը ծածկել գլխաշորով, որպեսզի չտարբերվեն մուսուլման կանանցից:

Իրաքից քրիստոնյաների դատարկվելուն միանում են եւ պաղեստինյան տարածքների բնակիչները: Քրիստոնյաների թվաքանակը կազմում է մոտ 40-50 հազար՝ տարածքի բնակչության շուրջ 2 տոկոսը, որոնցից 2 հազարը Գազայում են (բնակչության 1 տոկոսից պակաս): Ջինված բախումները, ներառյալ պաղեստինյան գրոհայինների հարձակումները եւ իսրայելական հակաահաբեկչական միջոցները, տնտեսական անկումն ու ծնելիության ցածր մակարդակը հանգեցնում են քրիստոնյաների թվի կրճատման: 1970թ. նրանք կազմում էին բնակչության 5,3 տոկոսը: Այսօր այդ հավատքի հետեւորդները հիմնականում բնակվում են Բեթ-ղեհեմի եւ Ռամալլահի մերձակայքում:

Լիբանանում, որտեղ քրիստոնյաները կազմում են մոտ 1,35 մլն կամ բնակչության 34 տոկոսը («World Christian Database»-ի 2005թ. տվյալներով 1932թ. նրանք կազմում էին 55 տոկոսը), նախկին վարչապետ Ռաֆիկ Յարիրիի սպանությունից հետո երկրում լարվածության աճի եւ սիրիական զորքերի դուրսբերման պատճառով քրիստոնյաների բնակության շրջաններում հաճախացել են ահաբեկչությունները: Շատ մասնագետներ կանխատեսում են Լիբանանի քրիստոնյա ու մուսուլման բնակչության թվաքանակի միջեւ խզման ավելացում:

Միեւնույն ժամանակ, Եգիպտոսում չի վերանում ղպտիների եւ մուսուլմանների միջեւ լարվածությունը: Եգիպտական ղպտիների գյուղերը հարձակումների են ենթարկվում «Մուսուլման եղբայրներ»-ի գրոհայինների կողմից: Իսլամիստները գտնում են, որ ղպտիները հանդիսանում են իսրայելական հատուկ ծառայությունների հանցակիցներ: Եգիպտոսին վերաբերող՝ ընթացիկ տարվա մայիսին պատրաստված HRW (Human Rights Watch)-ի զեկույցում հայտնվում է, թե երկրում առկա է ղպտիների խտրականության խնդիր. ողջ երկրում նշվել է խտրականության շուրջ 60 փաստ: Դիտվում է Եգիպտոսի ղպտի բնակչության նվազման միտում: Յետազոտողները նշում են հետեւյալ պատճառները. Եգիպտոսի կառավարության կողմից քրիստոնյա բնակչության նկատմամբ խտրականությունը, մուսուլմանական ծայրահեղական խմբավորումների, մասնավորապես՝ «Մուսուլման եղբայրներ»-ի հալածանքները, աշխատանքի տեղավորման դժվարությունները, սեփականության ձեռքբերման հարցում խնդիրները եւ այլն: Համաձայն

վերջին տվյալների՝ Եգիպտոսի դպտի բնակչության թիվը կազմում է 7,6 մլն մարդ, այսինքն՝ երկրի ողջ բնակչության 10 տոկոսը:

Ապաքրիստոնեացունը շոշափեց եւ Սիրիան: Թեեւ երկրում չկա բավարար չափով հավաստի վիճակագրություն, այնուամենայնիվ, շատ մասնագետներ պնդում են, թե քրիստոնյաներն արդեն բնակչության 10 տոկոսից պակաս են կազմում, հիմնականում՝ արտագաղթի (ներառյալ երաշտից ու ջրհեղեղներից տուժած գյուղական շրջաններից արտագաղթը) եւ ծնելիության ցածր մակարդակի պատճառով: Իրաքի պատերազմը բերեց նրան, որ քրիստոնյաների համար երկիրը դարձավ պակաս ապահով: Այսպես, 2004թ. երկու քրիստոնյա սպանվեց մուսուլմանների կողմից, որոնք նրանց անվանել էին «Բուշի կողմնակիցներ»: Միջադեպի հետեւանքով 2 հազարից ավելի քրիստոնյաներ անցկացրին բողոքի ցույց՝ առաջինը Սիրիայի պատմության մեջ: Հազվադեպ չեն նաեւ վանդալիզմի դեպքերը եկեղեցիներում: Բայց հիմնականում արտագաղթը (թեպետ այն չի կարելի կոչել զանգվածային) բացատրվում է տնտեսական շարժառիթներով:

Մերձավոր Արեւելքի երիտասարդ քրիստոնյաներն ավելի շատ են ձգտում տեղափոխվել արեւմտյան երկրներ: Քրիստոնյա գաղթականներն առավել հեշտ են հարմարվում Մերձավոր Արեւելքից դուրս նոր երկրներում, քանզի նրանք, որպես կանոն, ավելի կրթված են, ավելի ապահովված, նրանց մոտ արտասահմանում բարեկամական կապերն ավելի շատ են: Բացի այդ, նրանք ընտանիքում ավելի քիչ երեխաներ ունեն, քան մուսուլմանները: Օրինակ, Իսրայելում, 2006թ. տվյալներով, մուսուլմանների մոտ ծնելիության մակարդակը 2 անգամ ավելի մեծ է քրիստոնյաների մոտ ծնելիության մակարդակից (4 նորածին յուրաքանչյուր մուսուլման կնոջը): Ընդ որում, Իսրայելի քրիստոնյաների մոտ ծնելիության միջին մակարդակը ամենացածրն է բնակչության մյուս կատեգորիաների համեմատ (2,2 նորածին յուրաքանչյուր կնոջը): Լիբանանում շիաների շրջանում ծնելիության մակարդակը կազմում է 8-9 երեխա յուրաքանչյուր ընտանիքին, սուննի ընտանիքներում միջինը ծնվում է 5-ական երեխա, իսկ քրիստոնյա ընտանիքներում՝ 2-ական երեխա:

Մերձավոր Արեւելքի խոշոր քրիստոնեական համայնքներ (որոնց թիվը գերազանցում է բնակչության 4 տոկոսը) ունեցող երկրներից են Եգիպտոսը, Սիրիան, Լիբանանը: Ակնհայտ է, որ

այսօր ապաքրիստոնեացուն՝ այս կամ այն չափով սկսում է շոշափել երկրներ, ուր ավանդաբար խաղաղ գոյակցել են 2 կրոնների ներկայացուցիչները: Այստեղ նկատվում է երկակի միտում: Մի կողմից՝ կարելի է պնդել, թե այդ գործընթացը հանդիսանում է ազգային տնտեսությունների թափանցիկության աստիճանի ավելացման, ինտեգրման եւ գլոբալացման աճի հետեւանք: Քրիստոնյաները հոգեպես առավել մերձ են Արեւմուտքին. անշուշտ, շատերին գրավում են Եվրոպայի ու Ամերիկայի զարգացած երկրների հնարավորությունները, եւ նրանք հաճույքով արտագաղթում են: Հնարավոր է, քրիստոնյաները բնակչության այն խումբն են Մերձավոր Արեւելքում, որն առավել չափով է ենթակա արեւմտականացման, որին մոտուլմանները չեն կարող դրական արձագանքել: Համապատասխանաբար, աճում է միջկրոնական լարվածությունը: Արդյունքում՝ ԱՄՆ Միջազգային կրոնական ազատության հանձնաժողովի նման կառույցը ստանում է «սիոնաքրիստոնեական էքսպանսիայի» գործիք անվանումը: Հատկանշական է այն փաստը, որ այնտեղ, ուր որպես ընդդիմություն ժողովրդավարական արժեքներին եւ բազմակարծությանը, որոնք բնորոշ են գլոբալացման գործընթացներին, պահպանվել է ուժեղ կենտրոնական իշխանություն (Սիրիան կամ Իրանը), քրիստոնյաներն ավելի պաշտպանված գտնվեցին: Ընդհանուր առմամբ, Մերձավոր Արեւելքում կրոնի նկատմամբ դիտվում են հակասական միտումներ: Այսպես, Սաուդյան Արաբիայում այլ դավանանքների ներկայացուցիչներին կրոնական պաշտամունքի կատարման համար կարող են ձերբակալել, ճիպոտահարել ու երկրից վտարել: Միեւնույն ժամանակ, հարեւան Արաբական Միացյալ Եմիրություններում կան Կրիշնայի եւ Շիվայի տաճարներ, բողոքականների, կաթոլիկների եւ ուղղափառների եկեղեցիներ ու աղոթատներ: Կարելի է եզրակացնել, որ ֆինանսական, տեղեկատվության տարածման գլոբալ համակարգերի ձեւավորումը, ինչպես նաեւ գլոբալացման շատ այլ ասպեկտներ Մերձավոր Արեւելքում կուղեկցվեն նաեւ հակամիտումներով՝ ներառյալ արեւմտյան արժեքներին հակակշիռների ստեղծումը, որոնց թվում եւ տարածաշրջանի ապաքրիստոնեացումը:

**www.iimes.ru**

«Հանրապետական», 2008, թ. 1

**«ՄԵՆՔ ՇԱՐԺՎՈՒՄ ԵՆՔ ԴԵՊԻ ԲԱԶՄԱԲԵՎԵՆ  
ՔԱՈՍԱՅԻՆ ԱՇԽԱՐՀ»**

***Յուրեր Վեդրին***

*Միջազգային հարաբերություններով զբաղվող ֆրանսիական քաղաքական գործիչների շարքում Յուրեր Վեդրինն առանձնակի տեղ է գրավում: Նրա բազմամյա կարիերայի զագաթը եղավ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի պաշտոնը (1997–2002թթ.): Ավելի վաղ նա աշխատել է նախագահ Միտերանի պաշտոնական ներկայացուցիչ, ապա՝ աշխատակազմի գլխավոր քարտուղար: Փարիզում Յուրեր Վեդրինի հետ զրուցել է մեր թղթակիցը:*

**Հարց:** Վերջերս «Gaz de France» եւ «Suez» ընկերությունների միավորումը վրդովեցրել է մի շարք եվրոպական երկրների եւ հովանավորչական մեթոդների վերաբերյալ բանավեճի վերսկսման առիթ դարձել: Մենք կանգնած ենք հովանավորչության վերադարձի շեմի՞ն:

**Պատ.:** Անգամ ներկայիս գլոբալացված տնտեսությունում, երբ շուկայական մեխանիզմները տարածվել են ողջ աշխարհում, ցանկացած պետություն շուկայական թափանցիկությունն այս կամ այն չափով զուգակցում է հովանավորչության տարրերին: Չկա ոչ մի լիակատար փակ երկիր. նույնիսկ Յու.Ս. Կորեայում ստեղծված են հատուկ տնտեսական գոտիներ: Սակայն ոչ ոք ամբողջովին չի բացում իր տնտեսությունը, քանզի միշտ էլ կան որոշակի ռազմավարական շահեր: Նայեք Միացյալ Նահանգներին. այն շարունակ խոսում է տնտեսական ազատության մասին, քարոզում ազատականության գաղափարներ, բայց նրա մոտ առկա են ազգային բիզնեսի պաշտպանության չափազանց գործունե մեխանիզմներ:

Մենք կարող ենք թվել աշխարհի տարածաշրջաններ, որտեղ տնտեսական ազատությունը եւ թափանցիկությունը խոր արմատներ են գցել: Որպես օրինակ՝ կարելի է բերել Արեւմտյան Եվրոպան: Այստեղ տնտեսության գործունեության ներքին հիմքերը միաժամանակ հանդիսանում են գաղափարախոսության բաղկացուցիչ մաս: Այսպես, եվրոպացիները հավատում են ազատական շուկայական տնտեսությանը եւ, համապատասխանաբար, շուկա-



ների թափանցիկությանը: Միաժամանակ, վերջին տասնամյակների Արեւմտյան Եվրոպայի բացասաբար է ընկալում ազգայնականությունն ու ցանկացած փակվածություն, քանզի այն կարող է հանգեցնել պատերազմի: Անգամ հայրենասիրությունն է հաճախ սկսում զգուշավորությամբ ընկալվել: Բացի այդ, այստեղ ջանում են չսեւեռվել ազգային ինքնության վրա՝ փորձելով բոլոր մարդկանց առաջին հերթին ընդունել որպես համամարդկային արժեքների կրող, այլ ոչ որպես որեւէ առանձին ազգության ներկայացուցիչ:

Անշուշտ, նման եվրոպական մոտեցման մեջ առկա է պարզամտության տարր, քանզի մենք հիանալի տեսնում ենք, որ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Չինաստանը, Չնդկաստանը կամ Բրազիլիան տնտեսական եւ գաղափարախոսական թափանցիկությունը կիրառում են սոսկ որոշակի սահմաններում: Ավելին, նրանք հաճախ ապավինում են հովանավորչությանը կամ, եթե կամենաք, «տնտեսական հայրենասիրությանը»:

Յովանավորչության հարցը չի կարող դիտվել զուտ տեսական առումով: Չէ՞ որ մենք չունենք ընտրության հնարավորություն լիակատար թափանցիկության եւ հովանավորչության կամ կատարյալ ունիվերսալիզմի եւ ազգային ինքնության միջեւ: Անհրաժեշտ է գտնել հաշվեկշիռ երկու բեւեռների միջեւ, ինչը համաշխարհային տնտեսությանը թույլ կտա գործել արդյունավետ, բայց միաժամանակ յուրաքանչյուր երկրի հնարավորություն կտա օրինական միջոցներով պաշտպանել իր հիմնարար շահերը:

**Չարք:** 30 տարի առաջ մոդայիկ էր առանց ազգային պետությունների միասնական եվրոպական միության մասին դատողություններ անել, իսկ այժմ այդ գաղափարի մասին նույնիսկ չեն հիշում:

**Պատ.:** Դա լիակատար պատրանք էր: Եվրոպայում կային մարդիկ (նրանց կարելի է համարել ֆեդերալիստներ), որոնք երազում էին Ամերիկայի Միացյալ Նահանգներին համանման՝ Եվրոպայի Միացյալ Նահանգների մասին: Ոմանք անգամ երազում էին միավորել Ֆրանսիան ու Գերմանիան, թեւէ դա զուտ երեւակայություն էր: Սակայն այսօր մենք վերջնականապես համոզվեցինք, որ այդ կարգի հայացքները չափազանց հեռու են իրականությունից: Նման փաստի ճանաչման մեջ ողբերգական ոչինչ

չկա: Եվրոպական երկրները ոչ մի ընդհանուր բան չունեն ԱՄՆ-ի հետ: Դեռ ամերիկյան առաջին նախագահ Ջորջ Վաշինգտոնն է ասել. «Մենք բոլորս միանման ենք. մենք խոսում ենք նույն լեզվով, մեր կրոնը մեկն է, մենք ունենք նույն իրավունքները, մեր թշնամին մեկն է՝ բրիտանական միապետությունը»: Նմանատիպ ոչինչ չի կարելի ասել շվեդների ու պորտուգալացիների, բրիտանացիների ու հույների վերաբերյալ: Հատկապես այդ պատճառով Եվրոպայում ազգային պետություններից հրաժարման եւ լիակատար քաղաքական ինտեգրման գաղափարը հենց սկզբից էլ պատրանք էր:

Լիովին հնարավոր է, որ որոշակի պահի այն արդյունավետ էր, որովհետեւ օգնեց Երկրորդ աշխարհամարտից հետո պայքարել ազգայնականության դեմ: Ինքնին նման կարգի հայեցակետերը միանգամայն գրավիչ են, բայց Եվրոպական երկրների բնակիչներն ամենեւին էլ չէին ուզում դրանք կյանքի կոչել: Ի դեպ, այդ գաղափարը չի հայտնվել ոչ մի Եվրոպական պաշտոնական փաստաթղթում, քանզի դրանք մշակողները տվյալ հարցում շատ զուշավոր էին:

Այն, ինչին ձգտել է Եվրոպան, ժակ Դելորը կոչել է ազգային պետությունների դաշնություն: Ֆրանսիան, ընդ որում, մնում է Ֆրանսիա, Գերմանիան՝ Գերմանիա, Լեհաստանը՝ Լեհաստան եւ այդպես շարունակ, սակայն, միաժամանակ, նրանք կազմում են միություն, որը թույլատրում է շատ ուղղություններով իրականացնել ընդհանուր քաղաքականություն:

**Հարց:** Իսկ ի՞նչ եք Դուք մտածում Եվրոպական միության ընդարձակման մասին:

**Պատ.:** Անձամբ ես հանդես եմ գալիս ընդարձակման սահմանների որոշակիացման օգտին: Որոշակի պահի պետք է կանգ առնել, այլապես ողջ Եվրոպական նախագիծը պարզապես կմեռնի: Ոմանք գտնում են, թե որքան շատ երկիր մտնի ԵՄ, այնքան այն ուժեղ կլինի: Մյուսները պնդում են, որ այսուհետեւ՝ նոր պետությունների միացման դեպքում, Եվրամիությունն այլեւս համասեռ չի լինի, եւ միասնական որոշումներ գտնելը կդառնա ավելի դժվար:

Միասնական Եվրոպայի ապագան միայն քաղաքական ինտեգրման եւ աշխարհագրական սահմանների հարց չէ: Այն նաեւ հարց է, թե աշխարհում Եվրոպական միությունն իրենից ինչ է

ներկայացնելու: Այն պարզապես դառնալու է կյանքի բացառիկ հաճելի պայմաններով գոտի<sup>օ</sup>, թե<sup>օ</sup> հանդիսանալու է իրական համաշխարհային ուժ: Եվրոպական որոշ ղեկավարներ կարծում են, թե մեր արժեքների եւ կենսաոճի պաշտպանության համար անպայման պետք է լինել ազդեցիկ ուժ համաշխարհային ասպարեզում, մասնավորապես, Ռուսաստանի, Չինաստանի կամ արաբական երկրների նկատմամբ: Իսկ մյուսներն, ընդհակառակը, վախենում են դրանից՝ համարելով, որ հարկավոր չէ ԵՄ-ը վերածել ուժի առանձին բեւեռի: Եվ մտավախությունները, որոնք նրանք արտահայտում են, հիմնված են անցյալի փորձի վրա, երբ որոշ եվրոպական երկրներ արդեն փորձել են ուժ ցուցադրել:

**Հարց:** Ի՞նչ եք Դուք սպասում Ամերիկայից նախագահական ընտրություններից հետո:

**Պատ.:** Մենք շարժվում ենք դեպի բազմաբեւեռ քառսային աշխարհ: Միացյալ Նահանգները կշարունակի մնալ հիմնական խաղացող, բայց երեւան կզան եւ այլ ուժեր մասնակիցներ՝ Ռուսաստան, Չինաստան, ճապոնիա, Բրազիլիա... Բացի այդ, իրական քաղաքական ուժ կարող է դառնալ միավորված Եվրոպան: Եթե դա տեղի չունենա, ապա Ֆրանսիան, Գերմանիան եւ Մեծ Բրիտանիան կշարունակեն ինքնուրույն խաղալ կարելու քաղաքական դերեր:

Եթե խոսենք կոնկրետ ԱՄՆ-ի մասին, ապա ես չեմ սպասում, որ հաջորդ նախագահի կուրսը հակադիր կլինի ներկայինս, քանզի ամերիկյան քաղաքականությունում միշտ առկա են ժառանգության տարրեր: Ջորջ Բուշն արդեն այժմ անցկացնում է ամենեւին ոչ այն գիծը, ինչը նախկինում էր: Նրա նախագահության առաջին ու երկրորդ ժամկետների միջև նկատվում է ակնհայտ տարբերություն: Բացի այդ, խոշոր տերությունները միշտ հակված են միակողմանի գործողությունների: Ընդ որում, այլ բան է, որ նրանք կարող են իրենց բավական հարգալից պահել մյուսների նկատմամբ, այնինչ Բուշն իր կառավարման սկզբում կոշտ քաղաքականություն էր վարում:

Հաջորդ նախագահական ընտրություններից հետո ԱՄՆ-ը նախկինի պես կհամարի, որ ինքն աշխարհում խաղում է առանձնակի դեր, որ իր վրա դրված է քաղաքակրթական առաքելություն եւ որ իր ինքը պետք է ժողովրդավարության ու ազատական

տնտեսության արժեքները մատուցի մնացած բոլորին: Ամերիկյան հավատում է իր բացառիկ կոչմանը: Եվ նման կարգի տրամադրվածությունը չի կորչի նոր նախագահի գալու հետ:

Մյուս կողմից՝ անշուշտ, հնարավոր են էական փոփոխություններ: Օրինակ, ինչ վերաբերում է Մերձավոր Արևելքին, Բուշի վարչակազմի դիրքորոշումը գործնականում լիովին համընկել է Իսրայելի աջերի հայացքներին. ես նկատի ունեմ «Լիկուդ» կուսակցությունը: Նրանք միեւնույն կերպ են նայել պաղեստինյան խնդրին եւ արաբական աշխարհի հետ հարաբերություններին: Նախագահական ընտրություններից հետո մենք կարող ենք սպասել առավել իրատեսական եւ առավել գործնական հայացքների վերադարձի:

**Չարք:** Չինաստանը ցանկացած հարմար պահի ընդգծում է իր գլոբալ քաղաքական հավակնությունների բացակայությունը: Դուք դրան հավատո՞ւմ եք:

**Պատ.:** Նույնիսկ Չինաստանի հարցերով մասնագետներն այդ մասին միասնական կարծիք չունեն: Եթե նայենք պատմական տեսանկյունից, ապա Չինաստանը երբեք չի հավակնել, որպեսզի ցուցաբերի առանձնահատուկ ազդեցություն: Այդ Արեւմուտքն է միշտ ձգտել փոխել շրջակա աշխարհը: Նման մոտեցումը որոշակի չափով ձեւավորվել է քրիստոնեական կրոնում: Գոյություն ունեն երկու դավանանք, որոնք միշտ ձգտել են մարդկանց բերել իրենց հավատքին՝ իսլամն ու քրիստոնեությունը, հատկապես՝ կաթոլիկությունը եւ բողոքականությունը: Հենց կաթոլիկության ու բողոքականության հակումը դեպի միսիոներականություն եղավ գաղութատիրության հիմքը:

Չինաստանի կրոնի եւ պատմության մեջ նման ոչինչ չի դիտվում: Այդ երկիրը երբեք իր առջեւ խնդիր չի դրել գերիշխել աշխարհում: Չինացիներն աշխարհագրական մեծ հայտնագործություններն արել են շատ վաղ, եվրոպացիներից անհամեմատ շուտ՝ օգտագործելով շատ ավելի մեծ նավեր, քան Քրիստափոր Կոլումբոսը: Շատերը գտնում են, որ նրանք նաեւ հասել են Ամերիկա՝ արդեն չխոսելով նրանց կողմից Աֆրիկյան ուսումնասիրելու մասին: Բայց մի անգամ կայսրն ասաց, որ հեռավոր ճանապարհորդությունները դադարեցվում են, որովհետեւ չինա-

ցիներին դա այլևս չի հետաքրքրում: Նրանք իրենց համարում էին տիեզերքի կենտրոն: Եթե բարբարոսները ցանկանում էին գնալ նրանց մոտ, ապա նրանք կարող էին դա անել, իսկ եթե չէին ցանկանում, ապա կարող էին այնուհետև էլ մնալ խավարի ու սոփոտության մեջ: Չինացիներին բոլորովին չի հրապուրել լուսավորիչների դերը:

Ինձ թվում է, այդ հոգեմտածելակերպը հետագայում էլ կդրսևորվի: Չեն կարծում, թե Չինաստանի պահվածքը կարող է հիշեցնել Եվրոպայի կամ Ամերիկայի գործողությունները: Սակայն երբեք չի կարելի մոռանալ տրամաբանության բնական զարգացման մասին, որը տնտեսապես հզոր տերություններին մղում է այս կամ այն քաղաքական քայլերի: Չինաստանը զարգանում է արտասովոր տեմպերով, այն կարիք ունի մավթի, գազի, օգտակար հանածոների, նոր խողովակաշարերի անցկացման, հզոր առևտրային մավատորմի: Նրան հարկ է լինելու ապահովել իր տնտեսական անվտանգությունը: Ու եթե անգամ Պեկինն այսօր քաղաքական դաշինքների հետաքրքրություն չի դրսևորում, միևնույն է՝ վաղ թե ուշ կսկսի գործել տնտեսական զարգացման տրամաբանությունը:

Մեծ տերություն դառնալու ճանապարհով ընթացքը կարող է Չինաստանին բավական հեռուն տանել: Եթե ի հայտ գան իրական դժվարություններ, ապա կարող են ծագել պետությունների տարբեր տեսակի միավորումներ, որոնք կցանկանան զսպել Չինաստանի ազդեցությունը, եւ Պեկինին հարկ կլինի դրան հակադարձել: Դեռևս Ցզյան Ցզեմինի օրոք ընդունվեց «Չինաստանի խաղաղ վերընթաց» կարգախոսը: Այսինքն՝ որդեգրվեց վերելքի ուղի, որը պիտի ընթանա խաղաղ: Սակայն ամենեւին ոչ բոլորն են դրան հավատում: Այնպես որ՝ Պեկինի ապագա քաղաքականության հարցը դեռ մնում է բաց:

«Россия в глобальной политике», 2007, դեկտ.

«Հանրապետական», 2008, ք. 1

## ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԴՈՔՍՆԵՐԻՑ.

### *ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ*

Ֆրանսիացի մաթեմատիկոս մարքիզ դը Կոնդորսեն առաջինը ձեւակերպեց կամքի ժողովրդավարական արտահայտման հիմնարար խնդիրը: 1785թ. նա հրապարակեց «Էսսե մեծամասնության որոշումների հավանականության վերլուծության կիրառման մասին», որտեղ բանաձեւեց «Կոնդորսեի պարադոքսը». մեծամասնության (օրինակ՝ ընտրողների) անհատական նախապատվությունները ոչ միշտ են արտացոլվում նմանատիպ հավաքական որոշումներում (օրինակ՝ ընտրությունների արդյունքում):

1952թ. ամերիկացի տնտեսագետ Էլ մաթեմատիկոս Քենեթ Արոուն հրապարակեց «Սոցիալական ընտրություն և անհատական արժեքներ» նշանային գիրքը, որտեղ ձեւակերպեց «Արոուի պարադոքսը» (այդ և ուրիշ աշխատանքների համար 1972թ. նա տնտեսագիտության բնագավառում արժանացավ Նոբելյան մրցանակի): Արոուն առանձնացրեց ժողովրդավարական ընտրությունների 5 նորմ, որոնք հանդիսանում են ընտրողների մեծամասնության կամքի որոշման մեխանիզմներ: Նա ապացուցեց, որ սկզբունքորեն անհնար է ստեղծել ընտրական համակարգ, որի շրջանակներում չխախտվի այդ նորմերից գոնե մեկը:

Անգլիացի տնտեսագետ, փիլիսոփա ու սոցիոլոգ Ամարթյա Սենը (1998թ. տնտեսագիտության բնագավառում ստացել է Նոբելյան մրցանակ) շարունակեց Կոնդորսեի և Արոուի մտորումների ընթացքը և մշակեց «սոցիալական ընտրության» տեսությունը: Սենի կարծիքով, լայն համաձայնության առկայության դեպքում, հասարակության կատարած ընտրությունը կասկած չի հարուցում: Եթե կարծիքները բաժանվում են, ապա հարցն այն է, որպեսզի գտնել տարբեր կարծիքներն ի մի բերելու միջոցներ: Եվ հենց այստեղ սկսվում են պրոբլեմները, քանզի իրական ընտրությունների պայմաններում, բոլորին բավարարող որոշումներ գտնելն անհավատալիորեն բարդ է, եթե ընդհանրապես հնարավոր է:

Կոնդորսեի, Արոուի և Սենի գաղափարներն այժմ հիմք են ծառայում այդ ոլորտում շատ հետազոտությունների համար: Ամերիկացի մաթեմատիկոս Դոնալդ Սասրին «Որոշումները և

ընտրությունները. բացատրելով անսպասելին» ու «Քառսային ընտրություններ» գրքերում ապացուցում է, որ Արոուի եւ Սենի տեսությունները ճիշտ են ամենեւին ոչ բոլոր դեպքերի համար: Նրա կարծիքով, նման վարկածներն արհեստականորեն պարզեցնում են խնդիրը՝ ուղղակի հաշվի չառնելով շատ գործոններ: Ըստ Սաարիի, ընտրություններն անհամեմատ ավելի հաճախ են տալիս անսպասելի արդյունքներ, քան ընդունված է համարել. նրանց արդյունքները շատ դեպքերում արմատապես տարբերվում են ընտրողների սկզբնական ցանկություններից (դա վերաբերում է ոչ միայն իշխանության մարմինների ընտրություններին, այլեւ մրցանակների դափնեկիրների որոշմանը, ընկերությունների տնօրենների խորհուրդների ընտրություններին եւ այլն): Սաարին հակված է դրանում մեղավոր համարել ոչ ընտրողներին եւ ոչ էլ իշխանությանը (եթե, անշուշտ, ընտրություններն անցնում են արդար), այլ քվեարկության ոչ համարժեք ընթացակարգերը:

Ավստրալացի գիտնականներ Ջեֆրի Բրենմանը եւ Լորեն Լոմասկին «Ժողովրդավարությունը եւ որոշումը» գրքում ապացուցում են, որ քվեարկության ժամանակ պատասխանատու եւ տեղեկացված ընտրողը հաճախ ընդունում է ամենեւին ոչ լավագույն որոշումը: Քաղաքական գործիչներին կամ կուսակցություններին կողմ քվեարկելու փոխարեն, որոնք, օբյեկտիվ չափանիշներով, ընդունակ են ավելի լավ պաշտպանել նրա շահերը, ընտրողը հաճախ ղեկավարվում է բնավ ոչ բանականության ձայնով, այլ ինչ-որ ուրիշ շարժառիթներով: Բրենմանը եւ Լոմասկին վերլուծեցին Ավստրալիայի, ԱՄՆ ու Մեծ Բրիտանիայի «նշանային» քվեարկությունների արդյունքները եւ հայտնաբերեցին ընտրողների կողմից ընդունված միանգամայն ոչ տրամաբանական որոշումների բազմաթիվ փաստեր: Ընդ որում, ինչն առավել ապշեցուցիչ է, մինչ ընտրությունների օրը շատ ընտրողներ ունենում են մեկ տեսակետ, սակայն գալով ընտրական տեղամասեր՝ այն փոխում են հակառակի:

Գրքի հեղինակները պնդում են, թե ընտրողներն իրենց ընտրությունը խարսխում են երկու հիմնավորումների վրա՝ «գաղափարախոսական» եւ «նյութական»: «Գաղափարախոսական» ընտրողն ավանդաբար քվեարկում է այս կամ այն քաղաքական ուժի օգտին, «նյութականը»՝ ականջալուր է լինում, առաջին հերթին,

քաղաքական գործիչների խոստումներին: Իրականության մեջ «գաղափարախոսությունը» եւ «նյութականությունը» հաճախ փոխում են տեղերը: Արդյունքում՝ անհնար է հաղթել ընտրություններում սոսկ այն հստակ ընկալման հաշվին, թե ինչ է քաղաքական գործիչներից սպասում լսարանը: Բրենանի ու Լոմասկու կարծիքով, հենց այդ պարադոքսով է պայմանավորված ժողովրդավարական հասարակության թուլությունը եւ, միաժամանակ, ուժը. քաղտեխնոլոգների ողջ ցանկությամբ հանդերձ, ընտրողին հնարավոր չէ ծրագրավորել:

Ամերիկացի գիտնականներ Շոն Բոուլերը եւ Թոդ Դոնովանը «Պահանջելով փոփոխություններ» գրքում ապացուցում են այլ կանխադրույթ: Նրանք ելնում են այն բանից, որ առավել պատասխանատու քվեարկությունների՝ օրինակ, հանրաքվեների ժամանակ, ընտրողներն ընդունում են որոշումներ՝ հաշվի առնելով երկու գործոն. իրենց անձնական շահերը եւ տեղեկատվությունը, որին իրենք տիրապետում են: Եթե ընտրողները սատարում են, մասնագետների տեսակետից, անսպասելի առաջարկությունների կամ քվեարկում «կասկածելի» թեկնածուների օգտին, դա ամենեւին էլ չի նշանակում, թե լսարանին հիմարացրել են կամ երկրի քաղաքացիներն ընդունակ չեն ճիշտ որոշում կայացնել: Բոուլերի եւ Դոնովանի կարծիքով, իրականում, դեպքերի ճնշող մեծամասնությունում ընտրողները կատարում են միանգամայն խելամիտ ընտրություն. ընտրական տեխնոլոգիաների մասնագետները, լրագրողները եւ պետական պաշտոնյաները պարզապես անկարող գտնվեցին հասկանալու ժողովրդի իսկական տրամադրությունները:

«Հակասություններ ընտրողի պահվածքում» ակադեմիական ժողովածուի խմբագիրներ Ռիչարդ Նիեմին եւ Յերբերտ Վեյսբերգը կազմել են ընտրողների պարադոքսային պահվածքի մասին հողվածների հավաքածու: Նրանց տվյալներով, ընտրողի պահվածքը կարելի է կանխատեսել՝ տիրապետելով նրա ութ հիմնական բնութագրերի մասին տեղեկատվությանը: Դրանցից են, օրինակ, ընտրողի տնտեսական եւ սոցիալական բնութագրիչները, երկարաժամկետ քաղաքական մոլությունները, քաղաքական հրատապ խնդիրների վերաբերյալ տեսակետը, երկրում ու անձնական կյանքում ներկայիս իրավիճակի գնահատականը, գործող իշխանու-



թյան հանդեպ նրա գնահատականը եւ այլն: Սակայն այստեղ ծագում է գլխավոր հարցը. քվեարկության պահին թվարկված գործոններից ո՞րը կլինի վճռորոշ: Եվ տեղում ի հայտ է գալիս հետաքրքիր պարադոքս. ընտրողը հաճախ ինքն ի վիճակի չէ նկարագրել իր նախապատվությունների համակարգը: Օրինակ, նա չի կարողանում որոշում ընդունել, թե իր համար որն է առավել կարեւոր՝ ներկայիս իշխանության աշխատանքի արդյունքնե՞րը, թե՞ իր անձնական քաղաքական հակումները:

Այս պատճառով ընտրությունների օրն ընտրողը հաճախ գործում է պահի ազդեցության տակ: Նրա կամքի արտահայտման վրա ի գորու են ազդել ամենաանկանխատեսելի գործոններ: Այսպես, օրինակ, որեւէ կուսակցության ցուցադրական քարոզչություն մի ընտրողի, որը վաղուց է այդ կուսակցությանը համակրում, կարող է վերամբարձ եւ հիմար թվալ, ուստի նա կիրաժարվի նրան կողմ քվեարկելուց, իսկ մյուսին՝ մրցակից քաղաքական ուժին պատկանողին, ընդհակառակը՝ խելացի ու վառ, ուստի նա իր ձայնը կտա նրան:

«Քվեարկելով ծրագրի օգտին» գրքի հեղինակ Սթիվեն Նիքոլսոնն ապացուցում է, որ ընտրողը դեպքերի մեծամասնությունում քվեարկում է՝ գնահատելով իրադրությունը համալիր ամբողջության մեջ: Օրինակ՝ եթե խոսքը տեղական իշխանության մարմինների ընտրությունների մասին է, նա վերլուծում է իրադրությունը ոչ միայն իր շրջանում կամ քաղաքում, այլեւ ողջ երկրում: Այսինքն՝ Նիքոլսոնի կարծիքով, քաղաքական գործիչներին, կամա-ակամա, հարկ է լինելու համակերպվել ոչ միայն «նեղ», այլեւ «լայն» օրակարգին: Ցանկացած քվեարկություն ընտրողի համար հանդիսանում է հարցերի լայն շրջանակի հանդեպ սեփական կարծիքի արտահայտման միջոց, եթե անգամ նա ինքն այդ մասին չի խորհրդածում: Ամերիկյան նահանգներում մի քանի ընտրությունների վերլուծության հիման վրա Նիքոլսոնը ցույց է տալիս, որ «նեղ» ու «լայն» օրակարգերը խիստ քմահաճորեն են իրար ծածկում: Այսպես, օրինակ, հարկերի իջեցման մեջ շահագրգռված ընտրողները հրաժարվել էին քվեարկել այն քաղաքական գործիչների օգտին, որոնք խոստացել էին դրանք նվազեցնել. պատճառը թեկնածուների դիրքորոշումն էր միանգամայն այլ հարցերում, օրինակ՝ նրանց վերաբերմունքը գլոբալ տաքացմանը:

Այս իրավիճակում ընտրողի վրա վիթխարի ազդեցություն են գործում զանգվածային լրատվամիջոցները, որոնք ձեւավորում են իրական՝ հաճախ քվեարկության թեմատիկային չհամընկնող օրակարգ:

«Ռեալիզմալ ընտրողի մասին առասպելը» գրքի հեղինակ, տնտեսագետ Բրայան Կապլանն ապացուցում է, որ դեպքերի մեծամասնությունում ընտրողները, որոնք տեսականորեն պետք է ընդունեն խելամիտ/ռեալիզմալ որոշումներ, կատարում են միանգամայն իռեալիզմալ ընտրություն: Օրինակ, շատ երկրներում առկա են իռեալիզմալ տնտեսական վախեր:

Թեեւ «աղքատ» պետությունների բնակիչները նախընտրում են գաղթել «հարուստ» երկրներ, սակայն տեղական ընտրություններում նրանք ամենեւին էլ ոչ միշտ են սատարում քաղաքական գործիչներին, որոնք փորձում են տեղական հողին պատվաստել «հարուստ» երկրներում առկա պրակտիկան: Կապլանը գտնում է, թե այդտեղ է դրսևորվում քաղաքացու ընտրությունը: Եթե նա հեռանում է այլ երկիր, ապա հրաժարվում է ազգային հպարտության զգացումից (հոգեբանական շահ)՝ ընտրելով առավել բարձր կենսամակարդակ (նյութական շահ): Եթե նա մնում է հայրենիքում, ապա ձեռք է բերում հոգեբանական շահ, բայց հրաժարվում է նյութականից: Կապլանը պնդում է, թե «մարդիկ ցանկանում են հավատալ նրան, որին հավատում են մյուս մարդիկ»: Խիստ բարդ է որոշել, թե առաջին անգամ երբ եւ ինչու են առաջացել նման հայացքներ: Սակայն այդ հայացքներն անմիջական ազդեցություն են թողնում ցանկացած ընտրության արդյունքների վրա:

Կապլանն ապացուցում է, որ կրթված (այսինքն՝ իրավիճակն առավել լավ հասկացող) մարդիկ ընտրությունների գնում են ավելի հազվադեպ, քան քիչ կրթվածները: Դրա արդյունքն է հանդիսանում իշխանությունում հանպատրաստից մարդկանց հայտնվելը եւ անմիտ որոշումների ընդունումը: Ընդ որում, եթե քաղաքական գործիչներն իրոք կատարեին իրենց ընտրողների բոլոր ցանկությունները, ապա դա ցանկացած երկրի համար կբերեր աղետալի հետեւանքների: Ուստի քաղաքական գործիչները ստիպված են հաշվեկշռել: Կապլանի գնահատմամբ, գործնականում բոլոր քաղաքական գործիչները հարկադրված են ընդունել

Ժողովրդականությունն վայելող, բայց հիմար որոշումներ, որպեսզի գոհացնեն իրենց կողմնակիցներին: Հակառակ դեպքում, նրանք կդադարեն լինել քաղաքական գործիչներ:

«Դժվար ընտրություն, հեշտ պատասխաններ» գրքի հեղինակներ Մայքլ Ալվարեզը եւ Ջոն Բրենը նշում են, որ քաղաքականությունը՝ միշտ էլ գաղափարների բախում է: Ընդ որում, հստակ քաղաքական մոլություններ ունեցող ընտրողներն ամենեւին ոչ միշտ են իսկապես հասկանում, թե ինչի մասին է խոսքը: Նրանք ոչ քաղաքական գործիչների մանրակրկիտ բացատրություններով եւ ոչ էլ նույնիսկ ՋԼՄ հրապարակումներով են կողմնորոշվում, այլ քննարկման առարկայի մասին իրենց ինչ-որ պատկերացումներով: Արդյունքում՝ ընտրողը ոչ թե մանրամասն վերլուծված եւ ստուգված տեղեկատվության հիման վրա է որոշում կայացնում, այլ գնահատելով փաստերի, առասպելների ու մոլությունների արտասովոր շիլափլավը, որ առաջանում է իր գլխում:

### **Washington ProFile**

«Հանրապետական», 2008, թ. 2

# **ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ ԵՎ ՌԵԳԻՈՆԱԼ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ**

## **1. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲԱԼԿԱՆՆԵՐ**

### ***Գեորգի Էնգելգարդտ***

Պատմականորեն Բալկանների ողբերգությունը եղել է այնտեղ բնակվող ժողովուրդների «մեծ գաղափարների» միջև հակամարտությունը: Ալբաններն ու հույները, բուլղարներն ու սերբերը, խորվաթներն ու ռումինները՝ բոլորն ունեցել են իդեալ առ այն, թե հատկապես ինչպիսին պետք է լինեն իրենց պետության սահմանները: Թերակղզին չափազանց փոքր է, ուստի եւ շատ մեծ են ազգային նկրտումների հատման գոտիները: Այն ստեղծել է ստեղծում է հող կոնֆլիկտների համար, նաեւ մշտական լարվածություն տարածաշրջանային հարաբերություններում՝ դարձնելով տարածաշրջանը խիստ հրապուրիչ արտաքին միջամտության համար:

**«Մեծ Ալբանիա»:** Ալբանական իռեդենտիստներն ու ազգայնականները, առաջին հերթին՝ կոսովյան, Բալկաններում «Մեծ Ալբանիա» ստեղծելու իրենց նկրտումներով վիճարկում են տարածաշրջանի չորս երկրների՝ Չեռնոգորիայի, Սերբիայի, Մակեդոնիայի եւ Հունաստանի տարածքները:

Վերջին 20 տարում իրենց ազգային ծրագրերի իրականացման գործում նրանք հասել են էական հաջողությունների՝ վերահսկողություն սահմանելով Կոսովոյի ու Մետոխիայի ինքնավար երկրամասի վրա, ստանալով ինքնավարության բարձր աստիճան Մակեդոնիայում եւ ամրապնդելով քաղաքական ազդեցությունը Պրեշեյան հովտում՝ Սերբիայի հարավում: Բոլոր այս հաջողություններն ալբանների կողմից ձեռք են բերվել նախեւառաջ ԱՄՆ-ի ու ԵՄ-ի հետ ռազմավարական համագործակցության հաստատման շնորհիվ: Ալբանների քաղաքական հավակնությունների ծավալումը մնում է, առնվազն, խիստ հավանական՝ անկախ նրանից, թե ինչ կձեռնարկեն ԱՄՆ-ն ու ԵՄ-ը:

Ալբաններն այսօր զարգացող տարածաշրջանային գործոն են: 21-րդ դարի սկզբին Բալկանների ժողովուրդներից միայն ալբաններին է հաջողվում հետեւողականորեն կառուցել իրենց «մեծ պետությունը», եւ հիմքեր չկան սպասելու՝ մոտ ապագայում նրանց տարածաշրջանային էքսպանսիայի դադարեցման:

**Սերբական մարտահրավեր:** Սերբերը բաժանված են չորս պետության ու մեկ կիսապետական տարածքի սահմաններով: Բուն Սերբիայից բացի, դա Խորվաթիան է, Բոսնիա-Յերցեգովինան, Չեռնոգորիան եւ Կոսովոն: Վերջին 15 տարիներին նրանք ապրեցին պատմական պարտությունների ու նվաստացումների շարք՝ հավանաբար, ամենածանրը վերջին հարյուրամյակներին (առնվազն՝ վերջին 200 տարում): Անհետացան այդ ժողովրդի պատմական բնակության ամբողջ շրջաններ, առաջին հերթին՝ Խորվաթիայում եւ Կոսովոյում, բոլոր տարածաշրջանային վեճերը հետեւողականորեն Արեւմուտքի կողմից վճռվեցին առանց սերբերի շահերի հաշվի առնման ու նրանց հաշվին:

Ուշագրավ է, որ տարածաշրջանի նորաստեղծ պետություններից սերբերի անջատման ձգտման դեպքերում նրանց գործողությունները խափանվում էին այդ պետությունների (Խորվաթիա, Բոսնիա-Յերցեգովինա) տարածքային ամբողջականության կարգախոսով, ինչը չէր խանգարում ԱՄՆ-ին եւ նրա դաշնակիցներին սատարել Կոսովոյի անջատմանը Սերբիայից՝ հիմնավորված ազգերի ինքնորոշման իրավունքով: Այս անարդարությունից սերբերի դժգոհության անխուսափելի հետեւանքն են հոգեբանական ֆրոստրացիան ու ռեւանշիզմը:

Մոտակա 20-30 տարիներին (այսինքն՝ մինչեւ 2030-2040թթ.) արտաքին թելադրանքով պարտադրված սահմանների վերանայման ձգտումը մնալու է սերբական քաղաքական կյանքի կարեւոր գործոնը:

Դա չի նշանակում, թե Բելգրադն անհապաղ կպատերազմի Խորվաթիայի, Կոսովոյի, Բոսնիա-Յերցեգովինայի դեմ, բայց այն, որ սերբական քաղաքական ասպարեզում միշտ կլինեն ուժեր, որոնք այսպես թե այնպես այդ հնարավորությունը կքննարկեն, կարելի է համարել արդի սերբական քաղաքական կյանքի արքիոման:

\* \* \*

Դիտարկենք Արեւմտյան Բալկանները տարածաշրջանի հյուսիսից հարավ՝ հաջորդաբար:

**Սլովենիա:** Այն գործնականում միատարր պետություն է՝ առանց համատեղ ապրող ազգային փոքրամասնության, որը ձգտի սահմանների վերանայման: Միակ միջպետական վեճը, որնա ունի՝ Խորվաթիայի հետ Պիրանյան ծոցում ջրային սահմանափակման շուրջ է: Այն ձգվում է 15 տարի, կարող է շարունակվել դեռ շատ երկար եւ ավելի շուտ կարող է դասվել տեղական էկզոտիկային:

**Խորվաթիա:** 1991-1995թթ. պատերազմից ու սերբ բնակչության գտումներից հետո պետությունը գործնականորեն դարձավ միատարր: Բնակչության վերջին մարդահամարի տվյալներով, խոշորագույն էթնիկ փոքրամասնության՝ սերբերի քանակը 12 տոկոսից նվազել է մինչեւ 4,5 տոկոս:

Ավելին՝ եթե առաջ սերբերը Խորվաթիայում ունեին համատեղ բնակության շրջաններ, որոնք հայտնի են Կրաինա ընդհանուր անվամբ, ապա ներկայումս հենց այդ վայրերն են ենթարկվել համընդհանուր էթնիկ գտման: Խորվաթիայում մնացած սերբ բնակչությունը քաղաքաբնակ է, որը ցրված է ողջ տարածքով: Նրանք գործնականում չունեն համատեղ բնակության միավորումներ: Միակ բացառությունը Արեւելյան Սլավոնիան է (Վուկովարի տարածաշրջան), որը 1996թ. վերջին առանց կռվի փոխանցվեց Ջագրեբի վերահսկողության տակ, ուստի եւ տեղական սերբական համայնքն այնտեղ կարողացավ պահպանվել: Սակայն այս տարածաշրջանը երկրի ծայրամաս է եւ չի կարող Ջագրեբի կամ Դալմացիայի սերբերի համար ձգողության կենտրոնի դերին հավակնել:

Խորհրդարանում սերբերը ներկայացված են ազգային կուսակցությամբ, բայց այն քաղաքական ազդեցություն չունի եւ ավելի շուտ ծառայում է որպես Ջագրեբի ազգային հանդուրժողականության ցուցափեղկ: Սերբական բնակության ավանդական շրջանները մինչեւ այժմ զգալի չափով դատարկ են. ընդ որում, Կրաինայից փախստականները սեփականության իրավունքից հրաժարման փոխարեն նախընտրում են դրամական փոխհատու-

ցումները, որոնց միջոցները տրամադրում է ԵՄ-ը: Տեսանելի ապագայում սերբական ռեւանջի ենթադրական փորձը մնում է խիստ անհավանական՝ նախելառաջ, Բելգրադի ռազմական ներուժի որակական դեգրադացման շնորհիվ:

Ներկա պահին առավել նկատելի խնդիր է մնում մյուս փոքրամասնությունը՝ իստրիացիները (Դալմացիայի՝ առաջին հերթին, Իստրիա թերակղզու իտալացիները եւ իտալականացված բնակչությունը): Նրանց թվաքանակը շուրջ 200 հազար է, նրանք համատեղ են բնակեցված եւ պոտենցիալ կերպով կարող են ապավինել հարեւան Իտալիայի աջակցությանը:

Խոսքն այստեղ տարածաշրջանային ինքնության մասին է, իսկ 1994 թվականից Իտալիայի, Սլովենիայի ու Խորվաթիայի հարեւան մարզերը համագործակցում են «Իստրիա» եվրատարածաշրջանի շրջանակներում: 1990-ականների ընթացքում տեղական իշխանությունը գտնվում էր «Իստրիական դեմոկրատական համաժողով» տարածաշրջանային կուսակցության ձեռքում, որի պահանջները հիմնականում հանգում էին տարածաշրջանային մեծ ինքնավարության եւ մշակութային խնդիրների:

**Բոսնիա-Յերցեգովինա:** Այս երկիրը, լինելով արհեստական պետական կազմավորում, որակապես տարբերվում է իր հարեւաններից. այն գոյատևում է բացառապես մշտական արտաքին կառավարման եւ ՆԱՏՕ-ի ու ԵՄ-ի կողմից վերահսկվող խաղաղապահ զորակազմի շնորհիվ:

Ձեւականորեն խոսքը համադաշնության մասին է, որն արտաքին կառավարիչները հետեւողականորեն վերածում են դաշնության՝ համադաշնության սուբյեկտների լիազորությունները զուգահեռաբար փոխանցելով կենտրոնական կառավարությանը: Չնայած 13-ամյա ջանքերին, Բոսնիա-Յերցեգովինան նախկինի պես մնում է որպես երկու մասերի՝ Սերբական Հանրապետության եւ Բոսնիա-Յերցեգովինայի Դաշնության (ռուսական առօրյա գործածությունում՝ մուսուլմանա-խորվաթական դաշնություն) արհեստական միավորում:

Բոսնիա-Յերցեգովինայի սերբերը մշտապես խոչընդոտում են երկրում իշխանության կենտրոնացման գործընթացին ու լիազորությունների փոխանցմանը կենտրոնական կառավարությանը: Եվ

չնայած քաղաքական վերնախավի փոփոխությանը, որն անցկացվեց Արեւմուտքի ճնշման տակ, այն շարունակվում է: Այսպես, արեւմտամետ Անկախ սոցիալ-դեմոկրատների միությունը, որը փոխարինեց Սերբական դեմոկրատական կուսակցությանը, այժմ նույնքան անշեղորեն պայքարում է Բոսնիայի սերբերի պետականության պահպանման համար: Դրա պատճառներն են ինչպես բոսնիական համայնքների հարաբերություններում պահպանվող լարվածությունն ու կոնֆլիկտայնությունը, այնպես էլ վերջին 15 տարիներին տեղական սերբական վերնախավի մոտ ձեւավորված՝ սեփական պետության գոյության հանդեպ սովորությունը եւ այն պահպանելու շահագրգռվածությունը: Սերբական պետության բնակչությունը շուրջ 1,5 մլն է (Բոսնիա-Յերցեգովինայի 4 միլիոնանոց ազգաբնակչության 1/3-ից ավելին), տարածքը՝ ընդհանուր պետության 49 տոկոսը:

Այս դեպքում ինչպիսի՞ն են մեծ Բոսնիայից Սերբական Յանրապետության անջատման հնարավորությունները: Ներկա պահին դրանք մեծ չեն, որովհետեւ անջատմանը եռանդագին հակազդում են ԵՄ-ն ու ՆԱՏՕ-ն: Կոսովոյի անկախության հռչակման նախապատրաստման պահին շատ էին բանավեճերը, թե կհետեւեն, արդյոք, Բոսնիայի սերբերը Պրիշտինայի օրինակին: Այդ հնարավորությունը հարուցեց ԵՄ ու ԱՄՆ որոշ անհանգստությունը: Վերջիններիս ուժեղ ճնշման տակ Բոսնիայի սերբերի անդրադարձը հասցվեց չափազանց համեստ ձեւաչափի: Նրանք խանգարեցին Բոսնիային ճանաչել Կոսովոյի անկախությունը, բայց չհանդգնեցին հռչակել բուն Սերբական Յանրապետության անջատումը:

Սերբական Յանրապետությունից բացի, անջատողականության համար շատ լուրջ ներուժ է առկա նաեւ մուսուլմանախորվաթական դաշնության ներսում: Այն ունի բարդ կառուցվածք. 10 կանտոն՝ մուսուլմանական, խորվաթական եւ խառը: Յուրաքանչյուր կանտոնում եւ դաշնային մակարդակում պաշտոնների միջհամայնքային բաժանման շատ բարդ համակարգ է: Այստեղ հիմնական դժգոհությունը բխում է խորվաթներից, որոնք 1990-ական թվականներին ստիպված եղան հրաժարվել սեփական պետական կառուցվածքից (Յերցեգ-Բոսնա): Կոսովոյի անկախության հռչակումը կյանքի կոչեց հանուն «3-րդ տարածաշրջանի»



ստեղծման շարժումը, որը հավաքեց շուրջ 100 հազար ստորագրություն:

Թեև խորվաթական համայնքը, համեմայնդեպս՝ նրա մի մասը, ունի արտահայտված անջատողական մտայնություն, սակայն քաղաքական մեծ հավակնությունների դրսևորումը նրա համար հնարավոր է միայն մետրոպոլիայի՝ Խորվաթիայի օգնությամբ, որի իշխանությունները տվյալ պահին շահագրգիռ չեն տարածաշրջանային ճգնաժամերի նոր խորացմամբ ու ԵՄ-ի հետ իրենց հարաբերությունների լարմամբ: ԵՄ դիրքորոշումը պարզ է եւ հասկանալի՝ Բոյուսելը հանդես է գալիս Բոսնիայի հետագա մասնատման դեմ. համապատասխանաբար՝ խորվաթական այս նախաձեռնությունն առայժմ մնում է կախված սպառնալիք:

Բոսնիան մնում է որպես ծայրաստիճան անկայուն կազմավորում, որը դատապարտված է փլուզման՝ տարածաշրջանում արտաքին ռազմաքաղաքական ներկայության որեւէ թուլացման դեպքում:

**Չեռնոգորիա:** Բալկանյան նոր պետություններից ամենափոքրը (բնակչությունը՝ շուրջ 650 հազար) կանգնած է իր կայունությանը սպառնացող ամբողջ շարք վտանգների առջև. հարավային մասի ալբան բնակչությունը (4,5 տոկոս) եւ արեւելքի մուսուլման-սանջակլիները (15 տոկոս): Այս ամենը խորացվում է բուն չեռնոգորցիների բաժանմամբ, որոնց մոտ կեսը ձգտում է հարեւան Սերբիա եւ իրեն համարում է սերբ: Պատահական չէ, որ 2006թ. մայիսի անկախության հանրաքվեի ելքը վճռվեց ալբանական ու սանջակյան փոքրամասնության դիրքորոշմամբ: Հարկավոր է հաշվի առնել, որ Չեռնոգորիայից գաղթածների թիվը Սերբիայում, տարբեր գնահատումներով, հասնում է նվազագույնը միլիոնի: Այս ամենը նոր պետությանը տարածաշրջանում ցանկացած էթնոքաղաքական սրացման նկատմամբ դարձնում է չափազանց խոցելի:

**Սերբիա:** Կոսովոյի ու Մետոխիայի բռնի անջատումից բացի, որը կատարվեց ինչպես 1999թ. ԱՄՆ եւ ՆԱՏՕ նրա դաշնակիցների ռազմական ագրեսիայի, այնպես էլ Արեւմուտքի քաղաքական ճնշման արդյունքում, Սերբիան կանգնած է մի շարք պոտենցիալ էթնոտարածքային սպառնալիքների առջև՝ միաժամանակ հանդի-

սանալով ինչպես իռեդենտիզմի սուբյեկտ (Սերբական Հանրապետության եւ Չեռնոգորիայի հետ վերամիավորման, Կոսովոյի նկատմամբ ինքնիշխանության վերականգնման ձգտում), այնպես էլ անջատողականության օբյեկտ:

*Վոյեվոդինա:* Երկրի հյուսիսի այս ինքնավար մարզում բնակվում է զգալի հունգար փոքրամասնություն՝ 290 հազար, որը պատմականորեն ձգտում է հարեւան Հունգարիա: Մինչեւ այժմ սերբերի ու հունգարների հարաբերությունները ծանրացած չեն հակամարտություններով (անհամեմատելի են սերբ-ալբանականի հետ): Այդ լարվածությունը կրում է պոտենցիալ բնույթ, քանզի ազգային փոքրամասնության առկայությունն օբյեկտիվորեն ստեղծում է պայմաններ ԵՄ միջամտության համար, որի անդամ է հանդիսանում Բուդապեշտը: Հարկավոր է հաշվի առնել նաեւ «ինքնավարական» տրամադրությունների տարածվածությունը երկրամասի հենց սերբական համայնքի մի մասում, որը ձգտում է թուլացնել Բելգրադի ազդեցությունն իր գործերին: Վոյեվոդինան Սերբիայի առավել բերրի եւ տնտեսապես զարգացած մարզն է:

*Սանջակ:* Այն պատմական, այլ ոչ թե վարչական մարզ է, որն ընդգրկում է Սերբիայի ու Չեռնոգորիայի սահմանակից շրջանները, Օսմանյան կայսրության Նովոպազարյան սանջակը: Սանջակի բնակչության մեծ մասը կազմում են իսլամացած սերբերը (140 հազար կամ ողջ երկրի բնակչության 2 տոկոսը), որոնք օգտագործում են «բոշնյակներ», «սանջակլիներ» ինքնանունները: Թեեւ ներկա պահին սանջակյան որոշ առաջնորդներ բավական ինտեգրվել են բելգրադյան կառավարող վերնախավին՝ լինելով Դեմոկրատական կուսակցության գործընկերներ, սակայն չի կարելի բացառել լարվածության ծավալումը տարածաշրջանում: Առավել եւս, որ վերջին տարիներին սերբական Սանջակում աճում է վահաբականների ակտիվությունը, որոնք ձգտում են վերահսկողություն հաստատել շրջանի իսլամական կառույցների վրա: Վահաբականների պարբերական ակտիվությունը հանգեցնում է ոստիկանության հետ զինված բախումների, ինչը, հետաքրքրության առկայության դեպքում, կարող է արտաքին միջամտության համար որպես առիթ օգտագործվել: Պատմականորեն Սանջակը հանդիսանում է յուրատեսակ «գորշ գոտի», որտեղ զարգացած են

կեղծված ապրանքների արտադրությունը (ջինսեր, սիգարետներ) եւ նաքսանենգությունը: Տարածաշրջանն աշխարհագրորեն ներկայացնում է առանձնահատուկ միջանցք, որը միացնում է Կոստվոյի ալբանական շրջանները Բոսնիայի հետ՝ այն դարձնելով Բալկաններում «կանաչ ուղղաձիգի»՝ Թուրքիայից մինչեւ Բոսնիա իսլամական տարածքների շղթայի հանգույց:

*Հարավային Սերբիա:* Այն Պրեշեյան հովիտն է Սերբիայի ծայր հարավում: Բուն Կոստվոյի սահմաններից դուրս՝ ալբաններով բնակեցված (մոտ 50 հազար) տարածաշրջան է: 2000-2001թթ. Պրեշեյան հովիտը դարձավ սերբ ոստիկանների եւ Կոստվոյում տեղակայված ալբան գրոհայինների բախումների գոտի՝ տարածաշրջանի վրա վերահսկողության համար: Կոնֆլիկտը դադարեցվեց ՆԱՏՕ ուժերի միջամտության շնորհիվ, որոնք պնդում էին տարածաշրջանում խառը ոստիկանության ստեղծման եւ ալբանների քաղաքական ներկայացուցչության ընդլայնման շուրջ փոխզիջման հասնելու հարցում:

Այս անջատողական մտայնությունների միաժամանակյա կենսագործման դեպքում Սերբիային սպառնում է երկրի առավել զարգացած ու բերրի շրջանների կորուստ եւ վերադարձ 1912թ. սահմաններին:

**Մակեդոնիա:** Եթե մինչեւ 1999թ. մակեդոնյան պետականության գլխավոր խնդիրը Հունաստանի հետ պետության անվան շուրջ վեճն էր, ապա սահմանակից Կոստվոն ՆԱՏՕ զորքերի եւ տեղի ալբանական զինյալների խառը վերահսկողության տակ փոխանցման պահից առաջին պլան ելան ալբանական համայնքի աճող հավակնությունները:

Այսօր Մակեդոնիան փաստացիորեն մասնատված երկիր է: Ալբանները, որոնք 2004թ. մարդահամարի տվյալներով կազմում են շուրջ 2 միլիոնանոց պետության 25 տոկոսը, վերահսկում են երկրի՝ Կոստվոյին սահմանակից արեւմտյան շրջանները: Ըստ 2001թ. համաձայնագրի, ալբանական համայնքն ընդլայնված ներկայացուցչություն ստացավ նաեւ իշխանության հանրապետական մարմիններում: Վերջին տասնամյակների ընթացքում մակեդոնյան ալբանները կողմնորոշվեցին դեպի իրենց կոստվոյի ազգակիցները:

նրանց շատ առաջնորդներ հանդիսանում են Պրիշտինայի համալսարանի շրջանավարտներ, իսկ 2001թ. ընդհարումներին կոսովոնակեդոնյան սահմանի երկու կողմից էլ ամենաակտիվ մասնակցությունն են ունեցել կոսովցի զինյալները:

21-րդ դարի առաջին տասնամյակի ավարտին Սակեդոնիայի սահմանների անձեռնմխելիության միակ երաշխիքը ԵՄ ու ՆԱՏՕ բարի կամքն է: Եթե Բոյուսելն անհրաժեշտ համարի ալբանների հետ իր հարաբերությունների շրջանակներում գնալ Սկոպյեի հանրապետության սահմանադրության կամ սահմանների վերանայման, մակեդոնացիները, թերեւս, ստիպված կլինեն հաշտվել դրա հետ:

Ալբանական դիրքերի հետագա ամրապնդումը Սակեդոնիայում հղի է ընդհանուր տարածաշրջանային ճգնաժամով, քանզի այդ տարածքը պատմականորեն եղել է Բուլղարիայի, Հունաստանի, Սերբիայի միջեւ կռվախնձոր, ու նրա կարգավիճակի եւ/կամ սահմանների վերանայումը, մեծ հավանականությամբ, կարող է ճգնաժամի մեջ ներքաշել նաեւ այլ սահմանակից երկրներ:

\* \* \*

Այսպիսով, վեճերի սպեկտրը Արեւմտյան Բալկաններում լայն է, եւ մոտակա 20-30 տարիներին այստեղ սահմանների հետագա վերածեւման համար իրական մեծ ներուժ կա:

Արեւմուտքի կողմից կոսովցի ալբաններին սեփական պետականություն պարգեւելը հանդիսանում է այդ գործընթացի կարեւորագույն խթանիչը:

**apn.ru**

«Հանրապետական», 2008, ք. 5

## 2. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ

### *Ալեքսեյ Տերեշչենկո*

Հյուսիսային Եվրոպայում մոտալուտ փլուզման վտանգի առաջ կանգնած են երկու պետություն՝ Մեծ Բրիտանիան եւ Բելգիան: Հյուսիսի պետությունների մեծ մասում տարածաշրջանային շարժումները կրում են հիմնականում ազգագրական բնույթ: Նիդեռլանդներում, Պերմանիայում ու Շվեյցարիայում դա, ըստ ամենայնի, կապված է մախեւառաջ նրա հետ, որ առկա քաղաքական համակարգի շրջանակներում տարածաշրջաններն արդեն իսկ ունեն լայն իրավունքներ եւ ինքնավարության հետագա ընդարձակման համար պայքարի անհրաժեշտություն չեն տեսնում:

Շվեյցարիայում անջատողական հակամարտություններ չկան: Չնայած ֆրանկախոսների եւ գերմանախոսների միջև տարածայնություններին, Ռոմանդիայի (ֆրանկալեզու Շվեյցարիայի) մշակութային ինքնավարությունից բացի, ոչ մի անգամ որեւէ այլ հարց չի ծագել:

Փոխարենը՝ մի քանի տասնամյակ տեւեց սոցիալական, կրոնական ու լեզվական հենքով հակամարտությունը Բեռնի բողոքական կանտոնում: 1979թ. կանտոնի հյուսիսարեւմտյան հատվածն անջատվեց, եւ առաջացավ Յուրա նոր կաթոլիկ կանտոնը: Սակայն պայքարը շարունակվում է, որովհետեւ կանտոնների միջեւ սահմանը կաթոլիկներին չի բավարարել: Չնայած նրան, որ հակամարտության բոլոր մասնակիցները լոյալ են եղել Շվեյցարական Համադաշնության նկատմամբ, սահմանների վերանայման փաստն առկա է:

Ավստրիայում միակ փոքրամասնությունը, որ իր մասին հայտարարում է, սլովեններն են, որոնք ապրում են Կարինտիայի հարավ-արեւելքում: Նրանց «Էնոտնա Լիստա» կուսակցությունը Ազատ Եվրոպական դաշինքի մասնակից է: Սակայն Կարինտիայում սլովեն բնակչության տոկոսը չափազանց աննշան է, որպեսզի նրանք որեւէ ակնառու դեր խաղան:

Պերմանիան, չնայած իր ծանր անցյալին, բավականին միատարր երկիր է: Միակ տարածաշրջանը, որտեղ առկա է նկատելի

անջատողական շարժում, Բավարիան է՝ Գերմանիայի ամենահարուստ երկրամասը: Սակայն Բավարական կուսակցությունը 1962 թվականից խորհրդարան չի անցնում:

Ալեմանյան անջատողականությունը երկրորդ աշխարհամարտից հետո ճանաչված շարժում էր: Խոսքը գնում էր Գերմանիայից ալեմանների՝ Բադենի, Վյուրթեմբերգի ու հարեւան երկրամասերի բնակչության մի մասի անջատման եւ, ըստ ամենայնի, նույնալեզու եղբայրների՝ գերմանալեզու Շվեյցարիայի եւ ավստրիական Ֆորարլբերգ մարզի հետ նրանց միավորման մասին: Սակայն ներկայումս ալեմանյան շարժումից մնացել է սոսկ մշակութային բաղադրիչը:

Դանիան հավակնում է Ֆլեմսբուրգ քաղաքին, որը գտնվում է Գերմանիայի տարածքում, բայց բնակեցված է դանիացիներով: Սա Շլեզվիգի այն հողերի մնացուկն է, որոնք նվաճվել էին Բիսմարկի կողմից ու երկրորդ աշխարհամարտից հետո վերադարձվել Դանիային: Եվրամիությունն ու Շենգենյան տարածությունն այս երկու պետությունների մտնելուց հետո կոնֆլիկտը խաղաղվել է, բայց մնում է հրատապ:

Նիդեռլանդներում միակ տարածաշրջանային շարժումը Ֆրիսլանդիա նահանգի տարածքում է: Սակայն խոսքը միայն մշակութային ինքնավարության մասին է: Վերջերս ֆրիզները ազգային փոքրամասնություն ճանաչվեցին նաեւ Գերմանիայում՝ Դիտմարշ մարզում, որտեղ, ինչպես եւ Ֆրիսլանդիայում, շատերը մինչ այժմ տիրապետում են ֆրիզերեն լեզվին:

Ներկա պահին Եվրոպայի ոչ մի երկրում, անջատողականության առումով, չկա այնպիսի ծանր իրավիճակ, ինչպիսին Բելգիայում է: Բելգիացիների մեծամասնությունը խիստ հավանական է համարում երկրի տրոհումը Ֆլանդրիայի ու ֆրանկալեզու Վալոնիայի: Այն, անշուշտ, առաջին հերթին, պայմանավորված է Բելգիայի բարդ պատմությամբ:

Երբ 1830թ. Բելգիան Նիդեռլանդներից անկախություն ստացավ, նիդեռլանդական ամեն ինչ ենթարկվեց բռնությունների: Ընդ որում՝ պետության ղեկավարներն ուշադրություն չդարձրին այն իրողությանը, որ բնակչության կեսը (այսինքն՝ ֆլամանդացիները)

խոսում էին նիդեռլանդերենի տարատեսակով: 100 տարի ֆրանսերենը դարձավ Բելգիայի միակ պետական լեզուն: Ֆրանկալեզու բնակչությունը գրավեց գերիշխող դիրքեր ինչպես քաղաքականության, այնպես էլ տնտեսության մեջ: Հարավային Բելգիան, իր երկաթահանքերով, դարձավ Եվրոպայի ամենազարգացած արդյունաբերական շրջանը: Արդյունքում՝ 19-րդ դարի վերջին էթնիկական դիմակայությանն ավելացավ սոցիալ-քաղաքականը. եթե բանվորական Վալոնիայում ընտրություններում հաղթում էին սոցիալիստները, ապա նահապետական Ֆլանդրիան միշտ դրսեւորում էր իր պահպանողականությունը: Ամենահետաքրքիրն այն է, որ նման տարանջատումը մինչ օրս պահպանվել է:

Կուտակված փոխադարձ վիրավորանքները, որոնք երկրորդ աշխարհամարտին խորացան ֆլամանդացիների զանգվածային կոլաբորացիոնիզմով, հանգեցրին նրան, որ արդեն 40-ական թվականներին բարձրացվեց Բելգիայի ամբողջականության հարցը:

Այն ժամանակ հենց ֆլամանդացիների պահպանողականությունը թույլ տվեց Բելգիային պահպանել թագավորին՝ բելգիական միասնության գլխավոր երաշխավորին: Նիդեռլանդերեն լեզուն իր կարգավիճակով հավասարեցվեց ֆրանսերենին:

Սակայն շուտով քաղաքական ու տնտեսական իրադրությունը խիստ փոխվեց: Ծանր արդյունաբերության կարելությունն ընկավ, եւ բելգիական տնտեսությունը մեծ չափով վերակողմնորոշվեց դեպի տրանզիտը, ինչը հանգեցրեց Հարավային Բելգիայի հետամնացության եւ Ֆլանդրիայի տարածքում գտնվող նավահանգիստների ծաղկման: Ներկայումս Ֆլանդրիան զգալիորեն ավելի հարուստ է, քան Վալոնիան, եւ անջատողականների հիմնական փաստարկներից մեկը (ֆրանկախոսների կողմից հալածանքների մասին հիշողության հետ միասին) «վալոն ձրիակերներին» կերակրելու ցանկություն չունենալն է: Այն ժամանակ, երբ Վալոնիայում ընդամենը 12 տոկոսն է արտահայտվել Բելգիայի տրոհման օգտին, Ֆլանդրիայում անկախության կողմնակիցները շուրջ 40 տոկոս են:

Գոյություն ունեն մի շարք կուսակցություններ, որոնք հանդես են գալիս Ֆլանդրիայի անկախության օգտին: Առավել ազդեցիկ-

ներից է «Ֆլամանս Բելանգ» ծայրահեղ աջ կուսակցությունը, որը Ֆլանդրիայի անկախության եւ Նիդեռլանդների ու Ֆրանսիական Ֆլանդրիայի հետ դաշնության ստեղծման կոչ է անում: Կուսակցությունն իր առջեւ դրել է նաեւ այլ նպատակներ. լիակատար եւ անվերապահ համամերում բոլոր նրանց, ում մեղադրել են Դիտլերի հետ համագործակցության մեջ, ներգաղթի սահմանափակում, հատուկ կարգավիճակից ֆրանսերեն լեզվի զրկում եւ այլն:

Վալոնիայում, իր հերթին, կան կուսակցություններ, որոնք հանդես են գալիս Բելգիայից անջատման ու Ֆրանսիայի հետ միավորման օգտին: Սակայն դրա կողմնակիցների թիվը մեծ չէ:

Ըստ երեւույթին, հիմնական գործոնները, որոնք պահում են Բելգիան քայքայումից, թագավորն է եւ Բոյուսելը: Թագավորին անվանում են՝ «միակ բելգիացին վալոնների ու ֆլամանդացիների երկրում», իսկ ֆրանկալեզու Բոյուսելը գտնվում է ֆլամանդական տարածքում: Միանգամայն անհասկանալի է, թե Բելգիայի փլուզման դեպքում ինչ պետք է անել Բոյուսելի հետ. ամենայն հավանականությամբ, Եվրոպայի մայրաքաղաքն այս դեպքում կվերածվի վալոնյան անկլավի կամ կլինի «ազատ քաղաք»:

Վալոն-ֆլամանդական հակասությունների խորապատկերի ներքո, սովորաբար, մոռանում են Բելգիայում եւս մեկ ազգային խմբի՝ գերմանալեզու բելգիացիների առկայության մասին:

1918թ., Առաջին աշխարհամարտի արդյունքում, Բելգիային միացվեց Էյփեն-Մալմեդի շրջանը, որտեղ բնակչության մեծ մասը գերմանացիներ են: Ներկայումս նրանք Բելգիայի բնակչության 5 տոկոսից ավելին չեն, բայց ցանկանում են, որպեսզի իրենց ճանաչեն որպես Բելգիայի չորրորդ իրավահավասար շրջան: Նրանք լարված հարաբերություններ ունեն ինչպես ֆլամանդացիների, այնպես էլ վալոնների հետ:

Վերջին տասնամյակներին անսպասելիորեն սրվեցին անջատողականության խնդիրները Մեծ Բրիտանիայում:

Շատ դարեր անգլոսաքսերը գերիշխել են Բրիտանական կղզիներում՝ ամեն կերպ հպատակեցնելով ու ճնշելով կելտերին: Այժմ կելտական մշակույթը՝ ժամանակակից երիտասարդության շրջանում ամենաշատ ժողովրդականություն վայելողներից մեկը,



հզոր վերածնունդ է ապրում: Կելտական աշխարհի միասնության համար պայքարում է Կելտական լիգան, որը միավորում է «վեց ազգերի»՝ Իռլանդիան, Շոտլանդիան, Ուելսը, Բրետանը, Կոռնուոլը եւ Մեն կղզին: Նրա նպատակն է կելտերեն լեզվի զարգացումը, կելտական ժողովուրդների համագործակցության կազմակերպումն ու պայքարը նրանց քաղաքական, մշակութային, սոցիալական եւ տնտեսական ազատության համար:

Կելտական լիգայի առաջնահերթությունների թվում են Իռլանդիայի միավորումը, Լուար-Ատլանտիկ դեպարտամենտի վերադարձը Բրետանին եւ Շոտլանդիայի անկախությունը: Գործի է դրվել նաեւ Կանադայի, Պատագոնիայի եւ Ավստրալիայի կելտական սփյուռքը:

Կելտական աշխարհն այնքան հրապուրիչ է, որ Գալիսիան ու Պադանիան եւս ձգտում են կապ գտնել կելտերի հետ:

Մեծ Բրիտանիան հայտնվել է ծանր դրության մեջ, քանզի իր տարածքի բոլոր անջատողական շարժումները կելտական են:

Դրանցից ամենահինը եւ ամենաճանաչվածը Օլսթերն է: 1921թ., երբ Իռլանդիան ստացավ անկախություն, Օլսթերի ինը կոմսություններից վեցը մնացին անգլիացիների իշխանության ներքո: Օլսթերն աստիճանաբար բաժանվեց երկու անհաշտ ճամբարների՝ ազգայնական կաթոլիկների եւ ունիոնիստ բողոքականների («օրանժիստներ»), որոնք վերջին հաշվով վերածվել են երկու ինքնամփոփ ու միմյանց նկատմամբ թշնամական համայնքների: Անցյալ դարի 60-90-ական թվականներին Իռլանդական հանրապետական բանակն անկախության հասնելու նպատակով ահաբեկչական գործողություններ էր անցկացնում: Արդյունքում՝ զոհվեց շուրջ 4 հազար մարդ: Կրակի դադարեցման մասին համաձայնագիրը կնքվեց 1997թ.: Արդեն այն ժամանակ ձեռք բերված փոխզիջման համաձայն, օլսթերցիները կարող են ընտրել բրիտանական կամ իռլանդական քաղաքացիություն: 1998թ. Յյուս. Իռլանդիան ունեցավ իր Օրենսդիր ժողովը: Այնուամենայնիվ, տարածաշրջանը հեռու է խաղաղությունից, եւ շատերը շարունակում են հանդես գալ Մեծ Բրիտանիայից անջատման ու Իռլանդիայի հետ միավորման օգտին: Ընդ որում, վերջին երկու տասնամ-

յակներին երեւան են եկել մի շարք շարժումներ, որոնք հանդես են գալիս Օլսթերի լիակատար անկախության՝ նրա համար «երրորդ ուղու» օգտին:

Սակայն այսօր իրավիճակն անհամեմատ ավելի լուրջ է Շոտլանդիայում:

Անջատողական Շոտլանդական ազգային կուսակցությունը շոտլանդական խորհրդարանի ընտրություններին հավաքեց ձայների 37 տոկոսը, ինչը ցույց է տալիս, թե հասարակության մեջ որքան ժողովրդականություն են վայելում անկախության գաղափարները: «Independence First» շարժումը պահանջում է հանրաքվեի անցկացում եւ շոտլանդական անկախ պետության ստեղծում: Իր դերն է խաղում նաեւ Զյուսիսային ծովում, Շոտլանդիայի ափերի մոտ գտնվող նավթային շելֆի առկայությունը:

Անջատման հակառակորդներն ընդգծում են այն դերը, որ Բրիտանական կայսրության ու Զամագործակցության կայացման գործում խաղացել են շոտլանդացիները եւ այն ազդեցությունը, որ նրանք կարող են ունենալ համաշխարհային գործերում՝ մասնակցելով մեծ տերության կառավարմանը:

Ուելսում անկախության գաղափարն առայժմ իրապուրում է լսարանի մոտ 12 տոկոսին, բայց այն հետզհետե աճում է:

50-60-ական թվականներին Ուելսում գոյություն ունեին նույնիսկ մի քանի ահաբեկչական կազմակերպություններ, որոնք պայթեցնում էին ջրնուղներն ու էլեկտրահաղորդման գծերը: Այժմ ուելսյան շարժումը գործում է սահմանադրական շրջանակներում:

Ներկայիս Մեծ Բրիտանիայում, ըստ երեւույթին, ամենազարմանալի անջատողական շարժումը Միացյալ Թագավորությունից Անգլիայի անկախության համար շարժումն է: Այն խթան ստացավ 1998թ. հետո, երբ Շոտլանդիան, Զյուս. Իռլանդիան եւ Ուելսն ստացան իրենց Օրենսդիր ժողովները: Անգլիացիներն իրենց անարդարացիորեն շրջանցված են զգում, եւ դա հարեւաններից ազատվելու ցանկություն է ծնում, որոնք իրենց ներքին որոշումներն ինքնուրույն են ընդունում, իսկ համաբրիտանական խորհրդարանի որոշումների վրա կարողանում են ազդել:

Վերջին տարիներին մեծ թափ է հավաքում ինքնավարական շարժումը Կոռնուոլում, որտեղ կելտ բնակչությունը (որը մինչև վերջ չի ուժացվել) ապրում է իր մշակույթի ու լեզվի վերածնունդը: 2001թ. Կոռնուոլի բնակչության 7 տոկոսն իրեն ընդունեց ոչ թե բրիտանացի, այլ կոռնուոլցի: Կոռնուոլի անկախության մասին խոսք չի գնում, սակայն տեղի բնակչությունը պահանջում է ճանաչել իրեն որպես բրիտանական կղզիների հինգերորդ բնիկ ժողովուրդ եւ ունենալ սեփական Օրենսդիր ժողով: Գոյություն ունեն առանձին ահաբեկչական կազմակերպություններ, որոնք սպառնում են ամեն «անգլիականին», բայց առայժմ իրենց սպառնալիքները գործի չեն դրել:

Անջատողական շարժումներ կան նաեւ Մեն կղզում, որը Եվրամիության կազմում չէ ու հասել է նրան, որ կղզի մտնելու համար հարկավոր է մուտքի առանձին արտոնագիր: Կան անջատողականներ եւ Ուայթ կղզում, որոնք վիճարկում են 1293թ. անգլիական թագավորին կղզիների վաճառման սահմանադրականությունը: Սակայն նրանց ժողովրդականությունը փոքր է:

Սկանդինավյան երկրների տարածքում գոյություն ունի երկու ճանաչված անջատողական տարածաշրջան: Դրանք Ֆարերյան եւ Ալանդյան կղզիներն են:

Ի տարբերություն Իսլանդիայի, Ֆարերյան կղզիները չկարողացան Դանիայից անկախություն ստանալ: Թեեւ 1946թ. հանրաքվեին ֆարերցիների մեծամասնությունն արտահայտվեց անկախության օգտին, դանիական թագավորը դրեց իր վետոն՝ պատճառաբանելով, թե հանրաքվեին մասնակցել է կղզիների բնակչության սոսկ երկու երրորդը: Այնուամենայնիվ, ֆարերցիներին հաջողվեց հասնել սեփական լեզվի ու դրոշի ճանաչմանը:

Ֆարերյան կղզիները հրաժարվեցին մտնել Եվրոպական միություն՝ այդպիսով խուսափելով ձկան որսի քվոտաներից: Ներկայումս ֆարերցիների շրջանում անկախության կողմնակիցները կազմում են բնակչության շուրջ կեսը: Ֆարերյան կղզիներ լողացող ցանկացած նավաստի գիտի, որ պետք է խուսափել դանիական դրոշներից եւ ավելի լավ է խոսել անգլերենով:

Ալանդյան կղզիները Ֆինլանդիայի տարածք են՝ բնակեցված առավելապես շվեդներով: Նրանք ունեն լայն ինքնավարություն, սեփական փոստային նամականիշներ ու ոստիկանություն: «Ալանդյան կղզիների ապագա» անջատողական կուսակցության ժողովրդականությունը հետզհետե աճում է. վերջին ընտրություններին նրանք ստացան քվեների 8 տոկոսը:

Գրենլանդիայի համար, որին լիովին բավարարում է իրեն տրամադրված լայն ինքնավարությունը, անկախության հարց չկա (այն նույնպես Եվրամիության կազմում չէ):

Վերջում՝ տարածաշրջանային երկու շարժումների մասին, որոնք ավելի շուտ կրում են մշակութային-լուսավորչական բնույթ: Դրանցից մեկը Սկանիան է, որն իր մեջ ընդգրկում է Հալանդը, Բլեքինգեն եւ Սկոնեն՝ Հարավային Շվեդիայի երեք նահանգները, որոնք ընդհուպ մինչեւ 17-րդ դարը մնացել են դանիական իշխանության տակ, ինչպես նաեւ դանիական Բոռնհոլմ կղզին: Պայքարը գնում է տարածաշրջանային մշակութային ինքնության վերականգնման համար:

Մյուս շարժումը եթնիկական է: Խոսքը սաամների մասին է, որոնք բնակեցնում են Նորվեգիայի, Շվեդիայի, Ֆինլանդիայի ու Ռուսաստանի հյուսիսային շրջանները: Անցյալ դարի 80-ական թվականներին ստեղծվեցին սաամ ժողովրդի ազգային դրոշը եւ օրհներգը, իսկ 1989թ. Նորվեգիայում ծնունդ առավ առաջին սաամական խորհրդարանը: Միաժամանակ, ներկա պահին, սաամների հնարավորությունները խիստ սահմանափակ են՝ նրանց չափազանց փոքրաթվության պատճառով:

**apn.ru**

«Հանրապետական», 2008, ք. 6

### 3. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ

#### *Ալեքսեյ Տերեշչենկո*

Կոսովոյի նախադեպը չէր կարող աննկատ մնալ Հարավային Եվրոպայի երկրներում:

Անգամ ներկայիս դինամիկայի պահպանման պարագայում անջատողական շարժումները Եվրոպայի հարավում տարեցտարի ավելի են աշխուժանում: Գիշտ է, վերջին տարիներին նրանք հիմնականում հրաժարվել են զինված պայքարից, բայց դա, թերևս, կապված է նաև խաղաղ ճանապարհով անկախություն ստանալու հույսերի հետ:

\* \* \*

**Իտալիայում** կան բազմաթիվ տարածաշրջանային շարժումներ, սակայն այսօր սոսկ դրանցից երկուսը լուրջ հենք ունեն:

Առաջինը Հյուսիսային լիգայի շարժումն է: Նրա հիմնական հենակայաններն են Լոմբարդիան, Վենետոն եւ Պյեմոնտը՝ Հյուսիսային Իտալիայի խոշոր շրջանները: Դրանցից յուրաքանչյուրում առաջացել են իրենց սեփական ինքնավարական շարժումները: Առաջինը՝ Վենետոյում, որն Իտալիայի կազմի մեջ է մտել 1866թ.: Այնտեղ երբեք չեն դադարել պնդումները, թե Վենետիկը միանգամայն ինքնուրույն քաղաքակրթություն է եւ Իտալիայի կարիքը չունի: Այս շարժումը կրում է վենետիկյան անվանումը:

1980-ական թվականներին Հյուսիսային Իտալիայի մի քանի անջատ տարածաշրջանային շարժումները, Ումբերտո Բոսիի գլխավորությամբ, միավորվեցին Հյուսիսային լիգայի մեջ: Լիգան հանդես է գալիս Պադանիայի ինքնավարության կամ լիակատար անկախության օգտին:

Թեև «Պադանիա» բառը նշանակում է Պո գետի հովիտ, այդ անվան տակ հասկացվում է Հյուսիսային եւ Միջին Իտալիան (ընդհուպ մինչեւ Տոսկանա եւ Ումբրիա), որը հակադրվում է Հարավին (Հռոմի հետ միասին)՝ որպես կոռուպցիայի, մաֆիայի եւ անբանների թագավորության: Հյուսիսում, արդեն դարի առաջին կեսին, չէին սիրում նեպոլցիներին ու սիցիլիացիներին, իսկ այժմ նաև վախենում են արտասահմանցի ներգաղթյալներից (առաջին

հերթին՝ արաբական եւ Արեւելյան Եվրոպայի երկրներից): Լիգայի առաջին հաջողությունը 90-ական թվականների կոռուպցիոն սկանդալներից հետո էր, ուր ներքաշված էր Հռոմի կառավարությունը: 1996թ. Լիգան հավաքեց քվեների 10,1 տոկոսը (իսկ Վենետոյում՝ 30 տոկոսը): Դրանից հետո Մանթուայում անգամ հիմնվեց այլընտրանքային խորհրդարան, եւ անցկացվեցին ընտրություններ:

Եիշտ է, հետո իտալացիների մեծ մասը հիասթափվեց Լիգայից: Քչերն էին ցանկանում Հռոմի հետ լիովին խզել կապերը. նրանց միանգամայն բավարարում էր ֆեդերալիզմը, այսինքն՝ սեփական հարկերն իրենց մոտ ծախսելու լայն հնարավորությունը եւ տեղական մարզային կառավարության մեծ անկախությունը:

Այդ իսկ պատճառով 2000թ. Լիգան նույնիսկ դաշինք կնքեց Բեռլուսկոնիի «Առաջ, Իտալիա» կառավարող կուսակցության հետ: Սակայն Լիգայում ձեւավորված է բավական կոշտ ու հետեւողական գաղափարախոսություն: Նա հրաժարվում է մյուս իտալացիների հետ որեւէ ազգակցությունից՝ իր նախնիներ համարելով ցիզալպինյան գալլերին. ահա այսպես է Իտալիայում աշխատում կելտական առասպելը:

Լիգայի մյուս խորհրդանիշը առասպելական զինվորն է, որը մարտնչում է Ֆրիդրիխ Բարբարոսայի դեմ:

Լիգայի օրհներգը «Va Pensiero»-ն է՝ Ջուզեպե Վերդիի «Նաբուգոդոնոսոր» օպերայից. հրեա տարագիրների երգչախումբ, որը ողբում է հայրենի երկրի համար:

Հյուսիսային լիգան, որը հասարակական առումով՝ պահպանողական եւ տնտեսական հարցերում, ազատական կուսակցություն է, նախեւառաջ նախատեսված է միջին խավի համար: 2006թ. վերջին ընտրություններին այն հավաքեց 4,6 տոկոս, ինչն ամենեւին էլ փոքր չէ՝ հաշվի առնելով, որ այդ տվյալը վերաբերում է ողջ Իտալիային: Պո գետից հյուսիս բնակվող իտալացիների կեսից ավելին Հարավային Իտալիայից անջատումը համարում է օգտավետ, իսկ 20 տոկոսը՝ ցանկալի:

Լիգան ունի արտահայտիչ կարգախոսներ եւ ցուցապաստառներ: Հատկապես տպավորիչ է այն ցուցապաստառը, որին պատկերված է հյուսիսամերիկյան հնդկացի եւ կողքին մա-

կագրություն. «Նրանք (այսինքն՝ հնդկացիները–խմբ.) չկարողացան սահմանափակել ներգաղթը եւ այժմ ապրում են ռեգերվացիաներում»:

Բացառությամբ Լիգայի, Իտալիայում միակ իսկական հզոր անջատողական շարժումը գտնվում է Տրենտինո-Ալտո Ադիջեում (Չարավային Թիրոլում)՝ տարածք, որը 1920թ. բռնի կերպով անջատվել է Ավստրիայից եւ միացվել Իտալիային: Բնակչության մեծամասնությունը գերմանացի է:

Ներկայումս ընթանում է երկրամասից իտալացիների աստիճանական դուրսմղում, քանզի ամբողջը տնօրինում է գերմանացի մեծամասնությունը՝ փաստացիորեն վերածվելով արտոնյալ դասի: Շատ է դժվարացել իտալացիների ներգաղթը Չարավային Թիրոլ, որովհետեւ այնտեղ չափազանց բարձր են հարկերը, իսկ պետական նպաստները շուտ չեն տրվում: Բայց անգամ այն իտալացիները, որոնք այնտեղ ապրում են, կամաց-կամաց հեռանում են:

Միեւնույն ժամանակ, Չարավային Թիրոլի իշխող կուսակցությունը փորձում է Ավստրիային համոզել օրինագիծ մտցնելու Չարավային Թիրոլի ինքնորոշման անհրաժեշտության մասին՝ այն Յյուսիսայինին վերամիավորելու նպատակով: Ներկայումս ծայրահեղական գործունեությունը մարել է, սակայն 50–80-ական թվականների ընթացքում իրականացվել է 300-ից ավելի ահաբեկչական գործողություն:

Մնացած Իտալիայում շարունակվում է գերիշխել Ռիսորջիմենտոյի՝ 19-րդ դարում իտալական հողերի միավորման մասին պաշտոնական առասպելը, որտեղ իտալական միասնությունը մատուցվում է որպես գերագույն արժեք ու երկրի բարգավաճման միակ նախապայման: Սակայն գրեթե յուրաքանչյուր տարածաշրջան ունի սեփական անջատողական կուսակցությունը:

Վենետիզմի մասին վերն արդեն խոսվեց: Լիգուրական ինքնավարական շարժումը պահանջում է Լիգուրիայի ինքնորոշում, որը 700 տարվա անկախությունից հետո անօրինական կերպով միացվել է Պյեմոնտին: Ի տարբերություն Յյուսիսային Իտալիայի մյուս շարժումների, լիգուրականը գովերգում է աշխարհաքաղա-

քացիությունը՝ Ձեռնովայի Հանրապետության փառավոր ժառանգությունը:

Անջատողական շարժումներ կան Սարդինիայում եւ Սիցիլիայում, բայց նրանք տեղական ընտրողների ձայների 2-3 տոկոսից ավելին չեն հավաքում:

Տարածաշրջանային շարժումներ կան նաեւ Վալ դ'Աոստում, ուր մեծամասնությունը խոսում է ֆրանկո-պրովանսերեն (արպիտաներեն) լեզվով, եւ Ֆրիուլի-Վենետիկ-Չուլիայում, որտեղ մի քանի սահմանամերձ գյուղեր խոսում են սլովեներենով:

Ի վերջո, չնայած Երկրորդ աշխարհամարտում կրած պարտությանը, դեռ ապրում է իտալական իռեդենտիզմը՝ Իտալիային բոլոր այն հողերի վերամիավորման ձգտումը, որոնք այսպես թե այնպես կապված են իտալական պատմությանն ու մշակույթին: Իտալիայի խոշոր պետական պաշտոնյաների եւ կուսակցական առաջնորդների ելույթներում հաճախ են սպրդում ակնարկներ, թե Իստրիան, ինչպես նաեւ Դալմացիան եւ Կորսիկան բնիկ իտալական հողեր են:

\* \* \*

**Իսպանիայում** բասկերի շարժումն իր թափով գերազանցում է Իտալիայի ցանկացած անջատողական գործունեությանը: Բասկյան անջատողականության սպեկտրը շատ լայն է, որը միավորում է ծայրահեղ աջից մինչեւ ծայրահեղ ձախ քաղաքական ուժերը: Այն կապված է պատմության հետ:

19-րդ դարում Իսպանիայում պայքար էր գնում կառլականների (աբսոլյուտիստների) եւ ազատականների միջեւ: Քանի որ ազատականները ձգտում էին երկրի ունիֆորմացման, տարօրինակ կերպով այնպես ստացվեց, որ հենց աբսոլյուտիստները պաշտպանեցին բասկերի, Կատալոնիայի եւ Իսպանիայի այլ երկրամասերի հինավուրց արտոնությունները: Ուստի բասկերը պաշտպանեցին կառլականներին, ու երբ կառլիզմն անհետացավ (դա տեղի ունեցավ միայն 20-րդ դարում), բասկյան ազգային շարժման աջ թելը նրանից ժառանգեց կաթոլիկ հոգեւորականության հետ սերտ կապերը: Բասկյան քաղաքական սպեկտրի ձախ թեւն առաջացավ այն քաղաքներում, որոնք 20-րդ դարի



սկզբին դարձան արդյունաբերական կենտրոններ (առաջին հերթին՝ Բիլբաոյում): Հենց իրենց ձախ թելի շնորհիվ բասկ ազգայնականները Քաղաքացիական պատերազմում հանդես եկան Հանրապետության կողմից: Իսկ 50-ական թվականներին ստեղծվեց բասկյան ԷՏԱ ահաբեկչական կազմակերպությունը, որի գործունեության արդյունքում զոհվել է 800-ից ավելի մարդ:

Բասկերի երկիրն ինքնավարություն ստացավ սոսկ 1978թ., Ֆրանկոյի մահից հետո: Այդ ինքնավարությունը շատ լայն է. օրինակ՝ Բասկերի երկիրն ունի սեփական ոստիկանական ուժեր: Սակայն նրանց մեջ այնքան մեծ է ահաբեկիչներին համակրողների տոկոսը, որ Իսպանիայի ՆԳ նախարարությունը նրանց Ինտերպոլի տվյալների բազային մոտ չի թողնում: Ներկայումս ԷՏԱ-ն, ինչպես եւ մյուս անօրինական կազմակերպությունները, շարունակում են գործել: Բասկ ազգայնականների այցեքարտը քաղաքային անկարգություններն են՝ ցուցափեղկերի փշրմամբ, մեքենաների հրկիզմամբ եւ ոստիկանների վրա հարձակմամբ: Գոյություն ունեն մաեւ բազմաթիվ կազմակերպություններ, որոնք պահպանում են հավասարակշռությունն օրինականության եւ անօրինականության սահմանագծին: Նրանց մի մասը (օրինակ՝ «Բատասունա»-ն) արգելվել է, քանզի ընկալվում է որպես ԷՏԱ-ի լեզալ թել:

Իսպանիայում, որտեղ «արյան մաքրությունը» շատ կարելուր հասկացություն է, բասկերը, որ համարվում են Եվրոպայի մինչ-հնդեվրոպական բնակչության հետնորդներ, ինքնաբերաբար ստացվում են «ամենազտարյունները»:

Բասկերի երկրից բացի, նրանք հավակնում են նաեւ Նավարային ու ֆրանսիական երկու դեպարտամենտներին: Սակայն Նավարայում նրանք կազմում են բնակչության մեկ երրորդից ոչ ավելին, իսկ բասկյան կուսակցությունը մարզում հավաքել է 23 տոկոս:

Բասկ անջատողականները տարբեր կերպ ընկալեցին կոսովյան անկախությունը: Եթե աջերը ցնծությամբ պաշտպանեցին կոսովցիներին, ապա ձախերը Կոսովոյի ճանաչումը խարանեցին որպես կեղծ եւ ֆաշիստական:

Կատալոնիայում այս հարցում առավել համերաշխություն էր տիրում: Կատալոնյան կառավարությունը միահամուռ պաշտպանեց Կոսովոյի անկախությունը եւ Իսպանիայից պահանջեց ճանաչել այն:

Ներկայումս Կատալոնիան Իսպանիայի ամենազարգացած երկրամասն է, ինչը լրացուցիչ կերպով ազդում է անկախության գաղափարի ժողովրդականության վրա, որը կիսում է բնակչության շուրջ մեկ երրորդը: Կատալոներեն լեզուն իսպաներենը հետզհետե մղում է հետին պլան: Սակայն կատալոնյան շարժումն անհամեմատ ավելի խաղաղ է, քան բասկյանը. կատալոնյան ահաբեկչական կազմակերպություններ այսօր չկան:

Կատալոնյան շարժումն իր արմատներով ձգվում է մինչեւ միջնադար: Ներկայումս փոխվում են գիտական ուսմունքները՝ գրվում են նոր ծանրակշիռ աշխատություններ, որտեղ ամբողջովին վերանայվում է Պիրենեյան թերակղզու պատմությունը: Կատալոնյան քաղաքակրթությունը դիտվում է որպես իրավահավասար կաստիլյանին, բայց կեղեքված բռնակալ հարեւանների կողմից: Մենագրություններում խոսքը Վալենսիայից մինչեւ Սիցիլիա կատալոնյան աղեղի մասին է: Սակայն կատալոնցի ազգայնականները չեն հավակնում այդ բոլոր հողերին: Նրանց պահանջները տարածվում են «Կատալոնյան երկրների»՝ բուն Կատալոնիայի հողերի, Վալենսիայի, Արագոնի որոշ սահմանային շրջանների, որտեղ խոսում են կատալոներեն, Յյուսիսային Կատալոնիայի (այսինքն՝ Ֆրանսիական Ռուսիլյոնի), ինչպես նաեւ Բալեարյան կղզիների եւ Սարդինիայի Ալգեր քաղաքի վրա, ուր մինչ այժմ խոսում են կատալոնյան բարբառով:

«Կատալոնյան երկրներում» այս գաղափարները տարբեր կերպ են ընկալվում: Եթե Բալեարյան կղզիներում դրանք, հիմնականում, ընդունվում են (թեեւ 70-ական թվականներին գոյություն ուներ շարժում, որը Բալեարյան կղզիների անկախության կոչ էր անում), ապա Վալենսիայում կատալոնյան նկրտումները վրդովմունք են առաջացնում:

Իսպանիայում այլ լուրջ անջատողական շարժումներ չկան, իսկ ահա ինքնավարականներ գործնականում կան յուրաքանչյուր տարածաշրջանում:

Դրանցից ամենաէականն, անշուշտ, գալիսիականն է: Այն նրանով է հետաքրքիր, որ հավակնում է կելտական աշխարհի հետ ծագումնաբանական ազգակցությանը՝ առավել հետեւողականորեն, քան Պաղանիան: Չնայած նրան, որ գալիսիացիները խոսում են ռոմաներենով, նրանք մասնակցում են կելտական մշակույթին և ավիրված բոլոր ցույցերին: Ակտիվորեն զարգանում են գալիսերեն լեզուն ու գալիսիական ինքնագիտակցությունը: Շատերը հանգում են այն եզրակացության, որ հյուսիսային պորտուգալացիներն իրենց ավելի մոտ են, քան իսպանացիները: Իրոք, Յյուսիսային Պորտուգալիայի, ինչպես եւ գալիսիական մշակույթը համահունչ են կելտական աշխարհին: Միաժամանակ, Իսպանիայից անջատման օգտին հանդես է գալիս գալիսիացիների մեկ տոկոսից ոչ ավելին:

Տարածաշրջանային շարժումներն Արագոնում եւ Աստուրիայում հանգում են կրկին իրենց բարբառներով խոսելու եւ մշակութային առումով սեփական առանձնահատկությունը գիտակցելու փորձերին: Կաստիլյան հինգ շրջաններում (Կանտաբրիա, Կաստիլիա եւ Լեոն, Մադրիդ, Լա Ռիոհա եւ Կաստիլիա լա Մանչա) աճում է Մեծ Կաստիլիայի մեջ նրանց միավորման շարժումը, որը կարող է կազմել Իսպանիայի միատարր կորիզը: Լեոնում նույնիսկ առկա են անջատողական շարժումներ, որոնք միջնադարյան Լեոնի Թագավորության հողերի միավորման (Լեոնի մարզին Սամորայի, Սալամանկայի եւ անգամ պորտուգալական Բրագանցայի նահանգի միացման) կոչ են անում: Սակայն Աստուրիային լեոնական անջատողականները չեն հավակնում, թեւեւ այն նույնպես մտել է Լեոնի Թագավորության մեջ, քանզի նախընտրում են չզգտվել աստուրիացիների հետ:

Չգոր ինքնավարական շարժում կա Անդալուսիայում, որտեղ Բասկերի երկրի ու Կատալոնիայի ինքնավարության ճանաչումը զանգվածային փողոցային բողոքներ եւ ցույցեր առաջացրեց, որոնք, վերջիվերջո, հանգեցրին Անդալուսիայի ինքնավարության

ճանաչման: Սակայն անկախության համար լուրջ շարժում Անդա-  
լուսիայում չկա:

70-ական թվականների վերջին նկատելի անջատողական  
շարժում կար Կանարյան կղզիներում, որը սատարվում էր Ալժիրից  
եւ հիմնված էր բերբերյան միասնության գաղափարների վրա  
(Կանարյան կղզիների բնակչության մեծամասնությունը էթնիկ  
բերբերներ են): Բայց վերջին 20 տարիներին այս շարժումը տեղի  
բնակչության կողմից ոչ մի աջակցություն չի վայելում:

Իսպանիան հավակնում է Ջիբրալթարին, որը 18-րդ դարից  
պատկանում է Մեծ Բրիտանիային: Սակայն ջիբրալթարցիների  
մեծամասնությունը (90 տոկոսից ավելին) մերժում է ոչ միայն  
Ջիբրալթարի հանձնումը Իսպանիային, այլև նույնիսկ այդ վիճելի  
տարածքի վրա անգլո-իսպանական համատեղ սյուզերենությունը:  
Իր հերթին, Մարոկկոն հավակնում է իսպանական Սեուտա եւ  
Մելիլյա անկլավներին, որոնք նույնպես նախընտրում են մնալ  
իսպանական իշխանության ներքո: Վերջապես, գոյություն ունի  
չլուծված հակամարտություն Իսպանիայի ու Պորտուգալիայի  
միջև՝ Օլիվենս քաղաքի պատճառով, որը նապոլեոնյան պատե-  
րազմների շրջանում գրավվել էր իսպանացիների կողմից: Այնու-  
ամենայնիվ, Եվրամիություն եւ Շենգենյան տարածություն երկու  
պետությունների մուտք գործելու պահից ի վեր Օլիվենսի պատ-  
կանելության հարցը կորցրել է անցյալի արդիականությունը:

\* \* \*

**Ֆրանսիայում** անջատողականության խնդիրն ավելի քիչ  
սրությամբ է դրված, քան Իտալիայում կամ Իսպանիայում:

Կոշտ ունիտար պետության երկար տարիներն իրենց գործն  
արեցին. Ֆրանսիայի բնակչությունն ամենատարբեր ժողովուրդ-  
ների խառնակույտից վերածվեց ֆրանսիացիների, որոնց միա-  
վորում են ընդհանուր լեզուն եւ մշակույթը: Այնուամենայնիվ,  
վերջին 50 տարում Ֆրանսիայի շատ շրջաններում հասունացան  
ինքնավարական շարժումներ:

Նկատելի անջատողական շարժմամբ միակ մարզը Ֆրանսիա-  
յում Կորսիկան է: Կղզում անկախության կողմնակիցները հարգում  
են Պաուլիի՝ առաջին ժամանակակից ժողովրդավարական պետու-

թյան հիմնադրի հիշատակը, իսկ ֆրանսիական իշխանությունն ընկալում են որպես գաղութային:

Սակայն բնավ ոչ բոլոր կորսիկացիներն են անկախություն ցանկանում, իսկ ովքեր այն ուզում են, ծվատվել են կոնֆլիկտներից: Կղզու բնակչության մեծ մասը պատրաստ է բավարարվել լայն ինքնավարությամբ, կորսիկերեն լեզվի առանձին իրավունքներով եւ մի շարք ազգային հարկերից ազատմամբ: Ահաբեկչական սպառնալիք կա. կորսիկացիները հարձակվում են վարչական, ռազմական ու զբոսաշրջության օբյեկտների վրա, որոնք ներկայացնում են ֆրանսիական իշխանության խորհրդանիշները: Բայց հարձակումներն ուղղված են շենքերի, այլ ոչ թե մարդկանց դեմ:

Ֆրանսիայում, ինչպես եւ Իսպանիայում, գործում են բասկյան (Բայոնա, Անգլե եւ Բիարից քաղաքների շրջանում) եւ կատալոնյան (Ռուսիլյոնում կամ Յյուսիսային Կատալոնիայում) կազմակերպություններ: Որպես կանոն, բասկերը կենտրոնացել են Իսպանիայի դեմ պատերազմի վրա՝ ֆրանսիական հողերն օգտագործելով որպես նահանջի հենակայաններ: Այնուամենայնիվ, 70–80-ական թվականներին Ֆրանսիայում գործում էր բասկյան ահաբեկչական կազմակերպություն: Ռուսիլյոնում կատալոնյան շարժումը գրեթե աննկատելի է. տեղի բնակչությունը գործնականում կորցրել է իր ավանդույթները եւ ուժացվել:

Ֆրանսիայի մնացած տարածաշրջանային շարժումներից ամենահզորը բրետոնյանն է: Բրետանն առավելագույնս է օգտագործում իր պատկանելությունը կելտական աշխարհին, որպեսզի ցույց տա իր տարբերությունը ֆրանսիացիներից: Բրետանում ամենապաշտելի հերոսուհին դքսուհի Աննա Բրետոնացին է, որն ամեն ինչ արել է, որպեսզի բրետոնները պահպանեն իրենց անկախությունը Ֆրանսիայից: Բրետոներեն լեզվի հետ կապված են բազմաթիվ մշակութային միջոցառումներ, այն սովորեցնում են դպրոցում, այդ լեզվով երգչախմբեր են երգում:

Բրետանում անկախության կողմնակիցները բացարձակ փոքրամասնություն են: Գաղափարը, թե Բրետանը կարող է անկախանալ, թվում է այնքան անհավանական, որ բրետոն մեծամասնությանը դուր է գալիս նրա հետ «խաղալ»: Բրետոնների հիմ-

նական պահանջը Բրետանին նրա պատմական մայրաքաղաքի՝ Նանտի վերամիավորումն է, որն այժմ գտնվում է Լուար Ատլանտիկի դեպարտամենտում: Նանտում բրետոնները փոքրամասնություն են, սակայն ոչ մի տեղ Բրետանում չեն տեսնի այնքան անզուսպ հակաֆրանսիական կարգախոսներ, որքան այնտեղ:

Ինչպես եւ բասկերի դեպքում, լինում են ցանկացած հանդձմունքի բրետոն ազգայնականներ՝ ծայրահեղ ձախերից (էմգրանականներ. մոտ են անարխիստներին) մինչեւ ծայրահեղ աջեր (ադսավականներ. պահանջում են Եվրոպայից ներգաղթյալների վտարում): Բրետոնները վաղուց կապեր են պահպանում բասկերի հետ, եւ ժամանակին էՏԱ-ն օգնել է ահաբեկչական խմբի՝ Բրետոնական հեղափոխական բանակի կազմակերպմանը: Սակայն բրետոն ահաբեկիչների հաշվին մահափորձեր քիչ կան, զոհեր գրեթե չկան:

Ֆրանսիայի հարավում, 19-րդ դարի երկրորդ կեսին, ծնվեց օքսիտանական հզոր շարժումը՝ հենված պրովանսերեն լեզվի վրա, որը գրական էր դարձել դեռեւս տրուբադուրների ժամանակաշրջանում: Սակայն Օքսիտանիան, որը պոտենցիալ կերպով կարող էր դառնալ «ֆրանսիական Ուկրաինա», այդպես էլ չկայացավ: Այժմ նրանից ոչինչ չի մնացել, բացի մշակութային առանձնահատկության գիտակցումից եւ ֆրանսերեն լեզվի յուրահատուկ ակցենտից: Օքսիտանիայի միակ հատվածը, ուր գոյություն ունի անջատողական շարժում՝ Նիցցան է, որը Ֆրանսիայի կազմի մեջ է մտել 1860թ.՝ Սարդինիայի Թագավորության հետ պայմանագրի համաձայն: Անկախության կողմնակիցները պնդում են, որ Նիցցայից կարող է ստացվել երկրորդ Մոնակո եւ մատնանշում, որ պայմանագիրն, ըստ որի՝ Նիցցան գտնվում է Ֆրանսիայի կազմում, բազմիցս խախտվել է, իսկ 1940թ. ընդհանրապես չէրյալ է հայտարարվել:

Եվս մեկ նկատելի անջատողական շարժում գործում է Սավոյայում: «Նիցցայի անկախության շարժմանը» համանման այս շարժումն սկսվեց Սավոյան ու Նիցցան Ֆրանսիային միացնելու 100-ամյա հոբելյանի տոնակատարություններից շատ չանցած: Փոքրիկ «Սավոյայի սավոյցիների ակումբը» հետզհետե աճեց

«Սավոյական լիգայի», որը «Եվրոպական ազատ դաշինքի» անդամ է:

Էլզասում, չնայած չափազանց ուժեղ տարածաշրջանային ինքնությանը, անջատողական շարժում չկա: Երկրամասի պատմությունն իր դերը խաղացել է՝ Ֆրանսիայից անկախության ձգտումը վերածվել է բացարձակ տաբուի: Էլզասում կա բավական խոշոր տարածաշրջանային կուսակցություն՝ «Ամենից առաջ Էլզասը» եւ նրան հարող «Երիտասարդ Էլզաս» երիտասարդական շարժումը, որն ունի կապեր Ֆլանդրիայի ու Պաղանիայի երիտասարդական ազգայնական շարժումների հետ: Սակայն այդ կուսակցությունների գործիչները չեն էլ մտածում կասկածի ենթարկել, թե իրենք ֆրանսիացի են: Դրանք ծայրահեղ աջ շարժումներ են, որոնք կտրուկ հանդես են գալիս իրենց ինքնության (որը նրանք սահմանում են որպես երկակի՝ ֆրանսիական եւ էլզասական) կորստի դեմ. ինքնություն, որին, իրենց տեսանկյունից, սպառնում են Երրորդ աշխարհի երկրներից ներգաղթյալները:

Եվս մեկ տարածաշրջան, որի պատկանելությունը Ֆլանդրիայի անկախության ձեռքբերման դեպքում կարող է կասկածի ենթարկվել, Հարավային Ֆլանդրիան է (Լիլ, Դուե եւ Դյունկերք քաղաքների շրջանը): Բայց մինչ ֆլամանդական անկախության նվաճումը, այդ հարցը հաստատ չի ծառանա:

**apn.ru**

«Հանրապետական», 2008, թ. 7

#### 4. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱ

##### *Օլեգ Նեմենսկի*

Կոսովոյի անկախության հռչակումը Կենտրոնական Եվրոպայում հանդիպեց ոչ միանշանակ արձագանքի: Որոշ երկրներ (Լեհաստան, Յունգարիա, Լատվիա, Էստոնիա) բավական արագ ճանաչեցին նոր պետականությունը, մյուսներն (Սլովակիա, Ռումինիա) արդեն արտահայտել են իրենց միանգամայն որոշակի անհամաձայնությունն ինքնահռչակ անկախությանը: Կան նաև տատանվողներ, որոնք, թերևս, հակված են ճանաչմանը (Լիտվա, Չեխիա): Հասկանալի է, որ նման տարբեր վերաբերմունքը միայն ընդգծում է այս իրադարձության՝ որպես հնարավոր նախադեպի, ընդունումը: Այս երկրներից յուրաքանչյուրն ունի տարածքային իր խնդիրները, եւ ամեն մեկը կոսովյան անկախության հետեւանքները զգում է իր վրա:

\* \* \*

Մերձբալթյան երկրների շարքում էթնիկապես առավել յուրօրինակ շրջանը ժեմայտիան է **Լիտվայում** կամ, ինչպես այն ավանդաբար ռուսերեն անվանում են, ժմուդը:

Ժեմայտիան պետության արեւմտյան մասն է, ունի չափազանց ընդգծված պատմական, լեզվական ու մշակութային առանձնահատկություններ: Այն լիտվական պետականության վաղ պատմությանը չի մասնակցել, քրիստոնեությունն այստեղ հայտնվել է 15-րդ դարում: Վիճելի է մնում այն հարցը, թե արդյոք ժմուդերենն առանձին բալթյան լեզու պետք է համարել: Պաշտոնական տարբերակով՝ այն ստորին լիտվական բարբառ է, այն հակադրում են վերին լիտվականին՝ աուկշայթերենին, որի հիման վրա են ձևավորվել լիտվական գրական կանոնները: Ինչէւէ, այն ունի սեփական գիրը եւ դեռեւս պատանի գրական ավանդույթ: Ժմուդերենով ռադիոհաղորդում է տրվում, հրատարակվում թերթ: 1997թ. նրան տրվել է տեղական կարգավիճակ, առկա է համապետական մակարդակով նրա պաշտոնական կարգավիճակի ճանաչմանն ուղղված շարժում:

Ժմուդական ինքնագիտակցության ձեւավորմանը զգալիորեն խանգարեց այն փաստը, որ 19-րդ դարում լիտվական ազգային



վերածնունդը տեղի ունեցավ հիմնականում հենց ժնուդական հողում, ինչը նրա բնակչությանը խիստ մերձեցրեց բուն լիտվական (աուկշայթական) ազգային նախագծին: Սակայն 20-րդ դարի առաջին կեսին, այնուամենայնիվ, ծնվեց ժնուդական գիրը, արվեցին գրական ստեղծագործության առաջին փորձերը:

Լիտվայից անջատվելու գաղափարը երբեմն արտահայտվում է արմատական ակտիվիստների շրջանում, բայց, ընդհանուր առմամբ, դեռևս վաղ է խոսել նկատելի անջատողականության մասին: Համենայնդեպս, արդեն հետխորհրդային տարիներին ժնուդը դրսևորեց բավական ուժեղ տարածաշրջանային ինքնագիտակցություն եւ իր մշակույթն ու լեզուն առավել բարձր կարգավիճակի հասցնելու միտում:

Ի տարբերություն էթնիկապես խիստ միատարր ժնուդի, լիտվական պետության հարավը եւ, առաջին հերթին, Վիլենչիհնան, բազմազգ է:

1897թ. մարդահամարի տվյալներով՝ Վիլնոյի լիտվացի բնակիչները կազմում էին բնակչության 2,1 տոկոսը, մինչդեռ ռուսները (բելառուսների հետ միասին) բնակչության գրեթե մեկ քառորդ մասն էին, ամենամեծ տոկոս էին կազմում հրեաները եւ լեհերը (համապատասխանաբար 40 եւ 30,9 տոկոս): Այսօր իրավիճակը փոքր-ինչ այլ է, սակայն, ընդհանուր առմամբ, քաղաքի բազմազգ դիմանկարը պահպանվել է: Լիտվացիները կազմում են բնակչության առավել քան կեսը, գրեթե յուրաքանչյուր հիմնգերոդը լեհ է, վեց-յոթերորդը՝ ռուս: Պատկերը նույնն է ողջ տարածաշրջանում:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ այն, որ լիտվացիներից բացի, առնվազն երկու այլ ժողովուրդ եւս՝ բելառուսները եւ լեհերը, հակված են Վիլենչիհնան համարել իրենց պատմական հողը: Հետխորհրդային ժամանակաշրջանում, երբ Լիտվայի մշակութային միասնականացման քաղաքականությունը նկատելիորեն սաստկացավ, երեւան եկավ բազմազգության՝ որպես տարածաշրջանային պատմական յուրահատկության, արմատավորման գաղափարը:

Այն արտահայտվում է Վիլնյուսի մարզի եւ ողջ Հարավարեւելյան Լիտվայի (Ձուկիայի) քաղաքական կյանքում: Օրինակ՝ այստեղ գործում է Լեհական ժողովրդական կուսակցությունը, որը

Եվրոպական ազատ դաշինքի անդամ է: Աստիճանաբար ակտիվանում են նաև ռուսական կազմակերպությունները: Սակայն Կիլնյուսի մայրաքաղաք լինելու կարգավիճակը հազիվ թե ապագայի շոշափելի հնարավորություն թողնի այդ գաղափարին: Արժե նաև նշել, որ «Չուկիայի տարածաշրջան» պատմական հասկացության մեջ լիտվացիները փաստորեն ներառում են ամբողջ Սել Ռուսիան, այսինքն՝ Լեհաստանի Պոդլյաշի վոյեվոդության մի մասը եւ Բելառուսի ողջ Գրոդնոյի մարզը, ինչը անդրսահմանային համագործակցության գաղափարական հենքերից մեկն է:

Բազմէթնիկ տարածաշրջանային ինքնության ձևավորման համար անհամեմատ մեծ հնարավորություններ են ստեղծվել հարեւան **Լատվիայում**:

Լատգալիան խիստ առանձնահատուկ տարածաշրջան է, որը զբաղեցնում է Լատվիայի տարածքի մոտ մեկ քառորդը եւ գտնվում է նրա արեւելյան մասում: Պատմական Լատգալիան հաճախ հայտնվել է այլ պետական կազմավորումների մեջ եւ այդ պատճառով պահպանել է կաթոլիկ հավատքի գերակայությունը՝ ի տարբերություն Լատվիայի մնացած՝ առավելապես լյութերական տարածքի: Լատգալերեն լեզվի շուրջ ընթանում են վեճեր, ինչպես եւ ժնուդերենի պարագայում էր. այն լատիշերենի բարբա՞ռ է (վերին լատիշերեն), թե՞ ինքնուրույն բալթյան լեզու: Այնուամենայնիվ, լատգալերենը գրական լեզու դարձավ արդեն 18-րդ դարում, երբ նրանով արվեցին գրական ստեղծագործության առաջին փորձերը: Ներկայումս նրա կրողն է համարվում շուրջ 150 հազար մարդ, թեւ Լատգալիական ինքնության կրողները, որոշ հաշվարկներով, շատ ավելին են՝ մոտ 400 հազար, այսինքն՝ Լատվիայի բնակչության գրեթե 20 տոկոսը:

1919թ. Պյոտր (Պետերիս) Ստուլչկայի խորհրդային կառավարության կողմից լատգալերենը հռչակվեց որպես տարածաշրջանային պաշտոնական լեզու: 1934թ. Կառլիս Ուլմանիսն այն փաստորեն արգելեց, այնուհետեւ, 1940թ. լատգալերենը կրկին թույլատրվեց, բայց 1959-1989թթ. փաստացիորեն նորից հայտնվեց օրենքից դուրս վիճակում: Այժմ լատգալերեն լեզվի օգտագործման արգելքը հանվել է, սակայն «Լատգալ» ազգություն Լատվիայում նախկինի պես գոյություն չունի:

Իրադրությունը Լատգալիայում խիստ տարբերվում է ժնուդում տիրող իրավիճակից: Ինչպես Վիլենշչինայում, ժամանակակից Լատգալիայի կարելոր յուրահատկությունը նրա բազմազգ բնակչությունն է: Այստեղ եւս զգալի տոկոս են կազմում ռուսները, ինչպես նաեւ լեհերը (հիմնականում՝ ռուսալեզու): Մեծ նշանակություն ունի ռուսական հասարակական ու քաղաքական կազմակերպությունների գործունեությունը, որոնք հանձն են առել պաշտպանել նաեւ մյուս ազգային փոքրամասնությունների իրավունքները: 2005թ. համալատվիական սեյմում ներկայացված ռուսալեզու փոքրամասնության «Միասնական Լատվիայում մարդու իրավունքների համար» կուսակցությունը փաստորեն կարողացավ իշխանության գալ Լատգալիայի երկու խոշորագույն քաղաքներում՝ Դվինսկում (Դաուգավալիստում) եւ Ռեժիցայում (Ռեզեկենեում):

Արդյունքում՝ ներկայումս ձեւավորվում է Լատգալիայի նոր իմիջը՝ որպես ազգային փոքրամասնությունների տարածաշրջան, որը պահանջում է իր ճանաչումն ու սեփական իրավունքները: Լատգալիական ավանդույթների հիման վրա ձեւավորվում է տարածաշրջանային բացառիկ ինքնությունը՝ բազմազգությունը նախանշելով որպես երկրամասի կարելորագույն առանձնահատկություն, որը հակադրվում է պաշտոնապես անցկացվող լատիշացման ուղեգծին:

Այլ իրավիճակում հայտնվեց Դյուսիսարելեյան **Էստոնիայի** ռուսալեզու բնակչությունը, որտեղ այն մեծամասնություն է կազմում: Սա հիմնականում վերաբերում է Իդա-Վիրունաայի մարզին, որն Էստոնիայի ամենամեծ երկրամասն է (երկրի տարածքի 7,4 տոկոսը): Ռուսները կազմում են նրա բնակչության 70,8 տոկոսը, Էստոնացիները՝ 20 տոկոսից էլ պակաս, թեւ 3իխվի կենտրոնական քաղաքում նրանց տոկոսը փոքր-ինչ բարձր է՝ 37 (գրեթե այնքան, որքան Տալլինի ռուսները): Մարզի ամենամեծ քաղաքում՝ Նարվայում (մեծությամբ երկրորդն Էստոնիայում), ռուսները կազմում են բնակչության 88 տոկոսը:

Նման կացությունը, հատկապես պաշտոնական իշխանության չափազանց կոշտ ազգային քաղաքականության պայմաններում, անխուսափելիորեն հանգեցնում է ռուսական ինքնավարության հռչակման, իսկ երբեմն էլ՝ նույնիսկ Էստոնիայից անջատման (հետագայում Ռուսաստանին միանալու համար) գաղափարների:

Սակայն այդ գաղափարները, չնայած դրանց ժողովրդականությանն ալիքածելու բնույթին, ոչ մի էական հաջողության դեռ չեն հասել: Իդա-Վիրումայի իրավիճակը շատ բանով հիշեցնում է Կենտրոնական Եվրոպայի մի շարք այլ տարածաշրջանային խնդիրները, որտեղ ժամանակակից պետությունների սահմանները չեն համընկնում իրենց ժողովուրդների էթնիկ բնակեցման սահմաններին (դա հատկապես վերաբերում է հունգարական խնդրին, որին կանդրադառնանք ստորել):

Եվրոպայի մյուս պետությունների համեմատ **Լեհաստանը** էթնոտարածքային չափանիշներով բավական միատարր է: Դրան նպաստել են թե՛ լեհական իշխանությունների ավանդական կոշտ քաղաքականությունն էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ, թե՛ էթնիկ զտումները Երկրորդ աշխարհամարտի ժամանակ, թե՛ ժողովուրդների վերաբնակեցման հետպատերազմյան գործընթացը: Այնուամենայնիվ, այստեղ եւս առկա են սեփական տարածաշրջանային շարժումներ եւ ինքնագիտակցության նկատելի յուրահատկություններ:

Էթնիկ եւ պատմական խիստ ակնառու առանձնահատկություն ունի Կաշուբշչինան: Այն կաշուբների (արեւմտասլավոնական ժողովուրդ, որը ներկայացնում է վաղուց արդեն ոչնչացած պոմորյան սլավոնների մինչեւ մեր օրերը պահպանված մի հատվածը) անջատ բնակության տարածք է: Կաշուբների պատմական տարածքն ընդունված է համարել ողջ Պոմորիեն (Գդանսկից արեւմուտք՝ մինչեւ Շչեցին), սակայն ներկայումս նրանց բնակության տարածքը Պոմորիեի վոյեվոդության՝ Գդանսկից արեւմուտք եւ հարավ ընկած մի քանի գմինաներն են՝ Կարտուզա կենտրոնով: Ըստ 2002թ. մարդահամարի՝ իրեն կաշուբ է անվանում սոսկ 5100 մարդ, թեպետ նրանց թվաքանակի մասին ընդհանուր գնահատումներն այլ են՝ մոտ 300 հազար (որոշ կաշուբ գործիչների մեկնաբանմամբ՝ այդ թիվը պետք է գերազանցի կես միլիոնը): Կաշուբերեն լեզուն դեռեւս 15-16-րդ դարերից պահպանել է իր գրավոր հուշարձանները, թեւ արդի կաշուբական գրականությունը ստեղծվել է 19-րդ դարի երկրորդ կեսին:

Համեմատաբար վերջերս (Երկրորդ աշխարհամարտի ժամանակ եւ դրանից հետո) տեղի ունեցան լեհ-կաշուբական ընդհարումներ: Դրան նպաստեց այն, որ Բեռլինը հակված էր հանձինս

կաշուքների սլավոնացած գերմանացիների տեսնել, ուստի նրանց ավելի մեծ իրավունքներ եւ ազատություններ էր տվել, քան լեհերին:

Պատերազմից հետո նոր իշխանությունը մտադիր էր կաշուքներին գերմանացիների հետ միասին վտարել գերմանական հողեր, սակայն այդ քայլը կասեցվեց: Հետպատերազմյան քաղաքականությունն ուղղվեց կաշուքներին լեհերի հետ միաձուլելուն, ինչը բավական արդյունավետ եղավ: Ներկայումս կաշուքների մեծամասնությունը համատեղում է կաշուքական ու լեհական ինքնությունները: Երկրի երկու ամենահզոր կուսակցություններից մեկի՝ «Քաղաքացիական պլատֆորմի» առաջնորդ Դոնալդ Տուսկը կաշուք է եւ քիչ բան չի արել իր ժողովրդի կրթության զարգացման ու մշակութային վերածննդի համար: Այնուամենայնիվ, նրա կաշուքական ծագումը չի խանգարում ոչ իրեն, ոչ էլ մյուս լեհերին՝ նրա մեջ տեսնելու լեհ հայրենասերի:

Այսօր կենցաղում կաշուքերեն խոսում է շուրջ 50 հազար մարդ: Գործում է կաշուքերեն լեզվի դասավանդմամբ մի քանի տասնյակ դպրոց, գոյություն ունեն կաշուքական ռադիո-հեռուստաալիքներ, թերթեր, հանդեսներ: Կաշուքական ազգային շարժումը, որը հիմնականում ներկայանում է «Կաշուք-պոմորյան միությանը», հեռու է մնում անջատողականության մեղադրանքներից, առավել եւս, որ գլխավոր խնդիրն այժմ Լեհաստանի կողմից առանձին կաշուք ազգության ճանաչումն է: Կաշուքները պաշտոնապես ընդունվում են որպես լեհ ժողովրդի էթնիկ խումբ, իսկ կաշուքերենը՝ բարբառ: Նախկին գերմանացունը փոխարինվել է լեհացմամբ:

Լեհաստանի մյուս խոշոր տարածաշրջանը, որն ունի սեփական էթնիկ ու պատմական ընդգծված առանձնահատկություն, Սիլեզիան է: Ընդ որում, այս տարածաշրջանն անդրազգային է. այն հիմնականում ընդգրկում է Լեհաստանի Ստորին Սիլեզիայի, Սիլեզիայի եւ Օպոլեի վոյեվոդությունները, ինչպես նաեւ Չեխիայի Սիլեզա-մորավական մարզի հյուսիսը:

Լեհաստանում ու Չեխիայում սիլեզգիները ճանաչվել են էթնիկ փոքրամասնություն, բայց չունեն ազգային փոքրամասնության կարգավիճակ, փոխարենը՝ այդպիսին ճանաչվել են Սլովակիայում: 2002թ. լեհական մարդահամարի համաձայն՝ իրեն

սիլեզցի է համարում 173 հազարից ավելի մարդ: 2001թ. Չեխիայում այդպիսիներն ընդամենը 10 հազ. 878-ն էին, թեև 1991թ. նրանք անհամեմատ ավելին էին՝ 44,5 հազար: Սեփական գրական ավանդույթներ սիլեզերենը չունի, թեպետ դեռ 19-րդ դարի սլավոնագետների կողմից ընդունվել է որպես առանձին լեզու:

1930-ական թվականներին գրականագետների խմբի կողմից (Օ.Լիսոգորսկու գլխավորությամբ) Սիլեզիայի համար մշակվեց այսպես կոչված լյախերեն լեզուն, որով այն ժամանակ ու հետպատերազմյան տարիներին գրվեցին մի քանի չափածո եւ արձակ ստեղծագործություններ: Լյախերենը մոտ է չեխերենին, ուստի շատ բանասերների կողմից դիտվում է որպես երեւույթ չեխերեն լեզվի ներսում: Այնուամենայնիվ, այն այդպես էլ տարածում չստացավ:

Սիլեզերենի օրինականացման այս եւ մյուս փորձերը որոշակի հաջողություններ բերեցին արդեն մեր օրերում. սիլեզերեն լեզուն գրանցվեց Ստանդարտացման միջազգային կազմակերպությունում: 2007թ. ամռանը ԱՄՆ Կոնգրեսի գրադարանը սիլեզերենը ներառեց աշխարհի լեզուների գրանցամատյանում: 2007թ. սեպտեմբերին Սեյմի 23 պատգամավորներ սիլեզերենին տարածաշրջանային կարգավիճակ շնորհելու մասին օրինագիծ մտցրին: Բայց պաշտոնական Վարչական նախկինի պես սիլեզցիներին առանձին ժողովուրդ չի ճանաչում, իսկ լեզուն համարում է լեհերենի բարբառ կամ անցողիկ բարբառ լեհերենի ու չեխերենի միջեւ:

Վերջին ժամանակներս սիլեզյան շարժումը հիմնականում գործում է Լեհաստանում, ուր նկատվում է նրա ակնհայտ աշխուժացում: Սիլեզերեն լեզվի կրողների թիվն այստեղ գնահատվում է մոտ 60-70 հազար մարդ: 2003թ. պատմաբան Դարիուշ Երչինսկու կողմից լույս ընծայվեց «Սիլեզցի ժողովրդի պատմությունը», որը սիլեզյան ազգային պատմության սինթեզի փորձ է: 1990թ. ստեղծվեց Սիլեզիայի ինքնավարության շարժումը: Նրա առաջնորդ Եժի Գոժելիկը բավական արմատական դիրքորոշում ունի («Ես սիլեզցի եմ, այլ ոչ թե լեհ»): Սակայն շարժման քաղաքական ծրագիրը բավական չափավոր է. այն պայքարում է Վարչավայի կողմից սիլեզցի ազգության ճանաչման ու երկու տարածաշրջանների՝ Վերին եւ Ստորին Սիլեզիաների ինքնավարության կարգավիճակի համար:

Այնուամենայնիվ, Սիլեզիայի բնակչության մեջ սիլեզցիների իրական բաժնենմասը բավական փոքր է, եւ դա անդրադառնում է նաեւ սիլեզցի ինքնավարականների քաղաքական պահանջների վրա:

Սիլեզիայի բնակչության զգալի մասն ավանդաբար կազմել են գերմանացիները: Երկրորդ աշխարհամարտից հետո գերմանացիների մեծ մասն արտաքսվեց: Այսօր Վերին Սիլեզիայում ապրում է Լեհաստանի ողջ գերմանացիների 92 տոկոսը՝ գրեթե 140 հազար մարդ. այն ամենամեծ ազգային փոքրամասնությունն է երկրում: Օպոլեի վոյեվոդությունում նրանք շուրջ 10 տոկոս են, եւ նույնիսկ կան գերմանացի գերակշիռ բնակչությամբ գմինաներ: Բացի դրանից, Սիլեզիայի բնակչության կազմի վրա մեծ ազդեցություն է գործել հետպատերազմյան վերաբնակեցման քաղաքականությունը. այստեղ Արեւմտյան Ուկրաինայից վերաբնակեցվեցին մեծ թվով լեհեր: Այդ մարդիկ ունեն համալեհական ինքնագիտակցություն եւ հակված չեն սովորելու յուրօրինակ սիլեզերեն լեզուն: Սակայն սիլեզյան վոյեվոդություններում, ընդհանուր առմամբ, ապրում է Լեհաստանի բոլոր քաղաքացիների 67,8 տոկոսը, որոնց հատուկ է ոչ լեհական ինքնագիտակցությունը:

**Գերմանիայում**, Սիլեզիայի հարեւանությամբ, գտնվում է Լուժիցայի պատմական մարզը, որն օժտված է մեծ էթնոմշակութային առանձնահատկությամբ: Լուժիցցիները (լուժիցցի սերբերը) Գերմանիայի՝ պաշտոնապես ճանաչված չորս ազգային փոքրամասնություններից են (գնչուների, ֆրիզների եւ դանիացիների հետ միասին): Նրանք շուրջ 60 հազար են, որոնցից 20 հազարն ապրում է Ստորին Լուժիցայում (Բրանդենբուրգի երկրամաս), իսկ 40 հազարը՝ Վերին Լուժիցայում (Սաքսոնիայի երկրամաս): Լուժիցցիներն արեւմտասլավոնական ժողովուրդների գրեթե անհետացած ճյուղի՝ պոլաբների չորրորդ սերնդի ներկայացուցիչներն են եւ ունեն լեզվի ու մշակույթի բավական նկատելի յուրահատկություն: Ինչպես պոմորցի կաշուբների պարագայում, լուժիցցիների պատմության մեծ մասը կազմում է նրանց գերմանացման աստիճանական գործընթացը: Սերբալուժիցական գրերը ստեղծվել են դեռեւս 16-րդ դարում, իսկ 18-րդ դարի երկրորդ կեսից մինչեւ 19-րդ դարի առաջին կեսը ձեւավորվել է նաեւ սեփական գրական ավանդույթը: Օրինակարգված են լուժիցերեն լեզվի

երկու տարբերակները, բայց այժմ ստորին լուծիցներենն արդեն մոտ է անհետանալուն, մինչդեռ վերին լուծիցներենը դեռ պահպանում է իր նշանակությունը (այնուամենայնիվ, լուծիցցի գործիչները կարծում են, որ երկու-երեք սերունդ անց այն եւս կարող է անհետանալ):

Վերին եւ Ստորին Լուծիցաներն ունեն նկատելի մշակութային առանձնահատկություն. օրինակ՝ Վերին Լուծիցայում գերակշռում է կաթոլիկությունը, իսկ Ստորինում՝ բողոքականությունը: Թեւ 20-րդ դարի սկզբին լուծիցցիների թիվը 150 հազարից ավելին էր, Առաջին աշխարհամարտից հետո իրենց ինքնավարական իրավունքներ տրամադրելու նրանց պահանջները հաշվի չառնվեցին: Երրորդ Ռեյխի տարիներին լուծիցցիները ենթարկվեցին ցեղասպանության (20 հազարից ավելի սպանվածներ՝ գումարած մեծ թվով արտաքսվածներ): Արդեն պատերազմից հետո ակտիվորեն առաջադրվեց Սերբալուծիցական պետության ստեղծման գաղափարը (ինքնուրույն կամ Չեխոսլովակիայի կազմում), սակայն դա էլ չկենսագործվեց: 1989-1990թթ., Գերմանիայի միավորման շրջանում, լուծիցցի գործիչները ձգտում էին ինքնավարության, բայց այս անգամ էլ նրանց պահանջները չբավարարվեցին: Այժմ լուծիցցիները շատ արագ ուժացվող ժողովուրդ են հանդիսանում: Լուծիցական դպրոցներն իրենց տեղն էլ ավելի են զիջում գերմանականին, իսկ լեզուն գործածությունից դուրս է գալիս:

Վերադառնալով Լեհաստան՝ կարելի է ասել, որ մի ամբողջ շարք մարզեր եւս ունեն իրենց պատմական եւ էթնիկական յուրահատկությունները, որոնք շատ անգամ նշանակալի դեր են խաղացել սահմաններն անցկացնելիս, սակայն 20-րդ դարում դրանց լեհացման եռանդուն քաղաքականությունից հետո նրանք հազիվ թե կարողանան իրենց մասին լրջորեն հայտարարել: Առաջին հերթին, դա վերաբերում է պետության արեւելյան մարզերին:

Դեռ 100 տարի առաջ լեհական ինքնագիտակցությունն ամրապնդված չէր մազուրների՝ Մազուրիայի բնակիչների շրջանում, որը նախկինում Արեւելյան Պոլսիայի մասն էր: Նրանք ունեն բավական հզոր բարբառային առանձնահատկություններ, սակայն ժամանակակից լեհ ազգի մեջ նրանց դերակատարությունն արդեն բավական որոշակի է: Այլ են գործերը Պոդլյաչիեում (Պոդլյաչիեի վոյեվոդության մաս), Խոլմշչինայում (Լյուբլինի վոյեվոդության



մաս) եւ Նադսյանիեւում (Մերձկարպատյան վոյեվոդոթւթյան մաս)՝ պատմական արեւելասլաւոնական հողերում, որտեղ դեռ 20-րդ դարի սկզբին գերակշռում էր ուղղափառ բնակչութիւնը: Մինչ օրս բելառուսները եւ ուկրաինացիները դրանք համարում են իրենց էթնիկ տարածքները: 20-րդ դարում երկու անգամ (Առաջին աշխարհամարտից առաջ ու Երկրորդից հետո) դրանք ընդգրկվեցին ռուսական (կամ ուկրաինական եւ բելառուսական) վարչական կազմավորումների մեջ, բայց արդյունքում, այնուամենայնիվ, մնացին Լեհաստանինը: 1940-ական թվականների երկրորդ կեսին 100 հազարավոր արեւելյան սլաւոնների վերաբնակեցման (Ուկրաինա, Բելառուս ու Լեհաստանի արեւմտյան հողեր՝ ըստ «Վիսլա» գործողութիւնի) արդյունքում այդ տարածքների բնակիչների էթնիկ կազմն արմատապես փոխվեց:

Չմայած բնակչութիւնի լեհացված լինելուն, մինչ օրս տարածաշրջանում զգալի դեր է խաղում ուղղափառ եւ, ընդհանրապէս, արեւելասլաւոնական ավանդութիւնը: Բելոստոկը Լեհական ինքնուրույն ուղղափառ եկեղեցու (որը, պաշտոնական տվյալներով, ունի 600 հազարից ավելի հետեւորդ) կենտրոնն է: Գործում են բելառուսական եւ ուկրաինական ուղղվածութիւնի մի շարք կազմակերպութիւններ, սակայն նրանց ուշադրութիւնը կենտրոնացած է մշակութա-լուսավորչական գործունեութիւնի վրա: Ուղղափառ եկեղեցու պահպանված ենթակառուցվածքն ու հարեւան Բելառուսի եւ Ուկրաինայի հետ տարածաշրջանների համագործակցութիւնի ակտիվութիւնն օգնում են մասնակիորեն պահպանել նրանց պատմական նկարագիրը, իսկ վերջին տարիներին դիտվում է տեղի մշակութային վերածննդի ակնհայտ գործընթաց՝ հատկապէս եկեղեցա-կրոնական հենքով:

Նկատելի գործունեութիւն է ծավալվել Լեհաստանի մյուս արեւելասլաւոնական հողերում՝ Լեմկովշինայում (սահմանամերձ տարածք Մերձկարպատյան եւ Փոքրկարպատյան վոյեվոդութիւններում): Այստեղ արեւելասլաւոնական բնակչութիւնն, արտաքսման երկու ալիքից հետո, նույնպէս մնացուկային բնութիւն կրում եւ, այնուամենայնիվ, կարողացել է մինչ օրս պահպանել իր ինքնութիւնը: Ըստ 2002թ. մարդահամարի՝ տեղի ռուսիները՝ լեմկերը, հաշվվում են 6000 մարդ, բայց լեմկական կազմակերպութիւնների սեփական հաշվարկները խոսում են 60 հազարի

մասին: Վերջերս օրինակարգվեց նաեւ ռուսիներեն լեզվի (ճանաչվել է 2000թ.) լեմկերեն կանոնը, թեւս տեղի բարբառով գրականությունը (այդ թվում նաեւ թերթերի ու հանդեսների հրատարակությունը) գոյություն է ունեցել դեռեւս 19-րդ դարի վերջից: Չնայած հետպատերազմյան քաղաքականությանը, որը լեմկերին ընդունում է որպէս ուկրաինացիներ, նրանք չենթարկվեցին լրիվ ուկրաինացման: Ներկայումս նրանց շրջանում գերիշխող հոսանքը ռուսինական ազգային նախագծի (Ուկրաինայի Անդրկարպատյան մարզի եւ Սլովակիայի Պրյաշեւյան Ռուսիայի հետ միասին վերցրած) կողմնակից է, թեպետ նախկինի պէս ոչ քիչ դեր է խաղում ուկրաինասիրական հոսանքը: Լեմկերը լույս են ընծայում սեփական հանդեսներ, տարվում է մշակութային եւ կրթական ակտիվ գործունեություն:

Հարեւան **Սլովակիայում`** Պրյաշեւշչինայում, ռուսինական շարժումը եւս խիստ նկատելի է: 1989թ. հետո կրկին սկսեցին հրատարակվել ռուսինալեզու հանդեսներ ու թերթեր, բառարաններ ու ձեռնարկներ: Պրյաշեւ քաղաքը դարձավ ռուսինական ազգային շարժման հիմնական կենտրոններից մեկը: 1990-ական թվականներին ռուսիների թիվն ավելացավ ավելի քան 40 տոկոսով (ըստ 1991 եւ 2001թթ. մարդահամարների` նրանք շուրջ 25 հազար են), իսկ նրանց իրական թիվը Սլովակիայում կազմում է մոտ 130 հազար: 1999թ. բացվեց Պրյաշեւի համալսարանի Ազգային փոքրամասնությունների եւ օտար լեզուների ինստիտուտի ռուսիներեն լեզվի ու ռուսինական մշակույթի բաժանմունքը: Ռուսիներենով անցկացվում է նաեւ ռադիոհաղորդում: Ընդ որում, տեղի ռուսինական կազմակերպություններն ունեն ավելի չափավոր դիրքորոշում, քան ուկրաինական Անդրկարպատների ռուսիները եւ հանդես չեն գալիս սեփական ինքնավարության ստեղծման կոչերով: Սլովակիայում ռուսինական ազգային նախագծի ընդհանրությունն Անդրկարպատների ու Լեմկովշչինայի հետ, ուկրաինացման/սլովակացման/լեհացման գործընթացներին դիմակայելու ընդհանուր խնդիրը եւ վերջին երկու տասնամյակներին այդ շարժման նկատելի աշխուժացումը` այս բոլորը ռուսինությունը դարձնում են բավական նշանակալի գործոն:

Հարեւան **Չեխիայում** կարելուր տեղ է զբաղեցնում Մորավիայի էքոնոքաղաքական շարժումը: Մինչեւ 19-րդ դարի սկիզբը կարելի

էր խոսել մորավների ազգային ինքնագիտակցության ձեւավորման գործընթացի մասին, սակայն, ավելի ուշ, տեղական շարժումը դարձավ չեխական ազգային վերածննդի մաս: Առանձին մորավերեն լեզու ստեղծելու փորձեր ձեռնարկվեցին 1820-1830թթ. (քերականության հրատարակում), բայց դրանք լուրջ շարունակություն չունեցան: Այնուամենայնիվ, Մորավիայի մշակութային յուրօրինակությունը պահպանվեց: 1945թ. Մորավիային տրվեց ինքնավարություն, որը շուտով լուծարվեց (1949թ.): 1968թ. մորավական Բռնո գլխավոր քաղաքում ստեղծվեց «Մորավիայի եւ Սիլեզիայի ընկերակցությունը», որը պայքարում էր տարածաշրջանի ինքնավարության կարգավիճակի վերականգնման համար: 1989թ. հիմնվեց «Մորավական քաղաքացիական շարժումը», որը պահանջում էր «մորավ ժողովրդի գոյության ճանաչում՝ չեխերին ու սլովակներին իրավահավասար»:

1990-ական թվականները մորավական ինքնության վերածննդի ակտիվ ժամանակներ էին: 1991թ. մարդահամարը Չեխոսլովակիայում արձանագրեց 1 մլն 360 հազար մորավ: 1990թ. վերջին կազմավորվեց «Մորավական ազգային կուսակցությունը»: 1990-ականների վերջին եւ 2000-ականների սկզբին մորավական ազգայնականության ժողովրդականությունը սկսեց մարել, եւ, այնուամենայնիվ, այն մնում է որպես տարածաշրջանային ինքնագիտակցության դրսեւորման կարեւոր ձեւ: Մեր ժամանակներում Մորավիայի ինքնավարության համար պայքարում են մի ամբողջ շարք քաղաքական կազմակերպություններ՝ «Մորավիայի ազգային կուսակցությունը», «Մորավիայի եւ Սիլեզիայի միությունը», «Մորավիայի դեմոկրատական կուսակցությունը» եւ այլն: Եվրոպական միության նոր պայմաններում մորավական թեման կրկին արթնանում է:

Կենտրոնական Եվրոպայի տարածաշրջանի համար շատ կարեւոր է նաեւ վերաբնակիչների խնդիրը: Երկրորդ աշխարհամարտից հետո նոր հողերում վերաբնակեցված մարդկանց վիթխարի զանգվածները պահպանում են կորուսյալ հայրենիքի հիշողությունը եւ ստեղծում են բազմաթիվ «վտարանդիների միություններ», որոնք պայքարում են վերաբնակեցման քաղաքականության դատապարտման ու իրենց վերադարձի իրավունքի ճանաչման համար: Այդ կազմակերպությունները պահպանում են արդեն

գոյությունը չունեցող տարածաշրջանների՝ լեհական «արեւելյան կրեսների», Պրուսիայի, Սուդեթների եւ մյուսների ինքնությունը:

Սակայն չի կարելի ժխտել, թե նշված միություններն, այնուամենայնիվ, կհասնեն իրենց նպատակին. վերջին մեկուկես տասնամյակի բոլոր իրադարձությունները հանգեցնում են անցած պատերազմի արդյունքների վերանայման իրագործելիության մտքին: Այդ մասին է վկայում նաեւ կոսովյան նախադեպը. չէ՞ որ Կոսովոյի անկախությունը Մեծ Ալբանիայի վերածննդի մի աստիճանն է, որը գոյություն է ունեցել ֆաշիստական Իտալիայի ու նացիստական Գերմանիայի պրոտեկտորատի ներքո: Վտարանդիներին նախկին հողեր վերադառնալու իրական թույլտվության դեպքում ներկայիս բավական միատարր մարզերի էթնիկ կազմում կարող են տեղի ունենալ նկատելի փոփոխություններ. ընդ որում, դա վերաբերելու է հենց բնակչության ամենաակտիվ շերտերին: Խոսքն, առաջին հերթին, նախկին տարածքներ գերմանացի, լեհ եւ ուկրաինացի բնակչության մեծ խմբերի վերադարձի մասին է: Հայրենադարձներն, անշուշտ, իրենց հետ կբերեն նաեւ հին տարածաշրջանային գաղափարախոսությունները, որոնք նորովի կլուսաբանեն այդ տարածաշրջանների ապագան: Սակայն այս գործընթացներին դեռեւս մեկնարկ չի տրվել, ուստի այդ ինքնություններն ու դրանց վրա հիմնված անջատողականությունն այստեղ հատուկ չեն դիտարկվի:

Այս գործընթացը, թերեւս, ունի եւս մեկ կողմ, որն արդեն սկսել է կյանքի կոչվել. դա բնակչության այն հատվածի վերադարձն է նախկին ինքնությանը, որը պատերազմից հետո այլ ինքնություն է ձեռք բերել: Օրինակ, Լեհաստանի կողմից 2008թ. գարնանը արտերկրի լեհերին հատուկ արտոնություններ տրամադրելու վերաբերյալ հրապարակված ծրագիրը, որոշ հաշվարկներով, կարող է լրջորեն փոխել Արեւմտյան Ուկրաինայի էթնիկ իրավիճակը, ուր լեհական ինքնությանը վերադառնալ է ցանկանում շուրջ 1,5 միլիոն մարդ: Այդ նույն հիմունքով են ընթանում հունգարական ազգային փոքրամասնությունների աճի գործընթացները: Եվ այնուամենայնիվ, արժե նշել, որ նման «ինտելեկտուալ հայրենադարձությունից» մինչեւ իրապես արժեքավոր տարածաշրջանային ինքնությունների ձեւավորումն ու դրանց վրա հենվող շարժում-

ները՝ մի քայլ չեն: Թե որքան հեռու կարող են գնալ գործընթացները՝ ապագայի հարց է:

Ներկայումս առավել կարելու է այն տարածաշրջանները, որոնք Երկրորդ աշխարհամարտից հետո ընդգրկվել են նոր ազգային պետությունների մեջ, բայց որոնցից չի տարհանվել տեղի այլազգի բնակչությունը: Խոսքն, առաջին հերթին, հունգարների մասին է, որոնք այսօր Հունգարիայի հարեւան մի շարք երկրներում խիստ զգալի ազգային փոքրամասնություն են կազմում: Սլովակիայում հունգար փոքրամասնությունը կազմում է բնակչության գրեթե 10 տոկոսը եւ հարավում՝ Հունգարիայի հետ սահմանի երկայնքով զբաղեցնում է լայն գոտի: «Հունգարական կոալիցիայի կուսակցությունը», որը ներկայացնում է սլովակ հունգարներին, Սլովակիայի քաղաքական կյանքում չափազանց ակնառու դեր է խաղում, սակայն սլովակյան պետականության նկատմամբ լոյալ դիրքորոշում ունի: Նույնը չի կարելի ասել մի շարք հունգարական հասարակական կազմակերպությունների եւ առանձին գործիչների մասին, որոնք մշտապես բարձրացնում են հունգարական ինքնավարության եւ անգամ Հունգարիայի կազմ վերադառնալու հարցը: Առավել փոքր նշանակություն ունի Ուկրաինայի Անդրկարպատյան մարզի հունգար ազգային փոքրամասնությունը: Սակայն այստեղ էլ նա չափազանց ակտիվ է: Երկրամասի կյանքում մեծ դեր են խաղում Վոյեվոդինայի հունգարները (14 տոկոս), որոնք մեծ չափով վերահսկում են նրա տնտեսությունը:

Առավել նշանակալի է հունգարական ակտիվությունը ռումինական Տրանսիլվանիայում, ուր այն ուղղված է ինքնավարական իրավունքների ճանաչմանը, նաեւ ողջ տարածաշրջանի համար պաշտոնական հունգարերենի ընդունմանը: Հունգարական ինքնավար օկրուգ Տրանսիլվանիայի մի մասում 1952-1967թթ. արդեն գոյություն ունեցել է: Այժմ հունգարների թիվը **Ռումինիայում** կազմում է շուրջ 1,5 մլն մարդ, ընդ որում, այդ թիվն աճելու միտում ունի: 2007թ. մարտի վերջին տրանսիլվանյան երեք շրջաններում անցկացվեցին հանրաքվեներ, որտեղ բնակչությունն արտահայտվեց Բուխարեստից առավելագույն ինքնավարության եւ Հունգարիայի հետ առանձնակի հարաբերությունների օգտին: Հունգարիայի նախագահ Լասլո Շոյոմը դրանից հետո բացահայտ

հայտարարել է Տրանսիլվանիայում հունգարական տարածքային ինքնավարության ստեղծման հնարավորության մասին:

Ռումինիայի ապագայի համար մեծ նշանակություն ունի նաև հեռանկարում իրեն Մոլդովայի Հանրապետության (Բեսարաբիայի) միացումը: Այսօր Ռումինիան ունիտար պետություն է՝ սոսկ պատմականորեն բաժանված երեք մասի՝ Վալախիայի, Մոլդովայի ու Տրանսիլվանիայի: Ի տարբերություն Տրանսիլվանիայի, Մոլդովայի տարածաշրջանում ինքնավարական շարժումները բավական թույլ են եւ ավելի կենտրոնացած են տեղական ինքնագիտակցության զարգացման վրա: Սակայն պետության կազմում Բեսարաբիայի ընդգրկման դեպքում (որը, ամենայն հավանականությամբ, կստանա ինքնավարության իրավունք), ռումինական Մոլդովայի կարգավիճակի բարձրացման համար շարժումն, անշուշտ, կսաստկանա: Հավանաբար, վերստին հրատապ կդառնա նաև մոլդովականության գաղափարախոսությունը՝ այժմ արդեն համամոլդովական ծավալով, որի հիման վրա եւ կարող է տեղի ունենալ պատմական Մոլդովայի վերամիավորումը: Նման տարածաշրջանին ինքնավարության իրավունքների տրամադրումն անխուսափելիորեն կհանգեցնի ողջ Ռումինիայի ֆեդերալացման: Եթե Եվրոպայի հետագա զարգացումն այսուհետեւ էլ ընթանա «Եվրոպայի տարածաշրջանների» ուղղությամբ, ապա Ռումինիայի ամբողջական ընկալումն ապագայում կարող է այլևս ժամանակավրեպ լինել:

**apn.ru**

«Հանրապետական», 2008, թ. 8

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԸ

*Նոր պետությունների կազմավորման բարդությունները հաճախ կապված են հետեւյալ անհատականության հետ. ո՞րն է միջազգային իրավունքի երկու հիմնարար սկզբունքներից առավել կարեւորը՝ սահմանների անխախտելիությունը, թե՞ ազգերի ինքնորոշման իրավունքը: Սովորաբար, միջազգային ընկերակցությունն ավելի արժեւորում է առաջին սկզբունքը, քանզի երկյուղում է բազմազգ պետությունների փլուզման անկառավարելի շղթայական ռեակցիայից:*

Պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքն առաջին անգամ սահմանվեց 1648թ.: Այն ժամանակ կնքվեց Վեստֆալյան հաշտության պայմանագիրը, ինչը վերջ դրեց եվրոպական աշխարհամասում մոլեզմող պատերազմների շարքին: Վեստֆալիայի բանակցությունները վերջ տվեցին բողոքականների եւ կաթոլիկների միջեւ Երեսնամյա պատերազմին, ուր մի կողմից մարտնչում էին Շվեդիան, Բոհեմիան, Դանիան, Նիդեռլանդները, Շոտլանդիան, Անգլիան ու Սաքսոնիան, իսկ մյուս կողմից՝ Իսպանիան, Զռոմեական սրբազան կայսրությունը եւ այլք: Վեստֆալյան հաշտության պայմանագրի (որը վերածեց պետական սահմանները Եվրոպայում) դրույթներից մեկը դարձավ այն սկզբունքը, որով անօրինական ճանաչվեց պետության ներքին գործերին արտաքին միջամտությունը, այսինքն՝ պետության տարածքային ամբողջականության սկզբունքը: Այժմ այն համընդհանուր ընդունված կանխադրույթ է եւ ներառված է բոլոր հիմնարար միջազգային համաձայնագրերում:

Սակայն, միաժամանակ, Վեստֆալյան հաշտությունը, փաստորեն, հաստատեց ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը: Բանն այն է, որ մինչ Իսպանիայի դեմ հոլանդացիների ապստամբությունը, կասկածի չէր ենթարկվում միապետների՝ իրենց հպատակների ճակատագրերը վճռելու իրավունքը: Բայց Նիդեռլանդների դեպքում հպատակների դժգոհությունը հանգեցրեց նրան, որ միապետը կորցրեց այդ իրավունքը: Վեստֆալյան հաշտության պայմանագրի ստորագրման ժամանակ եվրոպական տերությունները փաստորեն ընդունեցին այն եւ համաձայնեցին ճանաչել

անկախ Նիդեռլանդների սահմանները: Երկարաժամկետ հեռանկարում այդ որոշումը հանգեցրեց եվրոպական միապետությունների մեծ մասի կործանման, բազմաթիվ անկախ պետությունների առաջացման եւ պետական սահմանների լուրջ վերածեւման:

Ամերիկյան պատմաբան, «Անկախության հռչակագիր. գլոբալ պատմություն» գրքի հեղինակ Դեւիդ Արմիթաջը պնդում է, թե միջազգային նշանակության հաջորդ փաստաթուղթը, որը հաստատեց ազգերի ինքնորոշման իրավունքը, դարձավ 1776թ. ընդունված ԱՄՆ անկախության հռչակագիրը: Հատկանշական է, որ Բրիտանական կայսրությունից անկախություն ստանալու 13 հյուսիսամերիկյան գաղութների փորձը շատ ժամանակակիցների կողմից խիստ բացասաբար ընդունվեց: Արմիթաջի կարծիքով, ԱՄՆ անկախության հռչակագիրն արմատապես փոխեց աշխարհը՝ այն «կայսրությունների աշխարհից» վերածելով «ինքնիշխան պետությունների աշխարհի»: Ամերիկյան հռչակագրի մոդելով ու նմանությամբ գրվեցին 100-ից ավելի պետությունների անկախության հռչակագրեր:

1945թ. ընդունվեց ՄԱԿ Կանոնադրությունը, որը խարսխվում է պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի վրա. այդ սկզբունքն արգելում է միջազգային վեճերի լուծման համար ուժի օգտագործումը: Այսպես, Հոդված 2-ն (Կետ 4) ասում է, որ «ՄԱԿ բոլոր անդամներն իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ուժի սպառնալիքից կամ նրա կիրառումից՝ ինչպես ցանկացած պետության տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ, այնպես էլ Միավորված ազգերի նպատակների հետ անհամատեղելի որեւէ այլ ձեւով»:

1970թ. ՄԱԿ Գլխավոր վեհաժողովը հավանություն տվեց «Պետությունների միջեւ բարեկամական հարաբերություններին եւ համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրին», որտեղ նշվում է, թե «պետությունների տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունն անձեռնմխելի են»: Նույն փաստաթղթում նաեւ նշված է, որ «ինքնիշխան եւ անկախ պետության ստեղծումը (...) կամ ժողովրդի կողմից ազատորեն որոշված ցանկացած այլ կարգավիճակի սահմանումը հանդիսանում են այդ ժողովրդի ինքնորոշման իրավունքի կենսագործման ձեւ» եւ որ «յուրա-



քանչյուր պետություն պարտավոր է ձեռնպահ մնալ որեւէ բռնի գործողությունից, որը կզրկի վերոհիշյալ ժողովուրդներին (...) ինքնորոշման, ազատության եւ անկախության իրավունքից»:

1960թ. ՄԱԿ Գլխավոր վեհաժողովն ընդունեց Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու մասին հռչակագիրը: Այնտեղ եւս առկա են փոխադարձաբար բացառող դրույթներ: Այսպես, Կետ 1-ն ասում է, թե «ժողովուրդների ենթարկումը օտարերկրյա լծի եւ տիրապետության (...) հանդիսանում է մարդու հիմնարար իրավունքների մերժում, ինչը հակասում է ՄԱԿ Կանոնադրությանը», իսկ Կետ 6-ը՝ որ «երկրի ազգային միասնությունը եւ տարածքային ամբողջականությունը մասնակիորեն կամ լիովին քայքայող յուրաքանչյուր փորձ անհամատեղելի է ՄԱԿ Կանոնադրության նպատակների ու սկզբունքների հետ»: Միեւնույն ժամանակ, Կետ 2-ը նշում է, որ «բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, այդ իրավունքից ելնելով՝ նրանք ազատորեն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը եւ իրականացնում սեփական տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը»:

1966թ. Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի մեջ այս դրույթը («բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, այդ իրավունքից ելնելով՝ նրանք ազատորեն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը եւ իրականացնում սեփական տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը») ներառվեց ամբողջովին (Մաս 1, Գլուխ 1), իսկ պետությունների տարածքային ամբողջականության իրավունքի մասին այդ փաստաթղթում հիշատակված չէ:

1975թ. ստորագրվեց Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության գծով Յեւրոպական խորհրդակցության եզրափակիչ ակտը: Այն նույնպես հաստատեց Երկրորդ աշխարհամարտից հետո Եվրոպայում ձեւավորված պետական սահմանների անխախտելիության սկզբունքը: Համաձայնագրի տեքստում, մասնավորապես, նշված է, որ «մասնակից պետությունները հարգելու են միմյանց ինքնիշխան հավասարությունն ու յուրօրինակությունը, ինչպես նաեւ իրենց անկախությանը հատուկ եւ նրա ընդգրկած բոլոր իրավունքները, որոնց թվում է, մասնավորապես, յուրաքանչյուր պետության իրավական հավասարության, տարածքային

ամբողջականության, ազատության եւ քաղաքական անկախության իրավունքը» (Հոդված 2) եւ «մասնակից պետություններն անխախտելի են համարում ինչպես միմյանց, այնպես էլ եվրոպայի բոլոր պետությունների սահմանները, ուստի եւ նրանք այժմ ու ապագայում էլ ձեռնպահ են մնալու այդ սահմանների նկատմամբ ցանկացած ոտնձգությունից» (Հոդված 3):

Միաժամանակ, այդ նույն փաստաթղթի Հոդված 8-ն ասում է. «Մասնակից պետությունները հարգելու են ժողովուրդների իրավահավասարությունը եւ իրենց ճակատագիրը տնօրինելու իրավունքը՝ մշտապես գործելով ՄԱԿ Կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին եւ միջազգային իրավունքի համապատասխան նորմերի համաձայն՝ ներառյալ նրանք, որոնք վերաբերում են պետությունների տարածքային ամբողջականությանը (...): Բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն լիակատար ազատության պայմաններում, երբ եւ ինչպես իրենք ցանկանում են, առանց արտաքին միջամտության, որոշել իրենց ներքին ու արտաքին քաղաքական կարգավիճակը եւ իրենց հայեցողությամբ իրականացնել սեփական քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը»:

ՄԱԿ Կանոնադրության եւ ՅԵՄԻՆԿյան ակտի փոխադարձաբար բացառող դրույթները բազմիցս հաստատվել են միջազգային այլ պայմանագրերի ու համաձայնագրերի շրջանակներում, այդ թվում նաեւ եվրոպական մակարդակով: Միջազգային իրավունքի ճանաչված մասնագետ, Քեմբրիջի համալսարանի աշխատակից Մարկ Վելերն այս պարադոքսն անվանում է «ինքնորոշման ծուղակ»:

«Ինքնորոշման դեպք» գրքի հեղինակ Կարեն Փարկերը նշում է, թե ժամանակակից միջազգային իրավունքը չի կարող միանշանակորեն պատասխանել «ի՞նչ է անհրաժեշտ անել նոր պետություն ստեղծելու համար» հարցին: 20-րդ դարում, գաղութային կայսրությունների փլուզման արդյունքում, երեւան եկավ այսպես կոչված «հռչակագրային» եղանակը, այսինքն՝ որեւէ տարածք պարզապես հայտարարում է այն մասին, թե ինքն իրենից ներկայացնում է անկախ պետություն: Ավանդական, այսպես կոչված «սահմանադրական» ճանապարհն առավել բարդ է: Այն հռչակում է, որ լիարժեք կարգավիճակի ձեռքբերման համար ինքնահռչակ պետություններին անհրաժեշտ է միջազգային ճանաչում: Դիվանագիտական ճանաչման ֆորմալ գործողությունը նշանակում է,

որ մի պետությունը ճանաչում է մյուսի անկախ կարգավիճակը եւ նրա կառավարության լիազորությունները (միջազգային պրակտիկայում միշտ ճանաչվում է այս կամ այն երկրի կառավարությունը եւ ոչ թե բուն երկիրը):

Գոյություն ունի պաշտոնական ճանաչման երկու տեսակ՝ «դե-ֆակտո» եւ «դե-յուրե»: «Դե-ֆակտո» ճանաչումն (այսինքն՝ տվյալ կառույցի գոյության փաստի հիման վրա) ունի «ոչ պաշտոնական» բնույթ, սակայն դա բավարար է, որպեսզի երկու պետությունները կարողանան հաստատել դիվանագիտական հարաբերություններ, փոխադարձաբար ճանաչեն անձնագրերն ու մուտքի արտոնագրերը եւ այլն: «Դե-յուրե» ճանաչումը (այսինքն՝ գոյություն ունեցող միջազգային նորմերի հիման վրա) նախատեսում է ողջ ծավալով միջպետական հարաբերությունների հաստատում: Երբեմն «դե-ֆակտո» ճանաչումը նախորդում է «դե-յուրե» ճանաչմանը: Օրինակ, 1921թ. Մեծ Բրիտանիան բոլշևիկների կառավարությանը «դե-ֆակտո» ճանաչեց որպես Ռուսաստանի օրինական իշխանություն, իսկ «դե-յուրե»՝ սուկ երեք տարի անց:

Ճանաչումը նաեւ անհրաժեշտ է, եթե երկրում իշխանությունը փոխվում է ոչ սովորական ճանապարհով, օրինակ՝ հեղաշրջման, հեղափոխության կամ արտաքին ներխուժման արդյունքում: «Թալիբանի» կառավարությանը, որը 1996–2001թթ. «դե-ֆակտո» դեկավարում էր Աֆղանստանի տարածքի մեծ մասը, ճանաչեց միայն աշխարհի երեք պետություն, մինչդեռ նրանց կողմից տապալված կառավարությանը, որը վերահսկում էր երկրի տարածքի 12 տոկոսից ոչ ավելին, օրինական ճանաչեց առավել քան 70 պետություն: 1940թ. հունիսին խորհրդային զորքերի կողմից գրավվեցին Լատվիան, Լիտվան ու Էստոնիան: Այդ երկրները կորցրին իրենց պետականությունը եւ ներառվեցին ԽՍՀՄ կազմի մեջ՝ միութենական հանրապետությունների կարգավիճակով: ԱՄՆ-ը չճանաչեց ԽՍՀՄ այդ գործողությունների օրինականությունը եւ Բալթիայի երկրները համարեց անկախ, բայց օկուպացված պետություններ: Այդ հանրապետությունների դեսպանատները, չնայած Մոսկվայի բողոքներին, շարունակեցին գործել Վաշինգտոնում:

**Washington ProFile, 29.08.2008**

«Յանրապետական», 2008, ք. 8

## **2. Բժեզհինսկի. «ԱՄԵՐԻԿԱՆ ԿՈՐՑՐԵԼ Է ԻՆՔՆԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ»**

*Ամերիկյան արտաքին քաղաքականության ամենահարգարժան գործիչներից Զբիգնե Բժեզհինսկին եւ Բրենթ Սքոուլթրոֆը ստորել քննարկում են աշխարհում ԱՄՆ դիրքի մասին հարցը: Բժեզհինսկին եղել է նախագահ Քարտերի ազգային անվտանգության հարցերով խորհրդականը, Սքոուլթրոֆը զբաղեցրել է նույն պաշտոնը Ջորջ Բուշ-ավագի եւ Ջերալդ Ֆորդի վարչակազմերում: Բանավեճը, որ կայացել է այս տարվա գարնանը, վարել է «Washington Post»-ի տեսաբան Դեվիդ Իգնատիուսը:*

**Բժեզհինսկի:** Վերջերս ինձ ապշեցրեց այն փաստը, որ Կոնգրեսին հղած իր ուղերձում նախագահն «ահաբեկչության դեմ պատերազմն» անվանեց մեր հարյուրամյակի գլխավոր գաղափարախոսական հակամարտություն: Ես մտածեցի. «Արդյո՞ք դա չափից ավելի ինքնավստահություն չէ»: Դրսում նոր միայն 2008 թվականն է, եւ մեզ ասում են, թե ինչ գաղափարախոսական կոնֆլիկտ վճռորոշ դեր կխաղա ողջ հարյուրամյակի ընթացքում: Պատկերացնենք, որ 1908թ. մեզ խնդրեին ասել, թե ինչպիսի գաղափարախոսական հակամարտություն կկանխորոշի 20-րդ դարի բնույթը: Արդյո՞ք շատերն այդ ժամանակ կպատասխանեին, որ այն լինելու է աջ եւ ձախ, կարմիր եւ դարչնագույն ամբողջատիրական գաղափարախոսությունների միջեւ հակամարտությունը: Կան 1808թ., Վիեննայի կոնգրեսում պահպանողականության հաղթանակի նախօրեին, արդյո՞ք շատերը կկարողանային կանխատեսել, որ 19-րդ դարը Եվրոպայի շատ տարածաշրջաններում կանցնի ազգայնական կրքերի ներքո:

Մեր հարյուրամյակի որոշիչ գաղափարախոսական մարտահրավերն ահաբեկչության դեմ պատերազմը չի լինի: Այն կլինի ոչ այդքան կոնկրետ որեւէ բան: Ըստ իս, խոսքը երեք հիմնարար փոփոխությունների մասին է:

Այդ երեւոյթներից մեկը ես կոչում եմ «քաղաքական զարթոնք»՝ համաշխարհային մասշտաբի: Պատմութեան մեջ առաջին անգամ համայն մարդկութիւնը դարձել է քաղաքականապէս ակտիվ: Եվ դա արմատական առաջընթաց է: Երկրորդ. տեղի է ունենում ազդեցութեան համաշխարհային կենտրոնի տեղաշարժ Ատլանտյան տարածաշրջանից դեպի Արեւելյան Ասիա: Խոսքն Ատլանտյան աշխարհի կործանման մասին չէ, այլ գերիշխանութեան կորստի, որից նա 500 տարի օգտվել է: Եվ երրորդ. մակերես դուրս եկան գլոբալ մասշտաբի ընդհանուր խնդիրներ, որոնք պետք է միասին լուծել, այլապէս կտուժեն բոլորը: Ես նկատի ունեմ ոչ միայն կլիման ու բնապահպանութիւնը, այլեւ աղքատութեան եւ անարդարութեան հիմնախնդիրը:

***Իզմատիու:** Որպեսզի ավարտեք Ձեր միտքը՝ ի՞նչն է այսօր խանգարում այդ խնդիրները լուծելու մեր կարողութեանը:*

**Բժեգինսկի:** Եթէ այն վերածենք մի գործոնի, ես կասեի՝ Ամերիկան կորցրել է ինքնավստահութիւնը: Հասուն մարդու իմ ողջ փորձը կապված է համաշխարհային մասշտաբի վիթխարի հակամարտութեան՝ «սառը պատերազմի» հետ: Սակայն մենք այն վստահորեն ենք վարել: Իսկ այսօր ինձ սարսափեցնում է այդ «վախի մշակութիւնը», որին ամենուրեք բախվում ես:

Պարզ է, որ դա կապված է սեպտեմբերի 11-ի շոկի հետ: Այն, որ ողջ երկիրը հեռուստատեսութեամբ հետեւում էր այդ իրադարձութիւններին, սասանեց ամերիկացիների հավատը: Եվ, որքան էլ դա ցավալի է, այդ վախը, իմ կարծիքով, բորբոքվեց նաեւ քարոզչութեան միջոցով: Այն հակաարդունավետ էր: Խնդիրները, որոնք մեզ հարկավոր է լուծել, անհնարին է հաջողութեամբ հաղթահարել, երբ երկրին կառավարում է վախը:

***Իզմատիու:** Բրենթ, այժմ մեր խնդիրների էութեան գնահատման Ձեր հերթն է: Ի՞նչն է խանգարում կատարվածին անդրադարձելու մեր կարողութեանը:*

**Աքրուքոֆ:** Աշխարհում տիրող իրավիճակի իմ գնահատականը հիմնականում համընկնում է Ջրիգի տեսակետին: Սակայն

թույլ տվեք ինձ սկզբուն նկարագրել, այսպես ասած, պատմական խորապատկերը: Ըստ իս, «սառը պատերազմի» ավարտը, պատմական տեսանկյունից, դարձավ ժառանգականության որոշակի խզում համաշխարհային իրադրության մեջ:

«Սառը պատերազմը» մեզ ստիպեց սեւեռվել մեկ խնդրի վրա: Այն մոբիլիզացրեց մեզ, մոբիլիզացրեց մեր բարեկամներին ու դաշնակիցներին՝ միակ դաշինքի դեմ պայքարում: Այն ազդեց մեր մտածելակերպի վրա, ներգործեց մեր ինստիտուտների, այն ամենի վրա, ինչ անում էինք: Չգիտեմ, մեր պատմության մեջ եղե՞լ է, արդյոք, նույնատիպ մեկ այլ ժամանակաշրջան:

Եվ հանկարծ՝ պատմական չափանիշներով, մեկ ակնթարթում, այդ աշխարհը հեռացավ անցյալ, ու նրան փոխարինման եկավ մի աշխարհ, ուր չկային սպառնալիքներ մեր բուն գոյությանը, ինչպես «սառը պատերազմի» ժամանակներում: Այն ժամանակ մեր ցանկացած սխալը կարող էր դառնալ մոլորակի կործանման պատճառ. այժմ այդպիսի բան արդեն չկար: Դրա փոխարեն, անմիջապես ծագեցին հարյուրավոր մանր խնդիրներ՝ նման քորոցի ծակոցներին: Եվ մենք փորձեցինք դրանք լուծել նախկին իրավիճակին հարմարեցված մտածողության ու ինստիտուտների օգնությամբ:

***Իզմատիուս:** Ինչպե՞ս էիք զգում՝ գտնվելով Սպիտակ տանը, երբ առկա էր միջուկային ոչնչացման սպառնալիքը:*

**Սքոուքրոֆթ:** Մշտապես առկա էր միտքը՝ եթե կողմերից մեկը թույլ տա լուրջ սխալ, հետեւանքները կարող են լինել աղետալի համայն մարդկության համար: Արդյո՞ք մենք այդ մասին օր ու գիշեր մտածում էինք: Իհարկե՝ ոչ: Բայց կար զուգակցումը այդ վախի եւ ձգտման՝ հասկանալու, թե Սովետների մտքին ինչ է, եւ ունե՞ն, արդյոք, նրանք, ասենք, որեւէ տեխնիկական լուծման համար ներուժ, որը մեզ կդարձնի խոցելի եւ կողմերի համաչափությունը կվերածի անհամաչափության:

***Իզմատիուս:** Զբի՛գ, իսկ Դուք ի՞նչ էիք զգում՝ գտնվելով «նավապետական կամրջակին»:*

**Բժեզինսկի:** Իմ խնդիրներից մեկն էր միջուկային հարձակման դեպքում՝ նախագահի որոշման պատրաստման ժամանակ գործողությունների կորդինացումը: Չհայտնելով ոչ մի գաղտնիք՝ ասեմ, որ սկզբունքորեն իրավիճակն այս տեսքն ուներ. խորհրդային հրթիռների զանգվածային արձակումից թույլ անց մենք կստանայինք առաջին նախազգուշացումը: Մոտավորապես երկրորդ թույլից հարվածի մասշտաբների ու հավանական թիրախների մասին, որոնց այն հասցվում է, մենք կունենայինք բավական ճշգրիտ պատկերացում: Երրորդ թույլից մենք արդեն կիմանայինք, թե մարտազխիկները երբ կխոցեն մեր տարածքը եւ այլն: Եվ ահա այդ երրորդ թույլից ազգային անվտանգության հարցերով խորհրդականի խնդիրն այն էր, որպեսզի հայտներ նախագահին կատարվածի մասին՝ փոխանցեր նրան այն տեղեկատվությունը, որ մենք ունեինք: Այնուհետեւ, նախագահը պետք է որոշեր, թե ինչպես հակադարձել:

Եվ այստեղ սկսում էին բարդությունները: Եթե խոսքը լայնածավալ հարձակման մասին է, որոշում ընդունելն ակնհայտորեն հեշտ է: Դուք պատասխան հարվածը հասցնում եք բոլոր միջուկային ուժերով: Բայց պատկերացրեք, որ խոսքը «ընտրովի» հարվածների մասին է: Այդ դեպքում անհրաժեշտ է ընտրություն կատարել: Նախագահը պետք է կշռադատի ունեցած բոլոր տարբերակները: Մենք ինչպե՞ս պետք է հակադարձենք: Այստեղ առկա էր անորոշության տարր: Ամեն դեպքում՝ որոշման ընդունման ողջ գործընթացը պետք է ավարտվեր մոտավորապես յոթերորդ թույլից:

Յոթերորդ թույլից տրվում է արձակման հրաման, եւ այն, ինչ մենք որոշել էինք, արդեն սկսում է կատարվել: Գրեթե 28 թույլ հետո խորհրդային հրթիռները պետք է հասնեն մեր տարածք: Դա նշանակում է, որ դու ինքդ եւ քո ընտանիքը զոհված եմ: Վաշինգտոնն այլեւս չկա: Մեր ռազմական ներուժի զգալի մասը ոչնչացված է: Սակայն պարզ է, որ նախագահն արդեն պատասխան գործողությունների վերաբերյալ ընդունել է կշռադատված որոշում: Մենք արդեն արձակել ենք սեփական հրթիռները: Վեց ժամ անց 150 մլն ամերիկյան ու խորհրդային քաղաքացիներ

այլեւս ողջ չեն լինի: Ահա այսպիսի իրականությամբ էր մեզ վիճակված ապրել: Եվ մենք անում էինք ամեն ինչ, ինչ կարող էինք, որպեսզի իրավիճակին տանք առավելագույն կայունություն, առավելագույն տրամաբանական վերահսկելիություն: Չպահել քեզ սադրիչ ձեւով, բայց պահպանել զգոնությունն ու վճռակա- նությունը, որպեսզի մյուս կողմից ոչ ոք չմտածի, թե կարող է հարված հասցնել եւ, ընդ որում, մնալ ողջ:

Այսօր ամեն ինչ լիովին փոխվել է: Իմ կարծիքով, Բրենթը գերազանց նկարագրեց իրադրությունը՝ հարյուրավոր «քորոցի ծակոցներ»: Այժմ մենք գտնվում ենք, այսպես կոչված, «ցրված տուրբուլենտության» իրավիճակում: Եվ դրա համար, ըստ իս, պահանջվում է այլ մտայնություն, աշխարհում կատարվող փոփո- խությունների բարդ բնույթի խոր ընկալում:

***Իզմաստիուս:** Ցանկալի կլիներ, որ Դուք մանրամասն կանգ առնեիք այս չափազանց բարդ իրադրությունում ամերիկյան առա- ջատարության բնույթին վերաբերող հարցի վրա: Նախեւառաջ՝ կա՞, արդյոք, դրա անհրաժեշտությունն ընդհանրապես:*

**Բժեգինսկի:** Այն կարող է խթանիչի դեր խաղալ: Ոչ այն իմաստով, որ Միացյալ Նահանգները կիրամայի բոլորին՝ ինչ անել, այլ գործողությունների պլանում, որոնց պատրաստ է հա- վաքական կերպով աջակցել, այսպես ասենք՝ կողմերի ընկերակ- ցությունը, որոնք շահագրգռված են միջազգային համակարգի պահպանմամբ: Նման կարգի առաջատարության անհրաժեշտու- թյուն կա: Բայց որպեսզի Ամերիկյան կարողանա այդպիսի առա- ջատարի դեր խաղալ, մեզ անհրաժեշտ են ոչ միայն ականավոր ղեկավարներ (իսկ այդպիսի մարդիկ ղեկի մոտ հայտնվում են ոչ միշտ), այլև, ընդհանուր առմամբ, առավել կրթված հասարա- կություն:

Իմ կարծիքով, Ամերիկայում ձեւավորվել է զարմանալի, տարօրինակ իրավիճակ՝ մենք միաժամանակ ե՛ւ բարձրակիրք ենք, ե՛ւ (ապշեցուցիչ է) անկիրթ: Մենք ինքնամփոփ հասարա- կություն ենք: Մեզ չի հետաքրքրում այլ երկրների պատմությունը:



Օրինակ, այսօր մեզ մոտ խնդիր է ծագել Իրանի հետ: Բայց, արդյո՞ք շատ ամերիկացիներ կգտնվեն, որոնք գեթ ինչ-որ բան կիմանան այդ երկրի պատմությունից: Գիտե՞մ, արդյոք, նրանք, որ Իրանն ունի «երկատված» պատմություն: Ըստ էության, խոսքը «երկու Իրանի» մասին է: Եվ այդ երկու ժամանակաշրջանները՝ մինչիսլամական եւ իսլամական, դիալեկտիկորեն սահմանում են ներկայիս Իրանի լարվածության կետերն ու իրողությունները: Ամերիկացիներն այդ մասին ոչինչ չգիտեն:

Բավական շատ ամերիկացիներ քուեջ ընդունվելիս չեն կարողանում քարտեզի վրա գտնել Մեծ Բրիտանիան: Իրաքի պատերազմն արդեն հինգ տարի գնում է, իսկ նրանք չեն կարողանում քարտեզի վրա գտնել եւ այդ երկիրը: Շրջանավարտների 30 տոկոսը չի կարողանում ցույց տալ որտեղ է գտնվում Խաղաղ օվկիանոսը: Մեզ մոտ համաշխարհային պատմություն, այլ երկրների աշխարհագրություն չեն դասավանդում: Կարծում եմ, ամերիկացիների մեծամասնությունը չի տիրապետում գիտելիքների այն անհրաժեշտ մակարդակին, որպեսզի մեր երկիրը կարողանա ոգեւորել, իսկ նշանակում է՝ նաեւ առաջնորդել մյուսներին, այսինքն՝ անել այն, ինչ մեզանից պահանջում են 21-րդ դարի իրողությունները:

**Աքուլքոֆ:** Ես կարող էի պարզապես հեշտությամբ համաձայնել: Սակայն այդ իրադրությունը մասամբ կապված է մեր հասարակության բնույթի եւ «արմատների» հետ: Մեր պատմության գրեթե ողջ ընթացքում մեզ պաշտպանել են երկու օվկիանոսներ, իսկ մեր հյուսիսի եւ հարավի հարեւանները թույլ են եղել: Ամերիկացիներին կարիք չկա սովորել օտար լեզուներ: Նրանք կարող են ամեն տեղ այցելել՝ չլքելով Միացյալ Նահանգների տարածքը: Ուստի ամերիկացիների մեծ մասը բնագոյրեն ուզում է, որպեսզի իրեն հանգիստ թողնեն: Կարծում եմ, նրանք չեն կամենում խճճվել շրջապատող աշխարհի խնդիրների մեջ: Նրանք պարզապես ցանկանում են վայելել կյանքը:

Եվ մեր քաղաքական համակարգը կարծես ավելի է սպասարկում ամերիկացիների այս նեղ շահերը, քան նրանց շահերը

լայն իմաստով: Սոսկ վտանգի շրջանում են մեր առաջնորդները նպատակասլաց կերպով ուշադրություն հատկացնում միջազգային ասպարեզում կատարվող իրադարձություններին՝ օրինակ, Երկրորդ աշխարհամարտի նախօրեին, երբ Ռուզվելտը փորձեց երկիրն անհրաժեշտ հունի բերել, կամ երբ Էյզենհաուերը կարգավորեց համագործակցությունը Եվրոպայի հետ՝ ստեղծելով ՆԱՏՕ-ն: Այս ամենի համար հենց նման մակարդակի ղեկավարություն է պետք:

Անհրաժեշտ ազդակների առկայության դեպքում, ամերիկացիներն, ըստ իս, բավական մեծահոգի են: Մենք նեղմտություն կամ ժլատություն չենք դրսևորում: Եվ ներկայիս աշխարհում միայն Միացյալ Նահանգներն է կրթյալ առաջնորդի դերին պիտանի, որը մարդկանց չի հրամայում՝ ինչ անել, այլ ասում է. «Եկե՛ք համախմբվենք: Ահա՛ ճանապարհը, որով պետք է շարժվի համաշխարհային ընկերակցությունը»: Մենք միակն ենք, որն ընդունակ է ցույց տալ դեպի առաջ ճանապարհը:

**«Los Angeles Times», 29.09.2008**

**«Հանրապետական», 2008, ք. 9**

## ԱՄՆ ՇԱՐՔԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

### *Յուրի Պանասիկ*

*Հետխորհրդային տարածքը Ռուսաստանի համար խնդրահարույց է: Այս տեսանկյունից օգտակար է դիտարկել, թե նորանկախ պետություններում ինչպես է ներկայացնում իր շահերը եւ ինչ գործիքներ է օգտագործում ԱՄՆ-ը:*

ԱՄՆ-ը կառուցել է սեփական շահերի ներկայացման ու առաջնդման բազմամակարդակ ուղղաձիգ համակարգ: Համակարգող եւ ուղղորդող օղակը պետությունն է:

Առաջին մակարդակում տեղադրված են պետական մարմինները՝ Ազգային անվտանգության խորհուրդը, փոխնախագահի վարչակազմը, սակայն, ամենից առաջ, Պետդեպարտամենտը՝ հետխորհրդային (եվրասիական) տարածքին վերաբերող ծրագրերի ռազմավարն ու մշակողը եւ, միաժամանակ, այդ ոլորտի բյուջետային միջոցների հիմնական բաշխողը:

Գործնականում հարցերի ու հետաքրքրությունների ողջ սպեկտրը՝ ՆԱՏՕ-ից մինչեւ ժողովրդավարության հաստատում, ծածկվում է պետական մակարդակով, եւ գործի են դրվում բոլոր միջոցները՝ ոչ կառավարական կազմակերպություններից (ՈԿԿ) մինչեւ կոնգրեսականների ու սենատորների այցերը:

Երկրորդ մակարդակը ոչ պետական հատվածն է: Այն գործիքների ամբողջությունն է՝ կատարողներ, որոնք, ըստ էության, իրականացնում են Պետդեպի եւ ԱՄՆ մյուս գերատեսչությունների քաղաքականությունը: Որպես կանոն, նրանք ենթարկվում են պետական որոշումների աստիճանակարգին ու խիստ հազվադեպ են շեղվում «կուսակցության ուղեգծից»: Այն ՈԿԿ-ների առանձնահատուկ եւ առավել ազդեցիկ խումբ է, որն ստանում է պետական ֆինանսավորում:

ՈԿԿ-ների մեջ առանձնանում է կազմակերպությունների երկու տիպ: Առաջինը հասարակական միավորումներն են, որոնք, որպես օրենք, զբաղվում են քաղաքական հարցերով (ժողովրդավարության տարածում, քաղտեխնոլոգիաների, ընտրական գործընթացի

ուսուցում եւ այլն) եւ հազվադեպ՝ բարեգործությամբ, եթե ղեկավարության մեջ մտնում է պետության առաջնորդների մերձավոր շրջապատը (օրինակ՝ նրանց հարազատները):

Երկրորդ տիպը ուղեղային կենտրոններն են կամ, այսպես կոչված, ամերիկյան think tank-երը: Նրանց համար ազդեցության չափորոշիչներն են կուսակցական կողմնորոշումը, գոյատևման ժամկետը (ոչ մեկ տարի) ու երկրում համակարգված աշխատանքը (կանոնավոր փաստաթղթեր, մասնաճյուղի առկայություն, փորձագետների խումբ):

Հատկապես առանձնանում են Միջազգային հանրապետական ինստիտուտը (տնօրեն՝ սենատոր Ջոն Մակքեյն), որը ֆինանսավորվում է ԱՄՆ կառավարության կողմից, «Հանուն ժողովրդավարության» ազգային հիմնադրամի միջոցով եւ Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (տնօրեն՝ ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթ), որը ֆինանսավորվում է Պետդեպին առընթեր Միջազգային զարգացման գործակալության եւ դեմոկրատական կուսակցության կողմից:

Ընդհանուր առմամբ, քաղաքական կուսակցությունների հետ փոխգործակցության ընթացքում ամերիկյան ՈԿԿ-ներն անցկացնում են հավանական ու խոստումնալից առաջնորդների ակտիվ «ուսումնասիրություն» եւ հայտնաբերում:

Ընտրախավերի հետ աշխատանքի ոլորտում Վրաստանի օրինակն առավել ցուցադրական է: Այստեղ ՈԿԿ-ները ոչ միայն ուսուցանել են ընտրանում, այլեւ ձեւավորում են այն, ստեղծում հնարավորություններ նրա թարմացման համար:

Սահակաշվիլու շրջապատում առավել ազդեցիկ է այսպես կոչված Ազատության ինստիտուտի խմբավորումը, որը կազմված է համանուն ՈԿԿ անդամներից կամ կողմնակիցներից, որոնք ունեն լայն կապեր ԱՄՆ-ում ու Եվրոպայում՝ հատկապես ժողովրդավարական հեղափոխությունների արտահանմամբ զբաղվող քաղաքական եւ հասարակական շրջաններում: Ինստիտուտի անդամները Սահակաշվիլու վրա աշխատել են դեռեւս 1995 թվականից, երբ նա ԱՄՆ-ից վերադառնալուց հետո առաջին անգամ հայտնվեց քաղաքական ասպարեզում: Ինստիտուտը վարդերի հեղափոխության գլխավոր ճարտարապետներից է: Սահակաշվիլու իշխանության գալուց հետո ինստիտուտն սկսեց

նախագահական «ինտելեկտուալ շտաբի» դեր խաղալ: Հեղափոխությունից հետո ինստիտուտի առաջնորդները եւ նրա հետ ասոցիացված մարդիկ զբաղեցրին մի շարք ազդեցիկ պաշտոններ:

Այսպիսով, իր շահերի առաջադրման համար ԱՄՆ-ը եռանդագին օգտագործում է ՌԿԿ-ների աշխատանքների մեխանիզմը, ինչը չես ասի Ռուսաստանի մասին: Ընդ որում, ՌԿԿ-ները գործում են թե՛ որպես այլընտրանք կուսակցություններին եւ թե՛ իբրեւ երկրում դրանց ձեւավորման ակունք: ՌԿԿ-ները նաեւ ԱՄՆ-ին լոյալ վերնախավերի համար կադրային նստարան են եւ նոր ընտրանու հավաքագրման աղբյուր:

Այնուամենայնիվ, նշենք, որ արդյունավետության տեսանկյունից նման գործիքն անթերի չէ: Այն, որպես կանոն, աշխատում է այնպիսի երկրում, որտեղ թուլացած է կենտրոնական իշխանությունը, ոչ առետրային հատվածի գործունեությունը կարգավորվում է հարաբերականորեն ազատական օրենսդրությամբ, համեմատաբար մեծ չեն ուժային մարմինների հնարավորությունները: Այդ պատճառով, ամերիկյան ՌԿԿ-ներն ազդեցիկ են Ղրղըզստանում, Վրաստանում եւ Ուկրաինայում, ավելի քիչ ազդեցիկ՝ Ղազախստանում, Ադրբեջանում: Գործնականում ազդեցություն չունեն թուրքմենստանում, Ուզբեկստանում, Բելառուսում:

Կարելու է նշել, որ Պետդեպի հետ կապված ՌԿԿ-ները եւ ուղեղային կենտրոնները հաղորդակից անոթներով համակարգ են: Այդպիսի համակարգ Ռուսաստանում մշակված չէ (առավել եւս, որ ռուսաստանյան մարմինները նորանկախ պետություններում այդ գործիքները չեն օգտագործում): ԱՄՆ-ում այս կամ այն երկրի, տարածաշրջանի կամ թեմատիկ հարցերի գծով պետական հատվածի մասնագետները հաճախ անցնում են ՌԿԿ-ներ եւ հակառակը: Հետխորհրդային երկրների ԱՄՆ նախկին շատ դեսպաններ հետագայում դառնում են նշանավոր փորձագետներ, եւ նրանց փորձը պետության կողմից պահանջարկ է վայելում, ընդ որում՝ ինստիտուցիոնալ կերպով: Ռուսաստանում պաշտոնյայի հեռանալը ՌԿԿ ընկավվում է որպես աքսոր: Անգամ պետական մարմիններում հետխորհրդային ուղղությամբ աշխատանքը հեղինակավոր չի համարվում, չնայած նրան, որ հետխորհրդային տարածությունը պաշտոնապես առաջնային հետաքրքրությունների գոտի է:

Երրորդ մակարդակը լրբբիստական կազմակերպություններն են (իրավաբանական, GR եւ PR կազմակերպություններ): Լոբբիստական ծառայությունների շուկան ԱՄՆ-ում խիստ զարգացած է: Այստեղ առանձնանում է կազմակերպությունների մի խումբ, որը մասնագիտանում է այսպես կոչված զարգացող ու երրորդ երկրներում շահերի առաջադրման մեջ: Իրենց շահերը Վաշինգտոնում պաշտպանելու համար հետխորհրդային պետությունների առաջնորդները հաճախ են դիմում նրանց ծառայություններին: Բայց չնայած այդ հատվածի հանդեպ մեծ հետաքրքրությանը, նրա ազդեցությունը չի կարելի չափազանցել: Այն սաստիկ կախվածության մեջ է Պետդեպից, պետական այլ մարմիններից եւ հիմնականում կատարում է միջնորդական գործառույթներ:

Կադրերի հոսք պետական ծառայությունից դեպի լրբբիստական կազմակերպություններ եւ հակառակը նույնպես հնարավոր է: Այսպես, Եվրոպայի ու Ասիայի հարցերով պետքարտուղարի նախկին տեղակալ Էլիզաբեթ Ջոնսն աշխատել է կասպյան տարածաշրջանի գծով հատուկ խորհրդական, դեսպան Ղազախստանում: 2005թ. սեպտեմբերից դարձել է APCO Worldwide լրբբիստական կազմակերպության գործադիր փոխնախագահ, որը, օրինակ, հասել է ամերիկյան քաղաքական գործիչների կողմից ԲԷԻ Ն ընկերության աջակցմանը՝ ռուսական պետական կառույցների հետ նրա կոնֆլիկտում եւ ներկայացրել ռուսական SPI Spirits ընկերության շահերը ռուսական պետության հետ «ՆՕ՛ի էեօփ ձյ» օդու իրավունքի համար դատական վեճում:

Էլիզաբեթ Ջոնսը նեոպահպանողական Ռիչարդ Փերլի ու դեմոկրատ Ռիչարդ Յուլբրուքի հետ ընդգրկված է ոչ պետական խմբում: Խումբը հենվում է փոխնախագահ Դիք Չեյնիի վրա: Ջոնսն ինքը 2004թ. զբաղվել է նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի սատարման իմիջային ծրագրերով: Այդ խումբը Վաշինգտոնին ներկայացրեց Ղազախստանի՝ որպես չափավոր, աշխարհիկ եւ արեւմտամետ պետության, մասին իր պատկերացումները: Ամերիկյան ռազմավարության մեջ Ղազախստանը պետք է դառնա Կենտրոնական Ասիայի երկրների եւ մյուս մուսուլմանական պետությունների համար մոդել: Այս մոտեցման արդյունքը եղավ Ղազախստանի իշխող վերնախավի փոփոխումից հրաժարումը եւ կառավարման առկա մոդելի ամրապնդմանն ուղղված հրահանգը:

Այդ խմբի ջանքերի շնորհիվ, 2006թ. սեպտեմբերին Ղազախստանի նախագահ Նազարբաևի ԱՄՆ կատարած այցի ընթացքում անցկացված բանակցություններում ժողովրդավարության, մարդու իրավունքների հարցեր չբարձրացվեցին: Խումբը նմանապես եռանդագին պաշտպանեց Ղազախստանին 2010թ. ԵԱՀԿ-ում նախագահող երկիր ընտրելը:

ԱՄՆ-ը Ռուսաստանից տարբերող եւս մեկ առանձնահատկություն՝ կուսակցությունների մեծ դերը ՈԿԿ-ների գործունեության մեջ: Քանի որ այդ ու նաեւ նորանկախ պետություններում փորձագիտական կենտրոնների եւ լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը վերահսկվում է ԱՄՆ պետական մարմինների կողմից, ապա այստեղ ուժերի դասավորությունն անմիջականորեն կախված է նրանից, թե որ կուսակցությունն է գտնվում իշխանության ղեկին:

Վերջապես, նորանկախ պետություններում շահերի առաջնդման առումով՝ ԱՄՆ-ի համար քաղաքականությունը տնտեսությունից ավելի կարեւոր է: Եթե Ռուսաստանում ավանդաբար համարվում է, որ հարեւան երկրներում բիզնեսի ներկայությունը կարող է քաղաքական ազդեցության գրավական հանդիսանալ, ապա ԱՄՆ-ում՝ ոչ: ԱՄՆ-ը ապավինում է քաղաքական (աշխատանք ՈԿԿ-ների, քաղաքական հատվածի, կուսակցությունների, ընդդիմության, ՁԼՄ-ի հետ) եւ վարչարարական (Պետդեպի, պաշտպանության նախարարության, հատուկ ծառայությունների զգալի դերը) միջոցներին:

Օրինակ՝ վերջին տարիներին Վրաստանում հիմնականում ներդրումներ կատարել են ռուսական, ղազախական եւ թուրքական ընկերությունները, բայց ոչ ամերիկյան: Սակայն, ինչպես տեսնում ենք, այն վրացական քաղաքական համակարգում չի ստեղծել ռուսամետ քաղաքական լոբբի: Եվ նման օրինաչափություն դիտվում է բոլոր նորանկախ պետություններում:

**eurasianhome.org**

*«Եվրասիայի ժառանգություն» հիմնադրամ*

*«Հանրապետական», 2008, ք. 10*

**Իզոր Պանարին. «ԱՄԵՐԻԿԱՆ ԱՅԼԵՎՍ  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԶԻ ԼԻՆԻ»**

*Իզոր Պանարին – քաղաքագիտության դոկտոր, ՌԴ ԱԳՆ  
Դիվանագիտական ակադեմիայի միջազգային հարաբերություն-  
ների ֆակուլտետի դեկան:*

**Հարց** – Իզոր Նիկոլաեւիչ, որտեղի՞ց Ձեզ մոտ ծագեց ԱՄՆ  
փլուզման գաղափարը՝ այն էլ 1998թ., երբ այդ երկիրը ծաղկում էր  
եւ անվերապահորեն համաշխարհային առաջատարն էր:

**Պատ.**– Արդեն այն ժամանակ պարզ էր, որ ԱՄՆ-ի համար  
գլխավոր կործանիչ ուժը ֆինանսատնտեսականն է: Դուլարը  
ոչնչով ապահովված չէ: Երկրի արտաքին պարտքը սրընթաց աճել  
է, թեեւ 1980թ. այն բնավ էլ չկար: 1998թ., երբ ես իմ կանխատե-  
սումն արեցի, այն գերազանցում էր երկու տրիլիոն դոլարը: Այժմ  
11 տրիլիոնից ավելին է: Դա բուրգ է, որն անպայման կփլուզվի:

**Հարց** – Կփլուզվի ո՞րչ ամերիկյան տնտեսությունը:

**Պատ.**– Այն արդեն փլուզվում է: Ֆինանսական ճգնաժամը  
հանգեցրեց նրան, որ Ուոլ-սթրիթի հինգ խոշորագույն ու հին դրա-  
մատներից երեքն այլեւս դադարեցին գոյություն ունենալ, իսկ  
երկուսը գտնվում են գոյատեւման եզրին: Նրանց կորուստները  
պատմության մեջ ամենամեծն են: Այժմ խոսքը կարգավորման  
համակարգի՝ գլոբալ ֆինանսական մասշտաբով փոփոխման մա-  
սին է. Ամերիկան այլեւս համաշխարհային կարգավորող չի լինի:

**Հարց** – Իսկ ո՞վ նրան կփոխարինի:

**Պատ.**– Այդ դերին հավակնում են երկու պետություն. Չինաս-  
տանը՝ իր վիթխարի պաշարներով եւ Ռուսաստանը՝ որպես երկիր,  
որը կարող է կարգավորող դեր խաղալ եվրասիական տարած-  
քում: Վերջերս Վաշինգտոնում ավարտվեց «քսանի» գագաթա-  
ժողովը, ուր տեղի ունեցավ շատ ուշագրավ իրադարձություն:  
Մասնակիցներն առաջադրեցին միջազգային հարաբերություն-



ների նոր ճարտարապետություն, որտեղ առանցքային դերը պատկանելու է Արժույթի միջազգային հիմնադրամին: Սակայն վերջինս կարիք ունի ֆինանսների: Գազաթափողովի մասնակիցները գումարի տրամադրման խնդրանքով դիմեցին Չինաստանին ու ճապոնիային: Չինաստանի ոսկու եւ արժույթի պաշարները կազմում են երկու տրիլիոնից ավելի դոլար, նա ԱՄՆ խոշորագույն վարկատուն է եւ այժմ անխուսափելիորեն ազդելու է հիմնադրամի քաղաքականության վրա: Ի դեպ, պատահական չէր, որ գազաթափողվում պարոն Յու Ցզինթաոն հանդիպեց երկու առաջնորդների՝ ՌԴ նախագահի եւ Մեծ Բրիտանիայի վարչապետի հետ: Յենց Անգլիայում է ենթադրվում անցկացնել «քսանի» գարնանային հանդիպումը: Իսկ Ռուսաստանի հետ հանդիպումը՝ որպես երկրի, որն առաջադրում է համաշխարհային ֆինանսական համակարգի վերակառուցման նոր սկզբունքներ, եւս հստակ տեղավորվում է չինական բարեփոխման գործընթացի մեջ:

**Հարց** – Համաշխարհային առաջատարների հետ ամեն ինչ պարզ է: Սակայն վերադառնանք ԱՄՆ-ին: Ի՞նչն է վկայում այս երկրի հնարավոր պառակտման մասին:

**Պատ.**– Պատճառների մի ողջ համալիր: Առաջին. ֆինանսական խնդիրներն ԱՄՆ-ում սաստկանալու են: Այստեղ միլիոնավոր քաղաքացիներ գրկվել են իրենց խնայողություններից: Երկրում աճում են գներն ու գործազրկությունը: Կործանման եզրին են «Ձեներալ մոթորսը» եւ «Ֆորդը», իսկ դա նշանակում է, որ ամբողջ քաղաքներ կմնան առանց աշխատանքի: Նահանգապետերն արդեն դաշնային կենտրոնից կոշտ ձեւով փող են պահանջում: Աճում է դժգոհությունը. մինչեւ այժմ այն զսպում էին միայն ընտրություններն ու հույսը, թե Օբաման հրաշք կգործի: Բայց արդեն գարնանը պարզ կլինի, որ հրաշք չկա:

Երկրորդ գործոնը ԱՄՆ քաղաքական կառուցվածքի խոցելիությունն է: Երկրի տարածքում գոյություն չունի միասնական օրենսդրություն: Չկան անգամ ճանապարհային երթեւեկության ընդհանուր կանոններ: Յենքը, որը միավորում է ԱՄՆ-ին, բավական փխրուն է: Նույնիսկ Իրաքում զինված ուժերը հիմնականում ներկայացնում են ոչ ամերիկյան քաղաքացիները. նրանք կռվում են,

որովհետև իրենց խոստանում են ամերիկյան քաղաքացիություն: Այսպիսով, բանակը, որպես ձուլման կաթսա, արդեն դադարել է կատարել ամերիկյան պետության ամրացման գործառույթը: Եվ, վերջապես, նաև վերնախավերի պառակտումը, ինչը ճգնաժամի պայմաններում վառ արտահայտվեց:

**Չարք** – Ինչպե՞ս է տրոհվելու երկիրը:

**Պատ.**– Ընդամենը վեց մասի: Առաջինը ԱՄՆ Խաղաղօվկիանոսյան ափն է: Այստեղ կարելի է մեկ օրինակ բերել. Սան Ֆրանցիսկոյի բնակչության 53 տոկոսը չինացիներ են: Վաշինգտոնի նահանգի նահանգապետն էթնիկ չինացի էր, նրա մայրաքաղաք Սիեթլը կոչում են ԱՄՆ-ում չինական ներգաղթի դարպաս: Խաղաղօվկիանոսյան ափը հետզհետե ընկնում է Չինաստանի ազդեցության տակ. դա ակնառու է: Երկրորդ մասը հարավն է, ուր մեքսիկացիներ են: Այնտեղ իսպաներենը որոշ տեղեր արդեն դարձել է պետական լեզու: Դետո Տեխասը, որը բացահայտ պայքարում է անկախության համար: ԱՄՆ Ատլանտյան ափը ներկայացնում է միանգամայն այլ էթնոս ու հոգեմտածելակերպ, այն եւս կարելի է բաժանել երկու մասի: Եվ նաև կենտրոնական անկումային շրջանները: Ես հիշեցնեմ, որ ԱՄՆ հինգ կենտրոնական նահանգներ, ուր հնդկացիներ են ապրում, հայտարարել են իրենց անկախության մասին: Այն ընկալվեց որպես կատակ, քաղաքական շոու: Սակայն փաստը մնում է փաստ: Դյուսիսում մեծ է Կանադայի ազդեցությունը: Ալյասկան, ի դեպ, կարող ենք մենք պահանջել: Չէ՞ որ այն տրվել է վարձակալության:

**Չարք** – Իսկ ի՞նչ է այդ դեպքում լինելու դոլարի հետ:

**Պատ.**– 2008թ. Կանադայի, Մեքսիկայի եւ ԱՄՆ-ի միջեւ ամերոյի՝ որպես նոր դրամական միավորի, ներդրման նախապատրաստման մասին զաղտնի համաձայնությունն ընդունվեց: Սա կարող է նշանակել դոլարի փոխարինման պատրաստություն: Ընդ որում, 100 դոլարանոց թղթադրամները, որոնք հեղեղել են աշխարհը, պարզապես կարող են «սառեցվել»: Ասենք՝ պատրվակով, թե ահաբեկիչները դրանք կեղծում են:

**Չարք** – Դուք խոսեցիք վերնախավերի պառակտման մասին: Դրանք դեմոկրատներն ու հանրապետականներն են:

**Պատ.**– Ամենեւին ոչ: ԱՄՆ ղեկավարությունում կա երկու խմբավորում: Առաջինին կարելի է կոչել «գլոբալիստներ» կամ «տրոցկիստներ»: Նրանց գաղափարը ժամանակին ձեւակերպել է Տրոցկին. «Մեզ պետք է ոչ թե Ռուսաստանը, այլ համաշխարհային հեղափոխություն»: Խորհրդային Ռուսաստանը նրանք դիտում էին որպես աշխարհը վերահսկելու հենակայան: Երկրորդ խմբավորումը պետականամետներն են, որոնք ցանկանում են իրենց երկրի բարգավաճումը: Այս երկու կլանների ներկայացուցիչները կան թե՛ դեմոկրատական, թե՛ հանրապետական կուսակցությունում:

**Չարք** – Իսկ ովքե՞ր են ղեկավարում կլանները:

**Պատ.**– Գլոբալիստների առանցքային դեմքերն են պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը եւ փոխնախագահ Դիք Չեյնին: Պետականամետներինը՝ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը, ԿՅՎ տնօրեն Մայքլ Չայդենը եւ ազգային հետախուզության տնօրեն, ծովակալ Մայք Սակքոնելը: Գլոբալիստները հիմնականում ֆինանսական վերնախավն են, իսկ պետականամետները՝ զինված ուժերը, հատուկ ծառայությունները եւ ռազմարդյունաբերական համալիրը: Վերջին ժամանակներս այդ երկու կլանների միջեւ դիմակայությունը դարձել է բացահայտ: Անցյալ դեկտեմբերին պետականամետները հանդես եկան զեկույցով, որը լիովին բացառում էր Իրանում ռազմական միջուկային ծրագրի առկայությունը: Այն ուղղակիորեն հակասում էր Չեյնիի ու Ռայսի եզրակացություններին: Երկրորդ՝ անչափ կարեւոր իրադարձությունը տեղի ունեցավ հնգօրյա կովկասյան պատերազմի առիթով ԱՄՆ Կոնգրեսի լսումներում: Գլոբալիստները՝ ի դեմս Քոնդոլիզա Ռայսի, հաստատում էին, թե պատերազմը սկսել է Ռուսաստանը, եւ դրա համար նա կպատժվի: Վրաստանը Քոնդոլիզայի նախագիծն էր: Իսկ հետախուզական ընկերակցության ներկայացուցիչները հանդես եկան տրամազօրեն հակառակ հայտարարությամբ՝ որ պատերազմը սկսել է Վրաստանը: Առկա է շատ նշանավոր քաղաքական դեմքերի բացահայտ ընդհարում:

**Չարց** – Իսկ ո՞ւմ հետ է Օբաման:

**Պատ.**– Պետականամետները, Գեյթսի գլխավորությամբ, հիմնական խաղացողներն էին, որոնք Օբամային բերեցին հաղթանակի: Դրա փոխարեն նրանից պահանջում են գլխավոր ուղեգծի փոփոխում: Այդ իմաստով շատ հետաքրքիր է այն փաստը, որ հանրապետական Գեյթսը դիտվում է ԱՄՆ պաշտպանության նախարարի ամենահիմնական թեկնածուն (նա Օբամայի կողմից արդեն վերանշանակվել է այդ պաշտոնում – խմբ.): Դա նախագահի վրա պետականամետների ազդեցության հետեւանք է: Ի դեպ, իր առաջին խորհրդակցությունն Օբաման անցկացրել է հենց ամերիկյան հետախուզական ընկերակցության հետ:

**Չարց** – Ի՞նչ պիտի անի Ռուսաստանը, որպեսզի խուսափի ցնցումներից՝ կապված ԱՄՆ տնտեսական անկման հետ:

**Պատ.**– Ջարգացնել ռուբլին որպես տարածաշրջանային արժույթ: Ստեղծել լիարժեք նավթային բորսա, որն առետրային գործարքները կիրականացնի ռուբլով: Վերջերս Ռուսաստանի ու Բելառուսի միջև, ի վերջո, կնքվեց նավթի ու գազի դիմաց վճարումներում ռուբլու անցման նասին համաձայնագիր: Ղազախստանի եւ Բելառուսի հետ էլեկտրականության դիմաց վճարումներում Ռուսաստանն արդեն անցել է սեփական արժույթին: Իսկ ներկայիս խնդիրն է՝ ջանալ 2009թ. համար հնարավորինս շատ պայմանագրեր կնքել ռուբլով: Այս դեպքում Ռուսաստանը կկարողանա խուսափել գլոբալ ճգնաժամից, որը սաստկանում է:

**«Новое русское слово», ԱՄՆ**  
**«Չանրապետական», 2008, ք. 11**

## ***Հենրի Քիսինջեր. «ԱՄԵՐԻԿԱՆ ԿՅԱՂԹԱՅԱՐԻ ՃԳՆԱԺԱՄԸ»***

Նորընտիր նախագահ Բարաք Օբամայի վարչակազմում ազգային անվտանգության ոլորտի քաղաքականությանը զբաղվելու է միանգամայն ոչ սովորական թիմ: Առաջին հայացքից՝ նրա կազմը հակասում է կադրերի ընտրության որոշ ընդունված չափորոշիչների. համարվում է, որ եթե նախագահը կառավարության կազմում ընդգրկում է աջակցության սեփական քաղաքական բազա ունեցող մարդկանց (որոնց, այդ իսկ պատճառով, որեւէ դեպքում հեշտ չի լինի ազատել), նա դրանով թուլացնում է վերահսկողության իր լծակները: Նմանօրինակ կերպով, ազգային անվտանգության հարցերով խորհրդականի, պետքարտուղարի եւ պաշտպանության նախարարի պաշտոններին երկրի քաղաքական ուղեգծի վերաբերյալ հաստատուն հայացքների տեր անձանց նշանակումը ստիպելու է նախագահին իր «կամային» խորհրդականների միջեւ վեճերի հարթեցման վրա շատ ուժ վատնել:

Հենց այսպիսի «աստղաբույլ» հավաքելու համար նորընտիր նախագահին հարկավոր են եղել ոչ քիչ քաղաքական արիություն եւ ինքնավստահություն. խիստ արժեքավոր որակներ մարդու համար, որի առջեւ հառնած է փլուզվող միջազգային կառուցվածքի կարգի բերման խնդիրը: Այդ պայմաններում, հնարավոր է, որ հենց ավանդական չափորոշիչների արհամարհումն ապահովի նախադրյալներ ստեղծագործական մոտեցման համար: Պետք է ենթադրել, որ Օբաման եւ պետքարտուղարի պաշտոնի նրա թեկնածուն՝ սենատոր Հիլարի Զլինթոնը, եկել են այն հետեւության, որ երկրի ու հասարակության շահը ներկայում իրենցից համագործակցություն է պահանջում:

Նրանք, ովքեր բառացիորեն են ընկալում «բարեկամ-ախոյան» արտահայտությունը, չեն հասկանում նախագահի եւ պետքարտուղարի միջեւ փոխհարաբերությունների էությունը: Ես չգիտեմ ոչ մի բացառություն հետեւյալ կանոնից. պետքարտուղարն ազդեցություն է վայելում սոսկ այն դեպքում, եթե նրան ընդունում են որպես «նախագահի ձեռք»: Ցանկացած այլ իրավիճակ թուլացնում է նախագահի դիրքերը, իսկ պետքարտուղարին պարզապես «նետում է ճամփեզրին»: Արտահոսքերի ու զրպարտության

վաշինգտոնյան ջրաղացն աշխատում է ողջ հզորությամբ՝ ջանալով առավելագույնս խորացնել նրանց միջեւ ցանկացած տեսանելի խզում: Մյուս երկրների կառավարությունները նույնպես ջանում են օգտվել նման տարածայնություններից՝ Սպիտակ տան եւ Պետդեպարտամենտի նկատմամբ մշակելով այլընտրանքային ուղեգծեր: Որպեսզի արտաքին քաղաքականությունն իրականացվի արդյունավետ, իսկ Պետդեպարտամենտն այնտեղ էական դեր խաղա, անհրաժեշտ է, որ նախագահն ու պետքարտուղարը ունենան միջազգային կարգի վերաբերյալ միատեսակ հայացքներ, ընդհանուր ռազմավարական նպատակներ եւ դրանց հասնելու ընդհանուր մարտավարություն: Անխուսափելի տարածայնությունները պետք է հարթել փակ դռների հետեւում. ավելին՝ պետքարտուղարը սեփական մտահոգություններն ու կասկածներն արտահայտելիս որքան ավելի լավ կարողանա պահպանել գաղտնիությունը, այնքան մեծ է հավանականությունը, որ նախագահը դրանց ականջալուր կլինի:

Ամերիկյան դիվանագիտական ծառայությունն անգնահատելի գործիք է, որը հղկվել է գործին նվիրված արհեստավարժների շատ սերունդների կողմից: Ինչպես ցանկացած էլիտար կառույց, այն առանձնանում է որոշակի կլանայնությամբ: Մարդկանց կարծիքը, որոնք ծառայողական սանդղուղքով ճանապարհ չեն անցել՝ սկսած ամենաստորին աստիճանից, այստեղ ոչ միշտ են լուրջ ընդունում (ելնելով այն տեսակետից, թե այդ մարդիկ կարող են դիվանագիտական արհեստավարժության «քննությունը» չհանձնել): Պետքարտուղարներին հաճախ հունից հանում է ներքին ընթացակարգերի խճճվածությունը, իսկ նախագահներն իրենց հուշերում գանգատվում են Պետդեպարտամենտի դանդաղկոտությունից:

Ամենօրյա աշխատանքում Պետդեպարտամենտն, ըստ էության, հեռագրեր մշակող վիթխարի մեքենա է, որն արծագանքում է ողջ աշխարհի ներկայացուցչություններից ստացված հազարավոր հաղորդագրություններին: Դեպքերի ճնշող մեծամասնությունում խոսքը ընթացիկ հարցերի մասին է. որեւէ ինստիտուցիոնալ ֆիլտր, որը զատում է երկրորդականը գլխավորից, արտաքին քաղաքական գերատեսչությունում չկա: Հեռագրերի ու նրանց պատասխանների մեծ մասն անցնում է պետքարտուղարի բազմա-

թիվ տեղակալների մոտով. սոսկ աննշան տոկոսն է հասնում հենց իրեն եւ ավելի քիչը՝ Սպիտակ տուն: Պետդեպարտամենտում չկան կառույցներ, որոնք թույլ տան օրգանապես նրա գործունեության մեջ ներառել աշխարհաքաղաքական ու ռազմավարական նկատառումներ: Թեեւ այնտեղ գոյություն ունի Քաղաքական պլանավորման խորհուրդ, սակայն այդ մարմնի գործունեությունը հաճախ հանգում է երկրորդական, կիսավերացական բանավեճերի, որոնք կապ չունեն օպերատիվ աշխատանքի, իսկ ավելի հաճախ՝ ղեկավարության ելույթների տեքստերի պատրաստման հետ:

Պետքարտուղարի ներկայիս թեկնածուն, անշուշտ, ունի առաջնորդի որակներ, որը թույլ կտա կոտրել քարացած կարծրատիպերը եւ ցանկացած բանակցությունում վճռորոշ դեր խաղալ: Նրա առաջնահերթ խնդիրներն են. ապահովել ռազմավարական ղեկավար ցուցումները եւ Պետդեպարտամենտը վերակառուցել այնպես, որպեսզի տեղեկատվության հավաքման ու մշակման պլանում դիվանագիտական ծառայության արտակարգ ներուժը լրացվի որոշումների ընդունման նույնքան մեծ արդյունավետությամբ: Պետքարտուղարի այս դերն ունի բացառիկ նշանակություն, քանզի Պետդեպարտամենտը կազմակերպչական առումով առավել կողմնորոշված է դեպի սեփական ղեկավարը, քան Սպիտակ տուն:

Դեռ երբեք Ազգային անվտանգության հարցերով նախագահի խորհրդական չի նշանակվել ռազմական ղեկավարման նման փորձով անձնավորություն, ինչպիսին պաշտոնաթող գեներալ, Եվրոպայում ՆԱՏՕ Միացյալ զինված ուժերի եւ ծովային հետեւակային կորպուսի նախկին հրամանատար Ջեյմս L. Ջոնսն է: Արդյունքում՝ խորհրդականն անխուսափելիորեն կդառնա ոչ միայն նախագահի օգնական, այլեւ էական դեր կխաղա քաղաքական ուղեգծի մշակման գործում՝ հիմնվելով իր վիթխարի, գրեթե եզակի փորձի վրա:

Պնդումները, թե ազգային անվտանգության հարցերով խորհրդականը պետք է «շարժման կարգավորիչի», այլ ոչ թե քաղաքական որոշումների ընդունման գործընթացի մասնակցի դեր խաղա, կրում են ավելի շատ տեսական, քան գործնական բնույթ: Ոչ մի նախագահ չի ցանկանա, որ իր խորհրդականի դերը սահմանափակվի տեղեկատվական հոսքերի սխեմաների կազմ-

մամբ, ինչպես սովորեցնում են պետական կառավարման ֆակուլտետներում: Բացի այդ, քանզի ազգային անվտանգության հարցերով խորհրդականը կանոնավոր կերպով հանդիպում է նախագահի հետ, կառավարչական գործառույթների եւ քաղաքական որոշումների վերաբերյալ խորհուրդների միջեւ տարբերակում դնելը, զուտ հոգեբանական պատճառներով, գործնականում անհնարին է:

Իդեալում՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդականի խնդիրն է. հոգ տանել, որպեսզի քաղաքական քայլերը հանգամանքների բերումով (որոնք հարկավոր է նախապես կանխագուշակել) անհաջողություն չկրեն, իսկ հնարավորությունները բաց չթողնվեն՝ դրանք ժամանակին չնկատելու պատճառով: Խորհրդականը պետք է երաշխավորի, որ նախագահին կներկայացվեն գործողությունների բոլոր տարբերակները, իսկ ընդունված որոշման կատարումը կհամապատասխանի նրա պահանջներին: Գերատեսչությունները հաճախ սեփական առաջարկությունների ընդունումը դիտում են որպես հեղինակության հարց եւ ընդունված որոշումները մեկնաբանում այն իմաստով, որը համապատասխանում է իրենց առաջարկությունների ոգուն: Այսպիսով, ազգային անվտանգության հարցերով խորհրդականի դերը, որը պետք է անհրաժեշտության դեպքում պահանջի գործողությունների լրացուցիչ տարբերակների տրամադրում կամ նրանց առավել մանրակրկիտ մշակում, ինչպես նաեւ որոշումների կատարման ճշտություն, ոչ միշտ է խանդավառությամբ ընդունվում:

Խորհրդականը, ըստ սահմանման, ունի այնպիսի կարելու առավելություն, ինչպիսին է «մուտքի հնարավորությունը»: Նրա աշխատասենյակը գտնվում է նախագահականից 50 ֆուտ հեռավորության վրա (համեմատության համար՝ պետքարտուղարին Սպիտակ տնից բաժանում է մեքենայով 10 րոպեի ճանապարհը): Համարվում է, որ դա խորհրդականին տալիս է առաջին դեմքի մոտ մուտքի հատուկ թույլտվություն: Բացի այդ, նրա պաշտոնական պարտականությունները կապված են գրեթե բացառապես այն խնդիրների հետ, որոնք հուզում են անձամբ նախագահին: Պետքարտուղարն ունի շատ «հաճախորդներ» աշխարհի բոլոր ծայրերից, որոնք նրա ուշադրությունն են պահանջում, իսկ պետության ղեկավարին ամենեւին ոչ բոլորն են հետաքրքրում:



Բացի այդ, պետքարտուղարը հաճախ է գտնվում արտասահման-  
յան ուղեւորություններում, իսկ ազգային անվտանգության հար-  
ցերով խորհրդականը գրեթե միշտ գտնվում է նախագահի «ձեռքի  
տակ»: Պետության ղեկավարի հետ նրա առանձնակի հարաբերու-  
թյունները պահանջում են հատուկ վարվելակերպ, որը խորհրդա-  
կանները (ներառյալ ինձ) ոչ միշտ են դրսևորում:

Այն փաստը, որ պաշտպանության նախարարի պաշտոնը  
Օբաման թողեց Ռոբերտ Գեյթսին, նոր թիմի ձեւավորման գործըն-  
թացում ներմուծեց կարելու հավասարակշռող տարր: Նա հիմ-  
նական խաղացողներից միակն է, որի համար այն եղավ քաղա-  
քական գործընթացի մասնակցության ավարտական, այլ ոչ թե  
սկզբնական փուլը: Համաձայնելով անցողիկ ժամանակահատվա-  
ծում մնալ Պենտագոնի ղեկին՝ նա «գորգի տակ» պայքարի անձ-  
նական շահագրգռվածություն չունի, որը ցանկացած նոր վարչա-  
կազմի իշխանության գալու ուղեկիցն է: Կանգ առնելով Գեյթսի  
թեկնածության վրա՝ Օբաման ու նրա խորհրդականներն, ան-  
շուշտ, հասկանում էին, որ նա պահպանելու է հավատարմությունն  
իր նախկին համոզմունքներին: Գեյթսին սպասվում է դժվարին  
ադապտացիա նոր գործընկերների հետ. համոզմունքը, որ դա  
նրա ուժերից վեր չէ, տալիս է Բուշի վարչակազմում նրա գործու-  
նեությունը, որը բացարձակապես զուրկ է եղել նեղ կուսակցական  
մոտեցումներից: Նրա խնդիրն է ապահովել հաջորդականությունը  
եւ, միաժամանակ, մաքրել ճանապարհը նորի համար:

Ձեւն, անշուշտ, բովանդակությամբ փոխարինող չէ: Բայց  
անգամ այս վերապահումով՝ ազգային անվտանգության ոլորտի  
նոր թիմի կազմը հույս է արթնացնում, որ Ամերիկան կհաղթահարի  
ճգնաժամը եւ կկարողանա լիովին օգտվել իր հնարավորություն-  
ներից:

**«The Washington Post»**

«Հանրապետական», 2008, ք. 11

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |     |
|---|-----|
| <i>Սամուել Հանտինգտոն</i> . Արեւմուտքը եւ մյուսները .....   | 3   |
| <i>Հենրի Քիսինջեր</i> . Տեղեկատվություն եւ գիտելիք .....  | 8   |
| <i>Անդրեյ Վոզնիտել</i> . Գլոբալացումը Ռուսաստանի համար .....                                      | 14  |
| <i>Պատրիկ Բյուքենեն</i> . Արեւմուտքի վախճանը .....  | 19  |
| <i>Ֆրենսիս Ֆուկույամա</i> . Մեծ վերակառուցում .....   | 23  |
| <i>Սամուել Հանտինգտոն</i> . Առողջ ազգայնականություն .....   | 29  |
| <i>Ալեքսանդր Դուգին</i> . Դրույթներ գլոբալացման մասին .....                                       | 35  |
| <i>Սամուել Հանտինգտոն</i> . Ամերիկան եւ աշխարհը .....   | 39  |
| Գաղտնի իշխանություն .....   | 44  |
| <i>Իեն Թրեյնոր</i> . Ժողովրդավարացման ամերիկյան<br>կադապարը .....                                 | 49  |
| <i>Ալեն Մենկ</i> . Հին աշխարհը եւ Ամերիկան .....  | 54  |
| <i>Վլադիսլավ Ինոզենցե</i> , <i>Սերգեյ Կարազանով</i> . 21-րդ դարի<br>աշխարհակարգի վերաբերյալ ..... | 61  |
| Էթնիկական պատերազմներ .....   | 68  |
| <i>Ե. Սատանովսկի</i> . Նոր Մերձավոր Արեւելք .....   | 74  |
| <i>Էրիկ Չոքսթաուն</i> . Չգտումը համաշխարհային տիրա-<br>պետության դատապարտված է ձախողման .....     | 83  |
| <i>Վենսան Ժովեր</i> . Հեղափոխություն կերտողները .....   | 88  |
| <i>Յուրբեր Վեդրին</i> . Եվրոպական ինտեգրումը մտնում է<br>«դադարի» փուլ .....                      | 99  |
| Freedom House. «Ազատության» տուն .....  | 106 |
| <i>Սերգեյ Կարազանով</i> . 21-րդ դարի աշխարհակարգի<br>ուրվագծեր .....                              | 111 |
| <i>Շամիլ Սուլթանով</i> . Քաղաքակրթական ինքնասպանություն... 119                                    |     |
| <i>Ալեքսանդր Դուգին</i> . Աշխարհը բռնկված է ցանցային<br>պատերազմներով .....                       | 125 |
| Մարդու իրավունքների եւ արժանապատվության մասին<br>հռչակագիր .....                                  | 131 |

|  |     |
|--|-----|
| <i>Գեորգի Վելյամինով. Արդի գլոբալացման մասին</i> .....                                       | 134 |
| <i>Չենրի Քիսինջեր. Ընդհանրական արժեքներ,<br/>ուրույն մոտեցումներ</i> .....                   | 140 |
| <i>Ռիչարդ Չասս. Նոր Մերձավոր Արեւելք</i> .....   | 145 |
| <i>Ա. Գոնչարենկո. Համաշխարհային էներգետիկա.<br/>հայացք ապագային</i> .....                    | 152 |
| <i>Ժակ Դելոր. «Պահպանել եվրոպական ժողովուրդների<br/>մշակութային տարբերությունները»</i> ..... | 161 |
| <i>Պատրիկ Բյուքենեն. «Արեւմուտքը մահանում է ներսից»</i> ....                                 | 168 |
| <i>Պատերազմ հանուն ժողովրդավարության</i> .....   | 176 |
| <i>Վիկտոր Մյասնիկով. Մարդասիրական ինտերվենցիա</i> .....                                      | 181 |
| <i>Օ. Սկոպիչ. Մերձավոր Արեւելքի ապաքրիստոնեացումը</i> ...                                    | 187 |
| <i>Յուրբեր Վեդրին. «Մենք չարժվում ենք դեպի<br/>բազմաբեւեռ քառսային աշխարհ»</i> .....         | 192 |
| <i>Ժողովրդավարության պարադոքսներից. քվեարկություն</i> ....                                   | 198 |

**Անջատողական եւ ռեգիոնալ շարժումները Եվրոպայում**

|   |     |
|---|-----|
| <i>Գեորգի Էնգելզարդտ. Արեւմտյան Բալկաններ</i> .....   | 204 |
| <i>Ալեքսեյ Տերեշչենկո. Հյուսիսային Եվրոպա</i> .....   | 213 |
| <i>Ալեքսեյ Տերեշչենկո. Հարավային Եվրոպա</i> .....   | 221 |
| <i>Օլեգ Նենենսկի. Կենտրոնական Եվրոպա</i> .....  | 232 |
| <b>Պետության ստեղծման ալգորիթմը</b> .....   | 247 |
| <i>Զ.Բժեզինսկի. «Ամերիկյան կորցրել է<br/>ինքնավստահությունը»</i> .....                      | 252 |
| <i>Յուրի Պանասիկ. ԱՄՆ շահերի կենսագործման մեխա-<br/>նիզմները Եվրասիական տարածքում</i> ..... | 259 |
| <i>Իգոր Պանարին. «Ամերիկյան այլեւս համաշխարհային<br/>կարգավորող չի լինի»</i> .....          | 264 |
| <i>Չենրի Քիսինջեր. «Ամերիկյան կիաղթահարի ճգնաժամը»</i> .....                                | 269 |

